ՀԱՅՐԵՆԻ ԿՏԱԿՆԵՐ

891.99-82
Զ - 39

8

ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՌ
ՊԵՏՀՐԱՏ

71·868
13 APR 2011
891·99-82
Զ-39

ՀԱՅՐԵՆԻ ՎՏԱԿՆԵՐ

ԿԱԶՄԵՑ ԵՎ ԽՄԲԱԳՐԵՑ
ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1940

APR 2013

ГОС. ПУБЛИЧНАЯ БИБЛ. АРМ. ССР им. А. МЯСНИКЯНА
522
41

РОДНЫЕ РУЧЬИ

АЛЬМАНАХ МОЛОДЫХ ПИСАТЕЛЕЙ

Ереван, Армгиз, 1940

ԽՈՍՔ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ

Ես ինձ լիովին վարձատրված կզգայի, եթե ընթերցողները մասնակից լինեին այն ուրախությանը, որ զգում էր տողերիս գրողը սույն ալմանախը կազմելիս:

Ալմանախի մեջ տեղ է գտել մեր գրականության ամենադալար սերունդը: Սրանք անտառում բարձրացող այն նոր ընձյուղներն են, որոնցից ոմանք պիտի աճեն, մեծանան և փոխարինեն մեր գրականության դարավոր կաղնիններին: Թե ո՛ւմն է այդ վիճակված և ո՛վքեր կանգ կառնեն կիսաճանապարհին — այդ ցույց կտա ապագան: Ես կուզենայի այստեղ ընթերցողի ուշադրությունը հրավիրել մեր այս բազմախոստում սկսնակների մի քանի բարենպաստ հատկությունների վրա:

Ամեն չորս–հինգ տարին մեր գրականության մեջ մտնում է մի նոր սերունդ, առաջ են գալիս նոր անուններ, բացվում են նոր ծաղիկներ: Շատերը, մինչև իսկ խոստմնալիցներից, խամրում են իրենց ծաղկման առաջին իսկ տարիներին, անհետանում են՝ առանց որևէ հետք թողնելու գրականության մեջ: Հոռեգույն դեպքում այդպիսիները դառնում են լավ ընթերցողներ: իսկ ոմանք շարունակում են ծաղկել, արգասավորվել և կանգնել գրականության մշտադալար պարտիզում՝ իրենց հատուկ երանգով, բույրով ու համով: Սա բնական օրենք է և բան չկա այստեղ անգոսնելու: Միայն թե գրականությունը ղեկավարող ուժերը, ինչպես աչալուրջ պարտիզպաններ, պետք է հետևեն, որ խոստմնալից ընձյուղները զերծ մնան անման տարափոխիկ հիվանդություններից և հնարավորությունները դառնան երջանիկ իրականություն: Այս սերունդը, որ լցրել է ալմանախը, մեր գրականության նորագույն սերունդն է և սովետական նախորդ սերունդներից տարբերվում է նրանով, որ նախորդներն իրենց առաջացման տարիներին չունեին կուլտուրական և գաղա-

փառական այն բարձր որակը, որով աչքի են ընկնում մեր այսօրվա սկսնակները: Սա է ամենաուրախալին և ամենահաստատուն գրավականը մեր գրականության պայծառ ապագայի:

Այս նոր անունները իրենց հետ բերում են վաղ գարունքվա մի թարմություն և բազմազանություն:

Մեր այսօրվա սկսնակ գրողների՝ սոցիալիստական հայրենիքին, նրա մարդկանց, նրա հերոսներին և առաջնորդներին նվիրած երգերը կոնկրետ են, ապրված, շաղախված հույզով ու գաղափարով: Նրանք ռեալիստական գծերով նկարագրում են սովետական կյանքը, նրա փոփոխությունները, մարդկանց դաստիարակության ընթացքը, կապիտալիզմի մնացուկները մարդկանց հոգեբանության մեջ և դրանց վերացումը, սովետական մարդկանց պայքարը հանուն իրենց և իրենց շրջապատի վերակառուցման:

Տեսեք, ինչպես է բնութագրում Առաջնորդին սկսնակ բանաստեղծ Սողոմոն Մկրտչյանը՝ «Հանճարը» պոեմում.

«Որքան լույս է սիրտը նրա, երկնքի պես խորախորհուրդ,
Նույնքան սիրով ընդունում է ամեն մեկից բարի խորհուրդ,
Նույնքան սիրով զրուցում է ամենուրեք, ամենքի հետ,—
Լինի մանուկ, լինի ծերուկ, լինի բանվոր, լինի պոետ»:

Իհարկե՝ այս պոեմն ունի բավական ձգձգված ու վերամբարձ տեղեր: Բայց արժեքավորն այստեղ այն է, որ երիտասարդ բանաստեղծը շատերի նման չի բավականանում ամենաարևային էպիտետներով կամ ներբողային բացականչություններով, այլ ձգտում է գտնել ու նկարագրել Առաջնորդի ՄԱՐԴԿԱՅԻՆ մեծ կերպարը: Նա պատմականորեն, ըստ իր կարողության, պատկերում է Առաջնորդի մեծությունը:

Սոցիալիստական հայրենիքի սերը մեր երիտասարդ բանաստեղծների երկերում գիտակցաբար և հուզականորեն ձուլվում է իրենց մայրենի ժողովրդի, նրա դարավոր հերոսական պատմության և կուլտուրայի հանդեպ ունեցած ջերմ զգացմունքների հետ: Եվ տեսեք, թե ինչ կերպարանքն է ստանում այդ սերը շատ խոստմնալից Հմ. Նալբանդյանի «Հայրենի երգ»-ում, որ

նվիրված է հայկական արվեստին՝ նրա պատմական Տասնօրյակի առթիվ.

«Ելած բյուրեղ ակունքներից հին դարերի հեթանոս,
Ամեն սրտից ակունք առած մի գետ դարձած հորդահոս,
Զգված իմ ժիր ժողովրդի հոգուց իբրև լույս ոլորտ,
Արազի պես հավերժահոս, Արազի պես լայն ու հորդ,
Լափին տալով, խինդով, լալով, ջրվեժնելով մանեման,
Եկաք հասաք ու ձեզ տեսաք Մեծ Արևի հանդիման»:

Սա արդեն սառն ու վերացական, ընդօրինակված երգ չէ հայրենիքի մասին: Սա շոշափելի, խոհական և հուզական հայրենասիրություն է: Նույն այս զգացմունքն ես ունենում, երբ կարդում ես Սերո Խանզադյանի «Ցուրաբերդցիք» բանաստեղծական ֆրագմենտը՝ նվիրված X դարի հայ գյուղացիական ապստամբությանը, կամ Ահարոնի շնորհալի պատմվածքը պանծալի Ղուկաս Ղուկասյանի հերոսական մահվան մասին, կամ Մեսրոպ Մերուժանի կրքոտ տողերը Սասունցի Դավթի և Ռուսթավելու մասին:

Մեր երիտասարդ գրողների արժեքավոր կողմերից մեկն էլ այն է, որ նրանք օգտագործում են ժողովրդական բանահյուսությունը, մշակում են ժողովրդից լսած ավանդությունները, իրենց գրվածքների համար նյութ են վերցնում ժողովրդի կյանքից: Այս տեսակետից աչքի են ընկնում Հայկ Մելքումյանը, Աղաբեկ Դավթյանը, Վազգեն Տալյանը և ուրիշներ:

Շատ բան են խոստանում արձակի ասպարեզում Անահիտ Սահինյանը, Զվարթ Ղուկասյանն ու Գրիգոր Փանոսյանը: Սահինյանը ռեալիստական պարզ գույներով նկարագրում է երիտասարդ մեքենավարի կերպարանափոխությունը իր կնոջ և բանվորական միջավայրի ազդեցության տակ («Ընտանիքում»): Թե ինչպես ծույլ, անտարբեր և կրավորական մարդը դառնում է ակտիվ սովետական քաղաքացի, նշանավոր անձնավորություն— բավական դժվար և ծամծմված թեմա է: Բայց պատանի պատմվածագիրը կարողանում է համոզել և հետաքրքրել ընթերցողին: Նույն հաջողությամբ Զվարթը նկարագրում է մի քաղքենի կնոջ առօրյան՝ լի մանր և սնամեջ կրքերով: Նույնքան հետաքրքրական ձևով Գր. Փանոսը պատմում է մի կարիերիստ

բանաստեղծության անփառունակ պատմությունը: Մեր երիտասարդ գրողները ոչ միայն երգում են մեր սոցիալիստական հայրենիքի փառքով ու հաղթանակներով, այլև տեսնում են այդ հաղթանակների ճանապարհին գտնվող արգելքները, կապիտալիզմի մնացուկները մարդկանց հոգեբանության մեջ ու կենցաղում և պայքարում են այդ մնացուկների դեմ: Այդ սովետական գրականության և գրողի ամենաառաջին խնդիրներից մեկն է: Դրանով էլ նա կատարում է «մարդկային հոգու ճարտարապետի» իր բարձր միսիան: Առանձնապես ուրախալի է այս գիծը երիտասարդ գրողների մեջ: Չէ՞ որ կան գրողներ, որոնք թամաշավոր թռչունների նման թառած «քնարերգության» ծառին՝ միայն ներբող են գեղգեղում հաղթողների համար: Այնինչ սովետական գրականությունը, իմպերիալիզմի և սոցիալիստական հեղափոխության դարաշրջանի գրականությունը, պայքարի գրականություն է, նա կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի կառուցման զենք է, այլ ոչ պասիվ գովերգություն: Այդպիսին էր Մ. Գորկու մեծ ստեղծագործությունը, այդպիսին էր Վ. Մայակովսկու պոեզիան, այդպիսին է սովետական ողջ գրականությունն իր լավագույն երկերով:

Ալմանախը հարուստ է նաև սիրո և բնության երգերով: Սերն ու բնությունն են երիտասարդ գրողի առաջին թեման, նրա ոգևորության առաջին աղբյուրը: Բայց միայն սոցիալիզմի դարաշրջանում, սոցիալական ճնշումներից ազատ կարգերում սերը և բնությունը կանգնում են մարդու դեմ իրենց հավերժական հրապույրով և անսպառ գաղտնիքներով: Դրանից է, որ այնքան պայծառ ու ցողաշաղախ է մեր երիտասարդ գրողների սերը, նրանց երգած բնությունը: Իբրև փայլուն օրինակ կարող է ծառայել Հովհաննես Շիրազը, որն այս ալմանախում բացակայում է և որը սակայն իր վերջին գրվածքներով այլևս ոչ մի կասկած չի թողնում իր տաղանդավորության մասին: Ալմանախում սիրո և բնության երգերով աչքի են ընկնում Աշոտ Լուսենցը, Հայկ Մելքումյանը, Նորիկ Նազարյանը, Ավրորան, Մեսրոպ Մերուժանը, և ուրիշներ: Առհասարակ սիրո և բնության զգացմունքները հատուկ են ալմանախում տեղ գտած համարյա բոլոր գրողներին: Նորիկ Նազարյանի «Պսակները» մի ցողաթաթախ դինամիկ ներբող է բնության և ծաղիկների: Մեր երիտասարդ բանաստեղծներից ոչ ոք չունի այնքան սահուն, հստակ ու կայտառ ոտանավոր, որքան Նորիկ Նազարյանը: Ահա մի փոքրիկ օրինակ.

Էն հրեղեն շողերի տակ
Ձյունն արտասվեց ու հալվեց
Եվ բնության շունչը հստակ
Անհուն սիրով ծավալվեց:

Սերը և բնությունը միշտ միասին են, միշտ միաձուլված: Սերը բնության ամենասրբազան գաղտնիքն է, նրա շունչն ու հոգին: Դրանից է, որ բանաստեղծ Աշոտ Լուսենցը մեր վաղամեռիկ մեծ Դուրյանի ոգով է դիմում իր սիրած աղջկան.

Երբ զանգակ ձայնով աղբյուրն է խոսում,
Հնչուն ծիծաղիդ կարկաչն եմ լսում:

Լուսենցն ալմանախականներից մի սերնդով առաջ է հանդես եկել: Ինչ-ինչ պատճառներով նրա անունը դանդաղել է, բայց կասկածից վեր է, որ նա ունի բանաստեղծական անկրկնելի խմոր, տիրապետում է քնարերգության լեզվին և տեխնիկային: Եթե նա ճանաչի իր սեփական ձայնը ապա կերգի քաղցր ու դուրեկան: Նույնը կարելի է ասել նաև Ավրորայի մասին, որի առաջին գիրքը պարզապես խակ էր և այդ պատճառով իսկույն մոռացվեց՝ թողնելով իր հեղինակի համար անհաջող ոտանավորներ գրողի մի անախորժ համբավ: Բայց ալմանախում տեղ գտած նրա բանաստեղծությունների վրա զգացվում է շնորհքի և կուլտուրայի շունչը: Ավրորան երգում է ոչ միայն սիրո վայելքը, այլև նրա պատճառած տանջանքը՝ հրաժարվելով սիրո պաշտոնական լավատեսության այն շաբլոնից, որ հատուկ է մեր մի քանի ուրիշ երիտասարդ բանաստեղծների:

Երջանկության ու հզորության զգացմունքներով են շաղախված մեր երիտասարդ գրողների գրվածքները: Նրանք խորապես գիտակցում են, որ այդ զգացմունքը նրանց մեջ ծնունդ է առնում իրենց սոցիալիստական հայրենիքի երջանկության և հզորության հողի վրա, և խանդավառ երգեր են ձոնում Առաջնորդին, այդ երջանկության ու հզորության հանճարեղ ճար-

տարածքից: Բազմազան է մեր երիտասարդների թեման և լայն է նրանց տեսադաշտը: Դուրս գալով հայ ժողովրդի պատմության և նրա հերոսական ներկայի սահմաններից՝ նրանք նայում են ամբողջ Սովետական Միությանը, ամբողջ աշխարհին սոցիալիզմ կառուցող մարդկանց արթուն ու պայծառ հայացքով: Նրանք երգում են ոչ միայն Սասունցի Դավթին, այլև Շոթա Ռուսթավելուն, ոչ միայն Ղուկաս Ղուկասյանին, այլև Չապաևին, ոչ միայն սովետական օդաչուների սխրագործությունները, այլև իսպանական ժողովրդի դյուցազնական պայքարը հանուն ազատության:

Մենք ասացինք՝ մեր ալմանախականները զերծ են այն թերություններից, որ ունեին սովետական գրականության նախորդ սերունդները իրենց առաջնային առաջին տարիներին: Բայց այդ չի նշանակում, թե նրանք իսպառ զերծ են այդ թերություններից և չունեն սկսնակներին հատուկ անխուսափելի թերություններ: Այդ թերությունները կան և դրանց մասին պիտի խոսեն մեր քննադատները, եթե չենք ուզում փակել մեր երիտասարդ գրողների զարգացման ճանապարհը: Մեր ալմանախականներից շատերի մեջ աչք է ծակում շատախոսությունը, կրկնաբանությունը, բառերի անտեղի գործածությունը, կառուցվածքի թուլությունը և մակերեսայնությունը (այսինքն՝ սխեմատիզմը): Սրանք բոլորն էլ երիտասարդական թերություններ են և կվերանան ժամանակի ընթացքում, *համառ աշխատանքի շնորհիվ*:

Շատ պիտի աշխատի իր վրա, օրինակ, Հմ. Նալբանդյանը, որն անկասկած օժտված է, շատ բան է խոստանում, բայց դեռ լի է շլակով, ավելորդաբանությամբ: Իբրև օրինակ կարող է ծառայել հենց վերև բերված նրա շատ շնորհալի բանաստեղծությունը: Խոսքի համար պատասխանատվություն զգալը գրողի ամենաբարձր առաքինությունն է: Խոսքի ընտրությունը, խոսքն իր տեղին գործածելը հաջողության իննսուն տոկոսն է: Չկան գեղեցիկ ու տգեղ խոսքեր: Կան տեղին և անտեղի գործածված խոսքեր: Մեր բանաստեղծները շատ են դիմում արևին, արևային ածականների օգնությանը: Արևն, ինչ խոսք, կյանքի և բանաստեղծության ամենամեծ աղբյուրն է: Բանաստեղծների արևապաշտությունն ինքնին խոտելի չէ: Բայց արևն անգամ կձանձրանար, եթե տեսներ, որ մեր բանաստեղծները, բացի իրենից, երկրի վրա այլ բան չեն տեսնում: Չափի զգացմունք — ահա՛ թե ինչի պիտի ձգտեն մեր երիտասարդ բանաստեղծները:

Հոգատար և ճիշտ ղեկավարության շնորհիվ մեր գրականության այս նոր սերունդը կաճի, կհաղթահարի իր թերությունները և մեր սովետական գրականությունը կհասնի նորանոր բարձրությունների: Իհարկե բոլորին չի վիճակված դառնալ գրական մեծություն: Կյանքն ու ժամանակը կանեն իրենց անկաշառ ընտրությունը: Սա պատմության բնական օրենքն է: Բայց գարնանային այն ուրախությունը, որ զգում ես, կարդալով մեր երիտասարդների գրվածքները ալմանախում և ալմանախից դուրս, այն ցողաթաթախ թարմությունը, որ նրանք բերում են իրենց հետ, քեզ համակում են ամենաքաղցր հույսերով մեր գրականության ապագայի վերաբերյալ և հոգուդ մեջ ակամա հնչում են անմահ Թումանյանի խոսքերը՝ «Բարո՛վ եք եկել, ո՛վ նորեր, ո՛վ լավեր»:

Ալմանախը կլինի մի գողտրիկ նվեր Հայաստանի սովետիզացիայի 20-ամյակին: Կարկաչում են հայ ժողովրդի ստեղծագործական անսպառ ակունքները, նոր վտակներ են գալիս մեր ճյուղափառ լեռներից միանալու սովետական մեծ գրականության մայր գետին: Ես լսում եմ նրանց դյութական ձայները և ամբողջ հոգով ուրախացած բացականչում եմ.

— Կարկաչեցե՛ք, հայրենի՛ վտակներ:

Ն. ԶԱՐՅԱՆ



ՍՈՂՈՄՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՆՃԱՐԸ

Լիրիկական պոեմ

Ի հավերժացումն Ստալինի ծննդյան 60-ամյակի

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հոսի՛ր, իմ երգ, զուլա՛լ աղբյուր, անմահական քո ակունքից,
Ժողովրդիս սիրահամբույր, նվիրական սրտի խորքից.
Անչափելի ու անհատնում ծով է նա վեհ՝ մտքի, երգի,
Որքան ուզես, այնքան կառ ու հավիտյան չի՛ ցամաքի:
Բոլո՛ր անմահ, մեծ երգերի երկնողն է նա՝ մայրն հանճարի,
Մտքի բոլո՛ր տիտաններին ջուրն է տվել այդ աղբյուրի...
Թռի՛ր, երգ իմ, նետի պես սուր, սրտերից սիրտ, բերնից-բերան,
Վառի՛ր հազար հրդեհ ու հուր, հազար արև՝ թեժ, հուրհրան,
Հազա՛ր արև ու բարև տար, տար սրտերի հուր-հուր գինին,
Իմ աշխարհից արևավառ՝ Արև ու հայր Ստալինին,
Եվ աշխարհին պատմիր անքուն նրա անհո՛ւն, անեզրական՝
Սեր ու խինդը, լույս հանճարի ովկիանոսից հավերժական...

Ա.

Ահա՛ դարուս մեծ հանճարը՝ վեհ հասակով հսկայական,
Մարդը պողպատ, որ կանգնել է դարագլխին նոր պատմության:
Կանգնել է նա վես, վիթխարի, ինչպես հսկա Մասիսը մեր,
Ճամբամիջում բյուր դարերի՝ հավերժական ու աներեր:
Պողպատակուռ ոտքերն ամուր՝ երկրիս պողպատ կրծքին հավետ,
Աստղապսակ գլուխն, ասես, խորհրդածում է աստղերի հետ.
Կրծքում հուրը ազատության՝ նման բոսոր արեգակի,
Ձեռքում սուրը կայծակնաթափ՝ հավերժական հաղթանակի.
Լույս աչքերում բյուր դարերի իմաստության շողը պայծառ՝
Կանգնել է նա՝ իմ վեհ դարի մեծ հանճարը արևափայլ:
Կանգնել է նա, որպես մարդկանց չորրորդ Արև ու առաջնորդ,
Ու սփռում է աշխարհներին չորս Արևի ճառագը հորդ...

Տեսքով, ասես, զինվոր է նա՝ զինվորական շինել հագած,
Դեմքով, ասես, բանվոր է նա՝ մուրճը ձեռքից հենց նոր դրած.
Հոգով հզոր արև է նա՝ ողջ աշխարհին բորբ ճառագած,
Սրտով՝ ասես կյանքի վրա գարուն է՝ հար ծլած-ծաղկած:
Որքան բորբ է նրա հոգին, բոցաշունչ է ու տիրական,
Նույնքան նրա բարի դեմքին փայլում է շող համեստության:
Որքան լայն է սիրտը նրա, երկնքի պես խորախորհուրդ,
Նույնքան սիրով ընդունում է ամեն մեկից բարի խորհուրդ,
Նույնքան սիրով զրուցում է ամենուրեք ամենքի հետ,—
Լինի մանուկ, լինի ծերուկ, լինի բանվոր, լինի պոետ...

Ոչ մի գաղտնիք չի վրիպում նրա հոգու հայացքից սուր,
Նրա առջև ո՛ղջ աշխարհը պարզ է, ինչպես մի կաթիլ ջուր.
Շողշողում է ջինջ լազուրում, որպես մտքի հզոր արև,
Ամեն կեղծիք ու նենգություն մերկանում են նրա առջև.
Մերկանում են ու մոխրանում կեղծ ու պատիր ամեն ոգի,
Ու տիրական լույսն է փայլում ճշմարտության արեգակի.
Ամեն բառը անմար մի հույս, անշեջ մի հուր հավերժավառ,
Ամեն խոսքը օրենք է լույս, հավերժական վեհ գաղափար:
Տիեզերքի չափ մեծ է ու խոր, աղբյուրի պես պարզ ու հստակ,
Արև դարուս արևազոր հանճարը վեհ, բազմավաստակ...

Բ

Եկել է նա երկաթավայլ՝ ուղիներով ժանտ ու դաժան,
Անթիվ անգամ ճեղքել, անցել շղթաները սև բանության.
Բարձրացել են նրա ճամփին ահատեսիլ անթիվ լեռներ,
Բայց լեռների կատարներից ծագել է միշտ Արևը մեր.
Գիշերի պես սև թևերով մահն է թառել նրա գլխին,
Արևի պես վառ շողերով ցրել է նա մահը մթին.
Ճախրել է նա մրրիկներում, որպես խիզախ մրրկահավ,
Մերկ սրերի շառաչի մեջ չի դողացել ձեռքը մի պահ:
Եղել է մերկ և անոթի, բայց կռվել է միշտ անվրդով,
Որոտի տակ թնդանոթի՝ ծխել է լուռ, հանգիստ սրտով:
Երազել է խուցում մթին ու խորհել է խավար բանտում,—
Խեղճ, տանջահար ժողովրդին ինչպե՞ս բերել կյանք ու խնդում:
Ու կամքը՝ հուր սուր է շինել անպարտելի ու արևառ,
Սիրտը ջահել՝ ջահ է շինել մթնամոլոր մարդկանց համար:
Ու հաղթական նրա ճամփին՝ փոշիացել, ցնդել են վեր՝
Բանտ ու արքա, սուր ու շղթա, մահ ու զնդան, ամպ ու
գիշեր...

Սուրը նրա, որ կոփվել է բյուր դարերի կռվի զնդանում,
Ոչ կրակից, ոչ կայծակից, ոչ հեղեղից է վարանում.
Իր մի զարկով կարող է նա ծովը ցամքել, լեռը ճեղքել,
Կարող է նա արծվի թևն ու արևի բաշը պոկել...
Սուրը նրա սև ամպերում շողացել է որպես կայծակ,
Սառույցի դեմ հրդեհ եղել, գիշերի դեմ՝ վառ արեգակ...
Այն օրից, երբ կոփվել է նա հնոցներում թեժ ընդվզման,
Այն օրից ետ ոչ մի վայրկյան չի մտել դեռ երբեք պատյան.
Լվացվել է արյունով ու արտասուքով նա միշտ վարար,
Ու պատմության հորիզոնում շողացել է միշտ արևառ.
Պուգաչովներ, Ռազիններ ու Դավիթներ միլիոնավոր
Բա՛րձր են պահել փառքը նրա՝ հին դարերից մինչև այսօր:
Ժողովրդի հնոցում նա կոփվեց անդուլ ու լույս ընկավ,
Արև Մարքսի ու Էնգելսի իմաստության փայլը հագավ,
Մեծ Լենինի ձեռքերում նա հաղթանակի փայլով շողաց,
Ահեղ զարկից, ահեղ թափից երկինք-գետինք ողջ դողդողաց.
Մեծ Ստալինի ձեռքում, ահա, նա և՛ սուր է, և՛ արեգակ,

Ու տանում է կյանքը թափով՝ հաղթանակից դեպ հաղթանակ:
Չկա՛ մի ուժ այս աշխարհում նրա կայծակ թափը կոտրող.
Ժամանակի ընթացքն է նա, ժողովրդի բազուկն անդող...

Կոփվում էր նա սև դարերի ցասումնալից, կռվի զնդանում.
Երբ մարդկության գլխի վրա մահու մրրիկն էր սավառնում,
Երբ անկշտում, ամենակուլ կապիտալի հրեշն ագահ՝
Ոսկե կրնկով ճզմում մարդուն ու ելնում էր ոսկեղեն գահ.
Եվ ուզում էր կյանքը լիներ արցունքի ու արյան օվկիան,
Որ ինքն անվերջ զարկեր, լափեր ու գիրանար ծույլ ու անբան.
Ու թունավոր իժերի պես, խմբերի պես ագռավների՝
Սարքում էր նա խնճույք, խրախճան՝ դաշտում մահի ու
արյունի,
Ու սփռում էր աշխարհով մեկ մահ ու ավեր, ցավ ու աղետ,
Որ տառապող մարդու գլխին ինքը նստեր հար ու հավետ...
Օ՜, ժանտատես, մռայլ դարեր, ուր մարդն անգութ մարդ էր
մաշկում,
Օ՜, գայլության անհա՜ս լեռներ՝ խռովահույզ մարդու հոգում...

Ու դարավոր կապարաշունչ, խավարամած հորիզոնում՝
Հաղթանակի ու փրկության ոչ մի արև չէր բարձրանում.
Խո՛րն էր խրել ճիրանները հրեշն անկուշտ կյանքի սրտում
Ու դիվային իր հաճույքով կեղեքում էր, պատառոտում:
Ծծել էր նա ժողովրդի սրտի յուղը, ուժից գցել,
Ժողովրդի ձեռքով իրեն բյուր որջեր էր նա կառուցել:
Մինչ անառիկ ամրոցներում հոշոտում էր ժողովրդին,
Տաճարներում օրհնվում էր նա, որպես «աստծո արդար
որդին...»:
Փակել էր նա ամեն կողմից ժողովրդի ճար ու ճամբան
Եվ անարգել զարկում, լափում, գիրանում էր ծույլ ու անբան:
Կյանքի ամուլ անապատով, որպես քնկոտ կարավաններ
Սողում էին դարերը սև՝ ուսած վշտի ծանր բեռներ:
Անսկիզբ ու անվերջ ճամբով սողում էին նրանք անզոր,
Մութն էր չոքել ամեն կողմից, ելքն անհայտ էր, ճամբան՝
մոլոր...
Սառն էր կյանքը, չկար գարուն, արև չկար ու լույս չկար,

Դատն էր կյանքը, հանց մահաթույն՝ աշխատավոր մարդու համար.
Կերտում էր նա ճարտար ձեռքով բյուր պալատներ լուսավարար,
Իսկ ինքը մութ խուղերի մեջ քարշ էր գալիս՝ հեգ, ցրտահար.
Հանում էր նա հող ու հանքից անչափ գանձեր, բերք ու բարիք,
Բայց նստում էր դատարկաձեռն, աչքը՝ մահի, սիրտը՝ կարիք.
Թափում էր նա սուրբ հույսերով քրտինք՝ աղի ու արծաթյա,
Բայց էր արդար, սուրբ վաստակով կռում էր լոկ իրեն շղթա:

Բայց կա՞ արդյոք բնության թագ, որ հար իշխե կյանքի վրա.
Ո՛չ, չկա՛ այդ. մայր բնության, կյանքի անխախտ օրենքն է դա.
Ո՞ւր են, արդյոք, Ալեքսանդրը, Բոնապարտը հռչակավոր,
Գուցե նրանց գանգի փոշուց շինում են արդ «կավ ու սափոր»,
Ո՞ւր է դաժան Լենկթեմուրը կամ Նիկոլը վերջին ագահ.—
Չկա՛ն. միայն ժողովուրդն է հավետ հզոր, հավետ անմահ.
Ժողովուրդը, որ և՛ մեռնում, և՛ ծնվում է, և՛ կա հավետ,
Ժողովուրդն է, որ հավիտյան ճամբա կերթա աշխարհի հետ,
Ժողովուրդը՝ ինքը կյանքն է, անբաժան մասը բնության,
Ժողովուրդը պետք է իշխի կյանքի վրա՝ հար, հավիտյան...

Եվ, ահա, մեծ ժողովրդի արգանդից լույս ու խորախոր՝
Ծնվեցին ու վեր խոյացան չորս արևներ հզորազոր.
Ու հանց Սասնա Դավիթն ուժեղ, ջարդեցին բյուր ջաղացաքար
Եվ անդունդից խավարամած կյանքն հանեցին դեպ լույս աշխարհ:
Ժողովրդի հետ միասին, դյուցազնական հաղթանակով՝
Նրանք շուռ տվին ծովն արցունքի, տեղը դրին խնդության ծով.
Գլորեցին պերճ գահերից հրեշներին՝ անկուշտ ագահ
Ու հանեցին ժողովրդին հավերժական լուսավոր գահ...

Փա՛ռք քեզ, հզոր, փա՛ռք քեզ, անմահ իմ ժողովուրդ հող ու հանքի,
Որ կոփեցիր դու դարերով հզոր սուրը հաղթանակի,
Փա՛ռք քո սրին կայծակնացայտ, հաղթանակին արևավոր,
Քո հանճարին կամքով պողպատ, որ կանգնել է այնպես հզոր...

Թեկուզ արև նրա սրտից բարկության բյուր կայծեր թռչեն,
Թեկուզ շուրջը նրա՝ սրեր, ռումբեր պայթեն ու չառաչեն,
Թեկուզ մրրիկ, ասմում լինի, կայծակ տեղա, խառնվեն տարերք,
Չի վարանի քո հանճարը ու չի զիջի դիրքը երբեք.
Կանգնել է նա քո լեռ կրծքին, որպես արծիվ լեռան վրա,
Քանի նա կա՝ կուրծքն է քո լեռ, քանի դու կաս՝ անմահ է նա...

Գ.

Բռնկվում են հորիզոնում մեծ հրդեհներ կործանարար,
Սպառնում են ջնջել կյանքից ազատության հետքը խաղաղ,
Բայց հանճարը մեր արևառ, խաղաղ հեղնանքն արև դեմքին,
Արհում է ու երջանկության նոր ուղի է գծում կյանքին:
Ու բռնկվող հրդեհների, մրրկաշունչ հողմերի դեմ՝
Կանգնել է նա անդրդվելի ու անհողդողդ, ինչպես մի վեմ...
Կանգնել է նա անհաղթ ու վես, Մասիսի պես բարձր ու սեգ,
Ու բարձունքից երջանկության լույս է սփռում աշխարհով մեկ.
Բաշխում է հար ու անհատնում, իր բարձունքից վես— վիթխարի՝
Բարություն ու լույս, խնդում ու հույս, հավերժական սեր ու բարիք:
Հույս է տալիս, ուժ է առնում բանակներից միլիոնավոր,
Թափ է առնում, հզորանում և ծավալվում է օրեցօր:
Մայր արևն է նա ճառագած հոգիների տիեզերքում,
Եվ անհամար աստղեր պայծառ նրա շուրջն են պարում անքուն:
Նրա պայծառ լույսի ներքո մեղրից քաղցր է կյանքը հոսում,
Լեցուն ոսկի երազներով, վառ հույսերով, սիրով անհուն.
Կյանքը որպես ոսկի հեքիաթ, գրնգում է երգի նման,
Հեքիաթը լի հրաշքներով, հերոսներով՝ վեհ, աննման.
Ազատության դաշտին ելած՝ օրն է բացվում հազար գույնով,
Երջանկության թևին բազմած սիրտն է թռչում լուսե հունով.
Կյանքն է լույս բախտ, կյանքն է դրախտ, երջանկության այգի է դառ,
Մարդն է բլբուլ կյանքն է ալվարդ,— երգն անվերջ է, սերն՝ անսպառ:

Гос. Пуб. Библиотека ССРА им. А. Мясникяна

Չես գտնի դու երբեք այստեղ հին, ամեհի մարդու հոգին,
Բարձրացել է արծվացեղ նոր սերունդը՝ վեհ ու անգին.
Նոր սերունդը, որ չարժում է նախանձն արծվի ու արևի,
Մինչև քիչ է մնում Մասիսն իջնի ու խոնարհվի...

Հագել է նա պողպատ զրահ, արծվային հզոր թևեր,
Ճախրում է հար հերոսության, երջանկության բարձունքն ի վեր.
Հերոսության կաթով սնված, ձուլված նյութից մի տիտանին՝
Սանձում է նա տարերքն անհուն՝ նստած հզոր պողպատե ձին:
Ես ասում եմ, որ նոր մարդիկ հանուր կամքով, դյուցազնորեն՝
Մի օր կապույտ երկնի ճակտից աստղերն անգամ վար կբերեն.
Նրանց կամքով արևները տիեզերական պար կշարեն,
Նրանք, այդ վեհ բազեները, տիեզերքը ո՜ւշ կը տիրեն:
Ու հաղթական նրանց կամքով, հաղթանակով դյուցազնական՝
Ստալինյան կամքը շուտով պետք է դառնա տիեզերական:

Դ.

Ու վեհագույն բղձանքներով մարդկությունը ամեն անգամ
Սպասում է, թե ե՞րբ պիտի մեծ հանճարի խոսքը ընդգա.
Արև մարդու, որի հոգում ծառն է աճում գաղափարի,
Ուր հասնում են պտուղները Մարքս—Լենինյան հանճարի:
Ուր ամեն մի ակնթարթը իմաստության երկունք է մեծ,
Ու կյանքի նոր մի արշալույս— դարն է հասում վայրկյանի մեջ:
Սպասում են, որ հանճարը դեռ չլսված խոսքեր ասի՝
Մարդկանց կյանքի, ապագայի, պայքարի ու բախտի մասին:

Ու երբ բացվում են հանճարի հոգու գանձերն, այդ վեհ ժամին՝
Քարանում է ամեն մի շունչ, մեղմանում է անգամ քամին:
Ու լսում է շունչը պահած, արար-աշխարհ մեծ հանճարին,
Անապատում վարդեր բացող, քարը ցնցող նրա ձայնին:
Փոթորկվում է սրտերի ծովն զարկերակների հորձանքում,
Ու կրծքերի լեռնաստանից հույզի հրաբուղխ է ժայթքում.
Եվ մակընթաց օվկիանի պես դուրս է թռչում իրեն ափից
Ու աշխարհի խինդը անզուսպ՝ հրճվանքների մեծ տարափից:

Եվ հյուսիսից մինչև հարավ, արևմուտքից մինչ արևելք՝
Զրնգում է խոսքը նրա, որպես խորը դյութող մի երգ,
Զրնգում է խոսքը նրա մերթ որպես երգ երջանկարար,
Մերթ որպես վեհ մի մարտակոչ, մերթ հույզերի հեղեղ վարար,
Ու մերթ թռչում դեպի ոսոխն ինչպես ահեղ մի մահվան բոթ,
Հին աշխարհի գլխին պայթում, որպես ամպրոպ ու թնդանոթ:
Ու վիրավոր մի իժի պես գալարվում է հին աշխարհը,
Ասես հսկա երկրաշարժից՝ խարխլվում է ամեն քարը.
Թունաշաղախ զանգը նրա մեր ամրոցի հիմքում թաղված,
Պոչն է միայն շարժում անզոր՝ մահվան անհեղ դողով բռնված:

Այնտեղ իշխող կապիտալի հրեշները վայրենացեղ՝
Խլանում են, ճնթահարվում ազատաբեր ձայնից ահեղ,
Նրանց ոսկու «հանճարները» ուշաթափվում են լեղաճաք,
Ինչպես ձայնից թնդանոթի՝ փափկաքնքուշ մի նապաստակ:
Վիրավորված հրեշները ցավից ոռնում են կատաղի,
Ու բորբոսնած ուղեղներից շաղ են տալիս թույն ու լեղի:
Եվ կատաղած այդ ժամերին, ինչպես գայլը ընկնի հոտում՝
Հազարավոր մարդիկների ծվատում են ու հոշոտում.
Բայց չի բացում ոչ մի ոճիր նրանց առջև դուռ փրկանքի,
Խտանում է նրանց շուրջը՝ շղթան մահի ու կապանքի...

Ու զնգում է մեծ հանճարի հոգու զանգը տիեզերական,
Ստեղծագործ դասակարգի կամքով ահեղ ու հաղթական,
Թռցնում է նա սիրտը մարդկանց հոգու թևով դեպի հեռո՜ւն,
Ուր որ սերն է վառ ամենուր, անթառամ են վարդ ու գարուն,
Ուր աշխարհը լիության ծով և օվկիանոս է բարության,
Ուր կյանքն, ասես, հար զնգացող երգ է սիրո ու խնդության,
Ուր խնդություն, սեր ու բարիք ամենքին են ամենուրեք,
Ուր գիշերն էլ լույս է տալիս ինչպես արև, ինչպես ցերեկ,
Ուր չեն լինի երկրի վրա տեր ու ծառա՝ մերկ ու մոլոր,
Ուր մարդն իրեն ծնված օրեն՝ և՛ բարի է, և՛ բախտավոր...
Ուր տրակտոր ու խոփ են շինվել շղթա—կապանք, թուր— թնդանոթ,
Ու հաշտ, խաղաղ մարդկությունը շնչում է ջինջ ու ազատ օդ.
Թռցնում է նա սիրտը մարդկանց դեպ ապագան երջանկավետ
Ու պարզում է ցուցամատը, նշում ուղին՝ ջինջ, լուսակերտ.

Գտել է նա հռչակավոր հենման կետը Արքիմեդի
Ու շարժում է երկրագունդը դեպ գալիքը պայծառ կյանքի...

ՎԵՐՋԵՐԳ

Ո՛ւր էլ գնամ, ո՛ւր էլ լինեմ, ինչ էլ երգեմ այս լույս
կյանքում,
Կյանքի երկունք, երգի ակունք, գիտցի՛ր, ողջը քե՛զ եմ երգում.
Քե՛զ են ուղղված հոգուս բոլո՛ր սլաքները՝ թեժ, բոցարկու,
Ո՛վ դու հավետ երջանկության արև կյանքի և իմ հոգու։
Երկնից աստղեր թե վար բերեմ, սեգ ճակատիդ պսակ հյուսեմ,
Քիչ է դարձյալ, ո՛վ դու մտքի անձեռագործ գագաթ վսեմ:
Ու միշտ խորհել, ման եմ եկել, բայց չեմ գտել ես քեզ համար
Մի թանկ նվեր, քան երջանիկ ջահել սրտիս երգը անմար.
Եվ առաջին երգը սրտիս, որպես անբիծ առաջին սեր,
Քե՛զ եմ տալիս, քե՛զ է թռչում սիրտս, որպես լույսի թիթեռ...

Բայց այս միայն իմ երգը չէր, երգն էր հզոր միլիոնների,
Որ թռչում է հաղթաշառաչ, ցնցում սիրտը ողջ աշխարհի:
Իմ գրիչով երգեց այսօր ժողովրդիս սիրտը կայտառ,
Սիրտը հստակ, որ անմահ է և կերգի քեզ դարեդար:
Քո անունը գրված է հար նրա սրտի ոսկե գրքում,
Դու մի անմար ծիածան ես նրա հոգու ջինջ երկնքում.
Ու ծնում է ու սնում նա նոր Հոմերին ամենագետ,
Որ ոգնելով պիտի կերտի փառքիդ գագաթն անձեռակերտ:

Ու ոչ սկիզբ, ոչ վերջ ունի երգը քո մեծ, դյուցազնական,
Ասես անհուն տիեզերք լինի՝ խորախորհուրդ ու անսահման.
Ոչ գրելով, ոչ պատմելով սպառելու չկա՛ հնար,—
Ծովը պետք է թանաք լինի, երկինքը՝ թուղթ, վայրկյանը՝
դար...

Գալիս է այն շռնդալից հին դարերից մշուշապատ
Ու պատմության արծվի թևով ճախրում հեռուն՝ լուսագագաթ.
Ամեն վայրկյան հնչում է նա, չկա սահման նրա թափին,
Հաղթաշառաչ թռչում է նա Մեծ Մոսկվայից մինչև Պեկին,
Անցնում Փարիզ ու Լոնդոնով, անցնում Բեռլին ու Նյու-Յորքով,

Ու գնում է տիեզերացունց որոտով ու արձագանքով:
Ու լսում եմ որոտընդոստ, ահեղագոչ ես այդ երգում,
Որ բանակը Ստալինյան և՛ անհաղթ է, և՛ անհատնում.
Ու լսում եմ աշխարհացունց խուլ դոփյունը քո բանակի,
Որ ելնում է վերջին կռվի ու վերջնական հաղթանակի...

Մեր աշխարհում շարված ամեն լուսե քարը՝ այդ քո երգն է,
Լույս գալիքի արևաշող ճանապարհը՝ այդ քո երգն է,
Ու նոր կյանքի ամրոցն հսկա, ո՛վ դու մտքի անհաս կատար,
Քո, և քո մեծ վարպետների հուշարձանն է բազմաճարտար:
Ու հավերժի լուսե գրքում, բյուր երգիչներ լուսե գրչով՝
Պիտի կերտեն երգի ամրոց, որ չի քանդվի ոչ մի բրչով.
Ու ամրոցում մարմարակերտ, պիտի ապրեք դուք հավիտյան
Արևաշող հանճարներիդ ընտանիքով չորրորդության:
Ժամանակի ոտքը պողպատ կմաշեցնի լեռն Արարատ,
Բայց չի մաշվի ձեր հանճարի լեռը հսկա, քառագագաթ...

Փա՛ռք, արև իմ, անմարելի հանճարներիդ արևադուն,
Ցավում եմ, որ ձեզ արժանի չ՚երգեց իմ անզոր լեզուն,
Քո կայծակե ահեղ սրի և արեգակ քո հանճարի
Մեծ երգիչը պիտ ունենա արև հոգի, կայծակ գրիչ...

Ս. ՀԱՐՈՆ

ԱՐԳԻՆԵԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

1

Քարքարոտ, փոշոտ ճանապարհով գնում էին մի խումբ զինված մարդիկ: Նրանց հոգնած ու փոշեծածկ դեմքերի վրա պարզ երևում էր մի ծանր վիշտ: Արագ քայլերով կտրում էին խորդ ու բորդ ճանապարհը, որպեսզի ժամ առաջ հասնեն հեռվում երևացող Մազրա գյուղը:

Մայիս ամսի անարև օր էր: Հարավային կողմի սարերի կատարներին կուտակվում, խտանում էին սև ամպերը և նրանց գորշ ֆոնի վրա երևում էին անձրևի թեք շերտեր:

Առավոտ էր:

Դիմացի գյուղը ճանապարհորդների առջև քիչ-քիչ մեծանում էր ու ընդարձակվում: Քարաշեն խրճիթներն արդեն կարելի էր պարզ որոշել:

Այդ ժամին ճանապարհորդների ետևում, մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա, հայտնվեց զինված մի ձիավոր: Նրա տակի սև ձին քրտինքի մեջ ողողված, փրփրած բերանում շարժում էր լկամը ու հևալով շնչում:

Ձիավորն իր անհանգիստ ձիու սանձը ձգած՝ կրծքից կախած հեռադիտակով նայեց ճանապարհորդներին և ձիու գլուխը շուռ տալով ետ դարձավ, դուրս եկավ ճանապարհից, բարձրացավ մոտիկ բլրի վրա ու նորից հեռադիտակով նայեց գյուղին մոտեցող ճանապարհորդներին: Երբ հաստատ համոզվեց, որ այդ «նրանք» են, բլրից արագ ցած իջավ, ձին քշեց արտերի միջով՝ գյուղը շրջանցելու, որպեսզի կարողանա այդ նույն գյուղը մտնել ուրիշ կողմից, ինչքան կարելի է շուտ և, որ կարևորն է, ճանապարհորդների համար մնա աննկատելի:

Ճանապարհորդները գնում էին իրարից բաժան-բաժան, փոքրիկ խմբերով:

Նրանց շուրջը փռված էին խոպան դաշտերի ալիքավոր հսկայական տարածություններ, որոնց վրա, տեղ-տեղ գունավոր կարկատանների պես երևում էին նոր ցանած, ծլած կամ հերկած արտերը:

Ճանապարհի մոտով, կանաչների միջով գալարվում էր մարմանդ մի առու և իր ափերի վրա խոնարհված ուռենիների ճյուղերը թրջելով՝ թեթև աղմկում էր ու անցնում:

Քայլում էին զինված ճանապարհորդները լուռ ու մունջ, ամեն մեկն իր խառնաշփոթ մտքերի մեջ սուզված: Եթե հնարավոր լիներ՝ նրանցից յուրաքանչյուրն ինչպե՜ս կցանկանար իր ջարդված, հոգնած, քաղցած մարմնով փռվել այդ կանաչների մեջ, ծառերի ստվերների տակ և առվի միալար, տխուր խոխոջով քնել, քնել... Գոնե մի քիչ մոռանալ ամեն բան... Արթուն գիտակցությունն այս քանի՛ օր է՝ գիշեր ու ցերեկ անընդհատ տանջում էր նրանց:

Ապստամբ քաղաքը չորս օր միայն կարողացան պահել իրենց ձեռքում: Թշնամու հետ մեղմ վարվեցին, և թվով գերազանց թշնամին խորամանկորեն օգտվեց այդ հանգամանքից ու կատաղի վրեժով հետ խլեց քաղաքը:

Այժմ նահանջում էին՝ տանջող ցավը, պարտվածի այրող զայրույթը սրտերում, և աշխատում էին, որ ոչ ոք չճանաչի իրենց: Գազազած թշնամին երևում էր նրանց շուրջը, ճանապարհներին, և ամեն րոպե սպասվում էին արյունոտ անակնկալներ: Թշնամու յերկրի միջով պիտի անցնեին 50—60 կիլոմետր տարածություն՝ մյուս ապստամբած քաղաքին միանալու, որտեղ հույս կար, թե հեղափոխական շարժումը լավ ընթացք կստանա:

Ապստամբությունը հաջող սկսվեց և ծավալվում էր ամբողջ Հայաստանում: Բայց, ախր թշնամու հետ մեղմ չեն վարվի... Ճակատագրական այդ սխալը թույլ տվին իրենք, և, երբ հասկացան, արդեն ուշ էր:

Առաջ էին շարժվում մռայլ դեմքերով, գլխիկոր, չէին խոսում՝ հատ ու կենտ հարց ու պատասխան էր լինում միայն:

Արդեն գյուղն էին մտնում:

— Ընկերնե՛ր,— դիմեց խմբի ղեկավարն իր շուրջը հավաքվածներին,— այս ծայրի տունը լավ է, կարիք չկա գյուղամեջ մտնելու. լավ չի, որ գյուղացիները մեզ տեսնեն: Մի քիչ հաց կվերցնենք ու կշարունակենք մեր ճանապարհը: Երևի այս տանը մի քիչ ուտելու բան կճարվի, մեծ տուն է երևում:

Նրանք խմբով մտան բակը:

Պատի տակ շղթայված ահագին շունը մեկեն կատաղությամբ սկսեց հաչել անծանոթների վրա և ուժով ձգեց իր վզի շղթան:

Նրանք ուշադրություն չդարձրին շան վրա. երկուսը փոքրիկ ատրճանակներով բարձրացան պատշգամբ և տան դուռը բաղխեցին:

Ջահել մի կնոջ դեմք երևաց փակ պատուհանի ապակիների ետևից և ծածկվեց:

Անցավ մի քանի րոպե:

Դուռը դեռ փակ էր: Հարվածները նորից կրկնվեցին այս անգամ ավելի արագ և ամուր:

— Ետ դառնանք, Սուրեն,— ասաց դուռը ծեծող Պետրոսը,— գուցե դիտմամբ չեն ուզում բանալ, մի ուրիշ դուռ կըբաղխենք:

— Չէ՛, Պետրոս, նորից բաղխենք, գիտես, որ ժամանակ չունենք դռնից դուռ քաշ գալու:

Քիչ անց՝ դուռն արագ բացվեց, շեմքի վրա հայտնվեց մի պառավ կին և առանց հարց ու փորձի սկսեց արագ-արագ ու ջղային տոնով խոսել:

— Ի՞նչ եք ուզում մեզանից, բոլ է, բո՛լ... Թալանեցիք, էլ բան չմնաց... Էս գյուղում միայն մե՞նք ենք հարուստը, ուրիշի մոտ գնացեք է՛լի, ի՞նչ աննամուս մարդ եք եղել, տո... Մաուզերներդ կախել կանգնել եք, ո՞վ է ձեզանից վախեցողը... Մեկնե հոգիներս առեք՝ պրծնենք, է՛լի...

— Ա՛յ նանի, ի՞նչ է պատահել,— հանգիստ ու ժպտերես դիմեց նրան Սուրենը,— մենք ոչ մաուզերիստներ ենք, ոչ էլ հոգեառներ... Խաղաղ ճանապարհորդներ ենք, հեռու տեղ ենք գնում. մեզ մի քիչ հաց, պանիր է պետք, փողով, իհարկե, եթե կա. շատ շնորհակալ կլինենք:

Պառավը նախ զարմացավ, ապա ամոթից գլուխը կախեց իր

կուրծքին: Նա իր կյանքում երբեք չէր տեսել, որ զինված մարդիկ այդպես մեղմ խոսեն ու խնդրեն: Նրա կնճռոտ, ցամաքած այտերը կարմրեցին. ավելի շատ կարմրեց դռան ետևում կանգնած ջահել կինը:

Տիրեց լռություն:

Շունը դեռ հաչում էր կատաղաբար և ուզում էր ազատվել իր վզի շղթայից:

— Ներող եղիր, բալա ջան,— հուզված դիմեց պառավը Սուրենին, խեղճացած ժպիտով,— ինչպես երևում է դուք են մյուսներիցը չեք, թողեք տղես իմաց տամ, նա գիտե, դուք շատվոր եք, ձեզ շատ հաց է պետք: Աղջի, Աշխե՛ն,— դարձավ նա իր հարսին,— մի մարդուդ ասա գա, բոստանումն է:

Ջահել կինը սենյակի միջով անցավ, տան ետևի դռնից դուրս եկավ ու մտավ բանջարանոց, որտեղ աշխատում էր նրա ամուսինը իրենց բատրակի հետ:

— Այ շուն, բոլ է հաչես,— դիմեց պառավը շանը:

Շունը մեղմեց հաչոցը...

— Համեցե՛ք ներս, ձեզ մատաղ, նստե՛ք, հանգստացեք մի քիչ, ծարավ էլ կլինեք երևի,— հիմա տղես կգա,— խնդրեց պառավը բակում սպասող անծանոթ զինված մարդկանց:

— Չէ՛, շնորհակալ ենք, թող տղադ գա, եթե համաձայնվի մեզ հաց ծախել, նոր կնստենք, կհանգստանանք մի քիչ,— պատասխանեց Օնիկը:

Անցավ մի քանի րոպե:

Եվ բանջարանոցի կողմից, զարմանքից լայն բացած աչքերով ջահել կնոջ հետ երևաց նաև նրա ամուսինը՝ խոժոռադեմ, շապկի թևերը վեր ծալած, միջահասակ, ամրակազմ մի տղամարդ: Կինը մնաց սենյակում, իսկ ամուսինն անցավ սենյակի միջով, դուրս եկավ պատշգամբ և լուռ, կիտած հոնքերի տակից բոցկլտող աչքերով չափեց փոշոտված, մազոտ երեսներով, զինվորական ու քաղաքացիական շորեր հագած, զինված այդ մարդկանց ու մեկեն գոռաց.

— Ձեզ համար ես հաց չունե՛մ:

Նրա արյունոտ աչքերի մեջ կրակ շողաց: Արագ ներս մըտավ նա՝ շվարած մոր թևից քաշելով և դուռը շառաչով ծածկեց ետևից:

Ճանապարհորդները լուռ, սեղմած շրթունքներով, դատարկ բակի մեջ կանգնած՝ դեռ մի քանի րոպե նայում էին իրար:

— Ղուկա՛ս, Ղուկա՛ս, Թույլ տուր շան սատակ անենք էս շան վորդուն, ես դրա...— հուզված, համարյա լացակումած խոսեց մի երիտասարդ՝ դողդողացող ձեռքը դնելով գոտուց կախված շշաձև ռումբի վրա:

— Չի կարելի: Անցնենք առաջ, հաջորդ դուռը կծեծենք,— պատասխանեց Ղուկասը և բակից դուրս եկավ:

Հոգնած, ուժասպառ, մինչև սրտի խորքը վիրավորված ու քաղցած ճանապարհորդները, իրենց զայրույթը զսպելով, կրծոտելով իրենց չորացած շրթունքները, համբերությամբ դուրս եկան բակից ու անցան առաջ՝ հաջորդ դուռը ծեծելու:

Մինչդեռ տանտերը, ճանապարհորդների վրա դուռը կատաղությամբ փակելուց հետո, արագ ներս մտավ սենյակը, ցած առավ պատից կախված հրացանն ու փամփշտակալը՝ լցրած փամփուշտներով, և թռավ լուսամուտի մոտ:

Պառավ մայրը ճչալով առաջը կտրեց:

— Ի՞նչ ես անում, Խաչի՛կ:

— Հեռո՛ւ քաշվիր:

— Չեմ թողնի, չեմ թողնի, որդի. էդպես մարդկանց վրա հրացան չեն քաշի... Նրանք իմ դուռը չջարդեցին, զոռով հավերս չմորթեցին, հարսիս վրա ծուռ չնայեցին, ոչխարներս չքաշեցին, չտարան....

— Շատախոսության ժամանակը չի, հեռացի՛ր պառավ, դու դեռ չես հասկանում, թե ովքեր են դրանք:

Տղան կատաղությամբ ետ հրեց իր մորն ու վազեց դեպի դուռը:

Մայրը վազեց, կպավ դռանը ու կտրեց նրա ճանապարհը:

— Խաչիկ, կրռամ, սաղ գեղը կհավաքես մեր գլխին, էտ բանը չանես:

Պառավը մեջքով ամուր կպել էր դռանը՝ թևերը տարածած դեպի կողքերը: Նրա դունատ դեմքի մկանները ցնցվում էին:

Խաչիկը կանգ առավ, շփեց իր ճակատը՝ մի հանկարծական մտքով բռնված:

Նրա կինը սփրթնած կծկվել էր սենյակի մի անկյունում ու չէր համարձակվում ծպտուն հանել: Երբ նա բանջարանոցում իմաց տվեց ամուսնուն, թե այդպիսի մարդիկ են եկել և հաց են ուզում փողով, ամուսինը հանկարծ բարկացավ և այնպիսի բաներ ասաց այդ մարդկանց մասին, այնպես հայհոյեց, որ կնոջ ծնկներն սկսեցին դողդողալ:

— Լավ, գնա՝ կանչի՛ր,— հանդիստ ձայնով դիմեց նա մորը,— հաց տուր, եթե չկա, նստիր թխիր հարսիդ հետ և տուր թող ուտեն, կշտանան, հասկացա՞ր, ես գնում եմ բոստան՝ աշխատելու:

Մայրը զարմանքից բերանը բացեց, նա չհավատաց իր ծանրացած ականջներին, բայց հետո հանկարծ ծիծաղեց ուրախությունից, երբ տեսավ, որ որդին իսկապես հրացանն ու փամփուշտները կախեց պատից և դուրս գնաց:

— Աղջի, վազիր, դու թեթև ես,— հուզված ձայնով դիմեց պառավն իր հարսին,— էդ ղարիբներին կանչիր մեր տունը... Ասենք սպասիր՝ միասին գնանք, ես էլ եմ գալիս:

Եվ երկուսով միասին դուրս եկան բակն ու վազեցին փողոց:

Ճանապարհորդները, երկրորդ տանից էլ մերժված գնում էին դեպի երրորդ տունը:

— Բալանե՛րս, տղե՛րք, սպասե՛ք,— կանչում էր պառավը և վազում խմբի ետևից:— Եկեք մեր տուն, հաց կա՛, էլի կթխեմ, չեմ թողնի քաղցած հեռանաք մեր անից:

Խումբը կանգ առավ: Մի տարիքավոր մարդ մոտեցավ պառավին:

— Քո տղան էր, չէ՞, որ մեզ մերժեց:

— Հա՛, քեզ մատաղ, բայց նա ուղարկեց ինձ ձեր ետևից, զղջաց իր արածի համար, տանը չի նա, գնաց բոստան՝ աշխատելու:

— Գնանք, ընկերներ, մայրիկը մի քիչ հաց կտա ուտելու, — առաջարկեց խմբին տարիքավոր մարդը:

Խումբը ետ դարձավ և մտավ պառավի տունը:

2

Խաչիկը գնաց բանջարանոց, մի թփի տակ գցած իր հնամաշ պիջակի գրպանից մի կտոր թուղթ հանեց, կարճ մատի-

տով ինչ որ բան գրեց, կանչեց հեռվում աշխատող բատրակին, տվեց նրան ու ասաց.

— Էս թուղթը, Ղևոնդ, շտապ կհասցնես տեր Մինասին, իրենց տանը կլինի, հասկացա՞ր:

— Տանեմ, աղա ջան:

— Եվ շուտ պատասխան կբերես անպատճառ:

— Հրամանք ես:

Բատրակ Ղևոնդը շտապ քայլերով դուրս եկավ բանջարանոցից և փոխանակ տան առաջով անցնելու և փողոց դուրս գալու, մտավ տուն, մի քիչ ջուր խմեց ու նոր շարունակեց իր ճանապարհը: Տանը նա տեսավ զինված մարդկանց, բայց առանձին բան չկասկածեց. իրենց մոտ հաճախ էին լինում այդպիսի մարդիկ: Եվ երբ նա մի երկու ծուռ փողոց անցել էր արդեն, հանկարծ մի տեսակ բուռն հետաքրքրություն ստիպեց նրան իմանալու, թե իր մոտի թղթում ինչ է գրած:

Տարիներ առաջ, Ղևոնդն իրենց գյուղի քահանայի մոտ դպրաճանաչ էր դարձել: Նա իր ծոցից հանեց ծալած թուղթը, բացեց և գիրկապ անելով սկսեց կարդալ...

— Ինչպե՜ս,— բացականչեց բատրակը դունատված և հենվեց մոտիկ պատին, նայեց աջ ու ձախ, որ տեսնի, թե մարդ չի՞ նայում իրեն, ու նորից կարդաց:

— Էս ի՞նչ է գրած. տերտերին ինչի՞ է գրում չափսի բաներ... Ես լավ կարդալ չգիտեմ,— մտածեց նա և ուշադրությամբ, լարված նյարդերով, աշխատելով ոչ մի տառ բաց չթողնել, երրորդ անգամ կարդաց նույն գրությունը:

— Հը՞, ի՞նչ անեմ,— մտածում էր նա սաստիկ անհանգստացած.— տերտերին, իհարկե, չեմ տանի էս թուղթը... պատռել, չէ՛, չի կարելի. բա Խաչիկին ի՞նչ պատասխան տամ... Նա մի րոպե մոռացավ, թե որտեղ է գտնվում. գետինը ոտքի տակ կարծես օրորվում էր... Մի շուն ետևից հանկարծ հաչեց: Ղևոնդն սթափվեց ու հավաքեց իրեն. նայեց ձեռքի թղթի կտորին ու նորից սկսեց մտածել...

— Ամենից առաջ վազեմ Գրիգորի մոտ,— անցավ նրա մտքովը,— նրան մեկ հարցնեմ այս մասին:— Եվ նա սկսեց արագ-արագ վազել փողոցներով, չնայած 24—25 տարեկան հասակին:

Նա հասավ Գրիգորենց տուն և դնդակի պես ներս ընկավ բակի դռնից:

Գրիգորի քույրը՝ 17 տարեկան Սաթիկն իրենց հավերին կուտ էր տալիս: Ղևոնդի վրա վազելուց բոլոր հավերն ու աքաղաղն այս ու այն կողմ փախան: Աղջիկը վախեցած նայեց Ղևոնդի քրտնած, գունատ դեմքին ու գոգնոցի ծայրը բաց թողեց... միջի հացի փշրանքները թափվեցին նրա բոբիկ ոտների վրա:

— Ի՞նչ է պատահել Ղևոնդ:

— Գրիգորը ո՞րտեղ է...

— Տան ետևն է, կավ է պատրաստում, որ կտուրը ծածկի... Բայց ի՞նչ է պատահել քեզ...

Ղևոնդը չպատասխանեց ջահել աղջկանը և արագ վազեց տան ետևը:

Հավերը կչկչալով հարձակվեցին թափված հացի փշուրների վրա և իրար հրհրելով, արագ-արագ սկսեցին կտցել, ուտել իրենց բաժինը:

— Գրիգո՛ր, Գրիգո՛ր...

Գրիգորը կավով լի կողովը ցած գցեց մեջքից ու բռնեց բատրակի ուսից:

— Ի՞նչ է պատահել:

— Կարդա՛,— ասաց նա արագ-արագ հևալով և ձեռքի տրորված թղթի կտորը հանձնեց Գրիգորին ու կասկածով նայեց շուրջը:

Բակում ուրիշ մարդ չկար:

Գրիգորը կարդաց. «Տե՛ր հայր, Ղարսից փախած մի խումբ ազգի դավաճաններ տանս վեր են ընկել: Բոլոր աղերանց իմաց պիտի տալ: Ես պատրաստ եմ»:

— Դու տեսա՞ր նրանց:

— Տեսա:

— Շատվո՞ր են:

— Մի քսան երեսուն մարդ կլինեն:

— Եթե իսկապես դրանք Ղարսից են փախել, ուրեմն մերոնք են, Ղևոնդ:

— Գիտեմ, իհարկե, դրա համար էլ քեզ մոտ վազեցի:

— Բա ի՞նչ անենք:

— Չգիտեմ, Գրիգոր ջան... ի՞նչ անենք...

Մի րոպե տիրեց լռություն:

— Ա՛խ, զորքս չուն, սպասիր դեռ,— խեղդվող զայրույթով գոռաց Գրիգորը և ձեռքի թուղթն ուզեց պատռել:

— Կաց, մի պատռիր,— ասաց Ղևոնդը նրա ձեռքը բռնելով:

— Ինչո՞ւ...

— Էս թուղթը դեռ պետք կգա. Փարաջավոր թալանչուն չեմ տա, իհարկե, բայց որպեսզի Խաչիկը ոչինչ չկասկածի, կվերադարձնեմ նրան և կասեմ, որ տերտերին չեմ գտել:

— Հետո՞...

— Հետո էն, որ նա կգնա նրան փնտրելու, իսկ մենք տղաներին իմաց կտանք, որ գյուղից դուրս գան:

— Լավ... բայց ուրիշ ի՞նչ կարող ենք անել: Հա՞... Ղևոնդ, դու վազիր տուն և իմաց տուր տղաներին, որ գյուղից հեռանան, ինչքան շուտ, էնքան լավ, դե՛, թռիր:

Ղևոնդը վազեց տուն, գնաց բանջարանոց և թուղթը հանձնեց Խաչիկին:

— Աղա, տեր հայրը տանը չէր, չգտա...

— Ի՜նչ,— ծոր տվեց նա և սկսեց անհանգիստ ետ ու առաջ քայլել,— բա չիմացա՞ր ուր է գնացել...

— Չիմացա,— ասաց Ղևոնդը և զգաց, որ անհաջող պատասխանեց ու արագ ավելացրեց,— տանը մարդ չկար:

— Թո՛ւ, քո կերած հացը հարամ լինի, հա՛... Բա ինչո՞ւ ես էդպես քրտնել, ո՞վ է ընկել ետևիցդ, հը՞,— կասկածելով հարցրեց Խաչիկը:

— Քրտնե՞լ,— կրկնեց Ղևոնդը և կոշտ մատներով ճակատը սրբեց ու նայեց թրջված ձեռքին,— է, ես ի՛մ, շոգ է, համ էլ վազում էի, որ շուտ իմաց տամ:

Խաչիկը հանկարծ իր կանգնած տեղում ցնցվեց:

— Դու գրագե՞տ ես:

Ղևոնդն զգաց, որ իր երեսը կարմրում է, բռնկվում կրակի պես:

— Գրագետը ո՞րն է աղա,— գլուխը կախ՝ կմկմաց նա:

— Գրագետ չե՞ս հասկանում. գրել-կարդալ գիտե՞ս:

— Չէ, ինձ ո՛վ է սովորեցրել, որ իմանամ:

Խաչիկը կատաղությամբ ձեռքի բահը թափով բարձրացրեց ու, հազիվ իրեն զսպած, կամաց իջեցրեց ցած:

— Թո՛ւ, օձի ծնունդ,— փչչաց նա ու ձեռքի բահը շպրտելով մի կողմ՝ շտապ քայլերով գնաց տուն:

— Քեզ չի հաջողվի, դե՜լ,— սեղմած ատամների արանքից շշնջաց Ղևոնդը և թունդ մի հայհոյանք շպրտեց Խաչիկի հասցեին:

Խաչիկը տուն չմտավ, այլ ուղղակի անցավ բակի միջով, դուրս եկավ փողոց և շտապ հեռացավ:

Ղևոնդը նայեց Խաչիկի հետևից այնքան, մինչև նա ծածկըվեց փողոցում, ապա վազեց, մտավ տուն, անցավ այն սենյակը, ուր նստած էին ճանապարհորդները, և մոտենալով պատուհանի մեջ նստած զինվորականին՝ կամացուկ հարցրեց:

— Ձեր մեծավորն ո՞վ է:

— Ի՞նչ կա որ,— զարմացած հետաքրքրվեց նա:

— Դուք բոլշևիկնե՞ր եք:

— Չէ, ինչո՞ւ ես հարցնում,—զինվորականը խոժոռեց հոնքերը և նստած տեղից վեր կացավ:

— Չէ՛, ճիշտն ասա, ինձանից մի կասկածիր, կարևոր բան ունեմ հայտնելու... Ղարսի՞ց եք փախել:

— Հա՛...

— Դե հիմա էստեղից էլ փախեք, քանի ուշ չէ, ձեզ ուզում են բռնել, իմացել են ձեր մասին և արդեն մարդ են հավաքում:

— Ո՛վ ես դու,— գոռաց զինվորականը՝ Ղևոնդի օձիքից բռնելով:

Բոլորը հանկարծակի եկած նայեցին այդ կողմը:

— Ես, էս տան ծառան եմ, թող յախես,— նեղացած պատասխանեց Ղևոնդը և ազատեց իր օձիքը:

Զինվորականը բռնեց բատրակի թևից, քաշեց սենյակի մի պատի տակ կարպետի վրա նստած կարճահասակ ու դժգույն երիտասարդի մոտ և ասաց:

— Ղուկաս, սա ասում է, որ գյուղում մարդ են հավաքում մեզ բռնելու համար:

Բոլորը մեկեն զենքերը դրկած՝ ոտքի թռան:

— Հանգի՛ստ, ընկերներ, հանգիստ,— ասաց Ղուկասը և

ոտքի կանգնեց.— ո՞վ ասաց քեզ, բարեկամ, որ մեզ ուզում են բռնել,— դիմեց նա Ղևոնդին, շեշտակի նայելով նրա աչքերի մեջ:

— Ժամանակ չկա պատմելու... բայց երդվում եմ արևովս... Ես բոլշևիկների կողմն եմ...

Աղմուկի վրա հարևան հացատնից դուրս թռան պառավն ու հարսը:

Բատրակը չքացավ: Տանեցիները նրան չտեսան:

Ճանապարհորդներն արագ իրենց զենքերն էին ստուգում և պատրաստվում մարտի:

— Ի՞նչ է պատահել, ձեզ մատաղ, ի՞նչ կա,— վախեցած հարցրեց պառավը:

— Է՛, շնորհակալ ենք ձեր հյուրասիրությունից, նանի, կյանքներս մի պատառ հացով չենք ծախի,— ասաց հրամանատար Սահակյանը:

— Հանգիստ, ընկերներ, վտանգի ժամանակ չեն շփոթվի... գնա՛նք,— կանչեց Ղուկասը և տնից դուրս եկավ: Բոլորն էլ, զենքերը պատրաստ բռնած հետևեցին նրան, դուրս եկան փողոց, ճանապարհից շեղվեցին, ընկան դաշտերն ու քիչ անց ծածկվեցին հեռվում:

3

Խաչիկը հևալով ու շնչասպառ հասավ տերտերի տուն և ուղղակի դիմեց նրա սենյակն ու նրան գտավ թախտի վրա քընած: Առանց երկար սպասելու ձեն տվեց նրան:

Տերտերը վախեցած վեր թռավ ու նստեց անկողնում:

— Ի՞նչ է պատահել, ո՞վ է... Խաչի՞կ... դու ե՞ս, ի՞նչ կա...

— Դու վաղո՞ւց է տանն ես:

— Հա, տանից դեռ դուրս չեմ եկել:

— Ուրեմն մեր գյուղեն դիտմամբ ձեր տուն չի եկել:

— Ինչո՞ւ էիր ուղարկել որ:

— Ա՛խ, շան լակոտ... ես քեզ պիտի մորթեմ, մորթեմ ուղղակի, հոգիս վառեցիր, արդեն բավական է:

— Ի՞նչ է պատահել, Խաչիկ, մի նստի, շունչ քաշի, պատմի տեսնենք:

— Վեր կաց, հագնվիր, շուտ արա, կպատմեմ:

Քահանան սկսեց արագ հագնվել:

— Ղարսի խառնակիչներից մի խումբ տանս վեր են ընկած, ի՞նչ կարող ենք անել, հը՞, տեր հայր...

— Բոլշևիկնե՞ր են տանդ վեր եկել... Վա՛յ, ես նրանց հոր հոգին... մեղա՛-մեղա՛ քեզ, աստված, հազար անգամ մեղա՛... էս ինչ էր հայհոյեցի...— Նա իր ալեխառն մորուքը շոյեց ու քորեց ճաղատ գլուխը:— Է՛, շատո՞ր են, ինչքա՞ն մարդ է պետք:

— Մի քսան-քսանհինգ հոգի կլինեն. ինչքան շատ հավաքես, էնքան լավ, իհարկե, գյուղում ինչքան որ կան, բոլորին իմաց պիտի տալ:

— Հակո՛բ, Հակո՛բ,— գոռաց քահանան իր բամբ ձայնով: Մի բարալիկ դեղնած տղա հարևան սենյակից ներս ընկավ:

— Ի՞նչ կհրամայես, տեր-հայր:

— Շուտ, ձիս թամբի ու արի այստեղ:

— Էս րոպեին:

Տղան դուրս գնաց:

Տերտերը հագնվեց, նստեց պատուհանի առաջ, մի նամակ գրեց, դրեց ծրարի մեջ և վրան գրեց «պարոն Թուրենին»:

Հակոբն շտապ ներս մտավ:

— Հը՛, ձին պատրա՞ստ է:

— Պատրաստ է, տեր հայր, բայց մի զինված ձիավոր քեզ է հարցնում: Բակում սպասում է, նոր եկավ:

— Զինված ձիավո՞ր... Ասա թող ներս գա:

Ծառան դուրս գնաց և քիչ հետո, աղմկող խթաններով, կրծքից հեռադիտակ կախած՝ ներս մտավ ճանապարհի վրա հայտնված ձիավորը:

— Ողջույն ձեզ:

— Ողջույն, որդիս:

— Մինաս տեր հայրը դո՞ւք եք:

— Ես եմ:

— Ղարսից կարևոր նամակ եմ բերել ձեր հասցեով:

Նա արագ ծոցի գրպանից հանեց մի փակ, զմուռսով կնքած ծրար և հանձնեց տերտերին:

Տերտերն շտապ պատռեց ծրարը, կարդաց և գունատվեց:

Անմիջականորեն նրան էր հանձնարարվում Ղարսից նահանջող կոմունիստների գործը: Նա լուցկին վառեց և դողդողուն ձեռքով այրեց թե՛ այդ և թե՛ իր գրած, ծրարած նամակը: Մի րոպե մտածեց նա, կնճռոտ ճակատը շփեց, հետո դանդաղ մոտեցավ մի մեծ արկղի, միջից հանեց մի մաուզեր՝ չորս լիքը պահունակներով, մի պահունակը հենց տեղնուտեղը լցրեց մաուզերի մեջ, մաուզերը տեղավորեց փարաջայի լայն գրպանում, մնացած փամփուշտները դրեց մյուս գրպանը և դիմեց Խաչիկին ու Նամակաբերին.

— Գնանք,— ասաց ու ինքն առաջ անցավ:

Խաչիկն ու Նամակաբերը հետևեցին նրան և երեքով միասին դուրս եկան տանից:

4

Ղուկասն ու իր ընկերները Մաղրա գյուղից դուրս գալուց հետո անցել էին լեռնային ճանապարհով մոտ 30 կիլոմետր ու մոտենում էին Արգինե գյուղին, երբ ճանապարհի վրա, իրենցից ձախ նկատեցին մի խումբ հեծյալների:

Մաղրա գյուղի տերտերի բանդան էր:

Խմբապետ տերտերը լայն փարաջով նստած ձիու վրա, մաուզերը ձեռին, խմբի առջևից արշավում էր ճանապարհի կամուրջը գրավելու, որպեսզի Ղարսից նահանջողներին բռնի: Նրա կողքից սպիտակ ձիով գնում էր հայտնի մաուզերիստ Բուքենը:

Ղուկասն իր խմբի հետ կանգ առավ՝ մի քանի րոպե խորհրդակցելու. կռվե՞լ ու կռվելով ճանապարհ բանալ կամուրջի վրայով, թե՞ խույս տալ ընդհարումից և ուրիշ հարմար տեղից անցնել վարարած գետը:

Նրանք իզուր ժամանակ չկորցնելու և զոհեր չտալու համար որոշեցին վերջինը ու գետափով իջան ներքև:

Մայիսին Ղարս-չայը բարձրացել էր, պղտոր հորձանքներ տալով, խշշալեն զարկվում էր քարերին և ոլընթաց գալարվում առաջ:

Քայլեցին մի քիչ գետափով և հանկարծ ետ նայողներից մեկը կանչեց.

— Տեսե՛ք-տեսե՛ք, թշնամու նոր խմբեր են գալիս...

Եվ իսկապես, բոլորն էլ նկատեցին, որ հեռվում, հորիզոնի վրա հսկայական փոշու ամպ է բարձրանում. փոշու առաջից շարժվում են մի քանի ապրանքատար ավտոներ՝ մի խումբ ձիավորների հետ:

Համոզվեցին, որ վրիժառու թշնամին քնած չէ և հետապնդում է իրենց...

Մինչ այդ տերտերի խումբն արդեն հասավ կամուրջի մոտ և նահանջողների ճանապարհը կտրեց:

— Ա՛խ, սրիկանե՛ր,— կանչեց Ղուկասը և զայրույթից սաստիկ կարմրեց.— մեր ամեն մի րոպեն թանգ է, ժամանակ չենք ուզում կորցնել, բայց դուք եք ստիպում... ասած է՝ «երբ օձի գլուխը ցավում է, գալիս, պառկում է ճանապարհի վրա»: Տերտեր, երևի այսօր գլուխդ ցավում է, որ եկել ես ցցվել մեր ճանապարհի վրա... Դիմացիր, եթե կարող ես... Ընկերնե՛ր, առա՛ջ...

Ապստամբները ցասումնալից աղաղակներով, զենքերը պատրաստի պահած՝ ուղղակի գրոհեցին կամուրջի վրա:

Կատաղի կրակ տեղաց երկու կողմից:

Թշնամու ձիավորները ձիերից ցած թափվեցին և քարերի տակ դիրք մտած՝ սկսեցին կրակել: Միայն խմբապետ տերտերը մնաց ձիու վրա նստած և օրորվելով կրակում էր ձեռքի մաուզերից:

Մի՛ գնդակ կպավ նրա կողքին ու վիրավորեց: Սաստիկ ցավից նա կատաղությամբ ձգեց ձիու սանձը և ուզեց իջնել, բայց նույն վայրկյանին մի քանի գնդակ դիպան նրա ձիուն: Վիրավոր կենդանին խրխնջաց, ծառս եղավ ու ոստնեց առաջ: Տերտերը հազիվ կարողացավ իրեն շպրտել գետին: Նրա ձին խրխնջով կամուրջից ընկավ գետը և ալիքների հետ գնաց:

— Առա՛ջ, ընկերնե՛ր,— գոչեց Ղուկասը և վազեց թշնամու դեմ:

Ապստամբները ոգեշունչ աղաղակներով հետևեցին նրան:

Թշնամիները խառնվեցին իրար և զենքերն ու ձիերը թողած փախան ցաք ու ցրիվ, տեղեկություն չունենալով, որ Ղարսից օգնական նոր ուժեր են գալիս:

— Կանգնի՛ր, ավազա՛կ, քեզ ճանաչեցի,— գոռաց Պետրո-

ալը և ատրճանակը ձեռքին վազեց մի վիրավորի ետևից, որը կաղալով փախչում էր գետափով:

Վիրավորը վազում էր առանց ետ նայելու:

— Մենք ծանոթներ ենք, կանգնի՛ր, քեզ ասում եմ, այսօր ծանոթացանք... Դո՛ւ էիր ուզում մեզ թազա հացով հյուրասիրել...

Պետրոսի սուր աչքերը չէին սխալվում, վիրավորը Խաչիկն էր: Նա անզեն ու ձին թողած փախչում էր մի կերպ փրկվելու համար:

Խաչիկը հանկարծ կանգնեց, ետ դարձավ, գետնից բարձրացրեց մի մեծ քար, ուժով շպրտեց մոտ վազող Պետրոսի վրա ու թափից ինքն ընկավ գետնին:

Պետրոսը հազիվ կարողացավ խույս տալ, ապա թե ոչ՝ նրա թևը կփշրվեր քարի հարվածից:

Նա սաստիկ հուզված մոտ վազեց և ձեռքի ատրճանակի մեջ մնացած չորս փամփուշտն էլ իրար ետևից դատարկեց Խաչիկի կրծքին, ոտով շուռ տվեց դիակը գետի մեջ ու վերադարձավ:

Ապստամբները գրավեցին երեք ձի, հրացաններ, բավականին փամփուշտ և կամուրջն անցնելով՝ մոտեցան Արգինե գյուղի ջրաղացներին: Մի ավերակ ջրաղացի մոտ, հարմար բարձրության վրա դիրքեր բռնեցին՝ շրջապատը հսկողության տակ պահելու համար ու ցանկացան մի քիչ հանգստանալ և սպասել հետապնդողներին:

Թշնամու հետ ընդհարվելուց խուսափելու ոչ մի հնարավորություն չկար:

Նրանց շուրջը փռված էր մի նեղ հովիտ՝ սարերով շրջապատված, իսկ հակառակորդը գերազանց ուժերով արագ հետապնդում էր: Վճռեցին կատաղած թշնամուն սպասել ջրաղացի մոտ, կամուրջը պահել կրակի տակ, մինչև մութն ընկնի, քան թե նրան հանդիպել բաց դաշտում կամ սարերում:

Չափազանց հոգնել էին, անտանելի քաղցը տանջում էր նրանց, ֆիզիկապես անհնար էր ճանապարհը շարունակել առանց մի փոքր հանգստանալու, բայց և այնպես, հոգով արի, ապստամբները ֆիզիկական տանջանքներն արհամարհելով, զենքերը ձեռներին, բռնել էին իրենց դիրքերը և սպասում էին թշնամուն:

— Գևորգ, մի րոպեով,— ձայն տվեց Ղուկասը քիչ հեռու կանգնած երիտասարդին:

Գևորգն արագ մոտեցավ:

— Գևորգ ջան, կվերցնես քեզ հետ երկու ընկեր, կնստեք թշնամուց խլած ձիերը, կգնաք այս մոտիկ գյուղը և անպայման ուտելու բան կբերեք,— ասաց նա, գրպանից հանեց մի քանի թղթադրամ և պարզեց Գևորգին.— էսա է, էլ չունեմ:

— Պետք չէ, ընկեր Ղուկաս, ինձ մոտ էլ կա, երևի տղաներն էլ կունենան:

— Ոչի՛նչ, վերցրու:

Գևորգը վերցրեց թղթադրամները:

— Առ, Գևորգ, էսքան էլ ինձ մոտ կա,— ասաց մոտիկ կանգնած շոֆերը և իր թղթադրամները տվեց Գևորգին,— գոռ տվեք փողին, և ուտելու մի բան բերեք մեզ, քաղցած մեռանք...

Ղուկասը ժպտալով նայեց նրան:

Շոֆերը հասկացավ Ղուկասին, ամոթից գլուխը կախեց ու քաշվեց մի կողմ:

Երեք հոգի հեծան ձիերն ու քշեցին:

— Չլինի՛ թե գյուղում անկարգություններ անեք,— ձայն տվեց Ղուկասը նրանց ետևից:

Ձիավորները, ձիերի սանձերը թույլ պահած, սլացան դեպի գյուղը:

Օրն արդեն իրիկնանում էր: Ուժեղ քամի էր փչում: Երկնակամարը ծածկված էր խիտ ամպերով:

Մերթընդմերթ շողշողացող կայծակների հետ լսվում էին խուլ որոտներ:

Հանկարծ սկսեց՝ անձրև տեղալ:

5

Գևորգն ու իր ընկերները տաս րոպե անց գյուղ հասան և առաջին պատահած գյուղացուն կանգնեցրին: Ավելի ճիշտ՝ այդ գյուղացին վազեց նրանց մոտ, որովհետև կես ժամ կլիներ, ինչ անհանգիստ անց ու դարձ էր անում այդ տեղերում:

— Ընկե՛ր, դու այս գյուղի՞ց ես։

— Հա,— ուրախ ժպտալով պատասխանեց նա։

— Ա՛ռ էս փողերը քեզ, ժամանակ չկա հաշվելու,— ասաց Գևորգը և բավական քանակությամբ ճմրթած թղթադրամներ պարզեց նրան։— Երկու էսքան էլ կտանք, եթե մեզ համար մի կես փթի չափ թխած հաց, մի քիչ պանիր կամ ուրիշ ուտելու բան ճարես։

— Ինձ փող պետք չէ, ձեզ մատաղ. ամոթ էլ է, որ մարդ ձեզանից փող վերցնի,— արցունքներն աչքերին պատասխանեց գյուղացին և կտրուկ մերժեց։— Անցեք էս չենքի ետևը։ Ձեզ կարող են տեսնել տերտերի զինվորները, նրանք մեր գյուղումն են։ Ես գիտեմ դուք ովքեր եք։

Զինվորները զարմացած նայեցին իրար։

— Մի զարմանաք և չվախենաք, միայն զգույշ պիտի լինել... Էս անձրևին դժվար թե նրանք դուրս գան։ Ձեզնից մեկը թող գա ինձ հետ, իսկ երկուսը՝ մնան էստեղ։

Ամեն մի րոպեն թանկ էր, երկար խոսելու, հարց ու փորձի ժամանակ չկար։

Գևորգը ձիուց ցած իջավ, սանձը տվեց ընկերոջը, իսկ հրացանը, փամփուշտները, ատրճանակի դատարկ պատյանը՝ մյուսին, միայն լցրած ատրճանակը պահեց շալվարի գրպանում և գյուղացու հետ անցան գյուղամեջ։

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Գևորգը գյուղացուն։

— Սերոբ։

— Իմն էլ Գևորգ է։ Լավ բարեկամներ լինենք։ Ասում ես տերտերի տղաները հիմա գյուղո՞ւմն են։

— Հա։

— Իսկ ձեր գյուղացի դաշնակները չատվո՞ր են։

— Չէ, մի տաս-տասնհինգ հոգի կլինեն։

— Ի՞նչպես է տերտերի տղաների տրամադրությունը։

— Դժվար թե լավ լինի։ Ռուբենը փորից վիրավոր պառկած է. հաղիվ-հաղ նրան հասցրել են գյուղ։ Տերտերն էլ վիրավոր է։ Մի քանիսը ձիերն ու հրացանները թողած փախել են... էլ տրամադրություն կմնա՞։ Ահա, հասանք, Գևորգ ջան, սա է իմ տունը, ներս մտնենք, քեֆիդ դիպչող չի լինի, դու էստեղ կսպասես մինչև իմ վերադառնալը։

Նրանք ներս մտան ցածլիկ, քարաշեն մի տուն։

Տան երկու երեխաները շրջապատեցին նորեկին և հոնքերի տակից, անհամարձակ նայում էին նրան։

— Երևի ծխող ես, Գևորգ, առ քեզ թութուն, ծխիր,— ասաց Սերոբն ու իր ծխախոտի տուփը տվեց նրան։

— Օ՛, շատ շնորհակալ եմ, հոգիս դուրս եկավ առանց ծխելու։

— Սաթիկ ջա՛ն,— դիմեց Սերոբն իր կնոջը,— էս երիտասարդը մեր հյուրն է, միայն 20–30 րոպեով։ Տանից դուրս չես գնա և ոչ ոքի բան չես ասի։ Կաթից, մածնից, ինչ ունես, բեր պատվիր, հիմա ես կգամ։

Սերոբը տանից դուրս գնաց։

Սաթիկն արագ սեղան բաց արեց Գևորգի համար։

Քիչ անց՝ Սերոբը ներս մտավ մի մեծ կապոց լավաշ հաց ուսին։

Կապոցը ցած դրեց ու գնաց։ Մի քանի րոպեից հետո նորից վերադարձավ, ձեռքին մի մեծ աման մածուն և մի գույլ՝ պանրի կտորներով ու հավկիթներով լցուն։

Գևորգը սեղանը թողեց ու վեր կացավ։

— Սերոբ ջան, հերիք է, գնանք, ինձ օգնիր սրանք հասցնենք տղաների մոտ։

— Աչքիս վրա, կօգնեմ, գնանք, չեմ սոխալի մնալ, վատ ժամանակ է։

— Այս բոլոր փողերը թողնում եմ քեզ մոտ, Սերոբ, կտաս այն գյուղացիներին, ումնից բան-ման ես առել. չեմ ու չում չանեմ,— ասաց Գևորգն ու իր գրպանների փողերը դատարկեց սեղանի վրա։

Գևորգն ու Սերոբը մթերքները վերցրին և տանից դուրս ելան։

Դրսում անձրև էր և փողոցներն ամայի էին։

Շտապ քայլերով նրանք անցան մի երկու փողոց։

Հանկարծ մոտիկ պատից մի մարդ թռավ նրանց ճանապարհի վրա, նայեց Գևորգին ու Սերոբին ոտից գլուխ, սպասեց, որ անցնեն, ետևներից նայեց, տեսավ, որ անզեն են, մատներով ուժեղ սուլեց և ցցվեց նրանց առջև։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց նա։

— Մեր տուն,— պատասխանեց Սերոբը, երբ տեսավ, որ դիմացինն իրենց գյուղացի չէ:

— Խաչան ի՞նչ եք տանում,— հարցրեց անծանոթը Գևորգի բեռը շոշափելով:

— Հաց,— պատասխանեց Գևորգը,— հարսանիք ենք անում, համեցեք գնանք մեր տուն:

Մի ապտակ շրխկաց Գևորգի երեսին ու աչքերից կրակ ցայտեցրեց: Նա օրորվեց իր տեղում և հազիվ իրեն զսպեց:

— Ինչո՞ւ ես խփում, այ մարդ,— բողոքեց Գևորգը:

Ապտակողը հոնքերը խոժոռած, աչքերով ուտում էր Գևորգին:

Գևորգը լռությունից օգտվելով, հացն ու ամանով մածունն ամուր պահած քայլեց առաջ:

— Կա՛ց, ո՞ւր ես գնում, շուն շան որդի, կարծում ես չըճանաչեցի՞,— գոռաց անծանոթն ու Գևորգի օձիքից բռնեց:

Սերոբն այլևս չկարողացավ համբերել... իր ձեռքի գույլը նա տարավ և թափով իջեցրեց անծանոթի գլխին:

— Վա՜յ, օգնեցե՛ք,— հազիվ կարողացավ գոռալ նա և ետ-ետ գնալով զարկվեց պատին ու ընկավ ցեխի մեջ:

Չորս մարդ նույն տանից դուրս վազեցին և հարձակվեցին Գևորգի ու Սերոբի վրա:

Գևորգը մածնի ամանը ցած դրեց ու քաշեց իր ատրճանակը... Կավե ամանը ջարդվեց, մածունը թափվեց գետնին:

Սերոբը փախավ՝ ձեռքի մթերքներն իր հետ տանելով:

Հարձակվողները Գևորգի ձեռները բռնեցին:

Նա կարողացավ միայն օդի մեջ հինգ անգամ կրակել...

Այդ րոպեին Գևորգի երկու ընկերները գյուղի ծայրի մի խրճիթի պատի տակ, անձրևից թրջված, կանգնած սպասում էին: Ատրճանակի կրակոցները լսելուն պես՝ ձիերը հեծան և Գևորգի ձիու սանձից բռնած՝ հրացանները ձեռներին սլացան գյուղի փողոցներով: Նրանք նկատեցին վազվզող մարդկանց ու ձիերը քշեցին նրանց ետևից՝ օդում կրակելով:

Մի անասելի վայնասուն բարձրացավ գյուղում: Թվաց, թե հեծելազոր մի գունդ հարձակում գործեց գյուղի վրա:

Փողոցներն րոպեապես դատարկվեցին:

Գևորգին զինաթափ անող մաուզերիստները, լսելով հրա-

ցանների կրակոցներն ու արշավող ձիերի դոփյունը, թողին նրան ու փախան:

Երկու ձիավորներն արագ պտույտներ տալով փողոցների մեջ՝ գտան Գևորգին արյունոտված դեմքով, պատին հենված, կանգնած:

Ձիավորներից մեկը ցած իջավ ձիուց, մոտ քաշեց Գևորգի ձին:

— Կարո՞ղ ես քեզ պահել ձիու վրա:

Գևորգը գլխով դրական նշան արավ և ընկերոջ օգնությամբ հեծավ իր ձին:

— Գետնի վրայի կապոցը վերցրու, Լևոն,— ասաց նա թույլ ձայնով:

Լևոնը վերցրեց հացի կապոցը, տվեց մյուս ընկերոջն ու նստեց իր ձին:

Այդ միջոցին զուղուալով, հայհոյելով մոտ վազեց Գևորգին ծեծող ու զինաթափ անողներից մեկը և բռնեց Լևոնի ձիու սանձից:

— Իմն է էս ձին, ցա՛ծ իջիր,— բղավեց նա:

Լևոնը հրացանի փողն իջեցրեց նրա կրծքին:

Կանացի մի սուր ճիչ լսվեց մոտիկ տնից:

— Հեռու քաշվիր, թե չէ կխփեմ,— ասաց Լևոնը:

— Ում կխփես, տո՛... Ղոչի-բաշի տերտերի թիկնապահին չե՞ս ճանաչում... ա՛յ գեղացիք, տեր հա՛յր, օգնե՛ք... ինձ սպանում են, հասե՛ք,— գոռաց նա, ինչքան ձայն ուներ՝ բաց չթողնելով ձիու սանձը:

Մոտիկից մի ատրճանակ պայթեց և գնդակը սուլելով քըսվեց Լևոնի վզին ու անցավ:

Ջրաղացների կողմից գնդացրերի ու հրացանների համազարկեր լսվեցին:

Այնտեղ կռիվն արդեն սկսվում էր:

Լևոնն ատամները սեղմած՝ հրացանի ձգանը քաշեց... Պայթյունի հետ ձին կրծքով զարկեց իր առջև ցցված մարդուն և գլորեց ցած:

Երեք ընկերները միասին սրարշավ քշեցին իրենց ձիերն ու գյուղից դուրս եկան:

Ջարդ կերած, վիրավոր Ղոչիբաշի տերտերն ու նրա խըմ-

բից մնացածները, որը գնդով, որն առանց գնդի հասան դեպքի վայրը:

Տերտերը կանգնեց մի քարի վրա, բարձրացրեց իր կրծքի խաչը և կանչեց.

— Հայ քրիստոնյանե՛ր, մի վախենաք, հավաքվեք իմ շուրջը, քրիստոսի խաչը մեզ պահապան է...

Համազարկերը որոտում էին ջրաղացների մոտ և շրջակայքը լցնում ահ ու դողով:

Գյուղացիները չհասկանալով, թե ի՛նչ է կատարվում իրենց շուրջը, դուրս էին գալիս փողոց, անձրևի տակ, շտապում այս ու այն կողմ և մի բան իմանալու համար հավաքվում էին տերտերի մոտ:

—... Հայ ազգի դավաճան բոլշևիկները Թուրքերից կաշառված՝ զենք են բարձրացրել մեր պետության և սուրբ եկեղեցու դեմ: Խռովարար անաստվածները Ղարսից փախել, եկել, թաքնվել են ջրաղացի մոտ... Մեր քաջերն արդեն ջարդում են նրանց, պիտի գնանք օգնելու, որպեսզի ազգուրաց, անհավատ բոլշևիկները սրբվեն աշխարհի երեսից: Ով զենք ունի, այ գեղացիք, ով սուր ունի, ում մեջ դեռ չի մեռել քաջ Վարդանանց արյունը, թող ինձ հետևի, ամենակարող աստվածը մեզ օգնական, Վասակները չպիտի ապրեն մեր աշխարհում, անկախ Հայրենիքում...

Մի քանի գյուղացի դժգոհությամբ ու տրտունջով թողին հավաքվածներին և գնացին իրենց տները: Մի երկուսն էլ ըսպառնալիքներով հայհոյեցին տերտերին ու հեռացան:

Անձրև էր մաղվում երկնքից և գյուղացիների համար հաճելի չէր կանգնել անձրևի տակ ու թրջվել:

6

Դաշնակ մաուզերիստները, խմբապետ Մացակի, Ջելիլխանի և Մուրադ-խանի գլխավորությամբ, բեռնատար ավտոներով և ձիերով արդեն հասել էին Ղարաչայի կամուրջի մոտ և գնդացիրներից ու հրացաններից կատաղի կրակ էին բաց անում ապստամբների վրա:

Երեք անգամ նրանք գրոհեցին առաջ, որ կամուրջն անցնեն,

բայց երեք անգամն էլ ապստամբներն իրենց ուժեղ կրակով ետ մղեցին նրանց: Թշնամին ժամանակ չուզեց կորցնել. Մուրադ-խանը վերցրեց մի խումբ ձիավորներ ու սրարշավ թռավ գետի զուգահեռ ճանապարհով դեպի վեր:

Մի պահ տիրեց լռություն: Հատ ու կենտ գնդակներ էին միայն սուլում հակառակ դիրքերից:

Գյուղ գնացած երեք ձիավորներն արդեն վերադարձել և ուտելու պաշարը հասցրել էին իրենց ընկերներին:

Մարտիկները կարողացան իրենց տանջող քաղցը մի քիչ մեղմացնել և նոր ուժ ստանալ:

Այդ ժամին քահանայի գլխավորությամբ գյուղից դուրս եկավ խառը, անկազմակերպ, զինված մի խումբ և ցաքուցրիվ սկսեց առաջանալ դեպի կամուրջը՝ մաուզերիստներին օգնելու համար:

— Աշո՛տ, ա՛յ շան ծիծ կերած,— գոռում էր մի հասակավոր գյուղացի և վազում խմբի ետևից:

— Սաքո՛, հե՛յ, Սաքո՛,— լալով աղաղակում էր մի ջահել կին և ոտաբոբիկ վազում, որ հասնի խմբին:

Մոտ քսան տարեկան Աշոտը, ժանգոտ բերդանկա հրացանն ուսը գցած, խմբից ետ մնաց, մինչև հասակավոր գյուղացին մոտեցավ նրան:

— Այ լակոտ, դո՞ւ ուր ես գնում... էն տերտերի արևը կսևացնեմ ախր, խալխին ինչի՞ է ճամբից շեղում,— ասաց հասակավոր գյուղացին և մի ապտակ հասցրեց տղայի երեսին:— Դե կորի՛ր տուն, թե չէ հենց էստեղ քեզ կմորթեմ...

Ջրաղացի մոտ կրակոցների ձայներն ուժեղանում էին և ավելի ահավոր դառնում: Շրջակայքը դղրդում էր արձագանքից և սարսափով լցնում օգնության գնացող գյուղացիների սրտերը:

Աշոտն անձայն, շառագունած ետ դարձավ:

— Վազի՛ր, փուչ կենդանի,— գոռաց գյուղացին և ետևից բռունցքով ամուր հարվածեց Աշոտի մեջքին:

Երիտասարդն արագացրեց իր քայլերը:

— Սաքո ջա՛ն,— ձայն տվեց ջահել կինը, հասավ խմբի ետևից քայլող մի երիտասարդի, կախվեց գոտուց և գետնի երեսով քաշ եկավ նրա հետ:

Սաքոն նրա ձեռները պոկեց ոտքից, կնոջը գցեց գետին և նորից քայլեց խմբի ետևից։

Սաքոյի կողքից քայլող մարդը նայեց դրանց, դանդաղեցրեց իր քայլերը, ձեռով կտրուկ մի շարժում արավ և նստեց մի քարի վրա՝ իբր թե ոտքերի կապերն է ամրացնում ու երբ նկատեց, որ խմբից բավական ետ է մնացել, վեր կացավ, իջավ ձորն ու վերադարձավ գյուղ։

— Ախպե՛ր, բա հայը հայի վրա զենք կքաշի՞,— ասաց մի գյուղացի իր կողքից քայլողին,— գուցե բոլշևիկներն են ճիշտ։ Ասում են, որ նրանք բանվորի ու չքավորի մասին են մտածում. ես ու դու, օրինակ, ի՞նչ ունենք, որ գնում ենք նրանց դեմ կռվելու, արի ետ դառնանք։

— Ճիշտ որ հանկարծ կռվի մեջ զարկվեցինք, ո՞վ է մեր ընտանիքը պահելու... Հը՞... ետ դառնանք. թող տերերը գնան կռվելու։

Այդ երկուսն էլ դուրս եկան ճանապարհից, թաքնվեցին ընկերներից, իջան գետափը և վերադարձան գյուղը։

Զարհել կինը նորից հասավ Սաքոյին, ետևից նրա ուսի հրացանը խլեց, առաջ անցավ, երկու ձեռքով սեղմեց նրա կրծքին ու ճչաց.

— Ե՛տ դարձիր...

Այստեղ պատահեց մի անսովոր բան։ Սաքոն երկու ձեռքով բռնեց հրացանից ու փորձեց քաշքշելով կնոջ ձեռքից խլել, բայց կինը բաց չթողեց՝ իր ֆիզիքական ուժով գերազանցեց տղամարդուն, նրա ձեռքից ազատեց հրացանը, ոտքով մի հարված էլ հասցրեց Սաքոյի փորին ու ճչաց.

— Ե՛տ դարձիր տուն...

Սաքոն գունատ, դողդոջուն ետ դարձավ։

Կինն ուսեց հրացանը և նրա ետևից քայլեց մինչև գյուղ։

Մի քանիսն էլ կես ճանապարհից վերադարձան, և խմբապետ Քահանյան մի փոքրաթիվ խմբով միայն միացավ կամուրջի մոտ կռվող դաշնակներին։

Քիչ անց, Մուրադ-խանի խումբը 2–3 կիլոմետրի վրա գտնվելով մի ուրիշ կամուրջից գետն անցնելով՝ թիկունքից սկսեց խփել, առաջանալ և շրջապատել ապստամբներին։

Հրամանատար Սահակյանն ատրճանակը ձեռքին վազեց թիկունքն անցած թշնամու դեմ և մի քանի րոպե անց՝ արագ վերադարձավ Ղուկասի մոտ։

— Ընկեր Ղուկաս, թշնամու ձիավոր մի խումբ թիկունքից առաջանում է մեզ վրա։

— Վերցրեք տաս հոգի, շղթա ձգեք թիկունքից եկող թշնամու դեմ և պահեք նրա առաջխաղացումը։ Շատ չհեռանաք մեզնից,— կարգադրեց Ղուկասը։

Քսանութ հոգուց բաղկացած ապստամբների մարտական փոքրիկ միավորից անջատվեցին տաս հոգի և Սահակյանի հետ անցան թիկունքը։

— Ընկեր Սահակյան,— պառկած տեղից ձայն տվեց Օնիկը,— աջ կողմից, ավերակների մոտից, չորս հոգի գալիս են մեր կողմը երկուսը կին են երևում և ձեռներին ինչ որ բաներ կան։ Խփե՞լ, թե թողնել, որ մոտենան։

Սահակյանը հեռադիտակով նայեց դեպի աջ։

— Մի՛ք խփի, անզեն գյուղացիներ են. երկու տղամարդ՝ մեկը կաղ է, և երկու կին։ Ընկեր Օնիկ, վազեք դրանց առաջ և իմացեք ովքեր են։

Օնիկը վազեց դիրքերը բարձրացողների առաջ.

— Կանգնե՛ք,— ձայն տվեց նա։

Չորս գյուղացիներն էլ կանգնեցին։

— Ի՞նչ եք ուզում, ովքե՞ր եք։

— Ես Սերոբն եմ, ձեր Գևորգը գիտե ինձ։ Ձեր համար հաց, պատրոն, բան ենք բերել։

Երկու կանայք ձեռների կապոցները ցած դրին, բաց արին իրենց վերարկուները և ցույց տվին ուսերից կախած փամփուշտակալները փամփուշտներով լեցուն։

— Գնա՛նք,— ասաց Օնիկը, և հինգ հոգով բարձրացան դեպի դիրքերը։

— Բարեկամներ են, ընկեր Սահակյան։ Մեզ համար փամփուշտ, հաց, և ուտելու բան են բերել։

— Սերո՞բ,— կանչեց Գևորգը և մոտ վազեց,— բա ես կարծում էի, թե քեզ բռնել են։

— Դեռ չէ, Գևորգ ջան,— պատասխանեց Սերոբը ժպտալով։

— Կեցցե՛ք, ընկերներ,— հուզված ասաց Սահակյանը և

չորսի ձեռներն էլ ամուր սեղմեց։— Ինչ որ բերել եք՝ թողեք էստեղ և շուտ իջեք ցած, թշնամին արդեն մոտենում է։

— Ընկեր հրամանատար, թույլ տվեք ինձ ու եղբորս մնալ էստեղ կռվելու,— խնդրեց Սերոբը։

— Հրամայում եմ անմիջապես հեռանալ,— խստությամբ պատասխանեց Սահակյանը։— Բոլոր մարտիկների կողմից հայտնում եմ խորին շնորհակալություն ձեր օգնության համար։

Երկու կանայք, Սերոբն ու նրա եղբայրն իրենց բերած փամփուշտներն ու մթերքները թողին և բլրից ցած իջան։

Մուրադ-խանի զինվորները ձիերից ցած թափվեցին և շղթա տալով սկսեցին ավելի մոտենալ ու կրակել։

Ապստամբները պատասխանեցին ուժեղ կրակով։

Կռիվը բորբոքվեց։

Թշնամի խմբերը կրակում էին անզիջում, և շրջակա լեռներն ու ձորերն ահավոր արձագանքով դղրդում էին նրանց զարկերից։

Քամին մռնչում էր, սուլում, անձրևն առած իր թևերի վրա չնչտակի չփում էր գետնին և հեծեծում...

Երկնակամարում արշավում էին գորշ ամպերի երամները և իրար բաղխվելով՝ կայծակներ տալիս ու որոտում։

Կամուրջի մոտ սպասող դաշնակ-մաուզերիստները, երբ համոզվեցին, որ Մուրադ-խանն արդեն թիկունքից է խփում, սկսեցին կանաչների միջով, քարերի արանքներով սողալով ու կրակելով ավելի ու ավելի մոտենալ։

— Անձնատո՛ւր եղեք,— գոռաց խմբապետ Մացակը։

Պատասխանը եղավ դիրքերից տեղացող գնդակների տարափը։

— Ձեր ղեկավարին կենդանի հանձնեք մեր ձեռքը, բոլորիդ կյանքը կխնայենք,— պառկած տեղից ձայն տվեց Մացակը։

— Կոմունիստների շարքերում դավաճան չկա, հիմա՛ր,— գոռաց Հովհաննեսը։

— Ձեզ, բոլորիդ շան պես կսատկացնենք, ազգի դավաճաննե՛ր... Առա՛ջ տղերք, իմ եռևից,— կանչեց Մացակը և պառկած տեղից կանգնեց ոտքի... Խոսքը կիսատ մնաց նրա բերանում... Երկու ոտքից զարկված՝ նա ձեռքի մաուզերը բաց

թողեց և օդի մեջ ձեռները ջղաձգորեն թափահարելով փորձեց հենարան գտնել ու ընկավ ջարդված ոտներով։

Զեյլամ-խանը կատաղած թռավ ոտքի, քաշեց կեռ սուրը և արյունոտ աչքերը չռած գոռաց.

— Իմ եռևից— և հայհոյելով վազեց առաջ։

Մաուզերիստներն աղաղակներով հետևեցին նրան և կամուրջն անցան։

— Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը,— որոտացին ապստամբները մեկեն և դիրքերից համազարկ տվին։

— Ռումբե՛ր նետել,— գոչեց Ղուկասը ոգևորված և կողքի ընկերոջից երկու շշաձև ռումբ խլելով դիրքից դուրս թռավ, վազեց առաջ՝ սուրացող գնդակների դեմ և ձեռքի ռումբերը հսկայական ուժով շպրտեց թշնամու վրա։

Ապստամբներն սկսեցին ռումբեր նետել ու կրակել... ռումբերն իրար եռևից օդի մեջ պտույտներ տալով ընկան հարձակվող թշնամու շարքերի մեջ և ահեղագղորդ որոտներով պայթեցին, քար ու հող ցանելով սպանվածների ու վիրավորների վրա։

Թշնամին խուճապի մատնված խառնվեց իրար... մի քանիսը ջուրը թափվեցին, ոմանք խեղդվեցին ու կորան ալիքների մեջ, իսկ մյուսները հազիվ կարողացան լողալով դուրս գալ դիմացի ափը։

Թշնամու խումբը սարսափահար նահանջեց և կամուրջը թողնելով փախավ իր նախկին դիրքերն ու թաքնվեց քարերի արանքներում։

Մի պահ տիրեց լռություն։

Բայց, ահա, ապստամբների թիկունքն անցած թշնամին հանկարծ սկսեց շատ մոտիկից ուժեղ կրակ տեղալ... Կամուրջի մոտ գտնվողները դրանից սիրտ առած՝ կատաղի ոխով գնդացրից մրրկային կրակ բաց արին, նորից գրոհեցին, անցան կամուրջը և շղթա տալով պատրաստվեցին սվինամարտի։

Ղուկասը կրակ կտրած՝ դիրքից դիրք էր անցնում գնդակների տարափի տակ և ոգևորում մարտիկներին։

Հանկարծ նա օրորվեց և գունատված նստեց գետին՝ ատրճանակը բաց չթողնելով։

Ղուկասը վիրավոր էր։

Ընկերները մոտ վազեցին, տեղափոխեցին նրան ջրաղացը: Մյուսներն էլ դիրքերը թողած՝ կրակելով նահանջեցին դեպի ջրաղացը, ներս մտան, դուռը փակեցին և սկսեցին պատուհաններից ու դռան արանքից կրակել:

Փամփուշտները վերջանում էին:

Դրությունը գնալով տագնապալից էր դառնում:

Օրհասական մարտ էին վարում մի խումբ մարտիկներ թըվով գերազանց թշնամու դեմ, իսկ գազազած թշնամին համառորեն շրջապատում էր նրանց:

Խավարն իջնում էր կամաց-կամաց, անձրևախառը քամին գնալով սաստկանում էր:

— Ընկերնե՛ր, սիրելի ընկերնե՛ր, ուզո՞ւմ եք մինչև վերջը, մինչև վերջին մարդը կռվել ու մեռնել,— ձայն տվեց վիրավոր Ղուկասը:

— Մա՛հ թշնամուն,— պատասխանեցին բոլորը միասին,— վճռել ենք զենքը ձեռներիս մեռնել:

— Ուրեմն խնայեցեք ձեր փամփուշտները, լավ նշան բռնեք, ինձ բոլորովին փամփուշտ չի մնացել,— ասաց Ղուկասը, դժվարությամբ ոտքի կանգնելով: Նա ձեռքի ատրճանակը խփեց գետնին, քայլեց դեպի ջրաղացի փակ դուռը, բայց այրվող ճակատը շփելով կանգ առավ:

— Զարկեցե՛ք, կրակեցեք դահիճնե՛ր, բոլշևիկները մահից չեն վախենում... ապագան մերն է,— գոչեց նա:

—Ղուկաս, ետ քաշվիր, դռնից կարող են խփել,— կանչեց մեկը:

Թշնամին խուլ ոռնոց հանելով, գոռալով և կրակելով առաջ էր խուժում:

Հանկարծ Ղուկասը փորը բռնած՝ քաշվեց դռանը և ընկավ:

— Մնա՛ք բարով, ընկերներ... իմ ողջո՛ւյնը տարեք Հայաստանի աշխատավորությանը... Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը,— կանչեց նա...

Ընկերները վրա հասան, տարան նրան մի ապահով անկյուն և սկսեցին հուսահատ կռիվ մղել թշնամու դեմ:

Մի քանի գնդակ դուռը ծակեցին և ցցվեցին դիմացի պատի մեջ՝ քարի փշրանքներ շպրտելով չորս կողմը:

Պատուհանից կրակող Սուրենը հանկարծ աղաղակեց: Նա

ճակատից մահացու վերք ստացած փռվեց հատակի վրա և մընաց անշարժ:

Արդեն անհնար էր կանգնել թշնամու դեմ, նրա մահացու գնդակները փչում էին ջրաղացի ներսը: Հատակի վրա պառկել էին երեք սպանված և չորս վիրավոր: Ղուկասը պառկած էր մի անկյունում և անտանելի ցավերից խուլ տնքում էր:

Ավերակ ջրաղացը տուփի պես գրկել էր հեղափոխական մարտիկներին և սպառնում էր գերեզման դառնալ նրանց համար:

Ոչ մի ելք չկար դուրս գալու, խուսափելու թշնամուց. մընում էր ուղղակի դուռը բանալ և գնդակների տարափի տակ, սվինների ու սրերի միջով ճանապարհ բանալ:

Օրը մթնում էր արդեն և ավելի մութ ջրաղացի մեջ նըրանք իրար լավ չէին տեսնում:

— Սպա՛ս, ընկերներ, դուռը ես բաց կանեմ,— կանչեց հրամանատար Սահակյանը,— ում մոտ ինչքան գնդակ է մնացել՝ թող զարկի թշնամուն և իրեն գցի ջրաղացի ետևը: Այնտեղից կանցնենք թմբի մյուս կողմը ու կցրվենք հովտի մեջ. խավարը կծածկի մեզ...

Սահակյանը դուռը դեռ չէր բացել, երբ մի գնդակ ծակեց նրա ձախ թևը և անցավ, ցցվեց փայտե սյան մեջ... Նա դըռնից ետ քաշվեց և կպավ պատին՝ սարսռելով ու դժգույն:

Կրեստովսկին վազեց Ղուկասի մոտ, գրկեց, բարձրացրեց նրան իր ուսերի վրա և առաջ անցավ դեպի դուռը:

Ջրաղացի դուռը բացվեց: Չորս հոգի դուրս թռան ջրաղացից, պառկեցին գետնին և սկսեցին կրակել մոտեցող թշնամու վրա, որպեսզի հնարավորություն տան ընկերներին՝ ջրաղացի ետևն անցնելու:

Կրեստովսկին Ղուկասին գրկած դուրս եկավ ու դեռ մի քանի քայլ չէր անցել, երբ մեջքից վիրավորված՝ ընկավ Ղուկասի հետ... Ընկերներից մի երկուսը մոտ վազեցին նրանց բարձրացնելու, իրենց հետ տանելու, բայց թշնամին աղաղակելով կատաղի կրակ տեղաց և հարձակվեց նահանջողների վրա... Ապստամբների մի մասը ետ դարձավ ու նորից մտավ ջրաղացը: Իսկ մի քանիսին հաջողվեց անցնել ջրաղացի ետևը: Նրանք մի պահ ապահովված զգալով իրենց՝ չոքերով մտան ա-

ռում, իրենց դցեցին մյուս ափը, բլրից վազեցին ցած ու ծածկվեցին խավարում։

Մաուզերիստները խուժեցին ջրաղացի վրա։

Կրեստովսկին փորձեց ոտքի կանգնել, բայց նորից ընկավ... Դաշնակներից մեկը հրացանի փողից բռնած՝ թափով իջեցրեց նրա գլխին։

— Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը...— Բացականչեց նա և բերանն արյունով լցվեց... Նա անշնչացած տարածվեց գետնին։

Ղուկասը պառկած տեղից արագ նստեց, խլեց Կրեստովսկու ձեռքի ատրճանակը և վերջին ուժերը հավաքելով ոտքի կանգնեց... Կարծես վիրավոր առյուծ լիներ այդ երիտասարդը և չէր ուզում հանձնվել թշնամուն...Աչքերը վառվում էին ցասումից և ծանր վերքերը չէին ընկճում անվեհեր սիրտը... Նրա վրա հարձակվող երեք մաուզերիստները սարսափահար ետ-ետ քաշվեցին...

— Գազաննե՛ր,— գոռաց նա հուժկու ձայնով,— մա՛հ չկա մեզ համար... Մենք ապրում ենք... Կեցցե՛ մայիսյան ապստամբությունը... Նա գոռաց, կրակեց, վազեց դեպի թշնամիները և ընկավ մի քանի քայլի վրա...

Մի խումբ դաշնակ-մաուզերիստներ շրջապատեցին նրան, սկսեցին անընդհատ հարվածներ տեղալ նրա մարմնին և հայհոյելով ներս խուժեցին ջրաղացը։

Աննկարագրելի, բարբարոսական մի տեսարան ստեղծվեց ավերակ ջրաղացի խավարի մեջ։ Դաշնակները սրերով ու սվիններով սկսեցին զարկել, ծակոտել սպանվածներին ու վիրավորներին։

Վայրագորեն հարձակվեցին մի անկյունում իրենց մահվան սպասող ապստամբների վրա, դուրս քաշեցին ջրաղացից, ծեծելով, հարվածելով լցրին ավտոները և տարան իրենց հետ։

Անձրևախառն, ցրտաշունչ քամին շրխում էր, սուլում ու մռնչում։Ամպերը որոտում էին ուժգնորեն, ահեղագոռ գըրգռյունով պայթում և հրավառ շանթերով պատառոտում, ծվատում էին գիշերվա դաժան, ծանրացող խավարը։

ՀՄ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԴՈՒՄ

Իմ հայրենի՛ք— լուսե այգի,
Փարթամ ես ու դալար,
Դու իմ մայրն ես, հայրը անգին,
Ես՝ քո ազիզ բալան։

Զվարթ հովուս, արև՛ անմար,
Դու ես հուր տվողը,
Կպաշտպանեմ դրա համար
Քո սրբազան հողը։

Եվ նեղ ժամին արհավիրքի,
Կառնեմ զինյալ թևեր,
Կասեմ— հանուն քո մեծ փառքի
Ա՛ռ իմ սիրտը նվեր։

Երբ ղողանջի երկրով անծիր,
Պաշտպանության փողը,
Երբ վրնջա՛ Բուդյոննու ձին,
Ու փոխվի հողը—

Այն ժամ իբրև հերոս որդի
Կառնեմ զենքերս, և
Կսլանամ ահեղ մարտի
Որպես նոր Զապաև։

ՅՈԹԸ ՆՎԵՐ

(Սովետական մոր երգը)

— «Պառավ սիրտս ջահել դառած
Կապեց լուսե կամար,—
Յոթ տղեքս ուսում առած՝
Յոթ արև են անմար...

Հողիս փթթել է, կանաչել,
Ինչպես հանդի լալա,
Յոթը վարդ է կրծքիս աճել՝
Յոթը անգին բալա...

Էս չեն կյանքում— տակն արևի՝
Խոր ծերության հասա,—
Յոթը ջահել երկրին տվի՝
Յոթը պարթև հասակ:

Էս մեծ քեֆին ի՞նչ եմ բերել՝
Սիրտս ոնց որ սինի,—
Յոթ տղա եմ միջին դրել՝
Յոթը բաժակ գինի...

Հայրենիքին թե գա վտանգ,
Ի՞նչ կտամ ես նվեր—
Յոթն անվեհեր— քաջեր կտամ—
Յոթը կտրուկ սրեր...

ՇԻՐԱԿԻ ՀԱՑՆԱԴԲՅՈՒՐ ԴԱՇՏԻՆ

Սեգ Սևանա լճի պես դու ծփում ես ու նազում,
Շիրա՛կ, քեզ պես ջինջ մի լիճ ո՞վ է տեսել երազում...

Ծո՛վ արտերդ ծածկել ես արքայական ծիրանով,
Ու բազմել ես հարսի պես երկնքի տակ ջինջ ու մով:

Ցորենադեղ արտերիդ ալիքները ոսկեվետ,
Այնքա՛ն քնքույշ ու նրբին համբուրվում են իրար հետ:

Ամեն հասկդ մի վառ հույզ, մի բուռ հողդ՝ մի քնար,
Շիր-կանալը մեզ մուսա՝ բերքի երգը երգենք հար...

Սեգ Սևանա լճի պես դու ծփում ես ու նազում,
Շիրա՛կ, քեզ պես ջինջ մի լիճ ո՞վ է տեսել երազում...

ՇԻՐԱԿԻ ԳԻՇԵՐԸ

«... Գիշերն անուշ է. գիշերն հեշտագին
Հաշիշով օծուն և բալասանով...»
Մ. ՄԵԾԱՐԵՆՑ

Ամրան գիշե՛ր, ամրան գիշե՛ր ցնծագին,—
Շիրակ դաշտում կախարդեցիր իմ հոգին...

Սեգ լեռներից դուրս է գալիս մի լուսին՝
Նման զուլալ ջրից ելնող մերկ կույսին,
Ու թափվում է դաշտի վրա լիառատ
Լուսնի լույսը որպես մաքուր փրփուր կաթ:
Ու թվում է, թե լուսեղեն մի փերի
Լող է տալիս խաս փրփուրում ջրերի...

Ամրան գիշե՛ր, ամրան գիշեր ցնծագին
Շիրակ դաշտում կախարդեցիր իմ հոգին...

Ցորենները լռության մեջ կաթնածիր
Հնչեցնում են կարծես տավիղ ու բամբիռ
Թվում է, թե շիրակցի մի ջահել հարս
Հացի երգն է զուլա՛լ երգում այնքա՛ն պարզ,
Այնքան գերո՛ղ, այնքան թովի՛չ, լիահունչ,
Ոնց Մանթաշի նուրբ հովերի քաղցր շունչ...

Ամրան գիշե՛ր, ամրան գիշեր ցնծագին,
Շիրակ դաշտում կախարդեցիր իմ հոգին...

Երբ բացվում է արշալույսը վեհ ու վես,
Շիրակ դաշտը ծփում է հո՛րդ, փրփրադեղ,
Անուշ քնից արթնանում են բոլորը,
Թևին տալով արտից թռնում է լորը,
Ճռվողում են արտում ծիծառ ու արտույտ,
Եվ հնչում է լուսո երգը զվարթուն:

Ամառնային արևածագ ցնծալին,
Շիրակ դաշտում կախարդեցիր իմ հոգին...

Եվ վաղորդյան այնքա՜ն բարի լույսի հետ,
Լա՜յն արտերում ջինջ հույզերի զուլալ գետ
Դաշտ են գալիս ջահելները մեր կուլվոր
Բերքն հնձելու, խուրձ կապելու ոսկեվոր,
Տաքանում են կուլվորները մեր հնձող,
Ու թափվում է բյուրեղ քրտինքն ինչպես ցող...

Ամրան արև, ամրան կեսօր ցնծալին,
Շեկ-Շիրակում գինով արիր իմ հոգին...

ՆԵՏՎԵՄ, ԼՈՂԱՄ...

Ամպը գոռաց ահեղաձայն,
Փռեց սարսափ իր չորս դին,
Շանթը քաշեց իր թուրն արծաթ,
Կիսեց երկնից մինչ գետին...

Ելավ կարծես չքնա՜ղ, անգին
Մի հուր-վերի թխավարս,
Առավոտյան մառը ձեռքին
Գոհար մաղեց վերից-վար:

Լերանց շարքը լուծվեց մուժում,
Պահվեց արեն ամպի տակ,
Ձորում գետն է հարբած վշշում՝
Շուրթին փրփուր բաշխտակ:

Մով արտերի ծովն է չորս դին՝
Նազով ծփում վետ ու վետ,
Ջա՜ն, լիության երգը շուրթին—
Նետվեմ, լողամ ալյաց հետ:

ԱՐՏԵՐԳ

Արտե՜ր, արտե՜ր— ոսկյա ծով,
Կանաչ սարեր— մետաքս հով:

Հասկե՜ր՝ ջութակ ոսկեհուռ,
Հովն է փարվում մեղմաբույր:

Ու հնչում է հացի երգ,—
Առանց ցավի, առանց վերք:

Ջուրը ցոլում է դաշտում,
Ա՜խ, այդ ցոլանքն եմ պաշտում:

Զվարթ աղմուկ, անմար երգ,—
Օ՜, լիությո՜ւն, առատ բերք:

Համայնական արտ ու հող,
Զեղնով հնչի երգս թող:

Արտե՜ր, արտե՜ր, ոսկյա ծով
Կանաչ սարե՜ր, մետաքս հով...

ՀՈՒՆՁՔ

Արեն իր զմրուխտե դահից կապուտակ,
Իմ շուրջը փռել է թավիշ ու դիպակ:

Նա գլխին դրել է ոսկե մի պսակ,
Ո՞ր Շահը կունենա այդպիսի մի թագ:

Ես հնձվոր տղա եմ— քրտինքս ոսկի,
Թագ ու պարծանքս է իմ ուժը բազկի,

Իմ անդրին ընկերս է այս սուր գերանդին,
Մենք ենք հնձողը ոսկին այս հանդի:

Իմ առաջ փռված է դաշտը բարեբեր,
Այդ դաշտի հրով ենք հիմա մենք հարբել:

Արդ ես հնձում եմ բեղմնավոր մի բերք,
Գերանդիս երգում է լիության մի երգ:

Հասկերը փախչում են կարոտով անանց,
Բայց ուշ է... գերանդիս գրկում է նրանց:

ՆՈՐՔՈՒՄ ՄՐԳԱՀԱՍ

Դունչը ձորում՝ որոտում է,—
Դա Նորքի հին բլուրն է,
Գեղառ-չայը որ շաչում է,
Ցուր բերանի փրփուրն է:

Ես թառել եմ Նորքի մեջքին,—
Նորքը տակիս մի ուղտ է.
Ցերանությո՛ւն իմ զույգ աչքին—
Շուրջս թավիշ, զմրուխտ է:

Ծոխ վարդենին ասվի ափին,—
Կարծես թե ինձ համար է,
Է՛, թող կրակ թափի արփին,—
Նա իմ գլխին հովհար է:

Ես նայում եմ... նայում չորս դին,—
Ծառ, ծաղիկ է, ու բույս է.

Հովն համբույր է տալիս շուրթիս,—
Նա հերապանծ մի կույս է:

Բեղուն այգին ոսկի հագած
Լի բարիքով, բերքով է,
Մայր տանձենին հանդից եկած
Կուրծը լիքը մի կով է:

Ծառն ազատվեց լույս երկունքից,—
Բերածը չեկ ծիրան է,
Արտասվում է վաղն հրճվանքից,—
Արցունքն անուշ չիրան է:

Ճյուղից խնձորն է փայլ տալիս,—
Կարծես լրիվ լուսին է,
Ջա՛ն, մրգահասն է հյուր գալիս,—
Ոսկե սինին ուսին է:

«ԽՈՐՀՐԴԱՎՈՐ» ՄԱՍՐԵՆԻՆ

1

Իմ հայրենի գյուղի դիմաց,
Իբրև վկա անցած հնի,
Դեռ ծաղկում է մինչև հիմա
Խորհրդավոր մի մասրենի:

Շուրջը նրա պատ էր քաշած,
Որ դերթ արցունք— քար էր թափում,
Միջին թուփն էր չարագուշակ
Ոնց ավերակ շենքին՝ մի բու:

Երբ տեսնում եմ թուփն այդ նորից,
Եվ մատուռը իր դիմացի,
Իմ հեռավո՛ր, մանուկ օրից
Մի չա՛ր հուշ է գալիս այցի...

2

Պապս՝ հսկա մի լեռնական,
Միրուքն արդեն արծաթաթել,
Քաջասիրտ էր ու առնական—
Քարը սեղմեր՝ ջուր կկաթեր...

Երբ ծերության օրերն ինչպես
Ձյուն ու ձմեռ՝ իջան գլխին,
Այնժամ պապս բռնած թեւս՝
Հանդ էր գնում— ձոխ ու ժախի:

Մի օր, երբ հովն էր կարկաչում,
Գնում էինք մատուռն հնուց,
Ասի՝— «պապի՛, կտրեմ մի ճյուղ,
Թմբին կանգնած էս մասրենուց...»

— «Ների՛ր, ո՛վ տեր, թոռս անմեղ...»
Ու դարձավ ինձ՝— «Էդ մասրենուց,
Դեռ չի կտրած և ո՛չ մի ծեղ՝
Նա պատմություն ունի հնուց...»

Եվ աղոթեց պապս քիչ էլ,
Ապա ասաց՝—«Դեռ շա՛տ առաջ,
Հրեշտակ է երկնից իջել,
Էս սրբազան ծառը առած:

Պատ է քաշել թմբի վրա,
Միջին տնկել ծառն այդ բարի,
Ու պատգամ է տվել նրան,—
Որ հալածի չար ու չարիք...»

Նա համբուրեց թուփը դալար,
Ապա չոքեց խոր երկյուղից,
Արխալուղից կտրեց մի լաթ
Ու փաթաթեց ծառի ճյուղից:

Ասաց— «Դալա՛ր մնաս, սուրբ ծառ,
Հազա՛ր դարդ ու ցավեր ունեմ,—
Էդ հազարի կեսն էլ դու առ:
Ինձ էլ ասաց՝ նույնը անեմ...»

Խոր երկյուղով մոտեցա ես,
Համբուրեցի թուփը դալար,
Ու իմ սիրո՛ւն, ալ բլուզիս
Փաթաթեցի մի կտոր լաթ...:

3.

Անց էր կացել քանի տարի...
Հայրենիքիս այս սրբազան
Արևի տակ ջերմ ու բարի,—
Ես քաշեցի պարթև հասակ:

Եվ երբ իմ գյուղը հայրենի
Վերադարձա ուսում առած,
Տեսա պապիս իմ ծերունի՝
Լույս կարգերում ջահել դառած:

Ու մի օր էլ, երբ միասին
Անցնում էինք թփի մոտից,
— Հիշում ես չէ՞, պապի,— ասի,—
Ծառից կապած մեր ցնցոտին...

— «Մի հիշեցնի, մատա՛ղ,— ասաց,—
Հին օրերը ցավ ու կրակ,
Թե դարձնեին մկին աստված՝
Կաղոթեինք նրա վրա...

Դրախտն էկավ—իջավ մեզ մոտ,
Ինչ որ վատ էր անցա՛վ, գնաց,
Հին օրերից վիշտ ու ցավոտ,
Ջա՛ր հիշատակ միայն մնաց...

Թող կյանքը շա՜տ լինի նրա,
Որ փայլում է մեծ Մոսկովեն.
Լույս օրենքը նրա գրած
Մինչև մահ պիտի գովեմ...»

***

Իմ հայրենի գյուղի դիմաց
Իբրև վկա անցած հնի,
Գլուխը կա՛խ մինչև հիմա
Դեռ կանգնած է մի մասրենի:

Երբ անցնում են հիմա մոտից,
Կոլվորները մեր հուրհրան,
Հաճախ վերցնում են ցնցոտին
Ու ծիծաղում նրա վրա...:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՏԵՍԻԼ

... Երևանյան աքաղաղի կանչի հետ,
Երբ բացվում է արշալույսը ոսկեվետ,—
Թվում է թե փրփուր մի ձեռք վարդամատ
Մեղմ հրում է լուսամուտն իմ ցողապատ:
Ու զորությամբ երկնային մի հրաշքի
Բացվում է նա ինչպես կոպերն իմ աչքի...
Բիբերիս մեջ այդով ցոլած մի ալ վարդ
Նայում եմ ես ակնապարար ու անթարթ.
Իմ դեմ դաշտն է մարմարե կուրծքն իր բացել,
Ոնց զույգ ստինք՝ զույգ Մասիսն են խոյացել
Այգաբացի շառ ծիրանին ծալե-ծալ
Իջել է վար՝ դառել նրան կրծքակալ...
Երկինքը լուրթ, կապույտ ժպիտն երեսին,
Գուրգուրում է արեգնաճեմ իր հարսին,
Պճնում է նա արդ ու զարդով կանացի,
Որ իր որդին՝ արև փեսան գա այցի:

Ելավ արևն ու մատներով ճառագող
Հարս Մասիսի դեմքից քաշեց շալ ու քող
Եվ համբուրեց վարդ շուրթերով լուսածին,
Ինչպես ջահել սիրահարն իր սիրածին:
Ու գգվում են այնպես հուշիկ ու հանդարտ.
Ես նայում եմ ակնապարա՜ր ու անթարթ...

ՆԵՐԲՈՂ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՆ

Գեղարքունյաց պարթև սարե՛ր, դու, Սևանի պաղ ջո՛ւր,
Ոսկե ձկնե՛ր, վայրի բադե՛ր ու մակույկնե՛ր, ողջո՛ւյն...

Սիրտս գինու մի ամփոր էր, երբ ես Սևան հասա,
Փրփրեց գինին, շառագունեց, երբ որ լիճը տեսա:
Ի՜նչ նրբագե՜ղ, ի՜նչ ղունազարդ իդիլլական պեյզաժ.
Կղզին բազմել էր լճի մեջ որպես լուսե միրաժ..
Անձեռակերտ մի նկար էր վերջալույսը նրբին
Հիացմունքո՜վ ես այն տեսա՝ նստած լճի ափին...

Գեղարքունյաց պարթև սարե՛ր և Սևանի պաղ ջո՛ւր,
Ոսկե ձկնե՛ր, վայրի բադեր ու մակույկներ, ողջո՛ւյն...

Լճից փչեց հով զեփյուռը. ի՜նչ թովչություն, ի՜նչ բույր,
Թվաց ինձ թե մի վարդ աղջիկ պարգևեց ինձ համբույր:
Հողմը ժպտաց ու բաց արավ իր ոսկեհուռ դուռը,—
Ծով հույզերս դարձած փերի՝ ելան ընկան ջուրը...
Ուզեցի որ ես էլ ընկնեմ— լող տամ լազուր ջրում,
Ինչպես Մարկոն Դանուբն ընկավ, որ գտնի իր փերուն...

ԾԱՂԿԱՁՈՐՅԱՆ ՀԱՄԵՐԳ

Հովերն անո՜ւշ նվագում են «Ծորորը»,
Դափ է խփում ծառի վրա տերևը,
Հարսանքավոր են անտառում բոլորը
Ու պարում է գինով հարբած արևը...

Շորորում են թուրյան մոշլին ու մորլին,
Ջրահարսերն ինչպես լճում վետվետուն,
«Պարբաշի» են դառել կաղնին ու լորին,
Ու պարում են «Մշու-խըռը»-ը զվարթուն:

Բա երեկո՞ն... երբ լեռների շուրջերը,
Շաղյլ արփու հուր այտերին են հանգչում,
Կռկռում են շաղակրատ գորտերը,
Շարական են երգում գետում ու լճում:

Դիրիժյոր է դառնում սևուկ սարյակը,
Զափ է տալիս... ու երգում են հավքերը,
Զվարթ թնդում է անտառն ու պուրակը
Ու չեն լռում... ու չեն լռում երգերը:

Ծաղկաձորում հովերից մեղր է ծորում,
Վարդերից բույր, արփուց՝ գինի հորդառատ,
Թե որ խմես դու այդ գինուց փրփրուն—
Կտավանի հովիտ լուսե թև առած...

Ա Ն Ա Կ Ր Ե Ո Ն Ի Ց

1

Ք Ն Ա Ր Ի Ս

Կուզեմ Ատրիդին երգել
Ասա Կադմոս մեծին այն,
Բայց քնարն իմ ոսկեթել
Կանչըռաղարձնի սեր միայն:

Երբեմն քնարիս գլխովին
Ողջ լարերը փոխեցի,
Որ երգեյի Հերքիլին,
Բայց սեր միայն լսեցի:

Դե՛, մնացեք դուք բարի,
Վեհ դյուցազներ հավիտյան,
Քանզի լարն իմ քնարի
Գիտե երգել սեր միայն...

2

— «Անակրեո՛ն,— կույսերն ասին,—
Ծեր ես, նայիր հայելուն.
Գլուխդ արդեն զուրկ է մազից,
Ճակատդ լերկ ու փայլուն...»

— «Մազ կա թե ոչ իմ ծեր գլխին,
Ի՞նչ փույթ, կույսեր, ես գիտեմ,
Որ ծերին էլ վայել է խինդ,
Մինչ չի հասել մահ դժխեմ...»

3

ԿԱՆԱՆՑ

... Բնությունը ցուլին տվել է եղջյուր,
Ու սմբակներ է ստացել նժույգ ձին,
Նապաստակին տվել ոտքեր հողմասույր,
Եվ մահաղեն երախ՝ տվել առյուծին:

Ձկներին է լողակ տվել, հավքին՝ թև,
Տղամարդկանց ոգի տվել զորության,
Կանանց, սակայն, չուներ ուրիշ մի պարգև,
Ինչո՞վ օժտեց, ո՞ր թովչանքով բնության:

Տվեց նրանց գեղեցկություն մի վերին,
Ողջ զենքերի դեմ դերթ կարող մի վահան,
Որով կինն է հաղթում հրին ու սրին,
Քանզի գեղն է նրան հզոր հենարան...

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԸ

Նվեր հայկական արվեստի տասնօրյակին

Ա՜խ, հայրենի զուլա՛լ երգե՛ր, դուք իմ հոգուն հարազատ,
Երբ հնչում եք իմ ականջին, թվում է թե խանդակաթ—
Մեր լեռնային ակունքներից ծծում եմ ես անո՜ւշ կաթ...

Ելած բյուրե՛ղ ակունքներից հին դարերի հեթանոս,
Ամեն սրտից ակունք առած, մի գետ դառած հորդահոս.—
Ձգված իմ ժիր ժողովրդի հոգուց իբրև լույս ոլորտ.—
Արագի պես հավերժահոս, Արագի պես լա՜յն ու հորդ՝
Լափին տալով, խինդո՛վ-լալով, Ջրվեժներով, մանեման;
Եկաք հասաք ու ձեզ տեսաք մեծ արևի հանդիման...

Ա՜խ, հայրենի զուլա՛լ երգեր, դուք իմ հոգուն հարազատ,
Ձեզ լսելով՝ ես ծծում եմ իմ լեռներց անո՛ւշ կաթ:

Երկնել եք դուք, ո՛վ անարատ ռամիկ աշուղ ու գուսան,
Սրտերի դեզ որքա՜ն հյութեղ անմահական բալասան,
Եվ հյուսել եք սազո՛վ-սիմով, լույս ձեռքերով ոսկեմատ,
Իմ հայկական ժողովրդի լացն ու ծիծաղն անարատ:
Ձեր աճյունի սուրբ մոխիրը պահած սրտի սափորում,
Նա—մեծամայր ժողովուրդը ոնց լույս ավանդ է բերում,
Օրհնությո՜ւն ձեզ հազա՜ր բերան, ո՛վ բլբուլներ հայրենի,
Ա՜խ, չտեսաք... Արև ծագեց, լռեց բուքը վայրենի,
Ծաղկեց երկրի մեծ վարդենին, որին չ՚հասաք դուք,
ավա՜ղ,
Բայց ձեր երգի չամանդաղից մաղեց այնտեղ ցող ու շաղ:

Ա՜խ, հայրենի զուլա՛լ երգեր, դուք իմ հոգուն հարազատ,
Ձեզ լսելով՝ ես ծծում եմ իմ լեռներից անո՜ւշ կաթ...

Անմահության հետ շնչողը չունի երբեք «նոր», կամ «հին»,
Հազա՜ր դարի հինը՝ նոր է— հաստատ հավերժ իր գահին,

Դուք է՛լ, երգեր մեր հնավանդ, արդ՝ հնչում եք նորից նո՛ր.—
Ամեն հնչյունդ իր մեջ առած յոթը երկինք լա՜յն ու խոր,
Բայց երկինքն էլ թե որ պարզ չէ՝ չի երևա աստղ-լուսին,
Քո պարզությա՛մբ, հայրենի երգ, ժպտում ես մեր երեսին:

Ա՜խ, հայրենի զուլա՛լ երգե՛ր, դուք իմ հոգուն հարազատ,
Ձեզ լսելով՝ ես ծծում եմ իմ լեռներից անո՛ւշ կաթ:

Անձրևից ետ ո՛վ չի տեսել ծիածանն այն երփներանգ.
Յոթ գույն ունի, բայց ամեն գույն ինչքա՜ն ունի իր արանք,
Դուք էլ ունեք, լուսե՛ղ երգեր, ճիշտ յոթը ձայն-յոթը շունչ,
Բայց ամեն ձայն իր մեջ ունի հազա՜ր երանգ, հազա՜ր հունչ,
Թե դաշնակեն հազա՜ր ձայնն էլ կախարդական ու գերող,
Հմայելով վար կբերեն մոլորակներ գերգերող...
Փա՛ռք քեզ, հնո՜ց իմ ժողովուրդ, քանզի երգդ պարզ ու ջինջ.
Պետի հնչի հավերժորեն հավերժության ականջին:
Անո՜ւշ երգե՜ր, անհո՛ւշ երգեր, դուք մեծ հոգու լույս փոլորտ,
Դուք իմ սրտի մուրազի պես, Արագի պես լայն ու հորդ...

Ա՜խ, հայրենի զուլա՛լ երգեր, դուք իմ հոգուն հարազատ,
Երբ հնչում եք իմ ականջին, թվում է թե խանդակաթ,—
Մեր լեռնային ակունքներից ծծում եմ ես անո՜ւշ կաթ...

«Ա՜Խ ՋԱՀԵԼՈՒԹՅՈ՜ՒՆ, ԴԱՐՁԻ՛Ր ԴԵՊԻ ԵՏ...»

«Տղե՛րք, ձեզ մի բան ասեմ»։
—Համեցե՛ք, Ռուստամ բի՛ձա։
«Կյանքիս 60 տարին մաշեցի անցյալի զրկանքների ու վշտի մեջ։ Իմ երազներս հիմա են իրականացել... ես նոր իմացա կյանքի համը... բայց ափսոս, որ ծերացել եմ ու պիտի մեռնեմ... Ա՜խ դեռ չեմ կշտացել էս լին ու շեն կյանքից, ինչ կլիներ ձեզ պես ջահել լինեի...»

(Կոլտնտեսական Ռուստամ բիձայի վերջին խոսքերը մահվանից առաջ)։

1

Ուրա՜խ, բարեբեր հովտի մեջ զվարթ,
Դալար ուռենու շուքում բուրավետ,
Հավաքված մի խումբ աղջիկներ-ալ վարդ.
Ու ջահել տղերք՝ պարթև, թիկնավետ,
Ճոխ սեղան բացած ու դրած մի գառ՝
Քեֆ էին անում աղմուկով կայտառ...

Կողքին մի աղբյուր, սառնորակ ու վառ
Զնգոցով սիրո հեքիաթ էր ասում,
Զվարթ վառվում էր խարույկը պայծառ,
Ու գառան մսի խորոված ու սունկ
Տարածում էին հոտն ախորժելի,
Թնդում էր դաշտը ուրախ երգով լի։

Նրանց մոտ, ոսկե արտի ծով ափին,
Մի արծաթափայլ գլխով ծերունի,
Լսելով ուրախ աղմուկը խմբի,
Աչքը խարույկի բոցին ծիրանի,
Կրկին վերզգաց հոգում կյանք ու սեր,
Ու ջահելության հմայքը լուսե...

Սիրտը համակվեց թարմ ու վարդագույն
Ջահել օրերի քաղցր հուշերով,
Ու անմար կարոտ բարձած իր հոգուն՝
Առաջացավ նա դանդաղ քայլերով,
Ապա մոռացած ուժերը ակար՝
Հասավ շրջանը այն վարդանկար։

—«Ողջո՜ւյն ձեզ, տղե՛րք,—ասաց ծերունին,—
Ձեր ուրախ աղմուկն ինձ բերեց այստեղ.
Ա՜խ, որքա՜ն համեղ կլնի ձեր գինին,
Թե որ ձեր խմբում շնորհեք ինձ տեղ։
Սիրտս չհամբերեց, ու գնա՛մ, ասի՝
Ջահել տղոց հետ խփեմ թաս-թասի...»

—«Մեր աչքի՛ վրա, հարգելի պապի,
Ե՛կ, բազմիր այստեղ, գլխին սեղանի,—
Ձայն տվին անգին տղերքը խմբի,
— Մեր գլխի վրա պապին տեղ ունի...»
Ու վեր կենալով մեծ պատկառանքով՝
Ասում են՝— «պապի՛, համեցե՛ք մեր քով...»։

Ու ամեն մեկը գինու սափորից
Թասեր վերցրած՝— «Դե՛ խմի՛ր»,— ասին,
Ու թախանձեցին ծերունուն նորից,
Թե՝ «խոսքեր ասա հին կյանքի մասին,
Ապա նոր կյանքի այս ուրախ ու վառ։
Թանկ է մեզ համար քո ամեն մի բառ...»։

Ու ջահելական այս շրջապատում,
Մի զվարթություն համակեց նրան,
Եվ թո՜ւյլ առկայծեց ալեհեր սրտում
Մի ինչ-որ հեռո՜ւ, հեռավոր կրակ.
Ու վերցրեց փրփրուն մի բաժակ գինի
Ասաց՝ «Տղերք ջա՛ն, ձեր խոսքը լինի...»

Ապա լռեցին խմբով մխասին,
Ու մտածում են տղա ու աղջիկ,
Թե ի՞նչ կպատմի պապին իր մասին՝
Հին կյանքի մասին այն մռա՛յլ ու չիք:
Հետո ծերունին հառաչով հազաց,
Գինու բաժակը պարզելով՝ ասաց.

—«Արդեն իմ ութսուն տարին լրացավ.
Տեսե՛ք մոմուռ է տալիս իմ հոգին,
Էդ հին կյանքից է, որ ցավով անցավ...
Դրա համար էլ, ջահելներ անգին,
Իմ վաթսուն տարին՝ զուլում ու կրակ,
Չեմ ուզում հաշվել տարիքիս վրա...

Ջահել օրերից վառվռո՛ւն, զվարթ,
Ճաշակե՞լ ենք մենք հաճույքը վսեմ,—
Իմ ջահե՛լ տղերք, աղջիկներ իմ վարդ,
Հիմա կպատմեմ, հիմա ձեզ կասեմ,
Թե ինչպես բույսը կաճի չվաքում,
Երբ նրա վրա արև չի ծագում:

Այսպես: Ծնվեցի փալասներն հագիս,—
Երբ մորս տեսա վշտահար ու հեգ,
Ցավից մոմռաց իմ մատաղ հոգին
Ու մանուկ սրտիս բորբոքվեց մի վերք,
Այդ վերքը, տղե՛րք, այսօր էլ հաճախ
Ծխում է՝ դարձրած հոգիս մի օջախ...

Յոթ մանուկ ուներ մայրս բարեծին,
Որոնք ծնվելով ցավոտ ու տկար,
Առաջին խոսքը— «Հա՜ց...» բարբառեցին,
Իսկ մեր տաշտի մեջ պատառ էլ չկար...
Էլ չանցան նրանք կարիքի ծովեն,
Լոկ ես մնացի մեր տանն ապավեն:

Ու մայրս չասաց ինձ վրա «օրոր»
Ես տարա ցավեր անմռունչ ու հեզ,
Հայրս մահվանից առաջ մի արոր,
Ու կիսակենդան մի զույգ նիհար եզ
Տալով ինձ ասաց.— «Մի՛շտ եղիր ղոչաղ,
Վառի՛ր քեզ համար սեփական օջախ...»

Իմ ջահել տղերք, աղջիկներ իմ վարդ,
Հիմա կպատմե՞մ, հիմա ձեզ կասեմ,
Ի՞նչպես հերկեցի անդաստան ու արտ,
Հոգուս մեջ պահած ոսկեվոր հույսեր,
Փորփորեցի ես հողը քարքարոտ,
Ու ցորեն հացին մնացի կարոտ...

Մենք տեսանք թալան, զրկանք ու ավեր,
Ու կոտորածներ խեղճ ժողովուրդի,
Ապա սով տեսանք չար ու տնավեր,
Երբ մայրն ուտում էր հարազատ որդուն...»
Վերջին խոսքերը ծերունու սրտից
Ցավով պոկեցին հառաչ ու կսկիծ:

Ու ծերունական աչքերից անջինջ,
Շիթերն արցունքի արագ հոսեցին,
Եվ կարեկցելով տղա ու աղջիկ,—
Խոր ափսոսանքի խոսքեր ասացին.
Եվ մատուցելով գինին անբասիր,
— «Խմի՛ր, պապի ջան»,—չորս կողմից ասին:

—«Էս մեկ բաժակն էլ, ջահելներ անգին,
Պիտի խմեմ ես մի պայծառ կենաց,
Որ այս անապակ հրով իմ հոգին
Գինովցած թռնի՝ ուրախ, թևաբաց...
Անցյալի վիշտը իմ սրտես հանած
Խմում եմ ուրախ նոր կյանքի կենաց:

— Թող երկա՛ր ապրին մեր հայր Ստալին,
Մեր ղեկավարներն հմուտ, խելացի,
Որ պարգևեցին մեզ կյանք բերկրալի,
Որ մեզ հասցրին մեր հալալ հացին,
Ա՜խ, թևեր չունեմ, որ թռնեմ հասնեմ,
Համբուրեմ, նրանց ճակատը վսեմ...

. . . .

Իմ ջահել տղերք, աղջիկներ իմ վարդ,
Փրփնջեցե՛ք դուք կյանքում լիառատ,
Իմ կյանքի արևն իջավ սարից վար,
Ափսո՛ս... կմեռնեմ կարոտս չառած,
Որքա՛ն կուզեի ապրել ես ձեզ հետ,—
Ա՜խ ջահելությո՛ւն, դարձի՛ր դեպի ետ...

Ափսո՛ս, բնության կարգերից բոլոր
Այս մեկ օրենքն է անխա՛խտ, անսասա՛ն,
Ու ես էլ ցորնի արտում ինչպես լոր,
Մահը՝ դերանդի, հողը՝ ապաստան,—
Կմեռնեմ,— սակայն կյանքից վեհ ու վես,
Դեռ չեմ կշտացել, չեմ կշտացել ես...»:

ԱՇՈՏ ԼՈՒՍԵՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Հայրս, մայրս ինձ տվեցին
Էն աշխարհից միայն մի կյանք,
Իսկ դու, երկի՛ր արևածին՝
Հազար ու մի սեր ու բերկրանք:

Աչքս բացի ազատ հողում,
Միշտ ծծեցի օդը քո ջինջ
Եվ աճեցի քո լույս գրկում՝
Ինչ պարտեզում մատաղ նոճին:

Հիմա չուրջս կյանքն է բուրում՝
Վառ մայիսի վարդերի պես,
Հաճույքով եմ շնչում, ապրում,
Ողջ ուժերս բերած հանդես:

Իմ թևարձակ արծիվ մտքին
Եվ իմ արտույտ սրտի համար
Բացել ես մի անհուն երկինք
Ու խնդալից մի ողջ աշխարհ:

Քայլում եմ ես թեթև, զվարթ,
Ասպետից էլ սեգ ու չիտակ,
Մինչդեռ հորս թիկունքը հաղթ՝
Ծռված էր լեռ հոգսերի տակ:

Գլխիս վերև որպես վահան
Անմար արփին է միշտ շողում,
Ամեն անկյուն քո վառ գարնան
Ժպտում է ինձ ու ծիծաղում:

Այս քո ցանած ոսկի արտում
Հասնում եմ ես՝ մի լիքը հասկ,
Քո հողատար ձեռքն է մաքրում
Շուրջս եղած ամեն տատասկ...

Օ, ծո՛վ երկիր, կաթիլդ եմ չոկ,
Բայց ով ուշիմ ինձ է նայում՝
Նա չի՞ տեսնում իմ մեջ արդյոք
Պատկերըդ լույս ու հմայուն:

Ես առանց քեզ կչորանամ,
Ինչպես ծառը առանց հողի,
Սակայն քեզ հետ կաղնու նման
Դիմադրում եմ ամեն հողմի:

Երբ ոսոխը՝ քո աննման
Հողը խուժի ինչպես սև գետ—
Ես, կաթիլըդ, կբարձրանամ
Ժողովրդիս օվկիանի հետ:

Եվ կուրծք կտամ թշնամու դեմ,
Թեկուզ այրվեմ բոցերի մեջ,
Որ դու մնաս մի՛շտ ժպտադեմ՝
Զավակներով ազատ ու պերճ:

ԱՊՐԵԼՈՒ ՏԵՆՉ

Ես ապրել ու ապրել եմ ուզում,
Կյանքից քաղցր, անուշ բան չկա,
Ես շնչում եմ եդեմ պարտեզում
Ու սիրում եմ մի վարդ—աղջկա:

Այս շռայլ, վարդառատ մայիսին
Հայրենիքս այնպես է բուրում,
Կարծես բյուր գարուններ միասին
Իմ երեսն են խանդով համբուրում:

Ինձ հուզում են աշխարհ ու արև,
Ես դարձել եմ կյանքի սիրահար,
Ողջունում եմ ամեն նոր տերև,
Ծաղիկներն եմ գրկում քնքշաբար:

Երբ արևը փիրուզ կամարից
Սիրուհու պես դյութում է, թովում,
Ցանկանում եմ ծնվել ես նորից,
Ինձ մի կյանքը շատ քիչ է թվում:

Եվ փարվում եմ սիրով անապակ
Հարազատ և ազատ այս հողին,
Ու խմում եմ, խմում եմ անհագ
Արևից մինչ հորդող վառ գինին:

Օ՜, ապրել ու ապրել եմ ուզում,
Կյանքից քաղցր, անուշ բան չկա,
Այս կյանքի անթառամ պարտեզում
Ես սիրում եմ մի վարդ—աղջկա:

ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԱՌԱՎՈՏ

Արեն հագած ոսկի զրահ, սվիններով իր շողշողուն
Հալածում է սև գիշերին՝ հավերժական իր թշնամուն:
Հողի բույրով, երկնի ցողով, ծաղիկներով անուշահոտ
Դրախտավայր երկրիս վրա բացվում է ջինջ մի առավոտ:
Փայլփլում են ու պսպղում արևի դեմ, ինչպես ալմաս,
Մեր վեհանիստ, շղթա կապած լեռները սեգ ու երկնահաս:
Կապուտաչյա հովիտներում, ուր օվկիան են կարծես անափ,

Տարածվում են հոտերը մեր՝ ափեզերքի սարերի չափ:
Անուշ քամին հուզում է մեղմ՝ արտերը ծով ու բուրավետ
Եվ սկսում սիրո զրույց հասած ոսկի հասկերի հետ:
Դայլայլում են բլբուլները պուրակներում թավ ու կանաչ,
Կչկչում են, ինչպես գարնան վտակները քաղցրակարկաչ:
Բարձրանում են քաղաք ու գյուղ շռնդալով գվարթաձայն,
Ու բացվում է մեր աշխարհի հեքիաթային լույս—առօրյան:
Ամեն մի մարդ գործի կպած, ոգեշնչված ու խնդագին
Ծաղկի նման սիրտն է պարզում եկող պայծառ արեգակին:
Եվ պողպատե թռչունները ճեղքելով օդն, ինչպես արծիվ,
Սլանում են խիզախորեն դեպի կապույտ անծայրածիր:
Պարաշյուտներն արձակելով փերիների նման թեթև՝
Ցած են թռչում սավառնակից աղջիկները մեր հրաթև:
Սահմանապահ մարտիկներն էլ իրենց պոստում կանգնած
չխռով՝
Ուղարկում են շրջակայքը՝ ձեռքերն առած հեռադիտակ:

ԳԱԶԵԼՆԵՐ

1

Ծիածանի յոթ գույներով ծաղիկներն են ժպտում ահա,
Հայրենիքում իմ բուրաստան՝ բույր շնչելուց չեմ հագենում:

Ուր էլ թռչեմ սոխակի պես իմ հարազատ պարտեզն է այն,
Երկրում իմ լայն ու անսահման՝ ես շրջելուց չեմ հագենում:

Աղբյուրի պես կաթն է հոսում, գետերի պես՝ մեղր ու գինին,
Այս աշխարհում հեքյաթական՝ կյանք ծծելուց չեմ հագենում:

Շուրջս երգի ու ծիծաղի հեղեղներ են հորդում անվերջ,
Ես էլ վառված երգչի նման՝ էլ երգելուց չեմ հագենում:

Մեր շողշողուն սիրունների այս աստղազարդ երկնքի մեջ,
Իմ վառ աստղիկ, իմ սիրեկան, քեզ նայելուց չեմ հագենում:

2

Քեզ պես ծաղկած շքեղ գարնան՝ էլ զարդարանք ինչի՞ է պետք,
Երբ դարձել ես վառ ծիածան,—նոր գույն, երանգ ինչի՞ է
պետք:

Դուք արբեցնող բուրաստան ես, բույրդ փռած աշխարհով մեկ,
Էլ քեզ համար անուշահոտ յուղերը թանկ ինչի՞ են պետք:

Աճում ես դու վայելչակազմ, ինչպես նոճին մշտադալար,
Նման ծառին էլ շտկելու հնարք ու ջանք ինչի՞ են պետք:

Դիցուհի ես հուր-հրեղեն, քարին անգամ կյանք ես տալիս,
Երբ վառվում են այտերդ—վարդ, վարդի թովչանքն ինչի՞ է
պետք:

Վառ արևին ասում ես դու՝ դուրս մի արի, ես եմ ելնում,
Պատկերի դեմ քո աննման՝ իմ գովասանքն ինչի՞ է պետք:

Մեր ծաղկավառ հովիտներում սերը ազատ բլբուլ է միշտ,
Ում սիրում ես՝ թռի՛ր այն կողմ, թևիդ կապանք ինչի՞ է պետք:

3

Արևի պես ուր էլ նայես՝ հայացքդ այն է զարդարում,
Շող—մատներդ ինչին կպչեն՝ վարդ ու շուշան են զարդարում:

Երբ դու չկաս ճոխ պարտեզում՝ ծաղիկներն էլ հմայք չունեն,
Բայց այնտեղ ես մտնում թե չէ՝ ողջ բուրաստանն է
զարդարվում:

Հայրենիքում՝ զմրուխտ այգում մեջքդ սիրուն սոսու նման,
Քո հասակը չքնաղ գարնան պերճ տեսարանն է զարդարում:

Երբ անցնում ես թեթևքայլ՝ նայում եմ ես ոտիկներիդ,
Կաքավի պես շորորալդ անգամ ճամբան է զարդարում:

Օրն առանց քեզ մութ է կարծես, քեզ հետ լույս է գիշերն անգամ,
Շքեղ—արև պատկերը քո՝ հոգուս աշխարհն է զարդարում։

ԴԵՊՔ՝ ՊԱՏԱՀԱԾ ԲԼԲՈՒԼԻ ԵՎ ՊՈԵՏԻ ՀԵՏ

Բլբո՛ւլ,— ասացի,— եկ, դու վա՛րդ երգիր,
Ես՝ վարդ-աղջկան,
Այսպիսի վարդեր ու վարդ-աղջիկներ
Այլ երկրում չկան։

Բլբուլը եկավ ու վարդը գրկեց,
Ես՝ վարդ-աղջկան,
Ձեն-ձենի տվինք ոնց երկու հորդող
Աղբյուր քչքչան։

Տարված իմ սիրով գովում էի ես
Երկիրը գարնան
Եվ այդ գարնան մեջ վարդից ժպտերես
Բացվող աղջկան։

Բայց երբ նայեցի թռչնին հմայուն
Զարմացա ինչքան...
Իր վարդը թողած նա է՛լ էր նայում
Իմ վարդ-աղջկան։

ՏՐԻՈԼԵՏ

Մի՞թե առանց սեր ապրել կլինի,
Սիրո վրա է աշխարհը կանգնած.
Եկ, գուրգուրեմ՝ քեզ, իմ սրտով սիրած,
Մի՞թե առանց սեր ապրել կլինի։

Բեր, շուրթերըդ ալ՝ խմեմ թունդ գինի,
Սիրտըս բաժակ է ահա քո դիմաց,
Մի՞թե առանց սեր ապրել կլինի,
Սիրո վրա է աշխարհը կանգնած։

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ ԵՐԳԵՐ

1

Արև ես դու՝ քո վառ տեսքով, երկինք է քեզ հարկավոր,
Ահա կյանքըս՝ լազուր կամար, շողա այնտեղ ամեն օր։

Թռչնակ ես դու՝ գողտրիկ ձայնով, երգես պիտի պարտեզում,
Ահա սիրտըս՝ զմրուխտ այգի, քո անուշ երգն է ուզում։

Սոսի ես դու՝ քո հասակով, աճես պիտի ջրի մոտ,
Տալիս եմ քեզ սերըս աղբյուր՝ միշտ սրտաբուղխ ու միշտ հորդ։

Քե՛զ եմ տալիս ինչ որ ունեմ՝ երկի՛նք, աղբյո՛ւր ու պարտե՛զ,
Կյանք տուր նրանց՝ արևի պես, սոխակի պես, սոսու պես։

2

Շրջում է յարըս ծաղիկների մեջ,
Ինչպես լուսինը աստղերում անշեջ։

Այնտեղից ահա գալիս է մի հով
Ծաղկանց ու յարիս անուշ բուրմունքով։

Փչի՛ր միշտ, հովի՛կ, բե՛ր այդ բույրն ինձ մոտ,
Որ քիչ հովանա իմ սիրտը կարոտ...

Լուսինն աստղերում շրջում է անվերջ,
Ինչպես իմ յարը ծաղիկների մեջ։

3

Անգամ հոյակապ բնության գրկում
Քո ճոխ պատկերն է հոգիս փոթորկում։

Երբ դիտում եմ սեգ ծառերը կանաչ՝
Քո պերճ հասակն է կանգնում իմ առաջ։

Երբ զանգակ ձայնով աղբյուրն է խոսում՝
Հնչուն ծիծաղիդ կարկաչն եմ լսում։

Երբ թեթև հովից անտառն է խշշում՝
Նախշուն շորերիդ շրշյունն եմ հիշում։

Այնտեղ, ուր կա կյանք, ըղձում եմ ես քեզ,—
Իմ կյա՛նք, իմ երա՛զ, իմ սե՛ր հրակեզ։

4

Դու արև ես, ես մի ծառ,
Կոչումըդ լավ ճանաչի,
Ծառին շողեր տուր պայծառ,
Որ նա աճի, կանաչի։

Հայրենիքս ջուր ու հող
Տվել է ինձ անսահման,
Դու էլ սեր տուր ոսկեշող,
Որ ճյուղերս բարձրանան։

Սիրո արև՛ իմ բոսոր,
Շողա՛ շռայլ ու առատ,
Սիրտըս խմում է այսօր
Միայն քո լույսն անարատ։

5

Ինչի՞ է նման սազն առանց լարի,
Ինչի՞ է նման մարդն առանց յարի։

Երբ վարդի նման յար ունես կողքիդ
Բլբուլից անուշ երգում է հոգիդ։

Սրտով էլ յարս վարդ է ու ճաճանչ
Եվ ոչ կարմրադեմ, սևասիրտ կակաչ։

6

Վարդերը հուր-հուր՝ վառում են հոգիս—
Նրանք իմ յարի բուրմունքն են տալիս։

Դյութում են անչափ՝ ալ բոց, թեժ կրակ—
Յարիս շուրթերն են հիշեցնում նրանք։

Ուզում եմ գրկել արևը վառման—
Գեղեցիկ է նա իմ յարի՛ նման։

Սիրում եմ՝ ինչ որ վառ է, հուրհրան,
Չէ որ սիրածըս հենց հուր է միայն։

7

Սիրիր մեկին՝ սրտագին,
Ինչպես ծաղիկն արեգին։

Ու ծաղկի պես բացվելով
Շնչիր քո վառ արևով։

Այնժամ ձմեռ էլ լինի
Ծաղի՛կ, դու չես թառամի։

Ու չար քամու, հողմի դեմ
Միշտ կմնաս ժպտադեմ:

8

Առու ես դու
Մի կենսատու,
Քաղցրակարկաչ,
Ուր որ գնաս
Կփռվի խաս,
Վարդ ու կանաչ:

Մի դաշտ էր չոր
Սիրտըս տոչոր,
Երբ տեսա քեզ,
Բայց ջրվելով
Քո հորդ սիրով
Դարձավ պարտեզ:

Սրտի առու,
Ինձնից հեռու
Էլ մի՛ գնա,
Որ սիրտըս հար
Մնա դալար,
Զըչորանա...

9

Անհուն կարոտից իմ սիրտն է պայթում,
Իսկ նա անցնելիս ինձ չի նկատում:
Կրակ եմ դարձել, վառվում եմ սիրուց,
Բայց սիրտը նրա՝ ձմռան պաղ սառույց:
Մի տենչ է սակայն իմ սիրտը հուզում՝
Բոցի պես կիզուն խոսքեր եմ ուզում,
Որ երգս դառնա անշեջ հիացում,

Այնքան ջերմ սիրով ու հրով լեցուն,
Որ երբ նա կարդա՝ ցնցվի այդ երգից
Եվ ինչպես գարնան պայծառ արեգից
Իսկույն պաղ սիրտը, այն սառած առուն
Հալչի, կարկաչի սիրով վարարուն:

10

Մտքովըդ ո՞ւր ես, Աննիկ,
Որ այդքան լուռ ես, Աննիկ,
Սիրածըդ հո չի մեռել,
Որ դու տխուր ես, Աննիկ:

Կյանքն է հոսող վարար գետ,
Որ չի գալիս դեպի ետ,
Թող ծիծաղըդ զըրընգա
Իմ կարկաչուն երգի հետ:

11

Լուսնյակը սարի գլխին,
Բլբուլը դարի գլխին,
Ես մի արև լինեի
Իմ գարուն յարի գլխին:

Տխուր պահին հույս տայի,
Պաղած սրտին հույզ տայի,
Թող հատնեի վառվելով՝
Միայն յարիս լույս տայի:

12

Ով ապրում է վառ սիրով, հոգով բարձր կլինի,
Կյանքի ծովում ժայռի պես կրծքով կարծր կլինի,
Թե սիրվի էլ փոխադարձ ու սիրո համն իմանա՝
Նրա համար կյանքը միշտ՝ մեղրից քաղցր կլինի:

13

Ես սոխակ եմ սիրահար, ալ-վարդի բույր եմ ուզում,
Մեղվի նման միշտ նեկտար, միշտ ծաղկի ջուր եմ ուզում,
Հոգուս սիրով վարարուն ես մի Արաքս եմ ուժգին՝
Կյանքիս ճամբին ինձ ընկեր հորդառատ Քուռ եմ ուզում։

14

Արևի շողքից վարդերն են բացվում,
Վարդի հետ սիրող սրտերն են բացվում,
Երբ հայտնվում ես՝ քո արև տեսքից
Իմ ծաղիկ հոգու թերթերն են բացվում։

15

Սիրտըս ծաղիկ է՝ բացված մայիսին,
Ձգտում է սիրո քո արև լույսին,
Իսկ դու իմ կողքով անցնում ես այնպես,
Ինչպես անտարբեր, սառած մի լուսին։

16

Իմ հայրենիքում ի՞նչ նուշ է լինում,
Վարդի բույրն ինչքա՞ն քնքույշ է լինում,
Բայց կյանքի ծառին հասած սիրելին
Ամեն պտուղից անուշ է լինում։

17

Դու ինձ հասկացար, իմ հոգի, իմ շունչ,
Ընդունիր ահա մի վառ ծաղկեփունջ,
Մի փունջ նոր քաղած իմ ծաղիկներից՝
Սրտիս անթառամ սիրո պարտեզից։

18

Սերը գալիս է սիրով,
Ոչ թե զոռով ու սրով,
Ուղիղ ճամբան մոռացած
Ի՞նչ ես ընկել սարերով։

19

Փայլի՛ր, շողա արեվկառ
Ծովից հանված դու դոհար,
Քանի անդարձ չես սուզվել
Կրկին հատակը խավար։

20

Շողում է երկինքը փիրուզ ու անամպ,
Ճախրում է արտույտը արբած խնդությամբ,
Վեր-վեր է թռչում, անվերջ բարձրանում,
Երգում է իր սերը և չի հագենում։

Այդպես էլ իմ սիրտը՝ զվարթ մի արտույտ
Այն ջինջ երկնի պես երկրում իմ կապույտ
Ճախրում ու երգում է անդուլ ու անհագ,
Կարծես թե վառվում է, դարձել է կրակ,
Երգում է իր սերը ազատ ու վսեմ
Այնպես, որ բոլո՛րը, բոլո՛րը լսեն...

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՈ ԾՈՑԻԿԸ

Քո ծոցիկը վարդի նման՝
Առավոտվա շաղն է վրան.
Երնեկ ես թեժ արև լինեմ,
Գամ ու կրծքիդ ցողը ժողվեմ:

Երնեկ ես թուխ ամպիկ լինեմ,
Մեծ գետերից ջուր հավաքեմ,
Ու ծանրացած բարձրանամ վեր՝
Հոգուս միջին վառվող աստղեր:

Գամ ու չոքեմ ձեր երդիկին,
Վառ կարոտով իջնեմ կրկին,
Շամամ կուրծքդ ճերմակ քուլա,
Ես ցող դառնամ կրծքիդ վրա:

Արթնանաս ու վրաս նայես,
Անուշ տեսքով ինձ հմայես,
— Յար, քո սիրուց ես խելագար,
Ի՞նչ ես գցել ինձ քարե-քար:

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Թող մեր հանդում անձրև տեղա,
Բալիս գնեմ նոր օրորոց,
Աքլորը գա հետը խաղա,
Գլխին տնկած ոսկե քորոց:

Նաշխուն բալես քնի մուշ-մուշ
Երազներում հազար ու մի,
Սարից փչի քամին անուշ,
Որ իմ բալեն հանգիստ քնի:

Օրորոցի կողքին անքուն
Օրոր կասեմ իմ բալիկին,
Սրտիս միջին մի վիշտ թաքուն
Անվերջ կուտի իմ խեղճ հոգին:

Հայր չի տեսել իմ նոր բալեն,
Կռվում ընկավ հայրը նրա,
Իմ սիրտը նեղ, աշխարհը լեն,
Մութ է իջել սրտիս վրա:

Արթնանում ես աքլորի հետ,
Մորդ սիրտը միշտ մորմոքում,
Նանը տանի չարդ իր հետ,
Դու մի արև նանի հոգում:

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԿԱՔԱՎԸ

— Ման եմ գալիս շորորալով
Կանաչ հանդում ուրախ, ազատ,
Լաց լինելու ես չեմ սովոր,
Ուրախ երգն է ինձ հարազատ:

— Սիրուն կաքավ, չալիկ-մալիկ,
Ասա, ո՞րտեղ դու կթառես,
Ասա, ունե՞ս սիրուն բալիկ,
Շատ եմ սիրում քո ձայնը ես:

Արի, թառի մեր տան վերև:
— Ես բույն ունեմ հեռու սարում:
— Իսկ թե էնտեղ թափվի անձրև՞...
— Բույն կշինեմ ես քարայրում:

— Թե էնտեղ էլ բունդ ավերե՞ն
Քեզ մոտ ապրող սկյուռ ու մուկ...
— Ես կթռնեմ ծառի վրեն,
Բույն կշինեմ այնտեղ փափուկ:

— Իսկ թե ծառը մի օր կտրե՞ն...
— Թփուտներում ես կթառեմ,
— Իսկ էնտեղից էլ որ զրկե՞ն...
— Կայծ կդառնամ, ինձ կվառեմ:

ԻՋԵՔ ՍԱՐԵՐԻՑ

Էն բարձր ու ձյունոտ լեռների վրա
Ամռան արևն է շողերով փռվել,
Լուսով ողողել երդիկ ու սրահ.
Ամպերն արևից հեռու են թռել:

Իջեք սարերից, հե՜յ, սիրուն հարսներ,
Ծաղիկների մեջ շուշան եք քաղում,
Հեռվից լսվում է «Ջան գյուլում»-ը ձեր,
Ամռան արևն է ձեր դեմքին խաղում:

Իջեք սարերից օրը կեսօրին,
Եկեք ինձ համար շորեր ձևեցեք,

Էն լուսնակն առատ արեք իմ շորին,
Վառ արեգակն էլ երես կարեցեք:

Իսկ մանր ու խոշոր աստղերը երկնի,
Որ լույս են տալիս երբ լուսին չկա,
Կոճակ կարեցեք երբ օրը մթնի...
Ես հանդիպել եմ սիրուն աղջկա:

Կարեցեք էնպես աննման շորեր,
Որ յարիս ճամբին նրանք լույս անեն,
Թող գործեն էսօր նուրբ մատները ձեր,
Արև ու լուսնից ինձ հագուստ կարեն:

ԴՈՒՐՍ ԵԼԱ ՄԵՆԱԿ

Դուրս ելա մենակ գիշերվա կեսին,
Ինձ ճամբին տեսավ սիրածս ջահել,
Մութ էր գիշերը, չէր փայլում լուսին,
Արծաթ լուսինն էր ամպի մեջ պահվել:

Բռնեց իմ ձեռքից ու տարավ իր տուն,
Փռեց խալիչան իր ձեռքով գործած,
Ինչ կարոտ ուներ հավաքած սրտում
Թափեց այդ գիշեր յարս սրտաբաց:

Եվ օջախի մոտ միասին նստած՝
Խոսեցինք երկար մենք ամեն բանից,
Այդպես քաղցր ժամ ես չէի տեսած
Երբ համբույր ուզեց յարս ինձանից:

Սեր կա՝ սիրողին կպահի արթուն,
Սեր կա՝ աղջկան քնից կհանի,
Սեր էլ կա՝ ճամբից կհանի մարդուն,
Սերը չի նայի և ոչ մի բանի:

Սեր կա աշխարհում՝ ոնց վառած կրակ,
Կխենթացնի սիրահար տղին,
Սրտի խավարում սերը մի ճրագ,
Երանի՜ էդպես սեր ունեցողին:

ԱՄՊԻ ՔՈՒԼԱ

Լող արա, ամպի քուլա,
Էսօր քիչ ամպշող արա,
Արևից քրտնել ենք
Մի քիչ մեզ բանթող արա:

Գութանը թող չըանի,
Մաճկալի քունը տանի,
Իսկ հոտաղ ջահել տղեն
Գնա ու նոր սեր անի:

Իմ յարը ջուրն է եկել,
Ուրիշի դուրն է եկել,
Ա՛խ, հիմա ես ո՞նց անեմ,
Որ նրան տեսնեմ մեկ էլ:

Լվացք կանի արևի տակ,
Բաց կանի կուծքն սպիտակ,
Ում էլ որ ինքն ուզենա
Յար կընտրի իրեն չխտակ:

Արևը ցոլաց գնաց,
Երկինքը մթնած մնաց,
Ես մի նոր յար եմ սիրել,
Էն էլ իմ ձեռքից գնաց:

ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Մութ ծեգի հետ ես դուրս ելա,
Մի գեղեցիկ կորիճ տեսա,
Աչքերն արև ունքերի տակ,
Ցողի նման պարզ ու հստակ:

Նա համարձակ եկավ ինձ մոտ,
Հանկարծ դողաց իմ ձեռք ու ոտ:
Դեմքս արյունոտ ես դարձա տուն,
Մերս տեսավ՝ ճչաց իսկույն:

— Այդ երեսդ ո՞վ արյունեց:
Ասի՝ վարդի փուշը բռնեց,
Վարդ քաղելու իջա այգին,
Դեմքս արյունեց էսօր ծեգին:

— Թող չորանա փուշը վարդի,
Էլ չծաղկի, ազիզ որդի,
Թող չորանա վարդը թփով,
Արյուն չանի իր սև փշով:

Ասի՝ մայրիկ... (սիրտս ամաչեց)
Ինձ մի սիրուն կորիչ պաչեց,
Մի անիծի նրան էդպես
Չէ՞ որ գաղտնի սիրում եմ ես:

Մի անիծի, ջահել է նա,
Սիրտս ցավին չի դիմանա,
Նրա աչքն է միշտ իմ վրաս,
Ինչո՞ւ լինեմ ես անմուրազ:

ՀԱՃԵԼԻ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՃԵԼԻ ՋՐՈՒՅՑ

— Ես աշխարհի թագավորն եմ,—
Ասավ գետը շռինչ քաշելով:
Իսկ ձյունն ասավ,— Բա ե՞ս որն եմ.
Քեզ կծածկեմ իմ փեշերով:

— Էդ ո՞րտեղից,— ասաց քամին,—
Ինձ մոռացար, հպարտ ծերուկ.
Թե պատահեմ գալուդ ժամին,
Ո՞ւր կփախչես, ճերմակ մորուք:

— Դու էլ ի՞նչ ես միշտ ահ տալի,
Ամեն անգամ վրաս գոռում.
Թե որ տեսա դու ես գալի,
Կթագնվեմ ես խոր ձորում:

Անձրևն ասաց.— Ինձ էլ մի տես,
Կարծես շատ էլ վախկոտը չես,
Իսկ թե մի օր պատահեմ ես,
Իմ առաջից ո՞ւր կփախչես:

Աչքի տակով նայեց նրան,
Տեսավ կանգնած իր թշնամին.
— Քեզ հետ ո՞վ է, ջրոտ բերան,
Պատասխանեց ձյունն այդ ժամին:

ՃՆՃՂՈՒԿԻ ԽՐԱՏԸ

Արևոտ մի օր. կանաչ արտի մեջ
Ճնճղուկը խոհուն իմաստունի պես
Ճուտիկներին էր խրատում անվերջ.
— Լսեք, իմ բալեք, ինչ եմ ասում ձեզ...

Մեծացել եք դուք, ուզում եք թռչել,
Բայց փորձանքներից միշտ զգույշ եղեք,
Քանի դեռ աշնան քամին չի փչել,
Ուրախ ու ազատ մեծացեք, բալե՛ք...

Իսկ եթե հանկարծ տեսնեք չար մարդիկ,
Կռանում են որ քար վերցնեն գետնից,
Թռեք—հեռացեք, չմնաք, որդիք.
Ահա մի խրատ, սովորեք ինձնից:

Փոքրիկ ճուտն ասավ. «Եթե մարդիկ չար
Քարը նախորոք ծոցում են պահել,
Ի՞նչ անենք այն ժամ, ասա մի հնար,
Որ մենք սովորենք, անփորձ ենք, ջահել:

Ճնճղուկը հուզված դարձավ փոքրիկին.
— Էլ ոչինչ չունեմ ասելու ես քեզ,
Խրատն առել ես դու բնիդ միջին,
Ազատ ես, բալիկ, թռի՛ր ուր կուզես:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Լեռնային գյուղում աղքատ ու խավար՝
Սովի երկյուղն էր սուրում մխալար.
Ճնշում, հալածանք անվերջ, անդադար,
Եվ դաժան մի կյանք մահից էլ վատթար:

Գյուղացիք մի օր քյոխվայից թաքուն,
Սրտները պղտոր հիվանդ ու անքուն,
Ընտրեցին մի մարդ, որ գնա քաղաք,
Միրուքն ալեզարդ, իր անունն Ավագ:

Ասին՝ մեծ մարդ ես, ինքդ աչքաբաց,
Գնա քաղաք, տես դիվան կա՞ նստած,

Թե չէ՝ կկորչենք պարտքի մեջ խրված,
Էս տեսակ օրենք, մի տես, կա՞ գրված:

Գտնիր ցավը մեր էն մեծ դիվանին.
Բյուխվան, այ ախպեր, ցավ է մեր ջանին:
Չքաշվես երբեք մեծերի շողքից
Ասա՝ մեզ փրկեք էս սև դժոխքից:

Եվ մյուս առավոտ դեռ մութ գիշերին
Եկան նրա մոտ ու ճամբու դրին,
Ավագն էլ գնաց ձեռքին չիբուխն իր,
Խուրջինում մի հաց ու մի քիչ պանիր:

Քաղաքում նորից ասացին նրան՝
Եկել է վերից արդար դատարան:
Խնդրեց, որ իրեն իր մոտ ընդունի,
Լեռնոտ աշխարհեն մի բողոք ունի:

Վերջապես հերթը հասավ Ավագին,
Ուսին մի խուրջին, ցնցոտի հագին:
Ասաց՝ մենք մարդ ենք, և ոչ թե ոչխար,
Երբ ուզեն մորթեն, կամ թե քշեն սար:

Նրանք ձի են վառ՝ սանձերը կտրած,
Իսկ մենք՝ հասած արտ, անվերջ տրորված:
Երբ խոսքն ավարտեց ծերունին հանդիստ
Դատավորը մեծ նայեց նրան խիստ:

Նայեց միրուքին, իսկ նա՝ մտազբաղ,
Մի կեռ փայտ ձեռքին, թևի տակ փափախ:
Նայեց նա երկար, ու դարձավ մեկ էլ.
— Գյուղում մարդ չկա՞ր, որ դու ես եկել:

Փոթորկվեց այն ժամ հոգին ծերունու
Այդ խոսքից դաժան, ու դարձավ հատու.

— Ներեցե՛ք, պարոն, մարդիկ շատ կային,
Մեր մութ աշխարհում գուցե լույս տային:

Նրանց ճամբեցին աշխարհն արևոտ.
Մարդկանց մոտ կարդին, իսկ ինձ էլ՝ ձեզ մոտ:

ԽԵԼԱՌ ՋԱՔԻՆ

Իր ճոխ պալատում մի հարուստ իշխան
Ննջույք էր սարքել, խմում էր հանդիստ:
Որպես «մեծության ու փառքի» նշան՝
«Բարեգործ» դարձավ նա այդ օրը խիստ:

Նա կանչել տվեց խելառ Ջաքին,
Ասաց.— Հեյ Ջաքի, ի՛նչ պատմի հասար.
Նստած ես այսօր իշխանաց շարքին,
Մի օրվա իշխան, հիմա հասկացա՞ր...

Խմիր այս գինուց, մինչև տրաքես.
Միայն դու հիշիր, է՛յ դու խելառ ծեր,
Քո խենթ կատակով մեզ ուրախ պահես,
Չթողնես տխրեն իշխանները մեր...

Ու քեֆն սկսվեց: Երգ ու պար մեկ տեղ,
Սեղանի չորս կողմ հարբած իշխաններ,
Իսկ խելառ Ջաքին կուչ եկած այնտեղ՝
Լսում էր նրանց, նայում անտարբեր:

Մի ջահել աղջիկ պարեց դահլիճում,
Ոսկեգույն շորով, պարեց նա անչափ՝
Ոնց ոսկե մի ձուկ արծաթե լճում,
Պալատում հնչեց նոր ծիծաղ ու ծափ:

Ու երբ վերջացավ պարը աղջկա,
Իշխանը դիմեց խելառ Ջաքին.

— Դե, մի բան ասա, արևս վկա.
Թե չէ սև կանեմ քո խմած գինին...

Ես հարցնում եմ քեզ, ասա դու, խելառ,
Ինչի՞ նման է իշխանն այն ջահել,
— Տեր իմ, նա՝ ինչպես նորածին մի գառ,
Երևում է, որ շատ լավ են պահել...

— Իսկ այն մեկն, ասա, որ ունի բեխեր,
Ինչ անուն կտաս էս մի իշխանին,
— Տեր իմ, ինձ ներիր. մի աղվես է ծեր,
Նա մի կրակ է՝ ընկած մեր ջանին...

— Մի լավ անուն տուր քո լեզվով ճարտար,
Ինչի՞ նման է իշխանն այս ծայրի:
— Եթե կլսես իմ խոսքը արդար,
Տեր իմ, նա տեղով գազան է վայրի:

— Լավ, լավ, հասկացա, խոսքդ մի՛ խարջի
Ի՛նձ ասա հիմա, որ ինքս լսեմ:
— Դու էլ նման ես պառաված արջի,
Տեր իմ, ուրիշ բան դժվար թե ասեմ...

Իշխանը հանեց իր սուրը փայլուն,
Եվ ուզեց խփել իր սրով հատու,
— Էդ ի՛նչ ասացիր, է՛յ դու անասուն,
Կսպանեմ ես քեզ, ստախոս մի դու:

Ծերունին վախով ընկավ կանանց մեջ,
Ուզեց թաքնվել սենյակում կանանց:
Հարց ու փորձ արին Զաքիին անվերջ.
Զաքին էլ պատմեց ամբողջը նրանց:

Դարձավ բարկացած մի իշխանի կին.
— Չէի՞ր կարող տալ լավ անուն, հարամար,
Մի ճարտար լեզվով գովեիր կարգին
Հարուստ իշխանին մեր այս բարերար:

Մի ուրիշն ասաց.— Ծերուկ դու խելառ,
Դու մեր իշխանին այդքան պատվասեր,
Նմանեցնեիր արևին պայծառ,
Կամ մի լավ բանի, ինչ սիրտը կուզեր...

Երբ Զաքին լսեց խոսքերը նրանց,
Կրկին չզգալով իրեն հանցավոր,
Այս անգամ ևս նա դարձավ վեհանձ,
Եվ տվավ հարցի պատասխանը նոր...

— Բայց նա նման չէր և ոչ մի բանի.
Ի՞նչ անուն տայի մնար հիշելի,
Թեկուզ ինձ հիմա էստեղ սպանի,
Արջի նման էր, ախր, գարշելին:

ՈՒՐԻՇԻ ԵՐԵԽԱՆ

(Պոեմ)

1

Բայրամբեգը լեռների մեջ հայրենի
Ապրում էր ճոխ, ուրախ, անհոգ իր կյանքում,
Դեմքից բարի, ներսից՝ գազան վայրենի,
Վաղուց ընտրած մի աստղ ուներ երկնքում:
Եվ եթե նա գտներ կյանքում մի հնար,
Սիրած աստղը, որ վառվում էր երկնքում,
Վայր կբերեր, կասեր եղիր ինձ խոնարհ,
Ու լույս վառիր տխուր ժամին իմ սրտում:
Տխուր սրտով, գարնանային մի տաք օր,
Սար էր գնում նստած իր ձին սևաբաշ,
Փոթորկում էր նրա սրտի վիշտը խոր,
Թեև հարուստ՝ բայց ապրում էր հոգեմաշ:
Այդպես երկար խորհում էր նա օրնի բուն,
Ձիու վրա մոլեգնում էր սիրտը ծեր,
Շշնջում էր.— Չեմ ունենա հանգիստ քուն,
Ես չեմ թողնի սրտիս իղձին սև գիշեր:
Հարուստ եմ ես, ինքս ջահել կին առա,

Շուտ թառամեց, նա ինձ համար հնացավ,
Ուրիշ մեկին ես ընտրեցի, բայց սուտ,
Երրորդն ունեմ, նա էլ գլխիս մի նոր ցավ:

Եթե մի օր չկանաչի հանդը մեր,
Եվ չբուսնի ոչ մի ծաղիկ աշխարհում,
Էլ չի տալի ոչ մի մեղու մեղրաբեր,
Մարդ-մեղուն էլ կծերանա մի օրում:
Եթե տեսնեմ ենթարկվել եմ փորձանքի,
Մահվան քամուց կյանքի լույսն է լուռ մարում
Վերհիշելով տխուր ժամերն իմ կյանքի,
Հարց կտամ ինձ.— Ես ի՞նչ տեսա աշխարհում:
Քանի՛ ալ-վարդ ես չծնված թառամեց,
Քանի՞ անգամ ես լացա աշխարհից,
Քանի՞ ծաղիկ հյութն իմ հոգու մեջ քամեց,
Քանի լալա ես քաղեցի մեր սարից...

Բայրամբեգը սիրտը պղտոր առվի պես,
Նստած ձիուն անցավ ծանոթ մի ուրթով
Եվ հենց այնտեղ իր աչքերով սրատես,
Ընտրեց մեկին, մի հարսնացու իր մտքով:
Ջուր էր տանում հին սափորով աղբյուրից,
Քսանամյա նա մի ջահել նորահարս,
Ժպիտը պարզ զուլալ աղբրի ծով ջրից,
Հեռվից-հեռու փայլում էին այտ ու վարս:
Բայրամբեգը իր սև ձիուն մոտակեց,
Մոտենալով ջահել հարսին՝ խնդրեց ջուր,
Նա իր սիրտը նոր հրդեհով կրակեց,
Հետ չնայեց, գլուխը կախ անցավ լուռ:

— Տես ճամբորդ եմ, անծանոթ եմ, ինձ նայիր,
Ջուր չես տալիս՝ ցույց տուր ճամբան, նոր գնամ,
Սիրտս չոր է, ջուրդ ինձ մի խնայիր,
Չեմ մոռանա քո արարքը մինչև մահ:
Ջահել կինը աչքի տակով սրտադող
Նայեց նրան ու սարսափեց չար տեսքից.

— Ինչ գործ ունեմ— ավազակ է կամ թե գող
Գլխիս բերի ո՞վ իմանա ինչ կսկիծ:
Բայրամբեգը ձիուն նստած հեռացավ,
Աչքը հառած տուն գնացող ջրվորին,
— Կինը ծնվեց, որ մեզ բերի վիշտ ու ցավ,—
Շշնջաց նա հառաչանքով մի խորին:

Արևհատ էր
Անունն այդ նոր ջրվորի,
Նա մի հատ էր,
Մի սեգ շուշան էր սարի
Նա այդ սարում
Հովվի կին էր մի ջահել,
Նա վառ գարուն,
Կյանքի բուրմունք էր պահել...

Նրանք մեկտեղ
Ապրում էին սիրով խոր,
Խրճիթը նեղ
Խոնավ հողում գետնափոր:
Մի նեղ խրճիթ,
Բայց լայն սրտով մարդկային
Պարզ ու վճիտ,
Իրար միշտ լույս կտային:

Նա անվրան,
Հին հովիվն էր Սեթ աղի,
Կյանքը նրան
Թույն էր բերում ու լեղի:
Բայց որքան էլ
Տեսներ փորձանք ու աղետ,
Վիշտը քամել
Կցանկանար կնո'ջ հետ...

Տեր Բայրամբեգը սիրտը խոր վշտով,
Ուշ երեկո էր, հասավ իր օրան.

Իջավ լեռներին մութ խավարը ծով,
Չմնաց անգամ հանդում մի չոբան:
Իջավ նա ձիուց, թիկնեց վրանում,
Ուզեց մոռանալ սուր դեպքն այդ օրվա,
Բայց մտքի միջից նա չէր հեռանում,
Իջել էր սրտին շունչը գիշերվա:
Անցավ մի շաբաթ, նա տխուր էր դեռ,
Չի ուզում բացել սիրտը ոչ մեկին,
Սրտին իջել է տանջալի մի բեռ,
Ու փոթորկել է իր մռայլ հոգին:

Եվ ահա Բեգը կանչեց մի անգամ
Սիրած Մուխտարին՝ իր հովվին ավագ,
Ասաց.— Լոկ քեզ եմ զգում բարեկամ,
Եղիր ինձ համար հարազատ զավակ:
Վերցրու քեզ հետ տասը քաջ տղա,
Ձիեր նստեցեք ու բարձրացեք սար,
Դարձեք ավազակ, ալլահ, քեզ մեղա,
Ձեր անունը թող ընկնի լուս աշխարհ:

Այդքանից հետո լսիր ինձ հիմա,
Ես Կեչուտ սարում մի կին եմ տեսել,
Ծան քածը ինչպես նոր դրած հինա,
Կարծես թե վարդ են մեջտեղից կիսել:
Ջահել է, Մուխտա՛ր, անման մի կին,
Մարդ ջահել լինի, կտա իր հոգին,
Փոթորկել է նա ալևոր հոգիս:
Մուխտա՛ր, դու մի օր քո քաջ տղերքով,
Զքնաղ փերիին ինձ մոտ փախցրու,
Իսկույն կստանաս պարգև իր կարգով,
Իմ ժառանգության տերը դարձիր դու...

Քեզ հետ վերցրու մի ծանոթ պառավ,
Թող նա ցերեկով գնա էն օբան.
Իսկ եթե տեսար նա հետ չդարձավ,
Դու ինքդ գնա որպես թուրք չոբան:
Մի կերպ իմացիր անունն ու իրեն,

Հետո ոնց կուզես փախցրու նրան.
Նոր եկ, որ սիրով սև ձիս նվիրեմ,
Ձիուս հետ մեկտեղ և մի նոր վրան,
Եթե փախցրիր, քո վրանը բեր,
Որ պառավներս իսկույն չիմանան,
Երբ որ կատարես, լուր բեր մի գիշեր,
Ձիով կթռչեմ ձեզ մոտ անպայման:

***

Անցան օրեր, մի օր ահա լուր տարածվեց ահավոր.
Նոր մարդիկ են բուսել սարում, չեն դադարում ոչ մի օր,
Գիշերները հարձակվում են և չեն հարցնում թուրք ու հայ
Թալանում են՝ ով որ միայն մի կով ունի կամ ոչխար...
Մի ցուրտ գիշեր նրանք մտան իրենց ընտրած այն օբան,
Խավարի մեջ որոնեցին Արևհատին, չգտան.
Աղեկտուր ճիչով լցվեց ամեն խրճիթ ու վրան,
Իսկ Մուխտարը Արևհատին որոնում էր անվարան:
Օբան հասան հովիվները այն մոտակա անտառից,
Ամեն մեկի ուսին մահակ, շտապ պոկած չոր ծառից:
Մուխտարն ասաց.— Փախե՛ք, տղե՛րք, մարդ է գալիս
օգնության,—
Չանցավ երկար, անհետացան խավարի մեջ անլուման:

Աղետալի այդ գիշերից հազիվ անցավ մի յոթ օր,
Հանգստացավ ահով լցված պառավների սիրտը չոր,
Լոկ Մուխտարն էր թույնով լցված անհանգիստը այդ սարի,
Մտածում էր՝ ինչպե՛ս անի, որսը հաջող կատարի:
Երկար խորհեց նա կնճռոտած, հետո հանգիստ շունչ առավ,
Գնաց գտավ մոտիկ սարում իրենց ծանոթ մի պառավ,
Ասավ՝ պառա՛վ, առ այս շալը, հագիդ շորն է հնացել,
Մի պայմանով, որ ինձ օգնես, հույսս դու ես մնացել:
Պետք է գնաս դու հենց այսօր Կեչուտ սարը քո տեսած,
Քո ձեռքերով քաղես ինձ տաս հոտով նարգիզ նոր բուսած:
Աբի գնա նրան գտիր, էլ ամոթ է համբերել,
Մի գյուղալ կա, ես ուզում եմ իմ եղբորը կին բերել...

Ջահել է նա, սև աչքերով, գեղեցիկ է ինքը շատ—
Իմացել եմ ծանոթ մարդուց, իր անունն է Արևհատ,
Դու հենց այսօր գնա այնտեղ, նրան գաղտնի հետևիր,
Երբ ջրի գա, օդում շարժիր թաշկինակը քո կարմիր,
Տե՛ս, եղբորս ջահել սիրտը սիրո կրակն է վառում,
Մենք կսպասենք կազմ ու պատրաստ այնտեղ՝ մոտիկ
անտառում,

Թե այս գործը գլուխ բերես, խոսք եմ տալիս սրտաբաց,
Վաղը և ես բեգի հոտից քեզ պարգևել երկու այծ:
Երբ Մուխտարը ճամբա դրեց էն պառավին իր ծանոթ,
Տեսավ հեռվում ընկերներին, ձիով գնաց նրանց մոտ:
Ուրախ սրտով հայտնեց նրանց.— Նոր միջոց եմ հնարել,
Մեր ցանկացած գործի համար պառավին եմ ես լարել...

Լույսը, ահա, նոր է բացվել, բայց քնած է օբան դեռ,
Աղբյուրի տակ, ձորի միջին, երգ է ասում մի ծիծեռ:
Ամպի տակից արևն ելավ իր շողերով կենսաբույր
Ցողաթաթախ ծաղիկները տվին իրար ջերմ համբույր:
Սառն աղբյուրի ժայռի գլխին թաքնվեցին նրանք վաղ,
Որ ինչ լինի՝ հափշտակեն Արևհատին այն չքնաղ:
Զանցավ երկար, ձորի գլխին ծեր պառավը երևաց,
Մուխտարն ասաց.— Պատրաստվեցեք դիմավորենք սրտաբաց:
Տեսան՝ հեռվից ջուրն է գալիս ջահել մի կին գլխակոր,
Իր երեխան շալակն առած, ձեռքին բռնած հին սափոր,
Երբ մոտեցավ, սև աչքերում նկատեցին կյանքի հուր,
Կարծես այնտեղ լցված լիներ անմահական ծաղկի ջուր:

Ցոլում էին հոնքերի տակ սև աչքերը հմայող,
Ինչպես գարնան ցողն անարատ, իր մեջ առած անմար շող:
— Սա է, որ կա, պատրաստվեցեք,— Մուխտարն ասավ
շշուկով,
Նայեք նրան, այդ փերիին, խորամանկ է, խելքի ծով,
Ինչ խորամանկ աղվես է նա, ջուրն է եկել հին շորով,
Երեխան էլ հետն է բերել, ինքը բոբիկ ոտքերով:
Սիրուն կանայք աղավնու պես իրենց փետուրն են փոխում,
Դա օրենք է. շատ սիրունը միշտ իրենից է վախում,

Այդ անում են, որ միշտ մնան փորձանքի մեջ աննկատ,
Բայց դրանով միշտ բերում են մի փորձանքից մեկը վատ:

Նրանք գաղտնի պաշարեցին Արևհատին մեն մենակ,
Ինչպես հանդում ոչխար գտած ծեր գայլերի մի ոհմակ,
Յափունջու մեջ փաթաթեցին բերնին դրին թաշկինակ,
Ու փախցրին իր մանկան հետ Արևհատին՝ սիրտը փակ:
Երեկոյան երբ մութն իջավ, ծաղիկները մտան քուն,
Հովիվ Հարոն վառ կարոտով վերադարձավ հանդից տուն,
Նա այս անգամ Արևհատին խրճիթի մեջ չգտավ,
Ասին՝ մենակ աղբյուր գնաց, մինչև հիմա չդարձավ:
Խնդրեց Հարոն իր Սեթ աղին, որ նա թույլ տա հենց հիմի,
Գիշերն անքուն այդ սարերում Արևհատին որոնի,
Աղան դարձավ հանդիստ տոնով, սրտում պահած բարկություն,
— Հոտս թողնես, սարերն ընկնես և դա եղավ մարդկությո՞ւն:

Լավ է հիմա թողնես նրան, ջուր փորձանքի չգնաս,
Կանանց միջին միշտ սիրունն է մարդու գլխին պատուհաս,
Ո՞վ իմանա՝ գաղտնի մեկին խոսք է տվել ու համբույր,
Քեզնից թաքուն փախել մեկտեղ, վշտանում ես ինքդ զուր:
Տխուր օրից, դու լավ գիտես, բարեկամդ ես եմ լոկ,
Կամուսնանաս աղջկա հետ, նա հարուստ է և խելոք:
Ի՞նչ անենք որ ծանր է լսում, դեմքն էլ մի քիչ ծաղկատար,
Բայց նա իրա խելոքությամբ կզարդարի մի աշխարհ:
Թե ուզում ես՝ խոսք տուր հիմա ձեզ պսակենք հենց էգուց,
Աղջիկս առ, հարստացիր, նա սիրել է քեզ մանկուց,
Չկարծես թե ուզող չկա, ուզող շատ կա, չեմ տալիս,
Այդպես հարուստ հարսնացուին ճրագով են ման գալիս:

Ասավ Հարոն.— Ես սրտադող՝
Կյանքիս լույսը մարեց արդեն,
Ինչի՞ս է պետք մեծ մալ ու փող,
Ղուշս թռավ, էլ ի՛նչ մարդ եմ:

Արև չկա էլ իմ հոգում,
Ինչի՞ս է պետք ոսկե վանդակ,

Երբ արյուն է սրտից կաթում,
Երբ նրա մեջ իմ սիրտն է փակ։

Ջահել օրից ուխտ եմ արել,
Ու միշտ նրան սիրել եմ ես,
Չէ՛, չեմ կարող ես չսիրել,
Թեկուզ սիրտս թրով կիսես։

Առանց նրան բու եմ հանդում,
Արևհատը թևն էր հոգուս,
Չեմ ունենա քեֆ ու խնդում,
Ոսկու միջին ապրեմ թեկուզ։

Ինչպե՞ս ապրեմ առանց նրան,
Ինչպե՞ս մենակ ման գամ սարում,
Ես մի չոր ծառ ոտքի վրա,
Ինձ կյանք չի տա ոչ մի գարուն...

Ինչի՞ս է պետք ոսկի, արծաթ,
Նա մի գանձ էր ոսկուց էլ թանգ,
Ապրում էինք թե լավ, թե վատ,
Միշտ չոր հացով, բայց՝ ուրախ կյանք։

Եվ այդ գիշեր, Հարոն տխուր,
Աղի ոչխարն արխաջ արավ,
Ու հեռացավ անհաց անջուր,
Մահակն ուսին, սոված-ծարավ։

Ասավ՝ անքուն ես ման կգամ,
Այս տանջալից վերքն իմ սրտին,
Թեկուզ ջահել կյանքս կտամ,
Միայն նրան գտնեմ կրկին։

Սեթ աղեն ուրախ, երբ դարձավ վրան,
Վերհիշեց նորից զրույցն այդ օրվա,
Հիշեց, թե այն ժամ ի՞նչ ասաց նրան՝
Այն ծեր պառավին՝ ծանոթին հերվա։

Երբ պառավ ջաղուն հայտնեց ամեն բան,
Սեթ աղեն ասաց.— Կարող եմ օգնել,
Միայն թե հետո տանեն երեխան։
Լակոտի լացից չեմ կարող քնել։

Արևհատը երբ թուրքին կին մնա,
Իր երեխային թող հանձնեն մահի,
Աղջիկս գուցե և ամուսնանա,
Նա ջահել օրով հո որբ չի՛ պահի։

Թող Արևհատը վերհիշե նորից,
Երբ սար՝ խոսք տուր, միշտ տալա հաղէ,
Թող հիմա զրկվի իր կարմիր օրից,
Փողոց շպրտեն, երբ որ ցամաքի։

Նա իր աչքերը վաղուց է բացել,
Էդ անզգամին չեմ կարող տանել,
Ինքս էլ մի անգամ հյուր եմ գնացել՝
Ցանկացել է ինձ դաշնահար անել...

Ու որոշել եմ էն օրից հաստատ,
Կորցնել նրան այս ծաղկած սարից,
Թող ինձնից հեռու տանջվի հուսահատ,
Եվ կարոտ մնա մեր լույս աշխարհից։

Աղջիկս սիրեց իմ չոբան գյադին,
Բայց նա չիմացավ, հայվան էր տեղով,
Գնաց կին առավ այն Արևհատին,
Ինքը մեղք չունի, հիմար էն ցեղով...

Երբ Արևհատին մի թուրք կին տանի,
Լավ խայտառակվի ամեն հայ գյուղում,
Ո՞վ չի ցանկանա նրան սպանի,
Այն ժամ տապակվի թող իրենց յուղում։

***

Իջավ երեկոն ծաղկառատ հանդում,
Թաղվեց ամեն ինչ մեգում հեռանիստ,
Դառնում են ահա հովիվները տուն,
Չոքեց լեռների ամպը ծանր ու խիտ:
Կանաչ հովտի մեջ, անտառի ծայրին,
Փռվել են ահա մի քանի վրան
Կախված են պատից թաղիքները հին,
Ինչպես խունացած վերարկու ձմռան:
Պառկած է ահա Արևհատն այնտեղ,
Չի կարող խնդրել դեթ մի բաժակ ջուր,
Արցունք են թափում սև աչքերն անմեղ,
Ձեռք ու ոտքերը կապված են ամուր:

Այնտեղ է նաև Մուխտարը հպարտ,
Մտածում է նա՝ չեմ տեսել մռմուռ,
Բեգը կսիրէ իր քաջին անպարտ,
Իմ դեմ կբացվի ամեն փակված դուռ:
Տեր Բայրամբեգը եթե իմանա,
Թե ինչ ընծա եմ ես նրան բերել,
Կթռչի ինձ մոտ, նա չի դիմանա,
Առանց այն էլ նա շատ է համբերել...
Կլինեմ նրա աջ թևն այսուհետ,
Կապրեմ նրա հետ ուրախ, փառավոր,
Ինձ չի կանգնեցնի ոչ մի պղտոր դետ,
Թող այն ժամանակ ճանաչեն ինձ նոր:

Ամեն ինչ թաղվեց մթան մեջ խորին:
Մուխտարի կինն է նստած վրանում,
Լուռ է այդ ժամին խեղճ Գյուլլի փերին,
Նստել է տխուր, նա ձայն չի հանում:
Մտածում է նա.— Իմ նոր վիշտն է խոր,
Մուխտարն իր համար նոր կին է բերել,
Էլ ինձ չի պահի, դուրս կանի մի օր,
Զուր եմ ես նրան սիրտս նվիրել:

Նա գեղեցիկ է, ինձնից առավել,
Դրա համար չէր մարդս տուն գալիս.
Մուխտարը շուտ է ինձանից սառել,
Հիմար էի ես, նստում՝ զուր լալիս:

Գիշեր ու ցերեկ նստում կարոտով,
Աղոթում էի ականջս ձենի,
Սպասում էի, տուն գա իր ոտով,
Փորձանքի չգա, ուր էլ որ լինի.
Ինչ դժբախտ եմ ես, գեղեցիկ չեմ շատ,
Ոչ ոսկի ունեմ, ոչ էլ հարուստ հայր,
Վիշտը հոգուս մեջ, տանջվեմ հուսահատ,
Օ, դժբախտ եմ ես. ինչու դարձա մայր.
Եթե Մուխտարը ինձ կին չպահի,
Ինձնից կխլի իմ որդին սիրած,
Իմ չոր գլուխը ես կտամ մահի.
Ինձ համար արծաթ խանչալն է սրած:

Արևհատն այնտեղ հառաչում է միշտ.
Ու նայում նստած Գյուլլի փերին,
Նրա աչքերում զայրույթ կա և վիշտ,
Լուռ հալածանքի մի կսկիծ խորին:
Իր թաց աչքերով նայում է տխուր,
Իր մինուճարին, իր սիրած որդուն,
Իրենից բաժան անկյունում մի խոր,
Քնած է խաղաղ, աչքը չի թարթում:
Եվ մղկտում է սիրտը մայրական,
Նա ցանկանում է որդուն համբուրել,
Սեղմել իր կրծքին սիրով անսահման,
Չէ՞ որ իր որդին ոչինչ չի կերել:

— Լսի՛ր, իմ Գյուլլի, ինչ ես լուռ էդպես,—
Դարձավ կնոջը Մուխտարը հանկարծ,
— Ի՞նչ տխրություն է, ասա, տիրել քեզ,
Սիրտդ տանջում է ինչ որ խուլ կասկած.
Այս կինը որ կա, այս չքնաղ փերին,

Ինչ հիմարն ես դու, ինձ համար չէ սա.
Սա է մեր բեգի ջահել սիրուհին,
Ես լուր կտանեմ, այս գիշեր կգա։
Խոստացել է ինձ պարգևներ առատ,
Ինքդ այս գիշեր լավ նայիր սրան,
Աչքդ բաց պահիր, խոսքս քեզ խրատ,
Մինչև որ կրկին ես գամ ես վրան։

Մուխտարը ձիով հեռացավ մթնում,
Իսկ Գյուլլի մերին շունչ քաշեց հանդարտ,
Կարծես մի անգին գոհար էր գտնում,
Որի կորուստը կյանքում մեծ էր խիստ։
Փչում էր սև ձին մտքի մեջ խոսում.
— Ես տեղ կհասնեմ գիշերվա կեսին,
Կասեմ՝ սիրուհիդ քեզ է սպասում,
Ի՞նչ ես մտածում պարգևի մասին։
Իսկ երեխային չեմ քաշի սրի,
Թող բեգից թաքուն հասակ առնի նա,
Նա էլ ինձ նման հովիվ կդառնա։

* * *

Գյուլլին օջախում թեժ կրակ վառեց,
Սրտի մեջ թաղած մի խոր վիշտ տանջող,
Նա իր աչքերը կսկիծով հառեց
Խեղճ Արևհատին՝ անկյունում ննջող...
Օ՛, եթե Գյուլլին լեզու իմանար,
Վիշտը կհայտներ նա Արևհատին,
Կասեր ամեն ինչ, կասեր քույրաբար,
Որ էլ վշտի ամպ չնստի սրտին։
Արևհատը թե իր լեզվով խոսեր,
Կիմանար նրան ինչու է բերել,
Նրան իր հոգու գաղտնիքը կասեր,
Գուցե նա բեգին երբեք չի սիրել...
Չէ որ նա մայր է, երեխայի տեր.
Գուցե տարվել է բեգի մեծ փառքին,

Փո՞ղ է հարկավոր, թե՛ այրող սրտեր,
Որ աշխարհի մեջ մարդ ապրի կարգին։
Իսկ եթե սիրով սիրում է բեգին,
Ինչո՞ւ են նրան կապի մեջ դրել,
Անարատ է նա, գուցե, մի խեղճ կին,
Կապել են թոկով ու զոռով բերել...
Նստած խորհում էր նա այդպես երկար,
Քունը ծանրացավ աչքերին թառեց,
Նա շատ խորհելուց դառնում էր տկար—
Օջախն էր մարել, նոր կրակ վառեց։

Մոտեցավ զգույշ նա Արևհատին,
Արձակեց նրա կապերը ձեռքի,
— Հոգնած է,— ասավ,— թող քնի կարգին,
Նորից կկապեմ երբ լույսը ծեգի.
Արևհատն այդպես քնեց քնով խոր,
Գիշերվա կեսին արթնացավ հանկարծ,
Այդ մթնում դաժան ուշքի եկավ նոր,
Տեսավ ձեռքերի կապերն արձակած։
Իր շուրջը նայեց, գիշեր էր խավար
Արձակեց գաղտնի կապը ոտքերի,
Բուն էր կռանչում մթնում միալար,
Նա էլ էր կարծես իր նման գերի։
Նա խարխափելով եկավ սրտադող,
Մթնում որոշեց փախչել անպայման,
Մեծ վրանի մեջ գտնի երեխան։
Վրանի վերին անկյունում, ահա,
Երկյուղով լցված ձեռքով խարխափեց,
Գտավ երեխան ու գիրկն առավ նա,
Եվ գաղտագողի իրեն դուրս նետեց։
Դրսում փռվել է գիշեր մի անծիր,
Անծանոթ է նա, ճամբա չգիտի,
Կտրում են ճամբան արագ քայլերն իր,
Ուզում է մահից իրեն ազատի։

Երբ մտավ անտառ, քրտինքն էր տառել,
Ծառերն են դողում քամուց հուսաբեկ,

Ինչ հիմարն ես դու, ինձ համար չէ սա.
Սա է մեր բեգի ջահել սիրուհին,
Ես լուր կտանեմ, այս գիշեր կգա։
Խոստացել է ինձ պարգևներ առատ,
Ինքդ այս գիշեր լավ նայիր սրան,
Աչքդ բաց պահիր, խոսքս քեզ խրատ,
Մինչև որ կրկին ես գամ ես վրան։

Մուխտարը ձիով հեռացավ մթնում,
Իսկ Գյուլլի փերին շունչ քաշեց հանդիստ,
Կարծես մի անգին գոհար էր գտնում,
Որի կորուստը կյանքում մեծ էր խիստ։
Քշում էր սև ձին մութի մեջ խոսում.
— Ես տեղ կհասնեմ գիշերվա կեսին,
Կասեմ՝ սիրուհիդ քեզ է սպասում,
Ի՞նչ ես մտածում պարգևի մասին։
Իսկ երեխային չեմ քաշի սրի,
Թող բեգից թաքուն հասակ առնի նա,
Նա էլ ինձ նման հովիվ կդառնա։

***

Գյուլլին օջախում թեժ կրակ վառեց,
Սրտի մեջ թաղած մի խոր վիշտ տանջող,
Նա իր աչքերը կսկիծով հառեց
Խեղճ Արևհատին՝ անկյունում ննջող...
Օ՛, եթե Գյուլլին լեզու իմանար,
Վիշտը կհայտներ նա Արևհատին,
Կասեր ամեն ինչ, կասեր քույրաբար,
Որ էլ վշտի ամպ չնստի սրտին։
Արևհատը թե իր լեզվով խոսեր,
Կիմանար նրան ինչու է բերել,
Նրան իր հոգու գաղտնիքը կասեր,
Գուցե նա բեգին երբեք չի սիրել...
Չէ որ նա մայր է, երեխայի տեր,
Գուցե տարվել է բեգի մեծ փառքին,

Փո՞ղ է հարկավոր, թե՞ սիրող սրտեր,
Որ աշխարհի մեջ մարդ ապրի կարգին։
Իսկ եթե սիրով սիրում է բեգին,
Ինչո՞ւ են նրան կապի մեջ դրել,
Անարատ է նա, գուցե, մի խեղճ կին,
Կապել են թոկով ու զոռով բերել...
Նստած խորհում էր նա այդպես երկար,
Քունը ծանրացավ աչքերին թառեց,
Նա շատ խորհելուց դառնում էր ակար—
Օջախն էր մարել, նոր կրակ վառեց։

Մոտեցավ զգույշ նա Արևհատին,
Արձակեց նրա կապերը ձեռքի,
— Հոգնած է,— ասավ,— թող քնի կարգին,
Նորից կկապեմ երբ լույսը ծեգի.
Արևհատն այդպես քնեց քնով խոր,
Գիշերվա կեսին արթնացավ հանկարծ,
Այդ մթնում դաժան ուշքի եկավ նոր,
Տեսավ ձեռքերի կապերն արձակած։
Իր շուրջը նայեց, գիշեր էր խավար
Արձակեց գաղտնի կապը ոտքերի,
Բուն էր կռանչում մթնում միալար,
Նա էլ էր կարծես իր նման գերի։
Նա խարխափելով եկավ սրտադող,
Մթնում որոշեց փախչել անպայման,
Մեծ վրանի մեջ գտնի երեխան։
Վրանի վերին անկյունում, ահա,
Երկյուղով լցված ձեռքով խարխափեց,
Գտավ երեխան ու գիրկն առավ նա,
Եվ գաղտագողի իրեն դուրս նետեց։
Դրսում փռվել է գիշեր մի անծիր,
Անծանոթ է նա, ճամբա չգիտի,
Կորում են ճամբան արագ քայլերն իր,
Ուզում է մահից իրեն ազատի։

Երբ մտավ անտառ, քրտինքն էր առել,
Ծառերն են դողում քամուց հուսաբեկ,

Թվում է նրան լեզու են առել,
Գոռում են մեկտեղ՝ փախա՛վ, հե՛յ, բռնե՛ք։
Տերևները թարմ շփվում են իրար,
Գիշերվա քամուց մթնում սվսվում,
Թվում է նրան՝ կին է խելագար,
Լալիս է անվերջ տխուր արտասվում։
Երեխան գրկին, տկար ու հոգնած,
Նա գիշերն ամբողջ չնստեց մի տեղ,
Մինչև որ բացվեց պայծառ լուսաբաց,
Ծիծաղով ժպտաց արևն աչաղեղ։

Արևհատն այն ժամ նստեց կոճղի տակ,
Ուզեց համբուրել որդուն կարոտած,
Բայց հանկարծ զգաց, օ՛, ծանր ապտակ,
Իր որդին չէր լուռ գրկի մեջ քնած։
— Որդուս փոխարեն այս ո՞ւմ եմ բերել,
— Խոսեց ինքն իրեն, ես չեմ դիմանա,
Օ, ես չեմ կարող այս վիշտը կրել,
Ինչ կասի Հարոն, եթե իմանա։
Նրա սիրտն էլի խոր վիշտ էր պատել,
Արտասուքն աչքին իջավ ձորը ցած,
Ուզեց երեխան գրկից վայր նետել,
Սիրող մայր էր նա, սիրտը մղկտաց։
Ու դարձավ տխուր.— Ի՞նչ եմ իմացել,
Ով գիտի հիմա այնտեղ, վրանում
Իմ որդին էլ է քնից արթնացել,
Աղի արցունքով ինձ է որոնում։
Ես ի՞նչպես թողնեմ սրան առանց մայր,
Հիմա կարթնանա, կաթ կուզի լացով,
Ինչպե՞ս դարձնեմ ցավող սիրտս քար.
Ինչպե՞ս մոռանամ ես իմ վիշտը ծով,
Ջրի բերանին կանգնեց գլխակոր.
Սկսեց ձայնով նա օրոր ասել,
Կարծես այդ պահին աչքերով պղտոր,
Իր սիրած որդու դիակն էր տեսել...

Քնել էիր քնով խաղաղ,
Ձայն չավիր, երբ քեզ թողի.
Քարացել էր իմ սիրտը պաղ,
Ես դուրս փախա նման գողի։
Մղկտում է սիրտս խոցված,
Տես ինչպես եմ օրոր ասում,
Դու արթնացիր, աչքերդ բաց,
Աղիզ բալա, ինձ չես լսում,
Անթև ղուշ եմ ընկած հանդեր,
Սիրած բալիս նանիկ ասեմ,
Իմ մինուճար որբս անտեր,
Ես քեզ համար երգ կհյուսեմ։
Քնիր բալաս, նանիկ նանի,
Ես ամպ էի սարի գլխին,
Նանը, աղիզ, չարդ տանի,
Քամին տարավ խառնեց ծխին։
Ես ձույն էի հարյուր տարվա,
Արևն անգամ այն չէր հալում,
Կրակն ընկավ ջանս, էրվա,
Արցունքն աչքիս, սիրտս մալուլ։
Գիշերն անքուն ասեմ նանի,
Ամպից թափի մի հուր կրակ,
Գազան մարդկանց սիրտը հանի,
Տանջվեն մեզ պես բաց երկնի տակ։

Երրորդ օրը նա բարձրացավ մի սար,
Հայրենի գյուղը երևաց հեռվում,
Նստեց հուսահատ, արտասվեց երկար,
Զգում էր, վերջին ուժն է սպառվում։
Նույն երեկոյան բոբիկ ոտքերով
Գյուղ մտավ հոգնած, խավար էր արդեն,
Քայլում էր մթնում տխուր մտքերով,
Ինչպես սարավիթ՝ փախած թակարդեն։
Երեխան գրկին մտավ տունը հոր,
Կրակն էր վառվում ծանոթ օջախում,
Աղքատ ու խարխուլ խրճիթում անդորր
Ծերունի հայրը չիբուխն էր ծխում։

Մարդ ու կին մեկտեղ ելան խենթահար,
Գրկեցին իրենց սիրած աղջկան,
Նրանց թվաց թե նոր եկավ աշխարհ,
— Նոր էր գյուղ հասել լուրը կորստյան:
Եվ առավոտյան լուր ընկավ նորից,
Թե՝ Արեւհատը փախել է մենակ,
Փախել է գաղտնի էն Թուրքի ձեռից.
Ճամբա է ելել էսքան ժամանակ:
Եվ եկավ անգամ քյոխվան մտրակով,
Տեսնի ովքեր են նրան փախցրել,
Եկավ տերտերը երկար մորուքով,
Բայց երեխան են նրանք թաքցրել...

Վերջապես լսեց մռայլ քահանան,
Թե Արեւհատի երեխան չէր դա.
— Պետք է սպանել նրան անպայման,—
— Ասավ քահանան,— չպետք է գթալ:
Մտրակը շարժեց և քյոխվան հարբած,
— Թող Արեւհատը մեր կենա կամով,
Բերած լակոտին մորթի սրտաբաց,
Ձեռքը լվանա նրա արյունով:
— Համաձայն եմ ես,— ասավ քահանան,
Ժամանակ կտանք նրան մենք այսօր,
Թող հենց այս գիշեր վճռի վերջնական,
Եվ գաղտնի լուծի իր վրեժը խոր:
— Օ՛, չեմ սպանի նրան աչքաբաց,—
Արեւհատն ասաց,— ես փոխս եմ գցել,
Չէ՞ որ այնտեղ է իմ որդին սիրած,
Ուզում եք սրտիս խոր վերքը բացե՞լ:
Նստել են տխուր երկու ծերունի.
Նրանց աղջիկը պետք է մարդ մորթի,
Նրա ձեռքերը պետք է արյունի,
Պետք է կատարի մի գործ ամարդի:
Հենց այդ նույն գիշեր փախավ նա գյուղից.
Հոր տունը թողեց քյոխվի երկյուղից:

Ասաց՝ կըգնամ, կասեմ Հարոյին,
Արտասուքն աչքիս կաղաչեմ նրան
Նա կհասկանա իմ վիշտը խորին,
Երբ ես կպատմեմ նրան ամեն բան:
Կխնդրեմ հետո, որ դա անպատճառ,
Տանենք երեխան, հասցնենք վրան,
Հետ բերենք գուցե բալիս մինուճար,
Չէ որ նա մայր է, չի սպանի նրան...

ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆՅԱՆ

ԴԱՎԻԹԸ ԵԿԱՎ...

Ամեն օր, վաղ առավոտյան, գյուղի ծայրում գտնվող քաղցրախոս աղբյուրին առաջին «բարի լույսը» ասում էր նա՝ այն որբ աղջիկը: Տասնհինգ տարեկան էր նա, նիհար ու բարձրահասակ: Փոքրիկ գունատ դեմքին վառվում էին անբնական խոշոր աչքերը, ուր պատանեկան մշտավառ ծիծաղի փոխարեն խոր երկյուղ ու տխրություն էր սուզված: Ոտաբոբիկ էր նա, ցնցոտիներով, և թաղիքանման անգույն մազերը, որոնց ասես երբեք սանր չէր կպել, ծածկում էին ճակատն ու ծոծրակը:

Նա անցնում էր արագ, ահով շուրջը նայելով, այնպես, որ կարծես աշխատում էր մարդկանցից աննկատ մնալ: Որևէ մեկի կողքով անցնելիս թվում էր, թե պահում է շնչառությունն ու ջանում աննկատելի դարձնել իր ոտնաձայնը: Նա վախենում էր մարդկանցից, վախենում էր և՛ մեծերից, և՛ փոքրերից: Երեխաները նրան հալածում էին քարերով, մեծերը՝ կծու ծաղրական խոսքերով կամ թունալից, հեգնող հայացքներով: Ծաղրում էին նրա մերկությունը, նիհար սրունքները, մազերը: Նրա ամենասովորական շարժումների մեջ անպայման գտնում էին անբնական ու ծիծաղելի մի բան: Երեխաները նրա հետևից քարեր էին նետում ու մեծերից լսած անուններով կանչում, որովհետև նա մայր չուներ, չուներ մեկը որ պաշտպաներ նրան, իսկ ինքն էլ թույլ էր, ուժ չուներ վրեժխնդիր լինելու համար:

Ողջ գյուղը չէր, սակայն, որ ծաղրում էր նրան: Ոմանք կարեկցում էին: Բայց նա սրանցից էլ էր խույս տալիս: Դրանք նայում էին նրան այնպես խղճահարությամբ, որ նա ընկճվում

էր այդ հայացքների բեռի տակ: Իրեն այնքան դժբախտ ու անօգ էր զգում, որ հուսահատությունից ուզում էր հեկեկալ: Այդ էր պատճառը, որ նա վախենում էր նաև այդ կարեկցող հայացքներից: Այդ էր պատճառը, որ նա աղբյուրն էր գնում այն ժամանակ, երբ ամենքը քնած էին լինում:

Նրա անունը Սիրանուշ էր, բայց կրճատ կանչում էին Սիրո:

Վաղուց էր զրկվել նա ծնողներից, այնքան վաղուց, որ նրանց այժմ չէր հիշում: Նրան պահում էին տատիկն ու պապիկը, բայց մահը նրանց էլ խլեց՝ աշխարհում մեն մենակ թողնելով Սիրոյին:

Նրան իր մոտ վերցրեց իրենց հարուստ ազգականներից մեկը: Ու անցան տարիներ... Սիրոն այլևս չտեսավ գգվանք, փաղաքշանք, մի ջերմ խոսք: Կարոտեց տատիկի տաք անկողինը, ուր քնում էր նրա հետ, կարոտեց տատիկի քնքույշ, շոյող ձայնը: Առմիշտ լռել էին նրա մանկական ուրախ ճիչերը:

Խնամակալի ներքնահարկի մի անկյունում էր տեղավորված նրա անկողինը: Պահում էր տան փոքր երեխաներին, և եթե մեկի լացի ձայնը լսվեր, ահագին բռունցքը մուրճի նման իջնում էր նրա գլխին: Աչքերից կայծեր էին ցայտում ու արցունքները գլորվում էին այտերից վար: Մի խեղդված հառաչանք էր թռչում նրա կոկորդից, և նա գրկում, վեր-վեր էր թռցնում ճչացող մանկանը, որ ձայնը կտրի, չխանգարի մեծերի աշխատանքը: Ամեն ոք ցանկացածի պես կարող էր վարվել նրա հետ: Տան հարսն ու աղջիկը երբ բամբասելու նյութի պակաս էին զգում, աշխատում էին իրենց սրամտությունը փորձել նրա վրա:

Այսպես էր նրա կյանքը:

Իբրև մի բարի, շատ բարի երազ՝ նա հիշում էր պապիկին, տատիկին, նրանց տունը, վառվող օջախը: Հիշում էր, թե ինչպես հարևանները հաճախ հավաքվում էին իրենց տանը և պապիկը պատմում էր նրանց համար երկա՜ր հեքիաթներ: Սիրոն նստում էր տատիկի գոգին, օջախի մոտ ու հետաքրքրությունից վառվող աչքերը հառում պապիկին: Ունկնդիրները, մանավանդ երիտասարդներն ու պատանիները, ամենից շատ սիրում էին Դավթի հեքիաթը:

Երբ գյուղում մի անախորժ բան էր պատահում, երբ գալիս էին հարկահաններն ու մտրակի ուժով տանում մեկի միակ կովը, մյուսի եզները, երրորդի հավերն ու կահկարասիները. նրանք դառնացած սրտով հավաքվում էին ծերունու մոտ ու խնդրում, որ պատմի Դավթի հեքիաթը:

Ու պատմում էր պապիկը...

Սենյակը լցվում էր ծխախոտի ծխով, կրակը ճարճատում էր օջախում, փոքրիկ լամպը պլպլում էր հազիվ ու պապիկը շարունակում էր: Երբ նա վերջացնում էր, ասես թշնամուց արդեն վրեժխնդիր եղած, գոհունակությամբ փայլում էին ունկնդիրների աչքերը: Նրանք տակավին վերացած, հայացքները հառած խրճիթի այս ու այն անկյունը՝ իրենց դեռ զգում էին Դավթի հետ:

Մեծերին թվում էր, թե Դավիթն արդեն կտրել է հարկահանների գլուխը, դուրս քշել երկրից ու վերադարձրել իրենց ունեցվածքը: Պատանիների աչքի առջև դեռ շողում էր Դավթի կայծակի թուրը և նրանք տենչում էին նրա թևավոր ձին: Դեռատի աղջիկները քնքույշ ու թախծոտ հայացքները վար խոնարհած երազում էին Դավթի սերը:

Օջախում հատ ու կենտ կայծեր էին պեծկլտում, լամպն արդեն մարելու մոտ էր լինում: Ծերունիներից ոմանք, որ արդեն անտարբեր էին դարձել աշխարհի խեր ու չարի նկատմամբ, նիրհում էին՝ գլուխները կրծքներին հակած:

Ապա մեկն արթնանում էր, հողու խորքից մի երկար հառաչանք արձակում ու «աստված ողորմած է» ասելով ոտքի ելնում: Մյուսները հետևում էին նրան: Պատյան էր մտնում Դավթի կայծակե թուրը և նա անճանում էր իր թևավոր ձիով:

Եվ իրականությունը, դառն ու ճնշող իրականությունը կրկին ծանրանում էր մարդկանց սրտերին:

***

Սիրոն հիշում էր այս բոլորը իր ամենածանր տանջանքի պահերին, երբ վիրավորում էին որևէ գործ ուշ կատարելու համար, երբ ծեծում էին անզգուշաբար կոտրած ամանի համար: Այդպիսի դեպքերում նա քաշվում էր մի անկյուն, կծկըվում պատի տակ ու դառնորեն լալիս: Անզոր լինելով իրեն տանջողներից վրեժխնդիր լինելու՝ նա ազատություն էր տալիս երևակայությանը:

Պատկերացնում էր, թե ինչպես գալիս է հեքիաթի քաջ հերոսը, լսում է իր լացի ձայնը ու կանգ առնում: Իմանում է, թե ինչպես են տանջել իրեն ու ցավից մղկտում է սիրտը: Զայրացած դուրս է քաշում սուրը պատյանից ու կտրում նրան ծեծողի գլուխը:

Ապա Սիրոյին դնում է թամբին... ու թռչում է ձին, տանում է նրան հեռո՜ւ, հեռո՜ւ, մի սիրուն աշխարհ, որտեղ ապրում են նաև պապիկն ու տատիկը...

2

Աշնանային մի երեկո, երբ հոգնաբեկ արևը լուռ հանգավ հորիզոնում, Սիրոն վերցրեց մի պարկ ու բռնեց անտառի ճանապարհը: Գրեթե ամեն օր, աշխատանքը վերջացնելուց հետո, նա գնում էր անտառ՝ վայրի պտուղ հավաքելու: Այդ օրն էլ սովորականի նման երկյուղով անցավ փողոցները: Սակայն այս անգամ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա վրա: Մարդիկ անցնում էին գլխիկոր, մտամոլոր:

Ահա քանի օր էր, գյուղի վրա ծանրացել էր մի ահավոր, սև բռունցք: Զորքի համար սննդամթերք հավաքելու համար դաշնակցական կառավարության կողմից լիազոր էր եկել՝ պարոն Արշակը: Նա խլում էր որբի վերջին պատառ հացը, տանում գյուղացու հույս ու ապավեն եզները: Գյուղն ասես հանդած [illegible]եթակ լիներ: Փողոցներում այլևս չէին լսվում երեխաների ուրախ ճիչերը. ծնողների վիշտը համակել էր և նրանց:

Սիրոն դուրս եկավ գյուղի նեղ փողոցներից ու քայլերն արագացրեց: Նրա առջև ծփում էր ոսկեվարս անտառը, ուր քամին պահմտոցի էր խաղում ծառերի հետ: Սիրոն անտառ մտավ ծանոթի նման, սիրո պճրանքն աչքերում, ինչպես մոր գիրկը նետվող մանուկը:

Որքան խորանում էր անտառի մեջ, այնքան իրեն ավելի ազատ էր զգում: Հավաքում էր վայրի տանձ, կաղին ու պար-

կը լցնելով, մտքերի մեջ խորասուզված շարժվում առաջ:

Հիշում էր պապիկի պատմած հեքիաթները և նրանց նման էլ հյուսում էր սեփական հեքիաթը:

... Ահա, նա գնում է: Շատ է գնում թե քիչ, հանդիպում է մի պառավ կնոջ, որ ձեռնափայտի վրա հենվելով առաջ է շարժվում՝ մի կապոց ցախ շալակին: Սիրոն վերցնում է նրա մեջքի բեռը և ինքն է տանում: Պառավը նրան օրհնում է ամբողջ ճանապարհին: Նրանք հասնում են անտառի խորքում գտնվող մի տնակ: Այդ պառավի տնակն է: Նա Սիրոյին ներս է հրավիրում միասին ճաշելու: Մինչև ինքը սեղան կպատրաստեր՝ Սիրոյին ուղարկում է տան առջևի պարտեզում գտնվող աղբյուրում լվացվելու և ջուր բերելու:

Սիրոն գնում է:

Անմահական պտուղներով ծանրաբեռնված են ծառերը: Բուրում են բազմերանգ ծաղիկները և թռչունները թռչկոտում են ծառից ծառ: Նա մոտենում է աղբյուրին, որից ոսկե ջուր է բղխում: Լվացվում է և երբ ուզում է պառավի համար ամանով ջուր վերցնել, հանկարծ հայացքն ընկնում է ավազանի ջրին: Նա զարմանքից լայն բաց է անում աչքերն ու մի պահ մնում քարացած: Ջրի մեջ տեսնում է մի աննման, մի հրաշք աղջկա պատկեր: «Ո՞վ է սա» մտածում է նա, հիացմունքով նայելով գեղեցիկ աղջկա պատկերին, որ հագին խաս ու դումաշ ունի: Նա հետ է նայում՝ ոչ ոք չկա, պարտեզում միայն ինքն է: Նորից է նայում ջրին ու աչքերին չի հավատում... «Ա՜խ, աստված... Մի՞թե այդ ինքն է...»: Բարձրացնում է գլուխը, նայում է պառավի տնակի կողմը, բայց այնտեղ այլևս ոչ պառավ կար, ոչ նրա տնակը: Նայում է իր առջև ու տեսնում է նույն պատկերը ջրերի մեջ: Լսում է ձիու ոտնաձայն, հետ է նայում և... ո՛վ բարի աստված, այդ նա է, այդ նա է թռած գալիս, նա է... Դավիթը: Լուսավորվում է անտառը նրա թրի փայլից: Գալիս է նա, քաշում է սանձը, կանգ է առնում իմաստուն ձին և ասես նա էլ տիրոջ նման կախարդված՝ նայում է հրաշք աղջկա լուսե դեմքին: Կանգնած է նրա առջև Դավիթը հիացմունքից քար կտրած:

— Ո՞վ ես դու, աննման աղջիկ,— բացականչում է նա:

Սիրոն պապանձվել է, չգիտե ինչ պատասխանի: Դավիթը

թևերն առաջ է պարզում և հետո... Հետո Սիրոն իրեն զգում է նրա հզոր բազուկների մեջ... Ու թռչում է ձին դեպի Դավթի սիրուն քաղաքը...

***

... Սիրոն կանգ է առնում, սթափվում է երազից: Նրա առջև տարածված է վիթխարի անդունդը, որի բաց երախը սպառնում է նրան: Սիրոն նոր միայն զգում է հոգնածություն: Հետ է դառնում ու մոտիկ կաղնու տակ ցած դնում պարկը:

Արևը վաղուց մայր է մտել, անտառը մթնել է խիտ ստվերներով: Ուշ երեկո է. շուտով գիշեր կլինի: Փոքր ինչ հանգստանալուց հետո Սիրոն կրկին ուսն է գցում պարկը ու բռնում անտառից դուրս տանող ճանապարհը: Երկինքն սկսում է կնճռոտվել: Ամպերը կուտակվում են ու կուտակվում: Մոլեգնում է քամին և խուճապահար ծառերը հառաչելով այս ու այն կողմ են թեքվում, ասես օգնություն հայցելով միմյանցից:

Սիրոն հենց դուրս է գալիս անտառից՝ սկսվում է անձրևի տարափը: Կատարյալ խավար է: Նա քայլերն արագացնում է:

Վերջապես մտավ գյուղը: Ահա և իր խնամակալի՝ Ղահրաման աղայի տունը: Նա ստվերի նման սահելով անցավ բակը, իջավ ներքնահարկը:

... Ուշ գիշեր է: Նա փաթաթվել է հնամաշ վերմակի մեջ ու կծկվել: Նրա սառած մարմինն սկսում է թմրել: Նա նիրհում է... Հանկարծ լսվում է մի դղրդոց և նրան թվում է, թե առաստաղը ցած ընկավ...

3

Պարոն Արշակը հրավիրված էր այդ երեկո աղա Ղահրամանի տունը: Մինչ նա պատրաստվում էր գնալու, տանտիրոջ և նրա միջև գնում էր հետևյալ խոսակցությունը:

— Հա, շատ է հա՛րուստ: Մեր գյուղի ամենահարուստն է Ղահրաման աղան: Բայց նրա հարստությունն այն չի միայն, ինչ որ գիտես: Նրա հարստության կեսը իր աղջիկն է:

— Աղջի՞կը...

— Հա՜... աղջիկ եմ ասում է՜: Երեսը բոլորած լուսին, թշերը՝ բացված վարդ, չաղ, բոյով-բուսաթով: Աղջիկ մի ասի, մի մարալ ասա:

Պարոն Արշակը ժպտաց միայն ու տանից դուրս եկավ:

***

Ուշ գիշեր էր: Աղա Ղահրամանի հյուրերից ամեն մեկը գինու ազդեցության տակ մի հռետոր էր դարձել: Աղմկում էին: Յուրաքանչյուրը ջանում էր իր ձայնը ամենից լսելի դարձնել: Գովում էին միմյանց, գովում էին իրենք իրենց: Խմում էին պարոն Արշակի կենացը, անուշ խոսքեր ասում տան տիրոջը:

Ղահրաման աղան նստել էր ուղիղ հյուրի կողքին և նրան ուղղված գովեստների համար հպարտանում էր նաև ինքը: Լցնում էր նրա բաժակը, երբեմն-երբեմն շշնջում ականջին ու մտերիմ կերպով խփում ուսին: Հյուրի տրամադրությունն էլ գտնվում էր զենիթում: Ուտում էր, խմում, նրանցից ավելի աղմկում: Ամեն բաժակի վրա ազգի մասին մի ճառ էր ասում, որի մեջ վեր էր հանում իր արժանիքները:

Տանտիրուհին պտտվում էր շարունակ նրա շուրջը և համեղ պատառները դցում նրա ամանը:

— Ղահրաման աղա, եկ ջինաղը քաշենք,— ձեռքի երկճյուղանի ոսկորը մեկնելով նրան՝ ասաց պարոն Արշակը:

— Աչքիս վրա, ասա պայմանը:

— Թե որ դու տարվար, աշխարհի ամենասիրուն աղջիկը էս գիշեր բերում ես ինձ համար:

Ղահրաման աղան ղունատվեց: Հյուրերը նշանակալից հայացքներ փոխանակեցին:

— Դե՛, քաշիր...

Աղա Ղահրամանի ձեռքը չէր բռնում:

— Դե՛,— բղավեց պարոն Արշակը:

Նա դողացող ձեռքով բռնեց ու պոկեց ոսկրի մի ճյուղը:

Քեֆը շարունակվեց: Բայց Ղահրաման աղան էլ ոչ կերածից էր բան հասկանում, ոչ խմածից: Ասես չէր էլ հասկանում, թե ինչ է կատարվում շուրջը: Նրան թվում էր, թե այդ ուրախ մարդիկ ծաղրում են իրեն, իր վրա են ծիծաղում:

Պարոն Արշակն ավելի էր շատախոսում ու հիմա ինքն էր շողոքորթում հյուրընկալին:

— Խմենք նահանգի պարծանքի՝ աղա Ղահրամանի կենացը,— բաժակը բարձրացրեց նա:

— Ուռա՜...— բոլորը ծափահարեցին:

Ամեն մեկը երկար բաժակաճառ արտասանեց:

Վերջում աղա Ղահրամանը շնորհակալություն հայտնեց ու արագ դատարկեց բաժակը:

— Անո՛ւշ, անո՛ւշ,— ձայնեց պարոն Արշակը՝ հրամցնելով նրան հավլի մի բուդ:

— Շնորհակալ եմ սաղ ըլես,— ասաց աղա Ղահրամանը փոքր ինչ պայծառացած ու վերցրեց այն նրա ձեռքից:

— Տարա՜ծ...— ամբողջ կոկորդով գոռաց պարոն Արշակը:

Ղահրամանի ձեռքից բուդը ցած ընկավ, բայց արդեն ուշ էր: Նորից մի շշուկ անցավ սեղանակիցների մեջ:

— Շնորհակալ ենք,— ասաց պարոն Արշակը,— խմենք բազմաշնորհ տանտիրուհու կենացը: Լցրե՛ք բաժակները:

Ուշ գիշեր էր, երբ հյուրերը ցրվեցին:

Աղա Ղահրամանի որդին հյուրին առաջնորդեց նրա համար պատրաստված սենյակը:

— Տղա՛, ասա հորդ, որ ես սպասում եմ...

Տղան լուռ դուրս գնաց:

Պարոն Արշակը նստեց անկողնու վրա: Ժամանակը դանդաղ էր սահում: Նա ոտքի ելավ ու բռունցքները սեղմած սկսեց քայլել սենյակում: Դուռը չէր բացվում: Նրա համբերությունն սպառվում էր:

... Աղա Ղահրաման, ինձ հետ հանաք մի՛ անի... Առավոտն իսկ զոմդ դատարկել կտամ... ազգի զինվորը քաղցած է...— ձայնն արդեն բարձրացրեց նա մատը թափ տալով:

Դուռը բացվեց ու ահով ներս մտավ դարձյալ Ղահրաման աղան: Մոտեցավ նրան ու ականջի մոտ շշնջաց:

— Մերս էսօր նրա անկողինը տեղափոխել է պաղվալ:

— Լա՛վ, գնա՛,— ցածր, բայց խիստ ձայնով ասաց նա:

Տղան դուրս գնաց:

Մի քանի րոպե անց՝ պարոն Արշակն էլ կամաց դուրս դը-

նաց: Մթության մեջ խարխափելով, պատերին հենվելով նա ցած գնաց, իջավ ներքնահարկն ու հրեց դուռն այնպիսի ուժով, որ կարծես երկաթյա դարպասներ էր խորտակելու:

Կոտրված դուռն ընկավ ցած և նա ներս մտավ: Դարձյալ խարխափելով մի քանի քայլ առաջ գնաց ու վառեց լուցկին: Սկսեց չորս կողմն աչք ածել: Վերջապես նկատեց մի անկյունում գտնվող անկողինը: Վառված լուցկու մնացորդը մի կողմը գցեց ու նետվեց դեպի նա: Բռնեց այնտեղ քնած աղջկա ուսերից ու փետուրի նման բարձրացրեց: Աղջիկը մի օրհասական ճիչ արձակեց, զարհուրանքով լի մի ճիչ: Գալարվեց նրա ձեռքերում ու ջանաց դուրս սահել: Բայց իզուր, նրան կաշկանդող օղակն ավելի ու ավելի սեղմվում էր:

... Հանկարծ հարբածը մի ռռնոց արձակեց ու բաց թողեց աղջկան:

Սիրոն, որ իր զայրույթի ամբողջ ուժով կծել էր նրա ձեռքը, վարկենապես դուրս նետվեց...

4

Լուսաբացին հաղթական կարմիր զորքը մոտենում էր գյուղին: Գիշերը հակառակորդի համար անակնկալ կերպով հարձակվել էր նա ու պարտիզանական ջոկատների օգնությամբ խիստ օղակում խեղդել թշնամուն:

Լուսաբացին պարզեցին ազատության դրոշը:

Նախքան գյուղ մտնելը, կարգի գցեցին շարքերը և հաղթական քայլերով շարժվեցին առաջ:

Ամենից առաջ գնացող ձին, որի հեծյալը հպարտությամբ կրում էր արնավառ դրոշակը, հանկարծ կանգ առավ: Հեծյալը խթանեց, բայց ձին չշարժվեց: Զորամասի հրամանատարը՝ թիկնեղ մի երիտասարդ, որ գնում էր նրա կողքից, ձիուց ցած ցատկեց:

Դրոշակակրի ձիու ոտքերի առջև տարածված էր կանացի մի կիսամերկ մարմին:

Երգն անմիջապես լռեց, ձիերը խմբվեցին:

— Դիա՜կ...— լսվեց բազմաթիվ բացականչություններ:

Հրամանատարն արագ մոտեցավ ու բարձրացրեց ընկած մարմինը:

— Կենդանի՛ է,— բացականչեց նա զարկերակը շոշափելով և թևերի վրա տարավ նրան դեպի իր ձին:

Ցատկեց թամբին, աղջկան դրեց ծնկների վրա ու զորամասը կրկին շարժվեց առաջ:

***

... Երկար ցնցումներից սթափվեց Սիրոն: Ասես երազի մեջ, լսեց ձիերի դոփյունը... Զգաց իրեն ուժեղ բազուկների մեջ, սլացող ձիու վրա: Թվաց նրան, թե երազի մեջ է, թվաց, թե այդ իր ամենօրյա երազների շարունակությունն է, երբ գալիս էր Դավիթն ու փրկում իրեն:

Եվ նա կծկվեց, գլուխը սեղմեց Դավթի կրծքին, ու ամո՜ւր, ամո՜ւր, փակեց աչքերը, որպեսզի այլևս չսթափվի քնից, որպեսզի երազը լինի երկա՜ր, անվախճան...

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

1

— Վիրա՛բ, ա՛յ Վիրաբ,— ձայն էր տալիս մայրն ամեն առավոտ,— հայրդ երկու ժամ է արդեն գնացել է արհեստանոց, վեր կաց դու էլ գնա, ախր կբարկանա:

Վիրաբը կիսաբաց է անում աչքերը, հազիվ նշմարում մորը ու կրկին փակում:

— Լավ, թո՛ղ...— շշնջում է նա ու շուռ գալիս մյուս կողքին:

— Դե վե՛ր կաց, օրը ճաշ է դարձել,— շարունակում է մայրը:

— Հոգի հանեցիր է՛լի, ասացի՝ լավ, հիմա վեր կկենամ,— բարկանում է Վիրաբն ու ավելի ամուր փաթաթվում վերմակի մեջ:

Ու դարձյալ անցնում է ժամանակ: Մայրը ստիպված է լինում վերստին մոտենալ նրան ու թոթվել ուսը:

Վերջապես Վիրաբն արթնանում է: Կես ժամ հորանջում է անկողնում, ապա եկեղեցական ամենաերկար արարողության տևողության չափ ժամանակում հագնվում է: Խմում է մի բաժակ կաթ և ծույլ ու քնկոտ քայլերն ուղղում դուրս:

Դեռ երեք տարի առաջ, երբ նա միևնույն խմբում երեք տարի մնաց, հայրը հույսը կտրեց ուսումով որդի ունենալուց, թեև վաղուց ի վեր փայփայում էր այդ միտքը:

Նա որոշեց նրան տանել իր արհեստանոցը և իր արհեստը տալ նրան:

— Ուսումի հետ սեր չունի, գուցե արհեստը սիրի,— ասաց նա կնոջը՝ իր որոշումը հայտնելով նրան:

Այս բանը դժգոհությամբ ընդունեց կինը: Նա չէր ուզում որդու ձեռքերն էլ այնպես կոշտացած տեսնել, ինչպես ամուսնունը: Վերջապես այս ո՛ր թիվն է, որ անուսում մարդ մնա, մտածում էր նա: Բայց ի՞նչ արած, Վիրաբն այդ չէր ուզում հասկանալ, նա յոթերորդ խմբից դուրս եկավ դպրոցից: Պետք էր մտածել նրա ապագայի մասին:

Իսկ դրա համար հոր որոշումը միակն էր:

Վճռած էր, Վիրաբը պետք է փականագործ դառնար:

Առավոտյան վարպետ Մինասը ըստ սովորության վաղ արթնանալով կամեցավ արթնացնել և որդուն:

— Թողեք քիչ, մի քիչ էլ քնեմ,— աղերսող ձայնով ասաց Վիրաբը: Վարպետը երկար չսպասեց: Նա գնաց արհեստանոց՝ կնոջը պատվիրելով արթնացնել նրան և ուղարկել իր մոտ:

Բայց մայրը խղճում էր որդուն: Երկար ժամանակ կանգնել էր նրա սնարի մոտ և չէր ուզում ձայն տալ: Վերջապես ամուսնու ահից դրդված նա արթնացրեց որդուն: Այդ օրվանից սկսած Վիրաբը հաճախում էր հոր արհեստանոցը, միայն մի քանի ժամ ուշ:

Ամեն անգամ երբ նա քնկոտ աչքերը տրորելով ներս էր մտնում, հայրը բարկացած դիմում էր նրան.

— Եկա՞ր, պարոն: Կեսօր է արդեն: Ես, երբ քո տարիքին էի, տուն էի պահում: Ես ձեռքիս աշխատանքով երեք քույր եմ մարդու տվել: Գիտե՞ս, ինչ էր նշանակում էն ժամանակ քույր մարդու տալը: Իսկ դո՞ւ... էն մուրճը մի էս կողմը տուր...

Մինչդեռ հայրը երկար խրատներ էր կարդում՝ Վիրաբն հետևում էր ժամացույցի սլաքի ընթացքին:

Չնայած ծուլությանը, որից հայրը գանգատվում էր, Վիրաբն արհեստի մեջ մեծ առաջադիմություն էր հանդես բերում:

— Բավական է մի բանը մի անգամ ցույց տամ,— ասում էր նրա մասին հայրը,— նրանից հետո վարպետը նա է, ես չեմ: Ինչպես մաքուր գործ է անում, ասես մարդու ձեռք չլինի կպած... միայն թե քեֆը տեղը լինի... ծույլ է անպիտանը:

Վիրաբն այդ ժամանակ տասնվեց տարեկան էր: Դպրոցից կտրվելուց հետո նրա համար աննպաստ ընկերական միջավայր ստեղծվեց: Նրա ընկերներն էին իրենց տանտիրոջ տղան, որին գիժ Կոկոլ էին կանչում, և հարևան խանութպանի տղան՝ Արտիկը: Հատկապես վերջինս կոպիտ ու երես առած մի տղա էր: Նա նույնպես, ինչպես և Վիրաբը, իր մոր միակ որդին էր: Գրեթե ամեն օր նրա մայրն ընդհարվում էր հարևանների հետ նրա պատճառով: Իր անկարգ արարքների համար չպատժվող, որ նույնն է թե խրախուսվող, տղան մեծանում էր սնուցանելով իր մեջ չարություն, եսամոլություն, անխչխանականություն:

Այդ փողոցի բոլոր մայրերն իրենց երեխաներին հեռու էին պահում Արտիկից, ինչպես վարակից: Շատ ջանք էին թափում դրա համար և Վիրաբի ծնողները: Բայց Արտիկը կարողանում էր իր ազդեցության տակ պահել շատ երեխաների: Նա ֆիզիկապես ուժեղ էր և բնավորությամբ համառ: Չար խաղեր հնարելու համար, որոնք երեխաներին վայրկենապես ոգևորում են, մեծ երևակայություն ուներ: Նրա ձեռքին միշտ փող էր լինում: Շատ հաճախ դրանով քաղցրացնում էր երեխաների բերանն ու ստիպում ենթարկվել իրեն: Խումբ էր կազմում ու հարձակվում մյուս փողոցի տղաների վրա: Ոչ մի երեխա չէր կարող առանց ծեծվելու միայնակ անցնել նրանց դռնից: Վա՛յ նրան, ում հետ ընդհարվեր: Իր կողմնակիցներով կշրջապատեր նրանց տունն ու մի քանի րոպեում կռմբակոծեր նրանց պատուհանները:

Որքան նա մեծանում էր, այնքան ավելի մեծ փողի կարիք էր զգում, և մայրը, որ հորից գաղտնի նրան փող էր տալիս, այլևս նրա պահանջը բավարարել չէր կարողանում:

Մոտիկ հարևանները պատմում էին, թե Խանությանը հաճախ ծեծում է տղային, այն պատճառով, որ իր գրպանից փող է պակասում:

Երբ Արտիկը 14 տարեկան էր, նրան դպրոցից հեռացրին՝ մյուս երեխաներին զերծ պահելու համար: Հայրը երկյուղ կրելով իր դրամարկղից՝ նրան խանութ չտարավ, բայց և չկարողացավ որևէ գործի մղել և նա մնաց փողոցում:

Վիրաբն սկսել էր վերջերս երեկոները ուշ տուն գալ, ծնողների հարցումին պատասխանում էր, թե կինոյում էր, կամ զբոսանքի էր գնացել: Մի գիշեր, երբ մայրը բաց արեց դուռը Վիրաբի առաջ, քթին հասավ գինու անախորժ հոտը: Սոսկաց խեղճ մայրը: Բայց ահից թաքցրեց այս ամուսնուց և բավարարվեց միայն իր նախատինքով:

Այս բանն սկսեց հաճախ կրկնվել: Իսկ մի անգամ էլ գիշերը տուն չեկավ: Ծնողները սաստիկ երկյուղի մեջ էին: Մայրը լալիս էր. «որդիս կենդանի չէ, նրան մի բան է պատահել, թե չէ նա գիշերը դրսում մնացողը չի»,— ասում էր նա: Առավոտյան միայն եկավ նա, հարբած, շորերը ցեխոտ ու պատռտված:

Որքան էլ այդ զայրացուցիչ էր վարպետ Մինասի համար, այնուամենայնիվ նա զսպեց իրեն, որոշելով հաշվի նստել նրա հետ հարբածությունն անցնելուց հետո:

Աշխատանքի գնալու ժամանակ նա հանդիպեց հարևան առևտրականին:

— Բա էսպես բան կլինի՞, որ ձեր տղերքն իմ գլուխն են բերո՞ւմ,— բարկացած ասաց Խանությանն ի պատասխան Մինասի բարևին,— մեր գետինը մառծին խաբել են, կասը դատարկել տվել ու գնացել են խմել, ես ի՞նչ գիտեմ՝ ի՞նչ դուրս ընկած կնանիքանց հետ:

Վարպետին այնպես ցնցեցին այս խոսքերը, ինչպես կցնցվեր որդու մահվան բոթն առնելով: Նա ոչինչ չպատասխանեց Խանությանին և լուռ հետ դարձավ ու բռունցքները սեղմած,

ատամները կրճտացնելով արագ քայլերով դիմեց դեպի իր տունը:

Վիրաբը դեռ քնած էր: Հայրը արագ մի շարժումով հետ գցեց նրա վրայից վերմակը, քաշ տվեց մահճակալից ցած և զայրույթի ամբողջ ուժով սկսեց հարվածել: Մայրը լալով մեջ ընկավ: Սակայն կնոջ արցունքները չէին կարող շիջել վարպետի անսահման ցասումը:

Նա ծեծեց տղային ուշաթափության աստիճան ու ծանր հևոցով դուրս գնաց, որ որդու հառաչանքներն ու կնոջ լացը չլսի:

Խանությանն իր որդուն ծեծել էր ու տանից դուրս գցել: Պատմում էին սակայն, որ Արտիկը գիշերը գաղտնի մտել է իրենց տուն, հավաքել մոր ոսկեղենը և, վերջին անգամ հոր գրպանը դատարկելով անհայտացել է քաղաքից: Բայց նրան բռնել են մի քանի կայարան չգնացած ու կալանավորել:

Վիրաբն այդ դեպքից հետո մի շաբաթից ավելի հիվանդ պառկեց: Առողջանալուց հետո նա շարունակեց հաճախել հոր արհեստանոցը: Ծնողներն ուրախացած նկատում էին, թե ինչպես նրա վրայից հետզհետե ջնջվում է Արտիկի վատ ազդեցությունը:

2

Մի օր հայրը Վիրաբին ինչ որ գործով ուղարկել էր վարպետ Մաղաթի արհեստանոցը, որտեղ նույն ժամին գտնվում էր նաև Մաղաթի տասնվեցամյա սիրուն աղջիկը՝ Շաղիկը:

Վարպետն ինչ որ բան էր աշխատում սարքել, բայց չէր հաջողվում: Նա արդեն ծերացել էր, ուժերը նվազել էին, աչքերը լավ չէին տեսնում: Վիրաբն օգնության հասավ և գործը շուտով գլուխ եկավ:

— Շա՜տ ապրես,— ասաց վարպետը,— ոսկի մատներ ունես, տղա:

Վիրաբը թեև առաջ էլ շատ էր լսել այդպիսի գովասանքներ, բայց անուշադրության էր ավել: Այս անգամ նա իրեն անսահման շոյված զգաց այդ խոսքերից, որ արտասանվեցին մի սիրունիկ աղջկա ներկայությամբ: Նա մի հաղթական հպարտ

հայացք նետեց Շաղիկի վրա ու ժպտաց, կարծես ուզում էր ասել. «այ, ես այսպիսին եմ»: Աղջիկն էլ թեթևակի ժպտաց ու, չգիտես ինչու, շառագունեց: Այնուհետև Վիրաբը հաճախ էր տեսնում Շաղիկին: Հոր մոտ գնալու համար նա անցնում էր Մաղաթենց արհեստանոցի առջևից: Ամեն անգամ, երբ նրանց հայացքները հանդիպում էին, աղջիկը շփոթված աչքերը ցած էր խոնարհում և քայլերն արագացնում, իսկ Վիրաբը մի պատրվակ գտնելով շտապում էր նրանց արհեստանոցը:

Արդեն լրացել էր Վիրաբի քսանմեկ տարին:

Մի անգամ առավոտյան, երբ մայրը սովորականից շուտ մոտեցավ Վիրաբին արթնացնելու, անսպասելիորեն նրան արթուն տեսավ:

— Դե՛ շտապիր, Վիրաբ,— այնուամենայնիվ ասաց մայրը:

— Մամա...— ձայնեց Վիրաբն ու լռեց: Նա ինչ որ բան էր ուզում ասել, բայց դժվարանում էր: Այն բառերը, որ երկար մտքում կրկնում էր, բարձրաձայն արտասանել չէր կարողանում: Մայրը կարծես զգաց. չէ՞ որ այսօր անսովոր քնքշությամբ հնչեց նրա «մամա» բառը:

— Ի՞նչ է, բալա ջան...— մոտենալով հարցրեց նա քաղցրությամբ:

— Մամա... ճանաչո՞ւմ ես վարպետ Մաղաթի... վարպետ Մաղաթին...

— Իհ, քի՞չ է եկել մեր տուն, ո՞նց չեմ ճանաչում:

— Նրա աղջկան է՞լ...— իր համար էլ անսպասելի կերպով դուրս թռավ Վիրաբի բերանից:

— Հը՞... ի՞նչ կա,— թափանցող հայացքով մայրը նայեց նրան ու ժպտաց: Վիրաբը շփոթվեց, կարմրեց ու խույս տվեց նրա հայացքից:

— Հեչ... լավ աղջիկ է,— հազիվ լսելի շշնջաց նա:

Մայրը հուզմունքով գրկեց նրա գլուխը, խանդաղատանքով սեղմեց կրծքին ու համբուրեց:

Վիրաբին այլևս անելիք չէր մնում: Ծնողներն անցան բանակցությունների և մի քանի օրվա մեջ գործը գլուխ եկավ. կատարվեց նշանադրությունը:

Մեկ ամիս անց՝ Շաղիկն արդեն Վիրաբենց տանն էր:

3

Վիրաբի կյանքն ընդունել էր խաղաղ, հանդարտ ընթացք: Նա վաղուց մոռացության էր տվել իր պատանեկության չարություններն ու կապվել ընտանիքի հետ: Շաղիկն օրեցօր նրան թվում էր ավելի ու ավելի գեղեցկացած: Արդեն ունեին մի ծիծաղկոտ սիրունիկ բալիկ, որ Վիրաբի հոգու պարտեզի գեղգեղուն թռչնիկն էր: Թեև նա էլի շարունակում էր ուշ աշխատանքի գնալ, բայց հայրն այլևս քրթմնջոցով չէր դիմավորում նրան:

— Իմ մի ամսվա արած գործը նա մի ժամում է անում,— հպարտությամբ ասում էր հայրը նրա մասին:

Բայց երկար չտևեց այդ ընտանիքի կյանքի անդորրը. մի դեպք ուժեղ ցնցեց նրանց: Դա վարպետ Մինասի անսպասելի մահն էր: Նա հիսուն հինգ տարեկան, եռանդուն, գործունյա մարդ էր: Բայց մի օր հանկարծ հիվանդացավ և միայն երեք օր պառկելուց հետո աշխարհը թողեց մնացածներին:

Հոր կորուստը շատ ծանր էր հատկապես Վիրաբի համար: Նա չէր պատկերացնում իր աշխատանքն առանց հոր: Մի շաբաթ նա աշխատանքի չգնաց: Այնուհետև ընդմիշտ փակեց արհեստանոցը և աշխատանքի մտավ դեպոյի արհեստանոցում:

Սկզբում անասելի դժվար էր նրա համար համակերպվել կազմակերպված արտադրության ռեժիմին և գրեթե ամեն օր ուշանում էր աշխատանքից: Սրտնեղում էր, երբ այդ մասին դիտողություն էին անում: Բայց նա հմուտ էր իր աշխատանքի մեջ և այն գործը, որ ավելի վարպետություն էր պահանջում, հանձնարարում էին նրան: Գուցե այս էր պատճառը, որ նրա նկատմամբ որոշ զիջում էին թույլ տալիս:

Մեկ տարի այդտեղ աշխատելուց հետո նա սկսեց հաճախել մեքենավարների երկամյա դասընթացներ: Միաժամանակ նա իր համաձայնությունը տվեց, որ Շաղիկն աշխատի կարի գործարանում:

Կամաց-կամաց ընտանիքի վերքը, որ առաջացել էր վարպետ Մինասի կորուստով, սպիացավ ու դարձյալ կյանքն ընդունեց ուրախ, անհոգ բնույթ:

Վիրաբի որդին արդեն հինգ տարեկան էր, աշխույժ, ընդունակ և հաճախում էր մանկապարտեզ:

Երկու տարի հետո Վիրաբը փայլուն քննություն տվեց և դարձավ մեքենավարի օգնական: Շաղիկն էլ չէր զիջում նրան իր առաջադիմությամբ: Նա էլ արդեն դարձել էր ցեխի վարիչ:

Երեք տարի հետո Վիրաբին վստահեցին մարդատար գնացքը ինքնուրույն կերպով վարելու:

4

Վիրաբն արդեն երեսուն երկու տարեկան բարձրահասակ, թիկնեղ տղամարդ էր: Բարձր ճակատի տակ բարեհամբույր ժպտում էին սև, խոշոր աչքերը: Դիմագծերը կանոնավոր էին, համակրելի, հայացքը հանդարտություն էր ներշնչում: Իսկ տարիքին չհամապատասխանող ծույլ ու դանդաղկոտ շարժումները վկայում էին նրա անփույթ ու բարեհոգի բնավորության մասին:

— Վիրաբ, Վիրաբ, շտապիր, ուշ է,— ձայնում էր ամեն առավոտ Շաղիկը, ձանձրացած անվերջ նույնը կրկնելուց,— տես, ես թոքախտ կստանամ քո ձեռքին:

— Դե, ախր ինչո՞ւ, Շաղիկ ջան,— ասում էր Վիրաբը մանկան նայիվ զարմանքով,— ա՛յ, դե շտապում եմ, դու իզուր ես անհանգստանում, բոլորովին էլ ուշ չէ,— ու անցնում էր դեռ երկար ժամանակ, մինչև հագնվում էր:

Նրա իննամյա որդին՝ Ռազմիկը հոր դիմագծերի հետ մեկտեղ ժառանգել էր կարծես և նրա դանդաղկոտ շարժումներն ու անհոգ, անփույթ բնավորությունը:

Այն օրերին, երբ Վիրաբը տանն էր լինում, Ռազմիկն անպայման ուշանում էր դասից՝ ընդօրինակելով հոր շարժումների քնկոտ ոճը:

Շաղիկը հոգնում էր անվերջ մեկին կամ մյուսին շտապեցնելուց և երբեմն տեսնելով, որ ինքն էլ է ուշանում, սրտնեղած դուրս էր գնում տանից: Մնում էին հայր ու որդի, որոնք անվրդով պատրաստվում էին գնալու մեկն աշխատանքի, մյուսը՝ դպրոց:

Կյանքի նկատմամբ սակավ պահանջների տեր բոլոր մարդկանց նման Վիրաբն էլ գոհ էր ինքն իրենից, իր կյանքից ու ամեն բանից:

Երջանկության մասին երբեք չէր խոսում, դատողություններ չէր անում, որովհետև երջանիկ էր:

Առօրյա մանր-մունր անախորժությունները, որ երբեմն պատահում էին, չէին կարող տևական կերպով ջնջել նրա աչքերից կենսուրախ ժպիտը:

Գնում էր աշխատանքի: Իհարկե, քիչ էր պատահում, որ ուշանում էր, հմտությամբ վարում էր իր գործը և շտապում էր տուն: Կատակում էր տանեցիների հետ, սիրում, փայփայում կնոջն ու երեխային և փոխադարձաբար սիրվում նրանցից: Ընդունակ մարդ էր, բայց նվազ եռանդուն լինելու պատճառով չէր ձգտում հասնելու նրան, ինչի կարող էր:

Սիրում էր հանգիստ, անաղմուկ կյանքը: Իր տարերքի մեջ էր լինում, երբ ուրախ ընկերներով շրջապատում էր գինու շշերով ու համեղ ուտելիքներով լի սեղանը: Դա երջանիկ մարդկանց, ազնիվ աշխատողների ուրախ մի ժամանց էր լինում, որը երբեք չէր հասնում հարբեցողության:

Իսկ Շաղիկը Վիրաբի հակապատկերն էր: Նրա նուրբ, գեղեցիկ դիմագծերն արտացոլում էին դյուրագրգիռ բնավորությունը: Կյանքն իր բոլոր կողմերով արձագանքում էր նրա հոգում: Նա սիրում էր և՛ ընտանեկան ուրախ երեկույթներ, և՛ ապրում էր դրսի հուզումնալից կյանքով:

Ահա նա աշխատանքից վերադառնում է վրդովված:

— Մեզ մոտ գների խախտում են կատարել: Այսօր արտադրական խորհրդակցություն եղավ... ես էլ խոսեցի:

Եվ Շաղիկը մի առ մի թվում է փաստերը: Խոսում է նաև տեղկոմի կատարած վատնումների մասին, դիրեկտորի կատարած այս կամ այն սխալ արարքի մասին: Նրա անկեղծ վրդովմունքը վարակում է և Վիրաբին, անգամ տատիկին ու Ռազմիկին:

Մի ուրիշ օր նա տուն է գալիս բարձր տրամադրությամբ: Պատմում է, թե շնորհիվ աշխատանքի այսինչ մեթոդի՝ այսքան ինքնարժեքի իջեցում են կատարել:

Վիրաբը ծխելով անփույթ ժպտում է ու ծխի միջից նա-

յում է նրան, այնպես, ինչպես մայրն է նայում խաղալիքներով հրճվող մանկանը:

— Վիրաբ, արի մրցման մեջ մտնենք,— առաջարկում է Շաղիկը:

— Կնոջ հետ մրցման մեջ մտնելը մի՞թե վայել է տղամարդուն,— կատակում է Վիրաբը:

— Այդ նահանջի շատ խղճուկ ուղի է: Գիտեմ որ վախենում ես:

— Ծիծաղելի բան ես ասում: Լսվա՞ծ բան է, որ արծիվը ծիծեռնակից վախենա:

— Եթե թևեր չունի, անշուշտ կվախենա:

— Այդ ո՞վ. ե՞ս չունեմ թևեր,— ասում է Վիրաբն ու մոտենալով նրան, բռնում է նրա ուսերից ու բարձրացնում աթոռից,— իմ թևերն այնպես հզոր են, որ կարող եմ քեզ բարձրացնել ու հասցնել աստղերին, աստղերից էլ բարձր...

— Խոսքս հոգու թևերի մասին է,— ազատվելով նրա ձեռքերից ասում է Շաղիկը,— Թեկուզ ամբողջ աշխարհը հրդեհվի, քեզանից ասես մազ չի այրվի: Դարձյալ հանգիստ հայացքով կնայես աշխարհի վրա ու կհորանջես:

— Այդ դեռ կտեսնենք: Երբ հրդեհը սկսվի, քո այդ փետուրի թևերը կայրվեն, սիրելիս, ու այս կոպիտ ձեռքերը կլինեն առաջին հրդեհաշեջը:

— Պարծենկո՛տ... հոգու թևերը հրդեհի մեջ ոչ թե այրվում են, այլ ավելի հզոր են դառնում:

Պարզ, անկեղծ ու բարի սիրտ ուներ Վիրաբը, դրա համար էլ նրան սիրում էին բոլոր ընկերներն ու բարեկամները, ծանոթներն ու հարևանները: Իսկ երեխաները նրան ուղղակի պաշտում էին: Մեկ էլ ահա, բակի երեխաներից մեկը կմտներ արտասվակալած աչքերով, կոտրված խաղալիքը ձեռքին:

— Դյադյա... տես...— ասում էր նա, ցույց տալով խաղալիքի կտորները:

Վիրաբը շոյում էր երեխայի գլուխը, վերցնում նրա ձեռքից խաղալիքն ու հանգստացնում, որ «նա չի համարձակվի երկար ժամանակով ջարդված մնալ»: Եվ իրոք, մի քանի րոպեից հետո, վերանորոգված խաղալիքը ձեռքին, երեխան դուրս է թռչում նրանց տնից:

Ռազմիկի առաջին խաղընկերն էր Վիրաբը: Պատահում էր՝ ժամերով նրանք տարվում էին խաղով և երկուսն էլ այնքան լուրջ, որ Շաղիկը հեռվից դիտելով ծիծաղից թուլանում էր:

— Երեխաներ, եկեք ճաշելու, ճաշը սառչում է,— ձայնում էր նա հորն ու որդուն: Եվ այս բանին նրանք այնքան էին ընտելացել, որ էլ չէին ժպտում, ոչ հայրը, ոչ որդին և ընդհատելով խաղը, դնում էին սեղանատուն: Շատ անգամ Շաղիկն ստիպում էր Վիրաբին թողնել Ռազմիկին, որպեսզի նա զբաղվի դասերով: Սակայն քիչ չէր պատահում, որ նրանք խաղի մեջ էին ներգրավում նաև Շաղիկին ու տատիկին:

5

Գարնանային սիրուն երեկո էր: Վիրաբն աշխատանքից վերադառնում էր տուն աչք ածելով չորս կողմը: Ահա և որոնածը՝ դիմացի մայթի ծաղկավաճառը: Կողովի միջի թարմ, ժպտուն վարդերը աչքով էին անում նրան: Ի՜նչ սիրուն բան են ծաղիկները, իսկ ինքը՝ Վիրաբը մինչև հիմա հարկավոր ուշադրություն չի դարձրել նրանց վրա, համարելով դրանք կանացի զարդ միայն, որոնցով ուրախանալ սազում է միայն կանանց:

Նախորդ օրը Շաղիկը մի զույգ գեղեցիկ ծաղկաման-սրվակներ էր գնել:

— Իսկ ամենօրյա թարմ ծաղիկների մասին կհոգաս դու,— ասաց նա Վիրաբին:

— Այդ իմ գործը չէ: Կմոռանամ... Ավելի լավ է այդ էլ հանձն առնես:

— Ի՜նչ անպետք, ի՜նչ կոպիտ մարդ ես: Ուրիշ է՝ երբ ինքդ ես գնում, ուրիշ է՝ երբ նվեր ես ստանում: Ես ուզում եմ, որ դու բերես:

Շաղիկն սկսեց նախատել նրան իր չափազանց անփույթ ու անտարբեր, անսիրտ բնավորության համար: Նա խոստովանեց, թե ինչպես ինքը դեռ նշանված ժամանակ շատ էր ցանկանում, որ Վիրաբը իր համար ծաղիկներ բերի:

— Մտածում էի դրքի մեջ պահել դրանք: Սիրահարական վեպերում էի կարդացել այդպիսի բան: Բայց որովհետև ոչ մի

անգամ չմտածեցիր ինձ համար ծաղիկներ բերել, և երազի մեջ էի սպասում այդ քեզանից:

... «Ի՜նչ լավ, ի՜նչ չնաշխարհիկ կին է Շաղիկը,— մտածում էր Վիրաբը:— Եվ իրոք, ինչպե՞ս ոչ մի անգամ իմ հիմար գլխովը չանցավ ծաղիկ տանել նրա համար: Չէ՞ որ ես գիտեյի այն ժամանակ, որ սիրահարված տղաները ծաղիկներ են ուղարկում աղջիկներին»:

Նա խոստացավ Շաղիկին, հոգու խորքում ևս խոսք տվեց իրեն, որ ամեն անգամ աշխատանքից վերադառնալու ժամանակ թարմ ծաղիկներ բերի տուն:

Այդ էր պատճառը, որ նա այսօր ուշադրություն դարձրեց ծաղկավաճառի վրա:

Քայլերն ուղղեց այն կողմ և երկու քայլ էր մնում, որ հասներ նրան, երբ զգաց իրեն զույգ հումկու բազուկների մեջ:

— Վիրա՜բ...— նա հետ նայեց: Բարձրահասակ, ամուր կազմվածքով մի մարդ ժպտում էր ուղիղ նրա աչքերի մեջ:

— Արտի՜կ...

Նրանք գրկախառնվեցին, երկուսն էլ անկեղծ, ջերմ ու կարոտով:

Քիչ հետո նրանք թևանցուկ քայլում էին փողոցով հարցերի կարկուտ տեղալով միմյանց վրա: Վիրաբն իմացավ, որ նա շոֆեր է, ամուսնացել է և նամուսով մարդու նման է դարձել: Մի քանի օր է միայն, որ եկել է հայրենի քաղաքը: Չէ՞ որ ծնողներն արդեն ծերացել են, և հարկավոր է, որ նրանք ներեն միմյանց ու հաշտվեն:

Անցնում էին մի գարեջրատան մոտով: Արտիկը Վիրաբի թևն ամուր բռնելով քաշեց ներս:

— Գնա՜նք... նստենք այստեղ մի մանրամասն պատմենք ամենքս մեր գլխով անցածը:

Վիրաբը հոգնած էր, իսկ վաղն առավոտյան աշխատանքի էր գնալու, այդ պատճառով խնդրեց գարեջրատուն գնալը թողնել մի այլ օրվա և առաջարկեց միասին գնալ իրենց տուն:

— Լսի՛ր... քո մեծ աղբերն եմ: Արևս թաղես, թե որ խոսքս գետին գցես: Գնանք մի-մի բաժակ խմենք: Իսկ ձեր տուն գնալու ժամանակ կլինի: Վաղը գնում եմ, պիտի ընտանիքս տեղափոխեմ այստեղ:

Վիրաբն ընդդիմանալ չկարողացավ ու գնացին:

Գարեջրատան մթնոլորտն իսկ հարբեցնում էր ներշնչողին: Այս ու այն սեղանի շուրջը բոլորած երեք տղամարդկանց ցածրաձայն, միալար խոսակցությունը, ծուխը, խորտիկների գոլորշին, վաղուց այստեղ եկողների արդեն մշուշապատ հայացքները, այդ բոլորը մի տեսակ հաշիշի նման ներգործում էր ներս մտնողների վրա առաջին իսկ վայրկյանից:

Նրանք տեղավորվեցին մի ազատ սեղանի շուրջը:

Մի քանի բաժակ խմել էին, երբ հայտնվեցին և ուրիշ ծանոթներ, վաղ մանկության ընկերներ ու շրջանը մեծացավ: Ամեն մեկն աշխատում էր հյուրասիրողի դերում լինել և իր հերթին շշեր և ուտելիքներ էր, որ պատվիրում էր:

Ուշ գիշեր էր, երբ նրանք ցրվեցին: Վիրաբը, որ դժվարությամբ էր ոտքի վրա կանգնում, երերուն քայլերն ուղղեց տուն:

6

Առավոտյան նա արթնացավ այն ժամանակ, երբ Շաղիկն արդեն աշխատանքի էր գնացել, իսկ Ռազմիկը թեյ էր խմում:

Ամենօրյա երկար ու ձիգ արարողությունից հետո նա գնաց աշխատանքի: Բայց դեռ գլուխը ծանրանում էր, միտքը ոչ լրիվ պարզված, աչքերն ուռած ու կարմրած էին:

Նրա հերթափոխության գնացքը հանձնված էր ուրիշ մեքենավարի և շուտով կշարժվեր:

Կայարանի պետը, նկատելով նրան, նայեց մի պահ խորագնին և դեմքը խոժոռելով առաջարկեց անցնել գրասենյակ: Երբ Վիրաբը նրա հետևից մտավ պետի առանձնասենյակը, վերջինս հայտնեց, որ նա ազատված է աշխատանքից:

— Գնա՛, աշխատիր այնպիսի տեղ, ուր գարեջրի բաժակն ու աշխատանքը կարող են համերաշխ գործել,— ասաց նա,— մեզ մոտ այդ անհնար է:

Վիրաբը չհասկացավ, թե ինչ պատահեց իր հետ, նա չզգաց, թե ինչպես դուրս եկավ գրասենյակից ու ինչպես հասավ տուն:

***

Շաղիկն այդ օրը վերադառնում էր տուն արտակարգ հուզված ու ոգևորված: Հոգեկան այդ բուռն փոթորիկն ավելի քան կենդանի ու գեղեցիկ էր դարձնում նրան, ինչպես այգաբացին հուզված լճակը, որի շառաչող ալիքներն ասես կլանում են ողջ կյանքն իրենց մեջ ու բերկրանքից խայտում, աղմկում:

«Ասե՞մ տանը, թե՞ ոչ... ո՛չ, ոչինչ չեմ ասի. Վիրաբն էլ երբ վերադառնա, նրան էլ չեմ ասի, թող անակնկալի գան», — մտածում էր Շաղիկը:

Նա արագ անցավ պատշգամբն ու ներս մտավ:

Տանը ոչ ոք չկար և անկարգ վիճակ էր տիրում: Աթոռներն ընկած էին այս ու այն կողմ, հատակին թղթի կտորներ էին թափված, մի դանակ ընկած էր շեմքում, մահճակալների ծածկոցները ցած էին կախված: Սեղանին էր նետված Ռազմիկի գրքերի պայուսակը, որի բացված բերանից դուրս էին թափվել գրքերը: Այս խառնիխուռն վիճակը, տիրող դատարկությունն ու լռությունը ճնշող ազդեցություն գործեցին Շաղիկի վրա:

Խոհանոցից գալիս է սկեսրոջ քրթմնջոցը, որ հավանաբար նախատում էր իր շուրջը պտտվող կատվին: Կից սենյակից լսվում էր քնած մարդու անկանոն շնչառության ձայնը: Շաղիկն արագ անցավ: Մահճակալներից մեկի վրա բերանն ի վար պառկած էր Վիրաբը: Նրա լայն թիկունքը գրահի նման ծածկել էր բարձը: Գլուխը թեքված էր մի կողմ, ոտքերից մեկը փոշու մի հաստ շերտ թողնելով մահճակալի ծածկոցի վրա՝ կախվել էր ցած:

«Աշխատանքի չի՞ գնացել,— մտածեց Շաղիկը,— դե՛, իհարկե, լուսադեմին տուն եկավ, ոտքի վրա կանգնել չէր կարողանում»:

Քիչ առաջ սավառնող հոգին խփված թռչնի նման տապալվեց:

Նա հագուստը սկսեց փոխել: Առանց զայրույթի չէր կարողանում նայել Վիրաբի քրտնած ու կարմրած դեմքին և, որովհետև նրան ավելի ու ավելի էր գրգռում նրա հանգիստ, միօրինակ խռմփոցը, արագ անցավ մյուս սենյակը:

Սկեսուրը սենյակն էր հավաքում: Մռայլ էր նրա խորշոմած դեմքը: Պատմեց, թե ինչպես Ռազմիկը գրգռել է իրեն, կոտրել է մի բաժակ, տունն իրար գլխի խառնել ու թռել փողոց:

Շաղիկը հավաքեց Ռազմիկի գրքերը պայուսակի մեջ, և ըստ սովորության նայեց նրա օրագիրը: Վարքից նա անբավարար գնահատական էր ստացել:

Հարս ու սկեսուր սկսեցին սենյակը կարգի գցել և ապա սեղանը պատրաստել ճաշելու: Ամեն ինչ արդեն պատրաստ էր, երբ ննջարանից դուրս եկավ Վիրաբը: Ճիշտ նույն ժամանակ պատշգամբում երևաց Ռազմիկը: Իմանալով, որ տատիկը գանգատված կլինի մամային, նա չհամարձակվեց ներս մտնել ու քաշվելով մի անկյուն՝ սպասեց հարմար մոմենտի:

Շաղիկը հարցրեց Վիրաբին, թե ինչու աշխատանքի չի գնացել: Նա չպատասխանեց: Մայրն ինչ որ նախատական խոսքեր շշնջաց: Շաղիկը միացավ նրան: Վիրաբը երկար համբերել չկարողացավ և խիստ կոպիտ կերպով պահանջեց, որ լռեն: Շաղիկը նրան նույնպիսի կոպտությամբ պատասխանեց և նրանք իրենց կյանքում առաջին անգամ շատ խիստ ընդհարվեցին:

Ռազմիկն օգտվելով այն հանգամանքից, որ տատիկի ու մայրիկի ուշադրությունն այլ կողմ է, զգույշ ներս էր սահել ու տեղավորվել սեղանի առաջ: Նա զարմացած ու ահով նայում էր ծնողներից մերթ մեկի, մերթ մյուսի դեմքին, որոնք այնպես անխնա վիրավորում էին միմյանց: Այդ նրա համար այնքան տարօրինակ էր ու անախորժ, որ արագ ճաշելով նորից դուրս սահեց:

Վիրաբը ճաշը չավարտած հեռացավ սեղանից: Շաղիկն ամենևին ձեռք չէր տվել հացի, մայրը նույնպես:

Երբ Շաղիկն սկսեց սեղանը հավաքել, բակն ինչ որ աղմուկով լցվեց: Երկու կանայք բերում էին քիթ ու բերանն արյունլվա Ռազմիկին: Նա փողոցում կռվել էր երեխաների հետ ու ծեծվել:

7

Երրորդ օրն էր, որ Վիրաբն ու Շաղիկը չէին խոսում իրար հետ: Այդ ծանր էր Վիրաբի համար և նա մի քանի անգամ

փորձեց հաշտվել։ Սակայն Շաղիկն այդպիսի տրամադրություն ցույց չտվեց։

Այդ օրը Վիրաբը նամակ էր ստացել Թ. քաղաքում ապրող իր մորաքրոջ աղջկից, որը խնդրում էր նրան ներկա գտնվելու իր օրերս կայանալիք հարսանիքին։

Այդ նամակը առիթ դարձավ Վիրաբին հիշելու այդ նույն քաղաքում գտնվող իր մի ընկերոջը, որ կայարանի պետն էր։ «Չգնա՞մ նրա միջնորդությամբ այնտեղ ընդունվեմ աշխատանքի»,— մտածեց Վիրաբը։ Մինչ այդ նա ուզում էր գնալ հիմնարկ, խոստանալ իր նախկին պետին, որ այլևս այդպիսի դեպք չի կրկնվի և շարունակել աշխատանքը։ Բայց որովհետև ամաչում էր երևալ նրա աչքին, ուստի այդ միտքը ամեն օր հետաձգում էր։ Այժմ Թ. գնալու գաղափարը նրան մի պահ հրապուրեց, որովհետև դրանով կազատվեր իր պետից ներողություն խնդրելու ժամանակ կրելիք ամոթանքից։

Երբ վերջին անգամ Շաղիկը մերժեց նրա հաշտության առաջարկը... «Լավ, կգնամ», ասաց Վիրաբը մտքում ու տխուր հեռացավ։ Հայտնեց մորը մորաքրոջ աղջկա նամակի մասին և ասաց, որ ուզում է գնալ։ Մայրը խորհուրդ տվեց, թե ինչ համար նվեր տանել նորահարսին, և Վիրաբը դուրս գնաց այն գնելու։

Շաղիկին դուր չեկավ, որ աշխատանքի հարցը դեռ չկարգավորած՝ նա գնում է ինչ որ հաճույքների հետևից, բայց լռեց և իրեն ձևացրեց բոլորովին անտարբեր Վիրաբին վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ։ Իսկ վերջինս էլ թաքցրեց իր այնտեղ աշխատելու միտքը, որպեսզի նրանց հանկարծակիի բերի և զղջալ տա իրենց այնքան խիստ նախատինքների համար։

Մյուս օրը երեկոյան նա գնացքով մեկնեց Շաղիկի հետ դեռ չհաշտված։

8

Մորաքրոջ տանը Վիրաբին ընդունեցին գրկաբաց։ Հիանալի օրեր անցկացրեց նա այնտեղ, որոնք մոռացնել տվին իր հետ պատահած անախորժությունն ու գալու գլխավոր նպատակը։ Իսկ երբ այդ հիշեց, տխրեց ու գնաց ընկերոջ մոտ, նրա աշխատավայրը։

Ընկերը, որ շատ հավասարակշռված մարդ էր, սիրով ընդունեց նրան։ Նա սիրում էր Վիրաբին նրա բարի ու ազնիվ սրտի համար և հարգում էր իբրև ընդունակ մարդու։ Վիրաբին նա ճաշի հրավիրեց։

Խոսեցին շատ երկար, քաղցրությամբ վերհիշելով մանկությունը, և բավական ուշ էր, երբ Վիրաբը բաժանվեց նրանից ու գնաց մորաքրոջ տուն։

Ճանապարհին միայն նա հիշեց ընկերոջ մոտ գնալու նպատակը և ուրախացավ, որ այդ մասին չէր խոսել նրա հետ։ Եվ իրոք, ի՞նչ պետք է ասեր, ինչպե՞ս պետք է պատճառաբաներ իր այդ ցանկությունը, ի՞նչ պիտի ասեր, թե ինչո՞ւ է թողել իր նախկին աշխատանքը։

Երկար մտածելուց հետո նա գտավ, որ ավելի լավ է վերադառնալ նախկին աշխատավայրը։ Եվ, վերջապես, հեշտ չէր ընտանիքից հեռու ապրելը։

Մի խոր տխրություն իջավ նրա հոգուն։ Նա չէր կարողանում առանց ամոթի մտածել իր այդ արարքի մասին, այն, որ այդպես խայտառակ կերպով աշխատանքից հեռացվելուց հետո, փոխանակ աշխատել ու քավել հանցանքը, օրերով անիմաստ թափառում է այստեղ։

Խիստ կարոտ զգաց դեպի տանեցիները։ Ներել չէր կարողանում իրեն մոր ու կնոջ հանդեպ թույլ տված վիրավորանքի համար։

Թեև մորաքույրը շատ խնդրեց մնալ մի քանի օր էլ, բայց նա չորրորդ օրը տոմս վերցրեց և հրաժեշտ տալով նրանց՝ գնաց կայարան։

Երբ նա մտավ կայարան, գնացքն արդեն կայարանից դուրս էր ելնում։

— Գրողը տանի, դարձյալ ուշացա,— զայրացավ նա ինքն իր վրա։ Եվ այդ այն պատճառով, որ հրաժեշտ տալուց հետո ճամպրուկը ձեռքին ժամից ավելի կանգնել ու կատակում էր այս կամ այն երեխայի հետ։

Նա ավելի լավ համարեց սպասել գիշերվա գնացքին և նստեց դահլիճի մի անկյունում։ Կես ժամ չէր անցել և նա արդեն տանջվում էր ձանձրույթից։

Գնաց թեյարան։ Նստեց մի ազատ սեղանի մոտ ու մի բա-

ժակ թեյ խնդրեց: Կատարեցին նրա խնդիրը և նա սկսեց դանդաղ թեյել:

Երկու բավական համակրելի երիտասարդներ եկան ու տեղավորվեցին նրա առջևի ազատ սեղանի շուրջը: Մեկը մատուցողին հրավիրելով ինչ որ պատվերներ տվեց, մյուսը, որ թիկունքով կիսով չափ դարձած էր Վիրաբի կողմը, օրվա թերթը բացելով սկսեց աչքի անցկացնել:

— Ինչ լավ է, երբ գեղեցիկ կանայք նաև խելոք են լինում, — նայելով թերթում տպագրված կնոջ գեղեցիկ ու խելացի դեմքին, որ գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու էր, ասաց նա,— գեղեցկությունը գեղեցիկ ձևի և գեղեցիկ բովանդակության ներդաշնակությունն է: Երբեք գեղեցիկ չեմ ասի լավ ձև ու գույն ունեցող այն աչքերին, որոնց մեջ չի զգացվում ներքին կրակը, որոնք չեն արտահայտում սլացիկ միտք, խոր հոգի և նրբազգաց սիրտ:

Նրա ընկերը հավանություն տվեց այդ կարծիքին և սկսեցին երկար դատողություններ անել այդ հարցի շուրջը:

Վիրաբի ուշադրությունն այժմ դարձավ նրանց կողմը: Գլուխը խոնարհած, թեթևակի ժպիտը շուրթերին, լսում էր նրանց: Երբ գլուխը բարձրացրեց, նրա հայացքը պատահաբար կանգ առավ այն կնոջ նկարի վրա, որն առիթ էր տվել նրա հարևաններին փիլիսոփայելու գեղեցիկի մասին:

Մի պահ նա լարեց հայացքն ու կայծակի արագությամբ ոտքի ելավ: Մոտեցավ հարևան սեղանին, թերթը դուրս կորզեց երիտասարդի ձեռքից ու մոտեցրեց աչքերին: Նայեց լարված, սևեռուն հայացքով ու ինքնամոռացման մեջ հրճվալից ժպտաց: Երիտասարդը տարօրինակ անծանոթի վարմունքից զարմացած պատրաստվում էր մի խիստ դիտողություն անել: Սակայն Վիրաբը ժամանակ չտվեց: Արագ շուռ եկավ թերթն ամուր բռնած ու հեռացավ, ինքն էլ չիմանալով թե ուր: Նա դուրս եկավ թեյարանից և դահլիճի խաղաղ անկյուններից մեկում կանգ առավ: Այդ ամբողջ ժամանակի ընթացքում նա ոչ մի ակնթարթ աչքերը չէր կտրել նկարից: Նա կարծես մի անորոշ երազի մեջ լիներ: Թերթից ժպտում էին նրան մի զույգ մտերիմ, գեղեցիկ աչքեր՝ իր կնոջ աչքերը:

— Ուժեղ բնավորության տեր կին է երևում,— լսեց Վի-

րաբը մոտիկ տղամարդու մի ձայն: Բարձրացրեց հայացքը: Նրա կողքից հանդարտ քայլերով անցան երկու տղամարդ՝ դիտելով իրենց ձեռքի թերթի մեջ նույն կնոջ նկարը: Կարծես հենց այդ խոսքերի շարունակությունն էր, որ լսեց Վիրաբը մի այլ տեղից: Իրենից փոքր ինչ հեռու կանգնած խոսում էին մի ուսանողուհի և երկու ուսանող:

— Տղամարդիկ հաճախ համբուրում են հիմար կնոջը, եթե նա գեղեցիկ է,— ասաց ուսանողուհին,— կարծես գեղեցկությունը հատուցում է խելքի համար: Մինչդեռ կինը չի կարող տանել իրենից թույլ մտքի տեր մարդուն: Ուժեղ կանայք սիրում են ուժեղ բնավորություն:

— Այդ ճիշտ է,— պատասխանեց ուսանողներից մեկը,— այդպես է ընդունված, որ մարդը միշտ պետք է ավելին լինի քան կինը: Սակայն հետաքրքիր է, թե դուք ինչով եք բացատրում այս բանը:

— Ինձ թվում է պատճառն այն է, որ կնոջ հոգին ձգտում է միշտ բարձրին ու անհասանելիին: Նա ամենից առաջ որոնում է հոգեկան գեղեցկություն, հոգեկան հաճույք,— ժպտաց ուսանողուհին, փորձող հայացքով նայելով երկրորդ ուսանողին:

— Դուք կամենում եք կնոջն ավելի բարձր հոգեկան հատկանիշներ վերագրել,— ասաց վերջինս, որ մինչ այդ լուռ էր, — կողմնապահություն է: Ես կարծում եմ այժմ կին և տղամարդ տերմինները բացառապես ֆիզիոլոգիական հասկացողություններ են: Իսկ առհասարակ կա մի ընդհանրական և վեհ գաղափար, դա մարդ գաղափարն է: Այն, թե ընդունված է, որ ամուսինը միշտ բարձր լինի կնոջից, անցյալի տխուր ժառանգությունն է, որ ուներ իր սոցիալ-հասարակական պատճառները: Այժմ չկան այդ պատճառները և վերանում են նրա շատ անախորժություններ ծնող հետևանքները: Օրինակ՝ ես երբեք չեմ կամենա, որ իմ ապագա ընկերուհին ինձնից մտավոր նվազ կարողություններ ունենա, թեկուզ լինի երկնային գեղեցկության տեր: Ճիշտ այդպես էլ հասարակական կյանքով ապրող ամեն մի կին չի կամենա, որ իր ամուսինը դանդաղ քայլի կյանքում:

— Դու ճիշտ ես,— բացականչեց մյուս ուսանողը, իսկ ու-

տանողուհին կարծես չլսեց նրա վերջին բառերը: Մտածկոտ հայացքը նա հառել էր անորոշ մի կետի:

Վիրաբը, որ առաջ հեգնանքով էր վերաբերվում նման բնույթի ամեն մի խոսակցության, այժմ կլանում էր նրանց յուրաքանչյուր բառը: Նա նորից նայեց Շաղիկի նկարին ու թվաց այս անգամ նրա ժպիտը հեռվից հեռու եկող, որ արտահայտում էր մի խոր տխրություն:

«Շարունակ ուշանում ես,— կարծես ասում էին այդ աչքերը,— գնացքը ե՞րբ է մեկնել, իսկ դու դեռ այս փոքրիկ կայարանումն ես...»

Վիրաբի սիրտն սկսեց անհանգիստ բաբախել:

Մի խուլ փոթորիկ բարձրացավ նրա հոգում: Կնոջ մտերիմ ժպիտը հետզհետե դառնում էր օտարոտի, սառն ու նախատինքով լի: Նա բաց արեց թերթի էջը լրիվ: Նույնպիսի հայացքով նրան էին նայում և շատերը: Ահա տաղանդավոր մի նկարիչ, ճարտարապետ, ստախանովական բանվոր, հարվածային կոլտնտեսուհի, գերազանցիկ ուսանող...

«Գերագույն խորհրդում ընտրենք մեր երկրի լավագույն մարդկանց»— խոշոր տառերով գրված էր թերթի ճակատին:

«Երկրի լավագույն մարդիկ»,— մտքում կրկնում էր Վիրաբը:

«Իսկ դո՞ւ»... կարծես ասում էին այդ հայացքները: Նա նայեց շուրջը... կարծես ոչ ոք չէր զգում նրա գոյությունը: Ոմանք տագնապով վազում էին այս ու այն կողմ, ոմանք զբոսնում էին հանգիստ: Շուրջն ուրախ խոսակցությունն ու ծիծաղն էր թնդում:

«Երկրի լավագույն մարդիկ»,— շարունակ կրկնում էր նա:

«Իսկ դո՞ւ»... հարցնում էին նրանք:

«Հասարակության կյանքով ապրող ամեն մի կին չի ցանկանա, որ իր ամուսինը դանդաղ քայլի կյանքում»:— Նետի նման ցցվել էին նրա սրտում այս բառերը:

Սկսեց մտածել, թե ինչ է անում այժմ Շաղիկը:

«Քնած է հավանաբար,— նա աշխատեց պատկերացնել նրա դեմքը խաղաղ քնի պահին... Բայց այդ չհաջողվեց: Կնոջ մահճակալը պատկերանում էր միշտ դատարկ... մի հալուցինացիա պաշարեց նրան: Թվում էր թե կնոջն այլևս տանը չի տեսնե-

լու: Մտովին շրջում էր բոլոր սենյակները, պատշգամբը, անցավ խոհանոցն ու նկուղը, բայց Շաղիկը ոչ մի տեղ չկար, նրա դեմքը փախուստ էր տալիս շարունակ:

Սիրտը տագնապով սկսեց բաբախել: Նայեց ժամացույցին: Երեք ժամ կար մինչև գնացքի մեկնելը... երեք ժա՛մ... Բայց նա երեք վարկյան սպասել չի կարող: Նա ուզում է հենց այժմ, հենց այժմ...

Քայլերն ուղղեց դրասենյակ: Ուզում էր իմանալ ուրիշ գնացք չի՞ մեկնելու: Մտավ ընկերոջ առանձնասենյակը և առանց որևէ նախաբանի կցկտուր բառերով հասկացրեց, որ իրեն հարկավոր է հենց այժմ մեկնել, թեկուզ և ապրանքատար գնացքով, եթե լինելու է այդպիսին:

Ընկերը, որ զբաղված էր մի քանի այցելուներով, նրա այդ այլայլված տեսքից վատ բան գուշակեց ու խոստացավ անմիջապես տեղեկանալ այդ մասին:

— Սպասիր մի քանի րոպե, կտեղեկանամ,— ասաց նա:

Վիրաբը դուրս եկավ նրա առանձնասենյակից և սկսեց արագ-արագ քայլել դահլիճում: Հասարակության մեծ մասի ձեռքին կար օրվա լրագիրը: Ոմանք լուռ կարդում էին թեկնածուների կենսագրությունը, ոմանք բարձրաձայն էին կարդում, վիճում, կարծիքներ, ծանոթություններ հայտնում: Վիրաբը մի քանի անգամ տարբեր կողմերից լսեց Շաղիկի անունը:

Ամեն անգամ նա ցնցվում էր ու զայրույթով լցվում դեպի այդ մարդիկ: Նա ուզում էր հարձակվել նրանց վրա, խլել թերթը ձեռքներից ու աղաղակել, թե՝ դա իմ կինն է, իմը, միայն իմը, դուք իրավունք չունեք հիանալու նրանով:

Մեկը բռնեց նրա թևը: Կայարանի պետն էր՝ իր ընկերը: Նա հայտնեց, որ հենց այժմ մի ապրանքատար գնացք է մեկնելու:

Եվ իրոք, մի քանի րոպե անց, գնացքը դուրս եկավ կայարանից՝ հետը տանելով Վիրաբին:

9

Քաղաքային ժամացույցի մուրճը երեք անգամ հարվածեց: Նույն պահին ապրանքատար գնացքը հևալով մտավ կայարան: Նա դեռ կանգ չէր առել, երբ Վիրաբը մի վագոնից ցած թռավ

ու շտապեց կառամատույց: Սակայն ոչ մի կառք չկար, որովհետև մարդատար գնացքն սպասվում էր ուշ:

Աշխատում էին միայն հերթապահ տրամվայները: Վիրաբը չսպասեց դրանց և ոտքով ճանապարհ ընկավ դեպի տուն: Հևասպառ քայլում էր, իսկ միտքն ու սիրտը թռած առաջ իրենց տան լուսամուտներից նայում էին ներս, բայց մթության պատճառով, ոչինչ որոշակի տեսնել չէին կարողանում:

Ահա և տունը...

«Այստեղ է նա... հիմա ես կտեսնեմ նրան,— մտածեց նա: բայց սիրտը, սիրտն ուրիշ բան էր ասում...

Երկյուղով ծեծեց դուռը:

— Ո՞վ է...— լսվեց մի թույլ ձայն:

— Ե՛ս... բաց արա:

Դուռը բացվեց: Վիրաբն արագ ներս մտավ: Մայրը ինչ-որ հարցնելով շտապեց մտնել անկողին:

Վիրաբը չհասկացավ նրա ասածը, բայց մոր անվրդով քնկոտ ձայնը հանգստություն ներշնչեց նրան: Իր փոքրիկ մահճակալում քնած էր Ռազմիկը, թաթիկներն աջ ու ձախ տարածած:

Վիրաբը շտապեց իր ննջարանը: Բաց արեց դուռն ու շեմքում մի պահ մնաց կանգնած:

Բացարձակ խաղաղություն էր թագավորում այնտեղ:

Ամեն ինչ սուզվել էր ծով անդորրի մեջ: Ննջում էին կարասիները, բոլոր իրերը, ամեն ինչ, ամեն ինչ: Օդանցքից ներս հոսող հովն էլ հալվում էր լռության մեջ, թաղնվում սավանների տակ ու քուն մտնում: Պատերին խաղում էին ասեղնագործ վարագույրների նուրբ ստվերները, իսկ հատակը մթագնված էր կարասիների ձգված սիլուետներով:

Զույգ մահճակալներից մեկի վրա քնած էր Շաղիկը: Նրա սև խոպոպները փռված էին բարձի վրա: Փողոցից ներս էր թափանցում դիմացի լապտերի աղոտ լույսը ու դրանից Շաղիկի դեմքն ավելի գունատ ու քնքույշ էր դառնում:

Վիրաբը մոտեցավ մահճակալին և ուշի ուշով սկսեց դիտել նրա դեմքը: Նա կարծես վախենում էր, թե հիմա նա կչքանա իր հայացքից:

Շաղիկի նուրբ շրթունքների վրա խաղաց մի մեղմ ժպիտ:

«Ո՞ւմ է ժպտում»...— անցավ Վիրաբի մտքով: Կինո ժապավենի նման առջևից սահեց թերթում նկարված տղամարդկանց շարքը:

« Երկրի լավագույն մարդիկ»...— թերթի ճակատին գրված խոշոր տառերը վերականգնեցին նրա երևակայության մեջ:

Շաղիկը դարձյալ ժպտաց...

«Ո՞ւմ է ժպտում»...— այս անգամ արդեն սեղմված ատամների արանքից շշնջաց նա: Հարձակվեց, բռնեց կնոջ ուսերից, վեր բարձրացրեց, մի ձեռքով գրկեց նրա մեջքը, մյուսով գլուխը մոտեցրեց իր աչքերին: Կինը թույլ կերպով ճչաց ու աչքերը բաց արեց:

— Ա՜խ, Վիրաբ,— բացականչեց նա,— ի՛նչ կոպիտ ես...

Շաղիկի սիրտը բաբախում էր արագ: Բայց նա ներողամիտ ժպտաց ու ձեռքերն ազատելով նրա բազուկների օղակից՝ քնքշանքով դրեց նրա ուսին:

— Ինչո՞ւ ուշացար...

Վիրաբը չէր լսում նրան: Նա շնչում էր ծանր, հևոցով:

— Ո՞ւմ էիր ժպտում...— շշնջաց նա խուլ ձայնով:

— Ո՞ր գնացքով եկար,— շարունակեց կինը:

— Ո՞ւմ էիր ժպտում...— կրկնեց նա՝ ճնշելով նրան իր բազուկների մեջ:

Շաղիկը փորձեց թուլացնել նրա բազուկների ճնշումը: Բայց անօգուտ: Նա գլուխը փոքր ինչ հետ գցեց ու զարմացած նայեց Վիրաբի վառվող աչքերին:

— Ի՞նչ է պատահել քեզ...

— Ասա՛...

Շաղիկը շարունակում էր զարմացած նայել նրան:

Վիրաբն ասես տենդից սթափվեց: Այնքան անկեղծ էր Շաղիկի զարմանքը, այնքան բնական: Նա բաց թողնելով կնոջ ուսերը, մեղավոր ժպտաց.

— Իսկապես, ի՞նչ է պատահել ինձ...

10

Առավոտյան Վիրաբն այնքան վաղ արթնացավ ու տանից դուրս գնաց, որ ոչ ոք չիմացավ: Շարժումների մեջ հուզմունք

ու համաձայնություն կար։ Հաղնվեց այնքան արագ, որ ինքն էլ զարմացավ։

Դռան մոտ կանգ առավ, ոտքից գլուխ զննեց իրեն ու ամեն ինչ կանոնավոր գտնելով՝ զգույշ բաց արեց դուռն ու արագ հեռացավ։

Այդ օրը նա հեռախոսով հայտնեց Շաղիկին որ վերականգնել է իր իրավունքները և այսօրվանից անցնում է աշխատանքի։

Սկսած այդ օրվանից՝ Վիրաբն անճանաչելի կերպով փոխվեց։ Շրջապատի նկատմամբ անփույթ ու անտարբեր նրա հայացքը դարձել էր ուշադիր ու նրբանկատ։ Շարժումների մեջ տենդոտ մի շեշտ կար, որ չէին կարող չնկատել ծանոթները։

Անվերջ կատակող ու ծիծաղող Վիրաբն այժմ դարձել էր փոքր ինչ լռակյաց։

Ի՞նչ էր կատարվում նրա հոգում։ Արդյոք նմա՞ն չէր նա այն մեծ երեխային, որին ծնված օրից փակել էին սենյակի չորս պատերի մեջ, որի լուսամուտի ապակին պատահական մի քարով կոտրվում է և նա՝ այդ մեծ երեխան նայում է դուրս, տեսնում է երկնակամարի հրեղեն գունդը, տեսնում է լայն հորիզոններ, կանաչ մարգագետիններ, տեսնում է դեպի երկինք խոյացող բարձրագահ լեռների կապույտ շարքերը։ Եվ նրա՝ այդ մեծ երեխայի հոգին այլևս փակվել չի կարողանում խեղդուկ սենյակում, նա ուզում է դուրս թռչել, ընդգրկել այն անսահմանությունը, ձուլվել այն ամենին։

Անցել էր հինգ օր։

Վիրաբն աշխատանքի էր գնացել և այդ օրը չէր վերադառնալու։

Ճաշից անմիջապես հետո Ռազմիկը քաշվեց իր սենյակը՝ դաս պատրաստելու, մի բան, որ առաջ երբեք չէր պատահում, մինչև մայրը մի քանի անգամ չհիշեցներ։ Տատիկը գնաց բակում իր հասակակից կանանց հետ զրուցելու, իսկ Շաղիկը սենյակը կարգի գցելուց հետո բաց արեց հարևանուհուց նոր խնդրած գիրքը։

Մեկ ժամ չէր անցել, երբ Շաղիկը նկատեց պատշգամբում երեք մարդ։ Նրանք մոտենում էին իրենց դռանը։ Մեկը Վիրաբենց հիմնարկության պետն էր, երկրորդը՝ կուսկոմիտեի քարտուղարը, իսկ երրորդը դարձյալ նրանց աշխատակիցներից

մեկը, որին Շաղիկը չէր ճանաչում։ Նրանց այցելությունը նախ զարմանք պատճառեց Շաղիկին և հետո տեղի տվեց երկյուղի։

— Ավարի՞ա...— սոսկումով մտածեց նա ու հազիվ կարողացավ ոտքի ելնել։ Մի քանի քայլ անգամ ընդառաջ գնալ չկարողացավ ու մնաց տեղում արձանացած։ Վայրկենապես այնպես գունատվեց, որ թվում էր, թե հիմա նվաղած ցած կընկնի։

Եկվորները կարծես զգացին այդ և դեռ հեռվից ժպտացին, մի բան, որ տարօրինակ թվաց Շաղիկին։

— Ողջունում ենք, տիկին։ Ձեր ամուսնու հաղթանակը նաև ձերն է,— արագ մոտեցավ նրան կուսկոմիտեի քարտուղարն ու ձեռքը պարզեց առաջ։ Շաղիկը չհասկացավ. արտասանվել էին ո՛չ նրա սպասած բառերը։ Բայց մեքենայորեն բռնեց մեկնած ձեռքը։

— Մեկ ժամ առաջ հեռախոսով հայտնեցին, որ Վիրաբն այսօր, ցերեկային գնացքով, սահմանել է արագընթացության նոր ռեկորդ,— շտապեց հաղորդել պետը։

Մեկ վայրկյան էլ Շաղիկը մնաց լուռ ու հանկարծ դեմքը լողաց անհուն հրճվանքի մեջ։ Ռազմիկը մի ուրախ ճիչ արձակեց ու ծափ զարկելով դուրս թռավ տատիկին ու բակի երեխաներին հայտնելու այդ։

Տատիկը երկու կնոջ հետ բակում զրուցում էր։ Եկվորներին նկատելով խոսքը կիսատ թողած շտապել էր վերև։ Նա նույնպես վատ մեկնաբանություն էր տվել այդ այցելությանը։ Սանդուղքների կիսում նրա ծնկները բոլորովին թուլացել էին, սիրտն ասես նվաղում էր և նա սկսել էր չորեքթաթ բարձրանալ։

— Տատի՛կ, պապա՛ն... պապա՛ն...— պատշգամբից բացականչեց Ռազմիկը։

— Ի՞նչ, ի՞նչ... պապան...— հեկեկան ձայնով աղաղակեց տատիկը։

— Պապան ռեկորդ է խփե՛լ...

Տատիկը կանգ առավ։ Այլևս ուժ չկար նրա ծնկներում և նա նստեց տեղում։ Կուսկոմիտեի քարտուղարը, որ ժպտալով դուրս էր եկել Ռազմիկի հետևից, նկատելով այդ, շտապեց տատիկին օգնության։

— Հը՞… ճուտիկ, պապադ իր աշխատանքի մեջ առաջավոր է: Դու է՞լ ես դպրոցում առաջավոր: Գերազանցի՞կ ես, թե՞, ոչ,— հարցրեց նա Ռազմիկին, երբ անցնում էին պատշգամբը տատիկին թևանցուկ արած:

Ռազմիկն ամաչեց ու գլուխը խոնարհեց կրծքին: Նա իր օրում դեռ գերազանց թվանշան չէր տեսել:

11

Հաջորդ օրն առավոտյան հիմնարկության պետն ու կուսկոմիտեի քարտուղարը եկան, որ Ծաղիկի հետ միասին գնան կայարան՝ Վիրաբին դիմավորելու: Նրանք իրենց հետ ծաղկեփնջեր էին բերել: Շատ ծաղիկներ էր գնել նաև Ծաղիկը: Սենյակը լի էր ծաղկեբույրով: Սեղանի վրա, ջուսամուտներում, ամենուր ժպտում էին գունագեղ ծաղիկները:

Վիրաբի մայրն էլ տենդագին պատրաստության մեջ էր. խնջույք էր տալու որդու պատվավոր վերադարձի առթիվ:

— Արևիդ մեռնեմ, բալա ջան… արևիդ…— շարունակ շշնջում էր նա՝ հուզմունքից խոնավացած աչքերով և առույգացած շտապում էր տանից խոհանոց, խոհանոցից տուն:

Դիմավորելու գնացողները պատրաստվում էին տանից դուրս գնալու, երբ հանկարծ դուռը շխկոցով հետ գնաց ու հևասպառ ներս ընկավ Ռազմիկը:

— Մամա, երկու առարկայից գերազանց եմ ստացել,— բացականչեց նա. բաց օրագիրը մորը տալով: Մայրը խանդաղատանքով գրկեց ու համբուրեց նրան:

— Հիմա կարող ես բաց ճակատով գալ պապային դիմավորելու,— ասաց պետը:

Նրանք տանից դուրս եկան իրենց հետ վերցնելով նաև Ռազմիկին:

Դրսում սպասում էր ավտոմեքենան…

ՆՈՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***

Կտուրները կանաչել են,
Ծլլրտում են տները,
Թռչունները ճանաչել են
Իրենց հերվա բները:

Դեռ կիսաբաց նոր վարդերը
Հովի թևով դողում են,
Սևանում են խամ արտերը,
Թարմ ծիլերը շողում են…

Օրը ժպտուն, կյանքը վառ է,
Կոլեկտիվը՝ ժրաջան,
Էս նոր գարունն ի՛նչ պայծառ է,
Ու անուշ է, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն…

Գարնան գանգուր ամպիկները
Ահա մաղում են անձրև,
Ջրով իրենց աչիկները
Օծում ծաղիկ ու տերև…

Ամպի հետև դեռ մնջում են
Ոսկե շողերն արևի,
Ծաղիկները շշնջում են՝
— Արփին կըգա երևի…

Անձրեն անցավ: Ու սուսափեց
Ցորենի արտն էր անծայր,
Կանաչ-կարմիր գոտի կապեց
Երկինքը պա՛րզ ու պայծառ:

ՊՍԱԿՆԵՐ

Ա

Ոգի առած գարնան կանչով
Արևը թարմ ու զվարթ,
Եկավ, բացեց հուր-ճաճանչով
Արևելքի դուռը վարդ:

Էն հրեղեն շողերի տակ
Ձյունն արտասվեց ու հալվեց,
Եվ բնության շունչը հստակ
Անհուն սիրով ծավալվեց...

Բ

Բնից ելան միջատ, զեռուն,
Հոսեց նորից կյանքը եռուն,
Հավքը եկավ բույնը գտավ,
Խոփը թափով հողը մտավ:

Հովիվն արդեն սարին կարոտ՝
Հոտը քշեց դալար արոտ:
Ծաղկունք ելան հազար ձևով,
Սվսվացին հովի հևով՝
Խոր անտառում,
Ազատ սարում,

Լեռան ծալքում,
Հովտի մարգում,
Ժեռ քարափին,
Գետի ափին,
Ծաղկանոցում,
Ծառանոցում...

Գ

Ամպն էր կայծակ
Թուրը ճոճեց,
Մեկել ամպին
Կռվի կոչեց,
Ելան իրար
Թրատեցին՝
Երկինք, գետինք
Որոտացին...

Դ

Թուխ ամպերի ցնցուղները
Առատ անձրև մաղեցին,
Ծառ ու ծաղիկ, թուփ ու տերև
Շուշան շաղով շաղեցին:

Ամպերն անցան... Ծիծաղեցին
Թռչունները միաձայն
Ու երկնքում կամար կապեց
Մի գունագեղ ծիածան...

Շողերի քողի տակից
Ցոլաց արփին հրավառ
Ու բաց արավ երեսն իրա,
Ինչպես սիրուն ջահել հարս:

ԱՐԵՎ

— Ի՞նչ ծաղիկ ես բերել, գա՛րուն:

— Բերել եմ ես «Ախպրանց արուն»,
Թարմ, անուշակ.
Ծիլ, մանուշակ,
Ձյունուկ, չաման,
Պուտ, յասաման,
Մուրտ, հիանունկ,
Լի-լիանունկ,
Ծիր-ծարուրիկ,
Շար-շարուրիկ,
Շամրիկ, շափրուկ,
Հիրիկ, հափրուկ,
Փշակոթիկ,
«Տերադոթիկ»,
Ավշածաղիկ,
Թավշածաղիկ,
Գույն-գույն նարոտ,
Աղավնարոտ,
Հրաշուշան,
Ջրաշուշան,
Անդածաղիկ,
Ջանդածաղիկ,
Եղածաղիկ,
Ծեղածաղիկ,
Մեխակ, լիմոն,
Մոռ, կինամոն,
Նեկտար, փիփերթ,
Մարգարտաթերթ,
Շահեն, քուշուշկ,
Շաֆրան ու մուշկ,
Գործենա, բարդ,
Անթառամ, վարդ,
Գյուլ-գյուլիզար,
Ալ-լալազար,
Շող, շաղանակ, շուշան, երեմ.

Հլա կուզես՝ է՛լի բերեմ.—
Նարդոս, նարգիզ, մեղրածորուկ,
Զամբյուղ, ռեհան ու խնձորուկ,
Խաշխաժ, ծծուկ,
Մոռ, կծկծուկ,
Լուրթ աչքուլիկ,
Բաց բուլբուլիկ,
Ուրց, բանավուշ,
Նարնջավուշ,
Խնկածաղիկ,
Կնքածաղիկ,
Սիրեն, սուսան,
Վառ բալասան,
Պուտավարդ,
«Սուտավարդ»,
«Ասլրեմ,
Զասլրեմ»,
«Կապույտ գինվոր», սեզ, սուսամբար,
Երանուհի, գինարբ ու բար,
Քնար, համրիկ, ու գնեփուկ՝
Հաղած մախմուր չորեք փափուկ,—
«Սիրի, սիրի», ամպհովանի—
Ահա ծաղկունքն իմ դովանի:

Ե

Ու բացվեցին ծաղիկները
Արևի տակ լուսաբույր,
Ուրախացա՛ն ու ձուլվեցին
Եթեր, թիթեռ, երգ ու բույր...

Զ

Աղբյուրներն են ճիչով հոսում,
Սրբած սրի պես փայլուն,
Ծաղիկ, ծաղկի հետ է խոսում
Ու հավքերն են դայլայլում...

Ջա՛ն, մայիսն է այցի եկել—
Ամիսների թագուհին՝
Դաշտը պես-պես գույնով ներկել,
Փռել գորգեր թանկագին,

Փռել շքեղ մահուդ, մախմր,
Սատին, ատլաս ու զամբուռ,
Ու երկնքի աչքը ծավի
Լցվել խինդով վարարուռ։

Արեգակը հուր է մաղում՝
Արբած սիրով ու բույրով,
Մեղուները հյութ են քաղում
Հովի շաղոտ համբույրով։

Թիթեռները վառ ծաղիկներ՝
Ցանված մաքուր օդի մեջ,
Թռչկոտում են ընկեր-ընկեր
Խաղում անվե՛րջ ու անվերջ...

Է

Արփին հանգավ,
Զով հովն ընկավ,
Տիրեց խաղաղ իրիկուն,—
Բերեց արթուն
Բանող մարդուն
Քաղցր երազ, անուշ քուն...

Ը

Ծաղիկները գույներ հագան
Ու հովերի մեղմ երգին
Ունկ դնելով՝ իրար եկան,
Մութ անտառի եզերքին...

Թ

Լուսինն ինչպես պայծառ կանթեղ
Շողաց սարից մեր ճանաչ.
Սուսամբարը եկավ այնտեղ,
Շրջագգեստով իր կանաչ։

Ու ծայնեցին վտակներին
Մարգարիտներ՝ լուսնի տակ—
Իրենց դեղին դղակներին
Դրած պսակն ոսկետակ։

Զգվեց կապույտ մութի վերմակ,
Քամին շոյեց թփերին,
Բոժոժները նուրբ ու ճերմակ՝
Փունջ-փունջ նլան ափերին։

Ապա զանգուր «սիրի-սիրի»,
Կապուտաչյա մանուշակ
Սխսվացին հովիկների
Գուրգուրանքով անուշակ։

Հարսնածաղիկն է՛լ հայտնվեց,
Տուղթն էլ իր ծիգ հասակով,
Ու մեխակը բարև տվեց
Ատամնավոր պսակով։

Եկան պուպու, սխտորաեղինջ,
Ոսկեծաղիկ, և խնկույն
Բացեց սիրուն աչերը ջինջ
Զանազանը գույնզգույն։

Ժ

Լուսատտիկներն անաղմուկ,
Լապտերիկներ վառեցին

Ու մայր հողի դեմքին տամուկ
Մեկիկ-մեկիկ շարեցին։

Երկնքի տակ խորո՛ւնկ, անամպ,
Խիտ անտառի ետևից
Պրծավ զեփյուռն թեթևությամբ
Ու վեր կացավ իր թևից։

— Ողջո՛ւյն,— ասավ ծաղիկներին։
— Ողջո՛ւյն, անուշ մեր զեփյուռ,—
Շնորհալի բարևեցին
Ծաղիկները համասփյուռ...

Ու վազ տվեց զեփյուռը պաղ,
Մարգագետնի երեսին
Ծաղիկներին ցողաթաթախ
Կանչեց պարի հանդեսին։
— Հապա եկեք,
Դեպ ինձ թեքեք
Երեսները ձեր քնքուշ,
Իրար փարեք
Ու պար արեք
Մատներիս տակ փաղաքուշ։

ԺԱ

Լուսինն հյուսեց նրբին բեհեզ,
Ծղրիդի երգը լսվեց,
Ծաղիկների համեստ ու հեզ
Պարն ամենուր սկսվեց։

Հոտով նարգիզը
Իր երկայն վիզը
Պչրանքով թեքած,
Աշխուժի եկած,

Պարում է անվերջ
Բույրերի հետ պերճ...

Զանգակներ կապույտ
Թեթև ու անխույթ
Ցողունին շարված
Հաճույքով տարված,
Պարում են, բուրում,
Հովին համբուրում...
Ու երազանքով
Քնքուշ նազանքով
Շուշաններ ճերմակ
Թերթերով պերմակ[1]),—
Ճոճվում են կամաց,
Ժպտում տխրամած...

ԺԲ

Ձայն է գալիս տերևից՝
Ծափ են տալիս ճյուղ, սաղարթ
Ու մաղվում է վերևից
Երկնքի ցողն անաղարտ։

Երգ են հնչում ու կանչում
Աղբյուրները սառնորակ,
Մեղմանում են ու հանգչում
Հովիտ, անտառ ու ձորակ...

ԺԳ

Հանկարծ ծղրիդը լռեց,
Նվագ ու պար դադարեց,
Քամին թողեց ու գնաց
Դեպի անտառն էն քնած...

1) Մանրիկ։

ԺԴ

Գարուրեցին թիթեռներին
Թերթիկները մեխակի.
Ու մեղմ հնչեց վարդի թփից
Քաղցր երգը սոխակի...

Նա երգում էր՝ վարդին փարված՝
Սե՛ր, վայելքնե՛ր ու գարո՛ւն...
Մինչ քուն մտած հողնա՛ծ, տարվա՛ծ
Ծաղիկները գալարուն...

Միայն սյուքով փսփսում են
Սարի ամբուլ ու սուսան[1])՝
Սուսիկ-փուսիկ դեռ լսում են
Էն սոխակին սիրատուն...

ԺԵ

Մայիսմեկին
Լուսածեգին
Բաժանվեցի ես քնից,
Ալ-փողկապով,
Ծիծաղ-ծափով
Դուրս վազեցի մեր տնից:

Հոծ շարքերով,
Բյուր երգերով
Տոն ենք տոնում մենք այսօր.—
Շողշողում են,
Փողփողում են
Դրոշները ալ-բոսոր...

Կենսաթրթիռ
Մի ինքնաթիռ

---

1) Սուսան—դեղին ծաղիկ:

Ճերմակ սունկեր[1] է թափում,—
Օրորալով,
Շորորալով
Նրանք իջնում են տափում...

Մեզ հետ քայլում,
Հպարտ փայլում
Մայր-Արևը մեր դարի,
Շող է տալիս,
Ցող է տալիս,
Որ խինդը մեր վարարի:

Խինդով արբած
Ու սրտաբաց
Ընթանում ենք միասին.
— Ողջո՛ւյն քեզ, կյա՛նք,
Անուշ ու թանկ,
Ողջո՛ւյն պայծա՛ռ մայիսին...

ԺԶ

Ընկերուհուս հետ մայիսյան մի օր
Զբոսնում էինք դաշտերում արձակ.
Արտերի ծովն էր ծփում մեղմօրոր
Ու փչում էր մեղմ քամին թևարձակ...

Շուրջը ծաղիկնե՛ր, անվե՛րջ ծաղիկներ.
Վերից նազելի արևն էր ծորում,
Զանգյուլումները՝ բացած բաժակներ,
Վառվռում էին դիմացի ձորում...

Ու մենք պսակներ այնտեղ հյուսեցինք
Ծաղկից— փաթեթով թարմ տերևների,
Տուն վերադարձանք ու պսակեցինք
Մեծ պատկերները Զո՛րս Արևների:

---

1) Պարաշյուտ:

ԶՎԱՐԹ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ՏԻԿԻՆ ՎԱՌՎԱՌԱ

(Մի պատկեր)

Նախշուն ու փափուկ դիվանի վերևում փակցված էր անտառ ու գետ պատկերող մի նկար: Անտառը ներկայացնում էր մուգ կանաչ գույնի ներկերի կուտակում, գետի մի ափին որսորդն էր իր շան հետ, հակառակ ափին՝ արջը՝ առջևի թաթերը բարձրացրած: Որսորդի հրացանը, որի փողից կրակ էր դուրս գալիս, ուղղված էր դեպի արջը: Մարդու ուսերը, մեջքը, հրացանը բարձրացնող թևը գրեթե նույն հաստությունն ունեին: Արջը և շունը հազիվ էին տարբերվում իրարից:

Այդ նկարը տիկին Վառվառան գնել էր շուկայում 10 ռուբլով և հարևաններին ասել.

— Տեսե՛ք, ի՜նչ հրաշալի նկար է, ո՞վ կասի, թե 10 ռուբլով է առնված:

Մյուս պատերին և այդ նկարի չորս կողմը փակցված էին ամեն տեսակի փոքր ու մեծ, տարբեր բովանդակություն ունեցող պատկերներ և բարեկամների լուսանկարներ: Անկյունում դաշնամուրն էր, կողքին՝ բուֆետը, մեջտեղը սեղանը և աթոռներ:

Տիկին Վառվառան նստած էր կարմրաթուշ, կապույտ, պայծառ աչքեր ու սպիտակ, բարձր ճակատ ունեցող մարդու դիմացը և ամեն անգամ բաժակը բարձրացնելիս գաղտագողի նրան էր նայում, հետո հերթով մյուսներին. գլխով նազելի շարժումներ էր անում, շնորհակալություն էր հայտնում իբրև

տանտիրուհի, կամ բարեմաղթում էր որևէ մեկի կենացը և դատարկում էր բաժակը մինչև վերջին կաթիլը:

Հյուրերը զրուցում էին, երգում, թամադան կենաց էր առաջարկում, մեկն ու մեկը ձայն էր խնդրում և գովում սեղանակիցներից որևէ մեկին: Ոչ մեկը մյուսի մասին վատ խոսք չէր ասում: Գինու սեղանի մոտ միայն գովասանքներ կարող էին լինել:

Տիկին Վառվառայի եղբայրը, որն այդ քաղաքն էր եկել գործուղումով, իջել էր քրոջ տունը և, համոզված լինելով, որ այստեղ իր պետին ցույց կտրվի պատշաճ հյուրասիրություն, նրան քարշ էր տվել իր հետ:

Այս առթիվ էլ կազմակերպվել էր քեֆը:

Տիկնոջ եղբայրը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք շուտ են հարբում, բայց երբեք չեն խոստովանում իրենց հարբած լինելը: Նա հանկարծ բարձրացրեց բաժակը և ուզեց վեր կենալ տեղից, որպեսզի կանգնած ճառի, բայց օրորվեց ու չկարողացավ ուղիղ կանգնել: Նրան համոզեցին նստած խոսել:

— Խոմ բեմի վրա չես,— ասաց մեկը:

Բայց նա ուղղակի վեր ընկավ տեղը և ասելիքը մոռանալով հանկարծ գոռաց.

— Շեկո՛, արի ըստեղ:

Խոսքը վերաբերում էր տիկին Վառվառայի 19 տարեկան աղջկան, որին չիկահեր լինելու պատճառով, «Շեկո» էին կանչում: Նա նստած էր սեղանից հեռու դռան մոտ դրված աթոռի վրա և միևնույն անտարբերությամբ նայում էր ինչպես սեղանի վրա շարված շշերին, այնպես էլ հյուրերին: Նրա մտքով անցավ գնալ քնելու, բայց վախեցավ թե մայրը հյուրերի մոտ կբարկանա իր վրա: Քեռու աղաղակից նա վեր թռավ, իսկ դեմքը միանգամից ապուշի արտահայտություն ընդունեց: Այդ պատճառով ընդհանուր ծիծաղ առաջացավ: Բոլորից բարձր ծիծաղում էր մայրը՝ տիկին Վառվառան: Նրա ծիծաղը հիշեցնում էր մեղուների բզզոցի մեջ գլորվող դատարկ տակառի գըլխգըլխոցը:

Տիկին Վառվառան կարծես առիթի էր սպասում ծիծաղելու համար: Նրա գեր, լայն ուսերը, կուրծքը, խաչած թևերի հետ միասին, բարձրանում և իջնում էին, իսկ աչքերը ծիծաղի մի-

Չից մի վայրկյան կանգ էին առնում կարմրաթուշ, պայծառ աչքերով մարդու վրա:

Հարբածը դարձյալ աղաղակեց:

— Տո՛, Շեկո, արի, ասում եմ:

«Շեկոն» ծուլորեն վեր կացավ տեղից, հայացքը շրջեց հյուրերի վրա, արհամարհանքով քիթը վեր քաշեց և առանց վիրավորանքը թաքցնելու գնաց մյուս սենյակը:

Բայց հյուրը գոռում էր.

— Տո չե՛կ, բա չգիտի դաշնամուր ածե՞ս, արի՛, թե չէ եկա ու գլուխդ ջարդեցի, ա՛յ: Եվ փորձեց վեր կենալ, բայց կրկին ընկավ աթոռին ու գլուխը դրեց կեղտոտ սփռոցի վրա:

«Շեկոն» գնաց մյուս սենյակը, նստեց հայելու առաջ և ինքն իրեն մռմռաց:

— Թե ինչ է հասկանում դաշնամուրից, որ նվագեմ իր համար:

— Շեկոյի գլուխը հողեմ հա՛, բա նա նվագո՞ղ ա, վոր կանչում ես:— Եվ տիկին Վառվառան հանկարծ բռնկվեց.— Մինն ելա մի բանի պետք չի: Դասերի մեջ՝ ծույլ, դաշնամուրն ըստի դրած՝ չեն նվագում, տանը մի գործ չեն անում, որ ասես մի բաժակ ջուր տուր, կսատկեն նստած տեղները:

Ամեն անգամ աղջիկների արատները թվելիս (տիկինը երեք աղջիկ ուներ) նա հանում էր ձեռքը ուսի տակից և համաչափ դնում ու բարձրացնում էր սեղանի վրա:

Դիմացը նստած մարդը, իր պայծառ, զարմացած աչքերով նայում էր տիկնոջը: Նա մինչ այդ չէր լսել, որ մայրերը հյուրերի առաջ այդքան անգթորեն վարկաբեկեն իրենց երեխաներին: Ընդհակառակը, նա իր կյանքի փորձից գիտեր, որ ամենակոպիտ մայրն անգամ օտարների մոտ աշխատում է գովել իր երեխաներին, մեղմացնել նրանց այս կամ այն հանցանքը: Բաժակը ձեռքին՝ նա ուզում էր թամադայից խոսք խնդրել, բայց զարմանքից և հետաքրքրությունից լսում էր տիկնոջը:

Տիկինը ոգևորվելով այդ հետաքրքրությունից՝ ուզում էր շարունակել իր «քննադատությունը», բայց հյուրերը ձանձրացան, իսկ երկաթուղայինը ձայն ստացավ և խնդրեց ծանոթացնել իրեն «ահա այն անկյունում» նստած երիտասարդի հետ:

Մշտապես լուռ նստած երիտասարդը վերցրեց իր բաժակը, խմեց երկաթուղայինի բաժակին, ներքին հարգանքով նայելով նրա աչքերին և ասաց, երբեմն կարծես խոսքերը կուլ տալով.

— Ավարտել եմ Մոսկվայում... ինժեներ եմ... 2 ամիս է եկել եմ... աշխատում եմ Քանաքեռշինում...

Երկաթուղայինը երիտասարդի հայացքում հարազատություն տեսավ և գուրգուրալից ժպտաց, ինչպես հայրն իր խելոք երեխայի վրա: Նրանք երկուսն էլ առանց խմելու տեղը դրին իրենց բաժակները:

Տիկին Վառվառայի եղբայրը բարձրացրեց գլուխը, կարմրած, շաղված աչքերը մի պահ շրջեց այս ու այն կողմը և սկսեց անհեթեթ կերպով մռմռալ անորոշ եղանակներ, որոնք հետո դարձան որոշակի երգ:

«Յարս էլ ինձնից խռովել ա»...

Նստածներից մի քանիսը ձայնակցեցին: Տիկին Վառվառան նկատել էր, որ երկաթուղայինի համազգեստով մարդն իրեն այլևս չի նայում նախկին ուշադրությամբ, այդ պատճառով զարմացել էր՝ «տեսնես ինչո՛ւ»: Աշխատելով նորից արժանանալ ուշադրության՝ նա ձայնակցեց երգին, երգելով բոլորից բարձր և բարակ ձայնով, որպեսզի ցույց տա իր ձայնի առավելությունը: Բայց այդ ավելի հիասթափեցրեց նրա եղբոր պետին, որովհետև տիկինը երգում էր կեղծ-կոկորդային ձայնով: Այդ ձայնը հիշեցնում էր կատվի երկար, միալար մլավոցը:

Երգից հետո տիկին Վառվառան սպասում էր, որ իրեն կառաջարկեն «սոլո» երգել, բայց այդպիսի առաջարկ չեղավ: Այդ պատճառով նա մի փոքր տխրեց, բայց աշխատեց ցույց տալ, թե երգը վրան տխուր տպավորություն գործեց:

Տիկնոջ ամուսինը նստած էր սեղանի վերևի անկյունում: Երկու հաղթանդամ մարդկանց արանքում նա հազիվ էր երևում և շարունակ լուռ էր ու մտածկոտ: Նրա հանկարծակի ժպիտը, ուրախությունը, ծիծաղը կեղծ էին: Նա պարզապես ուզում էր ցույց տալ հյուրերին, թե ինքը մի անհոգ ու պարզամիտ մարդ է, բայց ներքուստ նա շատ բան էր տեսնում ու մտածում:

Ընդամենը մի քանի տարի առաջ նա փակել էր իր մասնավոր կոշկակարի խանութը քաղաքի կենտրոնում, մտել էր արտել, որտեղ լավ վարպետի համարում էր ձեռք բերել, առաջ էր

քաշվել, որպես ձևող և պատվեր ընդունող: Նա նյութապես ապահովված էր առաջվանից ավելի, որովհետև տանը նույնպես մասնավոր պատվերներ էր ընդունում, իսկ արտելում՝ «փոքրիկ նվերներ»՝ պատվերները շուտ և լավ կատարելու համար:

Արտելի կոլեկտիվը համառորեն հետևում էր վարպետին և նա կամաց-կամաց, բացի իր այս ընտանիքից, իրեն զգում էր նաև մի այլ ընտանիքի՝ արտելի ընտանիքի անդամ:

Քեֆի ժամանակ նրան դուր չէր գալիս իր կնոջ վերաբերմունքը տղամարդկանց նկատմամբ: Նա անտարբեր էր ձևանում և ավելի մտահոգված էր աղջիկների շնորհքը ցույց տալու հյուրերին, բայց աղջիկները նրան էլ չէին լսում: Որոշեց միջնակ աղջկան մի կերպ պարել տալ, բայց այդ րոպեին տիկինը աչքերով ցույց տվեց դատարկ շշերը: Հարկավոր էր գինի բերել:

Հայրը վեր կացավ և մյուս սենյակը կանչեց աղջկան: Մայրը նախապես գիտենալով, որ աղջիկը կարող էր հրաժարվել գնալուց և անախորժություն առաջացնել, գնաց նրանց հետևից:

Ամուսինը սովոր շարժումով գրպանից փող էր հանում: Առանձնացնելով 30 ռուբլիանոցը, մնացածը նույն սովոր շարժումով գրպանը դրեց: Աղջիկը չէմ ու չում էր անում՝ սև, խոշոր աչքերը ուղղելով մոր վրա:

— Էս ժամանակ ես ո՞ւր գնամ, ո՞րտեղից գինի բերեմ:

— Գինի ցավի դաս, քո գլուխն էլ հողեմ,— ձայնը կեղծելով, որպեսզի ցածր խոսի, ասաց տիկինը:— Գնա՛ էս րոպեիս, թե չէ գլուխդ կջարդեմ:

Աղջիկը արագ վերցրեց փողը և դուրս գնաց:

— Մի քիչ էլ կալբասա կառնես, ա՛յ աղջիկ,— հետևից կանչեց մայրը տանից դուրս գալով:

Ամուսինը ևս մի րոպեով դուրս եկավ:

Լուսնյակ ու պարզ գիշեր էր, բայց լույսից հազիվ էր բաժին ընկնում այս ընտանիքին, որովհետև նրանք իրենց դռան առաջ, բակի տարածության հաշվին, նեղլիկ ու ցածր պատշգամբ էին շինել «հարևանների ճանապարհն իրենց դռնից կտրելու համար»:

Ամուսինների միջև այսպիսի խոսակցություն սկսվեց:

— Չեմ հասկանում, թե էլ ո՛ր օրվա համար ես փողերդ

պահում, որ էսպիսի մարդկանց էլ չես ուզում կարգին պատվել: Կուսակցական է, բարձր պաշտոն ունի, Նիկոլն ասում է մեծ ավտորիտետ ունի, կայարանի գործերը դիփ ձեռքին են: Ասում եմ բալքի մի քիչ ածուխ առնել տանք ձմեռվա համար: Մեկի էդ էլ որ չլի, պակա՞ս բան է այդպիսի ծանոթներ ունենալ:

— Է, ո՞վ փող խնայեց որ,— փոքր ինչ խեղճացավ ամուսինը: Բայց հանկարծ դեմքը դարձրեց դեպի կինը, ատելությամբ նայեց նրան և ավելացրեց:— Համ էլ, ի՞նչ է, փողը ջո՞ւրն է բերում:

Տիկնոջը շատ տարօրինակ թվաց ամուսնու վերջին խոսքը և այն, որ նա միանգամից բռնկվեց ու բարձրացրեց ձայնը.

— Ո՞նց թե. դա ի՞նչ խոսք է: Իմ ի՞նչ գործն է, թե փողն ի՞նչն է բերում: Չլինի՞ թե տղամարդը ես եմ ու ես պիտի փող աշխատեմ: Առանց էդ էլ ամեն ինչի համար պիտի բղեն, անպատճառ ես պիտի ասեմ թե գինի բերել տուր: Ինքդ խոմ ոչինչ չես ասում:

Եվ պատասխանի չսպասելով՝ հաղթականորեն բաց արեց դուռն ու ներս մտավ: Նա գնաց մյուս սենյակը, նստեց փոքր հանգստանալու և զարմացավ, որ թույլ է տվել իրեն այդքան ժամանակ նստել հյուրերի մոտ գզգզված մազերով, կարմրած դեմքով, ունքերն առանց ուղղելու, առանց շրթունքները ներկելու:

Նրա նոսր, ցանցառ, փոքր ինչ գանգուր մազերն անհեթեթ կերպով վեր էին ցցվել, աչքերը խորացել ու պարզ երևում էին կնճիռները: Գեղեցիկ էր տիկնոջ միայն բերանը, որը փոքր էր դեմքի համեմատությամբ, բայց լավ դիտող աչքը նկատում էր, որ չարություն ու նախանձ էին արտահայտում այդ ամուր սեղմված ու ճարպոտ բերանի անկյունները:

Ընդամենը մի քանի րոպեում վարժ շարժումներով տիկինն արդեն կարգի բերեց իրեն, ծածկեց կնճիռները կրեմով ու պուդրայով, հարդարեց մազերն ու ձեռքով ալիքներ սարքեց գլխին, բարակ, երկար, կիսաշրջաձև ձևով ունքեր շինեց, ապա ետ դարձավ, որպեսզի դիմացի մեծ հայելու մեջ տեսնի հասակը: Նրան այնքան էլ դուր չեկավ իր հսկայական ճար-

պակասած փորը: Ապա տիկինը երևաց դռների մեջ և, որպեսզի աննկատելի մնար իր բացակայության իսկական պատճառը, ասաց.

— Ասացի բալքի են սատկածին կանչեմ դաշնամուրի վրա նվագի, բայց էնպես է մեկնվել, ոնց որ շունչ չլինի բերանում: Ես դրանց գլուխը հողեմ, չունենամ դրանց պեսը, հա՛:

Տիկինն այնպես էր շեշտում յուրաքանչյուր բառը և այնպիսի թշնամանքով, որ հյուրերը հազիվ գլխի ընկան, որ տիկինը խոսում է իր աղջկա մասին: Իսկապես, տիկինը վերջերս թշնամացել էր աղջկա հետ: «Շեկոն» ծաղրում էր մոր վուալը, հաստ ու դուրս ցցված փորի վրա գոտի կապելը: Ամեն առիթով հոր ներկայությամբ, ասում էր, որ մայրն ամեն բան իրեն համար է անում, իսկ իրենք նույնիսկ չուլքի չունեն, մինչև կոշիկները բոլորովին չմաշվեն, իրենց կոշիկ չեն կարում, իսկ մայրը չորս զույգ ունի և այլն: Տիկինը զգում էր, որ աղջիկները քանի մեծանում երես են դարձնում իրենից: Բայց նա վախենում էր նաև ամուսնու վստահությունը կորցնել և այդ էր պատճառը, որ աղջիկներին առիթով ու անառիթ վատաբանում էր:

Հյուրերից մեկը հիշելով շիկահեր, գեղեցիկ ու բարեկազմ օրիորդին, և ըստ երևույթին ներողամտորեն մոտածելով նրա արհամարհական վերաբերմունքի մասին, ասավ.

— Քանի տարեկան է ձեր մեծ աղջիկը:

— Քսան տարեկան եքա էշ ա արդեն, խոմ փոքր չէ,— փոքր-ինչ անհարմար զգալով իր արտահայտությունից ու վերջում ցածրացնելով ձայնը, ասաց տիկինը:

— Օհո՛, արդեն կարգին աղջիկ է, բայց դուք շատ երիտասարդ եք երևում... և հանկարծ այդքան մեծ աղջիկ...

— Հա, դե... էնքան էլ մեծ չեմ,— ակնհայտ բավականությամբ և կեղծ համեստությամբ ասաց տիկինը: Ինը հայուր թվի ծնված եմ էլի, էնքան որ շուտ եմ ամուսնացել:

— Ինը հարյուր,— հանկարծ վեր թռավ տիկնոջ հարբած եղբայրը: Դու ինձանից չորս տարով մեծ չե՞ս: Ինը հարյուր թվի ծնվածը ես եմ:

— Սարսաղ-սարսաղ մի՛ խոսա: Դու որ մեծ ես դրվում ես մեղավոր ե՞մ:

Տիկինն ուզում էր էլի ինչ որ բան ասել, բայց եղբայրը կտրեց նրա խոսքը:

— Ծննդականո՞վ է, թե՞ զոռով,— հռհռաց նա:— Սպասեք մի... Եվ նա ուզում էր գրպանից հանել երևի իր փաստաթղթերը կամ ծննդականը, բայց երկաթուղայինը կտրեց նրա խոսքը, չթաքցնելով ժպիտը:

— Սպասիր, Նիկոլայ, դրա ժամանակը չէ, Օֆիկն ուզում է երգել:

Օֆիկը վարպետի փոքր աղջիկն էր, որն իսկապես ուզում էր երգել, բայց սպասում էր, որ խնդրեն: Նրան իրոք խնդրեցին: Մի քիչ թափ տվեց ուսերը, փոխեց նստած տեղը, բայց վերջ ի վերջո խոշոր, շագանակագույն աչքերը դեպի առաստաղը բարձրացրեց ու սկսեց...

«Ես թոքախտով հիվանդ պառկած»...

Երգում էր տխուր և շարունակ կրկնվող եղանակով, բայց մանկական բարակ ու հաճելի կրծքային ձայնով:

Մայրը դարձյալ խաչել էր ձեռները և տխրությամբ օրորվում էր ու դնդնում աղջկա հետ: Դա նրա սիրած երգն էր:

— Լավ ձայն ունի,— ասաց երկաթուղայինը, բայց ինչո՞ւ եք այդպիսի տխուր երգեր սովորեցրել երեխային,— դիմեց նա առաջին անգամ հորը:

Վարպետը խոսք էր որոնում պատասխանելու, բայց տիկին Վառվառան ավելի շուտ գտավ այն:

— Մենք ենք սովորեցրե՞լ: Ինքն է սովորել, հողեմ ես դրա գլուխը: Իրա գլխի է, ինչ ուզում է, էն էլ անում է:

Ընդհանրապես նկատվում էր, որ տիկինը խուսափում էր իր երեխաների մեղքերի համար պատասխանատու լինելուց: Նա վախենում էր, որ ուրիշները կսկսեն խոսել իր աղջիկների մասին, հարևանները, բարեկամները, կպատմեն, որ նրանք մանր իրեր են վերցնում հարևանների տներից, շուկայից որևէ բան գնելուց հետո մանր դրամը չեն վերադարձնում, իսկ ավելի հաճախ երկու կիլոյի փոխարեն կիլո ու կես են առնում, մնացած դրամը թաքցնում են, դաս երբեք չեն սովորում, որովհետև մայրը նրանց է անել տալիս տնային ամբողջ գործը, նույնիսկ ամանները լվանալը, իսկ ինքն ամբողջ օրը ման է գալիս շուկայում կամ Ունիվերմագում և գնումներ է անում համարյա

միշտ իր համար։ Կպատմեն, թե ինչպես տիկնոջ մեծ աղջիկը խրավացիորեն ըմբոստանում է մոր դեմ, չի լսում նրան և այլն, և այլն։

Այս էր պատճառը, որ տիկինն առաջ ինքն էր խոսում իր աղջիկների մասին և գործ էր դնում խոսելու իր ամբողջ ճարտարությունը, որպեսզի արդարացնի իրեն։ Եվ ամեն տեղ ու չարքաշ տիկին Վարվառան վերջում ավելացնում էր։

— Երեխան իրենից պիտի լավ լինի, ծնողներն ինչ հող տան իրենց գլխին։

Բայց այդ օրվա հյուրերին տիկին Վարվառան լավ չէր հասկանում և ինչ որ վախ էր զգում նրանցից իր անձի նկատմամբ։ Երկուսն ինտելիգենտ մարդիկ էին։ Նրանցից մեկը, որի հետ ծանոթացավ երկաթուղայինը, իր ամուսնու հեռավոր բարեկամներից էր։ Նա երիտասարդ էր, բայց քունքերի մոտ արդեն սպիտակ մազեր ուներ։ Շարունակ լուռ էր։ Քիչ էր խմում և շատ ծխում և, ի զարմանս տիկնոջ, չէր պարծենում իր Մոսկվայում ավարտած լինելու հանգամանքով, չէր պատմում այնտեղի նորությունների մասին, ոչնչով չէր ցույց տալիս իր ինժեներ լինելը։ Մյուսը երկաթուղայինը, գեղեցիկ, լավ պաշտոնի տեր, իր եղբոր պեսն էր։ Պարզ մարդ էր, բայց այդ պարզությունը միանգամայն տարօրինակ էր տիկնոջ համար։ Նա պարզը հասկանում էր իր պես... խոսել ամեն բանի մասին, ինչի մասին խոսակցություն կսկսվի և հայտնել իր կարծիքը, որին պետք է հավանություն տային ներկաները, որովհետև իր մտքերը նրան համառորեն ճիշտ էին թվում։ Սիրում էր նաև հակաճառել և ամուր մնալ իր կարծիքի վրա նաև այն ժամանակ, երբ զգում էր, որ սխալ բան ասաց, որովհետև կարծում էր, եթե սխալն ընդունի, կկարծեն, թե անհասկացող է և վախկոտ։

Մոսկվայից եկած ուսանողը, որ նայում էր բազմոցի վրա այժմ անշարժ նստած Օֆելիային, հանկարծ հարցրեց.

— Իսկ դու մի՞թե չգիտես «Կախովկայի մասին» երգը, Օֆիկ։

Օֆիկն աշխուժացավ։

— Գիտեմ, բայց մաման ասում է տունը մարշ անելու տեղ չի։

Ուսանողն առաջին անգամ ծիծաղեց՝ առանց տիկնոջը նայելու։

— Բայց դա ի՞նչ մարշ է, դա հրաշալի երգ է, առենք թե հենց մարշ լինի, ինչ կա որ, արի, Օֆելիա, երգենք միասին։

Եվ նա ծխեց, ապա հանեց ծխախոտը բերանից և դրեց մոխրամանի մեջ։

— Ես քո գլուխդ հողեմ, ես ըտենց բան եմ ասե՞լ, աղջի,— ասաց տիկինը կարմրելով և վախենալով, որ կարող են իրեն ադեսի տեղ դնել՝ անհրաժեշտ համարեց որևէ կերպ հերքել աղջկա ասածը։

— Ես էդ ասել եմ «Եսլի զավտրա վայնայի» մասին։

Եվ ծիծաղեց բարձր ու կեղծ, ցույց տալով բերանի երկու անկյուններում շարված ոսկե ատամները։

Հյուրերից մի քանիսը ժպտացին։ Կարոն, վարպետի մոտիկ ընկերը, որ մոտ հարաբերություններ ուներ նրա ընտանիքի հետ, մռայլվեց, որովհետև նա չէր սիրում այսպիսի երգեր և պատրաստվում էր երգել «վայ տիկ–տիկ ջան տիկտիկ»-ը։

Իսկ երկաթուղայինը, որ ավելի էր պայծառացել, շտապեցնում էր երգողներին։

— Դե, տեսնենք ձեր շնորհքը, չո՛ւտ։

Ուսանողն Օֆելիային կանչեց իր մոտ, որովհետև ուրիշ աթոռ չկար, նստեցրեց իր կողքին և սկսեցին։

Երկաթուղայինն աչքը հառել էր մի կետի, մի ձեռքով շոյում էր սպիտակող մազերը, իսկ մյուսը հանգիստ դրել էր ազդրին և թվում էր, թե չի տեսնում, ոչ սեղանը, ոչ այնտեղ նստած մարդկանց։ Երգը նրա համար գալիս էր հեռուներից, նաև՛ հաղթական էր, և՛ մեղմ ու լիրիկական, և հիշեցնում էր սիրելի ու անմոռանալի դեմքեր։

Իսկ տիկին Վարվառան բան չէր հասկանում։ Նա ավելի շատ երկաթուղայինի դեմքով էր ազդվել, քան երգով և կեղծ տխուր ժպիտով օրորվում էր ինչպես առաջին երգի ժամանակ։

Երգը վերջանալու վրա էր, երբ եկավ գինու գնացած աղջիկը։ Նրա ետևից ներս մտավ նաև մի ուրիշ երիտասարդ մարդ։ Գունատ, անկնճիռ դեմքով, երկար քթով, ներս ընկած անփայլ

աչքերով, իսկ երբ գլխարկը վերցրեց, երևաց քունքերի վերևում դուրս ցցված ճակատով ճաղատացող գլուխը և անհնազանդ, խռիվ մազերը: Նա քաղաքավարությամբ ու ժպտալով բարևեց, բարևելիս նույնիսկ մի փոքր կռացավ և առաջացավ դեպի սեղանը, որտեղ դանդաղորեն ու զարմացած աշխատում էին նրան տեղ բաց անել:

Բայց տիկին Վարվառան, որ վայրկենապես պայծառացել էր այս հայտնությունից, վեր կացավ տեղից, մտերմաբար ժպտալով ու նայելով երիտասարդի աչքերի մեջ, առաջարկեց իր տեղը և միանգամից փոխեց դեմքի արտահայտությունը, խստացնելով այն, երբ դարձավ աղջկան:

— Գնա հարևանից մի աթոռ բեր:

Ինքն շտապեց մյուս աղջկա ետևից, որ հարևան սենյակում տուալետի սեղանի վրա էր դարսում գինիները:

— Աղջի, Պետրոսին ո՞րտեղ պատահեցիր,— վրա պրծավ նա:

— Աբովյանում մենակ ման էր գալիս, ինձ տեսավ, ասեց մամեդ ո՞րտեղ է, ասացի տանը քեֆ են անում, արի գնանք, ինքն էլ եկավ:

— Ասեց մամեդ ո՞րտեղ է,— հափշտակված հարցրեց տիկինը և վերցնելով գինու երկու շշերը, մոտավ հյուրերի մոտ:

Տիկնոջ ամուսինը և նրա ընկերը՝ Կարոն մռայլվել էին:

Մի ամբողջ տարի էր Վարպետը տանջվում էր այդ երիտասարդին տեսնելիս կամ նրա գոյության մասին հիշելիս: Դեպքն այսպես էր տեղի ունեցել:

Վարպետն ամեն տարի ամառն իր ընտանիքն ամառանոց էր ուղարկում, որտեղ ապրում էին Պետրոսի ծնողները: Պետրոսը մի մեծ խանութի գլխավոր գործակատար էր:

Երիտասարդն իբրև նրանց հեռավոր բարեկամ, օգտվելով ձրի ուղևորությունից (բեռնատար ավտո, որ Վարպետը ճարում էր ծանոթների միջոցով), արձակուրդ էր վերցնում և նրանց հետ միասին գնում էր ամառանոց:

Հեռավոր բարեկամությունը, որ ուրիշ դեպքերում կարող էր նույնիսկ ծանոթություն չստեղծել, դարձել էր մոտիկ բարեկամություն:

Ամառային մի օր տիկին Վարվառան իր աղջիկներով ու

բարեկամներով զբոսանքի էր գնացել: Մի գեղեցիկ, կանաչազարդ բացատում նրանք խաղ էին սարքել: Խաղում էին «Ումն ես ցանկանում» անմիտ մի խաղ:

Տիկին Վարվառան առաջներում շատ չէր սիրում այդպիսի խաղեր, բայց այդ օրվանից նա դարձավ այդ խաղի սիրահարը, որովհետև երբ երիտասարդը թափով եկավ ու խփեց տիկնոջ թևին, նրա մարմնով էլեկտրական հոսանք անցավ և երբ երիտասարդը հաղթանակով բռնեց նրա թևից ու մտավ շրջան, տիկինն այլևս չէր կարողանում զսպել իր ուրախությունը, իսկ երբ նայում էր երիտասարդի աչքերին, ցանկությունից այրվում էր: Ծիծաղում էր բոլորից բարձր, գլգլոցով ու խլացնում էր մյուսների ձայները: Երիտասարդի մեջ էլ այդ րոպեից փոփոխություն կատարվեց: Օգտվելով այն հանգամանքից, որ տիկին Վարվառան ամոթխած օրիորդ չէր, ինչպես իրեն ծանոթ օրիորդները, իսկ ինքն արդեն 28 տարեկան էր, նա ամուր թևանցուկ էր անում տիկնոջը և ման էր գալիս ամառանոցի մութ փողոցներում, ծածկվելով խիտ ծառերի գիշերային ստվերներում: Իսկ երբ քաղաք վերադարձան, նա ցերեկներն էր այցելում տիկնոջը, երբ նրա ամուսինն աշխատանքի էր գնում, իսկ աղջիկները դպրոց: Տիկինն իր հերթին առիթ էր որոնում երեկոները տանից դուրս գալու: Արագ ու հանդիսավոր քայլվածքով բարձրանում էր Աբովյան փողոցով, հանդիպում էր Պետրոսին և գնում նրա հետ կինո կամ այլ տեղ:

Երբեմն նա աղջիկներից մեկին ու մեկին հետն էր տանում, որպեսզի բարեկամներն ու ծանոթները չկասկածեն: Կինոյում նրանց ազատ էր արձակում, իսկ ինքը երիտասարդի հետ մտնում էր լոժա:

Նստում էին իրար սեղմված և փսփսում էին:

Բայց երկար թաքցնել չէր կարելի: Շշուկները հասնում էին ամուսնուն ու նրա ընկերներին: Հարևանները, ծանոթներն ու բարեկամները բամբասում էին, իսկ ամուսնու մոտիկ ընկերը, Կարոն, ընկերոջ «նամուսի խաթեր» թասիբ էր պահում»:

Նա տեսնելով երիտասարդին որոշեց այս երեկո առիթը բաց չթողնել:

Պետրոս Կալոյանը երկու բաժակ խմելուց հետո արդեն հարբել էր: Եվ երբ առաջարկեցին նրա ծնողների կենացը, վերցրեց իր բաժակը, նայեց բաժակի խորքը ու հանկարծ գոռաց.

— Ես չեմ խնդրում, այլ հրամայում եմ: Բոլորդ լցրեք բաժակները և պարտավոր եք խմել մինչև տակը: Խմում ենք Պետրոս Կալոյանի հոր, այսինքն, իմ հոր (նա բռունցքով ուժգին հարվածեց կրծքին) Գևորգ Կալոյանի՝ առաջիններում փինաչի, ներկայումս կոլխոզնիկ, հարազատ խորհրդային քաղաքացի Գևորգ Կալոյանի կենացը: Իսկ ով որ բաժակը մինչև տակը չխմի, նրա հերն էլ անիծած:

Կարոն համբերությունից դուրս եկավ:

— Ձենդ կտրի՛, ծծկեր, սրա խոսալուն մտիկ: Քո հերն էլ անիծած, մի բան էլ ավել: Ես չեմ խմում ոչ քո, ոչ էլ քո հոր կենացը:

Երիտասարդը վեր թռավ տեղից: Տիկինն իրար խառնվեց: Նա բռնեց Պետրոսի ուսերից և իր թե ուժով նստեցրեց, բայց վերջինս նորից վեր թռավ տեղից և ուղղվելով հանկարծ ձեռքի բաժակն ուժով խփեց սեղանին: Կարմիր գինին ներկեց սփռոցի ահագին տարածությունը:

— Տո՛, դու ո՞վ ես է՛, որ գլխիցդ մեծ-մեծ դուրս ես տալիս: Ես քեզ ըսկի մարդատեղ էլ չեմ դնում:

— Մարդատեղ չե՞ս դնում... սաղո՛լ...

Կարոն քմծիծաղ տվեց: Ասես վայրկենապես նրա քթածակերը փքվեցին, կարմրեց մինչև ճնճղուկի թևերի պես դողդղած ականջները և հանկարծ դեպի Պետրոսը մեկնեց իր հսկայական, ամուր սեղմած երկաթյա բռունցքը:

— Դե, բա՛ց արա, քո հոր...

Հյուրերն իրար անցան: Մինչև իսկ հարբած եղբայրը բարձրացավ, որպեսզի բռնի Պետրոսին և թույլ չտա բաց անել բռունցքը: Տիկինը բռնում էր Պետրոսի ուսերից, քաշում էր դեմքին, աշխատում էր հանգստացնել: Կարոյին ոչ ոք չէր բռնում, որովհետև նա հանգիստ էր և մի կատարյալ հսկայի պես ցցվել էր ու սեղանի վրա պահել էր դեռևս ամուր սեղմած բռունցքը: Անշարժ և կնճռոտված նստել էր տիկնոջ ամուսինը և ոչ ոքի չէր նայում: Սպասում էր, որ երիտասարդը հասկանալով իր աննպաստ դրությունը, կթողնի ու կհեռանա: Տեղից կանգնել էր երկաթուղայինը, ձեռները շալվարի գրպաններում դրած, պիջակի օձիքը թեթև արձակած, հոնքերի արանքում հավաքած կնճիռներով և իր կապույտ, պարզ, բայց խորունկ աչքերը հառել էր երիտասարդին: Կարծես բան էր ուզում ասել, բայց դեռ լռում էր:

Գործակատարն հանկարծ հանգստացավ:

— Լսե՛ք, ես չեմ եկել քեզ հետ խոսելու է՛ (նա մատնացույց արեց Կարոյին), ես եկել եմ տանտիրոջն այցելելու: Ես նրան այնքան եմ հարգում, նա ինձ այնքան պատիվ է տվել: Ես նրա հետ առաջին անգամը չեմ քեֆ անում: Թողեք, ես պետք է համբուրեմ նրան: Եվ ձգվեց դեպի տանտերը:

Բայց վարպետը, առանց նրան նայելու թևով հրեց և ասաց.

— Բավական է, վերջ տուր երեխայությանդ:

Կարոն բոլորովին կատաղել էր:

— Տո՛, քեզ չեմ ասո՞ւմ, աննամո՛ւս, կամ բաց արա ձեռքս, կամ ռադ էղիր ըստեղից: Չես տեսնո՞ւմ, չե՛ն ուզում հետդ խոսան է՛լի:

Երիտասարդը չլսելու տվեց:

— Չէ՛, ես պետք է համբուրեմ:

Տանտերը կրկին զզվանքով ետ հրեց նրան: Երիտասարդին դեպի այդ քայլը մղում էր այն միտքը, թե ինքը տանտիրոջ հետ հաշտվելով, կցրի կասկածները իր և տիկնոջ փոխհարաբերությունների մասին և երբ տեսավ, որ այդ չի հաջողվում, անկեղծորեն խեղճացավ: Նա թույլ կախ գցեց թևերը և մնաց կանգնած:

Այդ ժամանակ երկաթուղայինը դանդաղ ետ հրեց իր աթոռը, մոտեցավ երիտասարդին և հանգիստ, բայց փոքր ինչ հանդիմանանքով ասաց.

— Դուք լավ կանեիք, որ հեռանայիք այստեղից, երիտասարդ:

Երիտասարդը նրան նայեց այնպես, կարծես նոր միայն տեսավ այդ մարդուն: Բայց նա չէր ուզում իրեն ստորացնել: Նա ուզում էր ներշնչել հյուրերին, որ իրեն դուրս չեն տանում, որ նա միշտ այստեղ եկել է և կգա:

— Ի՞նչ, ես այս տան բարեկամն եմ, ես եկել եմ հաշտվելու,— գոռաց նա և արդեն կիսատված գինու բաժակը նորից խփեց սեղանին:

Տիկինը հանգստացնում էր: Նա մի փոքր վատ էր զգում իրեն ղալմաղալի համար, բայց և հաճելի էր այս բոլորը, որովհետև երիտասարդին նա մտքում հերոսացնում էր, կարծում էր, թե նա իր համար է կրում այդ վիրավորանքները և ուրախ էր նրա ներկայության համար: Միաժամանակ վախենում էր Կարոյից: Հանկարծ կարող էր մանրամասնություններ ասել, ամուսինը դուրս կաներ իրեն տանից, այն ժամանակ ինչպե՞ս, ինչո՞վ պետք է ապրեր տիկին Վարվառան:

— Դե՛հ, հանգստացե՛ք, հանգստացե՛ք, ինչ պատահեց որ, Կարո ջան, խոմ երեխա չե՛ս, նստիր:

Երիտասարդը խոցվեց, մանավանդ «Կարո ջան, խոսքերից: Նա կարծում էր, թե վերջին րոպեին տիկինը, որպես իր տանը մի կատարյալ իշխանուհի, կբարկանա բոլորի վրա, կհրամայի «վեր ընկնել իրենց տեղերը», իսկ իրեն կխնդրի նստել և շարունակել քեֆը:

Բայց այդ ժամանակ հանկարծ տաքացավ նաև տիկնոջ եղբայրը...

— Սրա բարեկամն էր էն սրիկան, որ չթողեց ինձ կուսակցության մեջ անցնեի: Դո՛ւրս գնա էստեղից, դո՛ւրս, քո ցեղի...

Եվ նա հարձակվեց Պետրոսի վրա: Երկաթուղայինը բռնեց նրան, իսկ երիտասարդին, որն այժմ հուսահատությունից հավաքել էր իր վերջին ուժերը և պատրաստ էր խփելու, համարյա գրկած, զոռով դուրս տարան սենյակից:

Երբ տիկինը և երիտասարդի հետ դուրս եկավ սենյակից, ամուսինը լուռ նստած սկսեց եղունգները կրծոտել:

Բակի դռան մոտ երիտասարդը ետ նայեց և տեսնելով տիկնոջը, արհամարհանքով շպրտեց.

— Գնա՛, գնա՛, քեզ էլ տեսանք:— Ու արագ հեռացավ: Նա իրեն հանգստացած զգաց:

Իսկ տիկինն այնպես խոցվեց այդ վերաբերմունքից ու խոսքերից, որ մինչև սենյակի դուռը բաց անելը մտածում էր վրեժի մասին:

Եղբայրը շարունակում էր իր հայհոյանքները երիտասարդի ու նրա բարեկամի հասցեին:

— Ցեղով են էդպես դրսից կեղծավոր են, ներսից մարդու տունն են քանդում: 32 թվին էր: Ես աշխատում էի սովխոզում, բրիգադիր էի, կարգին ավտորիտետ ունեի, կազմակերպությունն ինձ ընդունեց կուսակցության մեջ: Գործս հասավ շրջկոմ, կանչեցին: Գնացի, տեսնեմ էդ Վահանն էլ ա էնտեղ (խոսքը վերաբերում էր Պետրոսի ամենահեռավոր ազգականներից մեկին, որին նա նույնիսկ լավ չէր ճանաչում): Տեսա թե չէ, ուրախացա: Արա, Վահան,— ասում եմ,— դու էստեղ ես, էդ հո շատ լավ է: Գործս էսօր քննում են, դու գիտես: Գնացի ներս, ինչ որ պետքն էր պատմեցի կենսագրությունս, դուրս եկա մյուս սենյակը: Դե, մարդ ա էլի, հետաքրքրվեցի, ասի մի տեսնեմ ինչ է ասելու իմ մասին էդ Վահանը: Մեկ էլ ի՛նչ եմ լսում...

— Էդ մարդը արժանի չի մեր կուսակցությանը: Հերը մեր գյուղում չորս բատրակ էր պահում: Ինքը քաղաքում 25 թվին կոշիկի առևտրով էր պարապում, նույնիսկ կանդրաբանդ ապրանք էր տանում էս ու էն քաղաքը: Հետո, որովհետև քաղաքում ոչ մի տեղ գործի չընդունեցին, եկավ էստեղ, մտավ սովխոզ, որ բանվորական ստաժ ձեռք բերի, խցկվի կուսակցության մեջ: Ինքն էլ մի հարբեցողի մինն ա: Բա, ըսենց բաներ: Եվ ինձ չընդունեցին: Էդ օրվանից ես, կուսակցությանը հարազատ մարդ, դուրս եմ մնացել կուսշարքերից:

— Հոգեմ ես դրա գլուխը, հոգեմ,— ասաց տիկինը, որ դարձյալ ձեռքերը խաչել էր և նստել:— Թե ի՛նչ վնաս կունենար, իրա ի՛նչը կպակասեր, որ դու մտնեիր կուսակցության մեջ, լավություն անել չեն իմանում է՛լի, լավ ցավի դան դրանք:

— Գուցե ճիշտ է վարվել,— հանկարծ ասաց Մոսկվայից եկած ուսանողը և անմիջապես վեր կացավ, թափ տալով ծխախոտի մոխիրը մոխրամանի մեջ:— Ներողություն,— անտարբեր ասաց նա,— ես շատ մնացի, պետք է գնամ:

Երկաթուղայինը նույնպես անխոս վեր կացավ և գնաց դե-

պի կախարանը՝ վերարկուն վերցնելու: Այդ բանը խանգարեց տիկին Վառվառային և եղբորը՝ պաշտպանելու իրենց ուսանողի հայտնած կարծիքի դեմ: Նրանք, նաև տանտերը, վեր կացան՝ արգելելու երկաթուղայինին գնալ:

Տանտերը խնդրում էր.

— Էս ժամանակ ուր գնաք, գիշերեցեք այստեղ, արժե՞ այդ երեխայի պատճառով ընդհատել ուրախությունը:

Ուսանողն արդեն հագնվել էր և սպասում էր, բայց անհարմար էր զգում, միանգամից առաջարկելու երկաթուղայինին գնալ իր հետ: Չէ՞ որ նրանք ընդամենը մի երկու ժամվա ծանոթներ էին:

Երկաթուղայինը ձեռները գրպաններում մի քանի վայրկյան տատանվեց: Նա այստեղ բարեկամներ չուներ, արդեն ժամը 3-ն էր: Այս ընտանիքը նրան թվաց, եթե ոչ թշնամի, համենայն դեպս ո՛չ բարեկամ: Գուցե նորավարտ ինժեներն իրեն տաներ իր հետ, բայց նրանք հազիվ էին ծանոթ և այդ էլ անհարմար թվաց: «Մի գիշեր ոնց էլ լինի՝ կանցկացնենք» մտածեց նա և մնաց՝ աչքերով ուղեկցելով հեռացող երիտասարդին և բացահայտ կերպով տխրելով նրա գնալուց հետո:

Վարպետն աշխատանքի գնալուց առաջ սեղանի վրա թողեց 50 ռուբլի, որ տիկինն այդ օրը լավ ճաշ պատրաստի, որպեսզի հյուրի հետ խոսեն գործնական խնդիրների շուրջը և լուծեն ածուխի հարցը:

Վեր էին կացել նաև Օֆելյան ու հյուրը: Օֆելյան գրքերն էր պատրաստում դպրոց գնալու համար, իսկ հյուրը ման էր գալիս սենյակում և աչքերով փնտրում էր լվացարանը, որովհետև դրսում չէր գտել:

Հարևան սենյակից երևաց տիկինը:

— Ինչո՞ւ եք այդքան շուտ վեր կացել, կքնեիք էլի…

— Շնորհակալություն, ես լավ եմ քնել: Ո՞րտեղ կարելի է լվացվել:

— Դուրսը,— ասաց տիկինը ամաչելով և դառնալով Օֆելյային՝ բարկացած բղավեց:

— Աղջի՛, գնա ձեռներին ջուր լցրու… էն անտեր լվացարանն էլ չսարքեց խոմ… Ընենց ա փող հանում գրպանից, ոնց որ մսից կտրի: Ընենց մարդկանց մոտ էլ մարդու ամոթով ա անում:

— Ես դպրոցից ուշանում եմ,— ասաց Օֆելյան,— էսօր ժամը ութին ե դասերն սկսվում:

— Ութը ցավդ տանի, ես քու գլուխը հողեմ,— գոռաց տիկինը,— շուտ գնա ջուր լցրու:

Օֆելյան բաժակը հետը դուրս տարավ, լցրեց ջրով և մոտեցավ հյուրին:

Հյուրը հանդիստ վերցրեց բաժակը և ասաց.

— Դե, դու գնա, ես կլվացվեմ:

— Չէ, մաման կջղայնանա, թողեք լցնեմ:

— Գնա, գնա, Օֆելյա: Դու կարող ես դպրոցից ուշանալ: Այ, տես, ես ոնց եմ լվացվում:— Եվ հյուրը բաժակի ջրի կեսն առավ բերանը, ապա լցրեց իր երկու ձեռքով սարքած թասի մեջ ու սկսեց լվացվել:

Տիկինը դուրս եկավ նրա մոտ:

— Տեսնում եք, յաշչիկն արդեն պատրաստ է, բայց մուրճ չենք կարում ճարենք… մուրճի գործարանի դիրեկտորը խոստացել է, բայց…

— Իսկ դուք հասարակով յոլա գնացեք, մինչև մուրճը ճարվի, թե չէ Օֆելյան որ ամեն օր վեր կացողի ձեռքին ջուր լցնի, դպրոցից կարող է ուշանալ,— ասաց հյուրը ժպտալով և նայելով գրքերը թևի տակ դրած, հեռացող Օֆելյային:

— Հա՛, որ շուտ գնաց, դորդ ու բեչ ա անելու,— հակաճառեց մայրը և ներս մտավ:

Նա բղավեց մյուս աղջիկների վրա, որոնք ծմլում էին անկողնում:

— Վեր կացե՛ք, թե չէ կգամ, տեղներումդ կչորացնեմ:

Աղջիկները ծուլորեն վեր կացան:

Ինքը՝ տիկինը հագնվեց, պուդրա քսեց, կարգինկան շպրտեց միջնակ աղջկա ոտների մոտ, որը պատառոտված գուլպաների կրունկներն էր քաշում ոտների տակ և գոռաց.

— Մի՛ գլտվի, շուտ արա, վեր կաց ման արի, մի տես էս

անտեր գոտիս ու կաշեկյոկս ո՛րտեղ եմ դրել: Աղջի՛, դու է՛լ մաձ արի,— դիմեց նա մեծ աղջկան:

Ինքը նույնպես սկսեց փնտրել: Մի կերպ գտան. գոտին կապեց, նորից մի երկու անգամ նայեց հայելուն և դուրս գալով ասաց միջնակ աղջկան:

— Շուտ արա, կարգինկան վերցրու, արի բազար: Դուրս գալով մյուս սենյակը, որտեղ հյուրն իր սրատեսության շնորհիվ գտել էր պատուհանում վայր դրած երեսսրբիչը և սրբում էր, տիկինը հաճոյալից ժպտաց հյուրին և ասաց.

— Ես շուտով կգամ, բազար եմ գնում:

Հյուրը սրբեց երեսը ու ձեռները, կոճկեց օձիքը, սանրվեց, վերցրեց գլխարկը և մի հայացք գցելով՝ իր դեռ խմփացող աշխատակցի՝ տիկնոջ եղբոր վրա, պորտֆելը վերցրեց ու դուրս գնաց, այլևս այդ շեմքը չկոխելու որոշումով:

Մեծ աղջիկը սենյակի մեջտեղում կանգնած, լուռ դիտում էր հյուրին: Ասե՞լ, թե չասել, որ մնա թեյ խմի: Չէ՞ որ մայրիկը ոչինչ չէր պատվիրել:

Շուկա գնացողները վերադարձան:

Մայրը քանդեց գոտին և «կաշեկյոկն» հետ անկարգ շպրտեց մահճակալի վրա:

— Ո՞ւր ա գոնաղն, ա՛ղջի:

— Գնաց:

— Բա չասացի՞ր, որ մնա չայ խմի, կամ ճաշին գա:

— Չէ, դու բան չէիր ասել:

— Ո՞նց թե բան չէիր ասել,— գոռաց տիկինը և հարձակվեց աղջկա վրա: Նա փորձեց խփել նրա գլխին, բայց աղջիկը խույս տվեց:

Տիկինն ավելի կատաղեց: Նա առանց այդ էլ ջղայնացած էր, որովհետև փողոցում Պետրոսին էր պատահել, բայց վերջինս ավելի շուտ էր գլուխը շուռ տվել, քան տիկինը, որ պատրաստվում էր նույնն անել:

Նա վազեց աղջկա ետևից, որպեսզի ջղերը հանգստացնի նրան ծեծելով, բայց աղջիկը տանից դուրս փախավ:

Նա մի քանի րոպե շվարած նստեց հայելու առաջ: Ապա վճռաբար վեր կացավ ինքն իրեն խոսելով:

— Հայրաթ է՛լի կպատահենք,— ասաց նա Պետրոսի հասցեին: Նիկոլին էլ կուղարկեմ դռնապին կզանի, կբերի ճաշի:

Հետո մոտեցավ հայելուն, բաց արեց մազերի ծալքերը և սկսեց անգթորեն քաշել-հանել գլխից սպիտակ մազերը:

Ա.ՎՐՈՐԱ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՅԼԵՐԳ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ

Մեր հայրենի երկնքի տակ,
Լայն դաշտերում կոլխոզական,
Խոր ծովերում և անհատակ
Օվկիաններում անեզրական,
Մութ հանքերի խորշերում,
Թունելներում խոր ու մթին,—
Մեր բանակն է այսօր հսկում
Իր հաղթական ու մեծ երթին:

Բյուր աերոներ թռչում են վեր,
Ծովը ճեղքում հազար նավեր,
Շարք են մտնում գործարաններ,
Գետեր սանձող հիդրոշեններ,
Բյուր ավտոներ արագ սուրում,
Սլանում են դեպի հեռուն,—
Մեր բանակն է ղեկավարում
Երթը նրանց այնքան եռուն:

Նոր քաղաքներ, հսկա շենքեր,
Խիտ շարքերով ելնում են վեր,
Ժիր ու առույգ բացում դեմքեր
Հեղեղում են երկիրը մեր,
Ծաղկափթիթ գարնան նման

Կյանքն է ծփում հուր խնդությամբ,—
Մեր բանակն է նոր ապագան
Կռում, կոփում հերոսությամբ:

ԵՐԳ ՕԴԱՉՈՒԻ

Միշտ բա՛րձըր, միշտ վե՛րը, դեպ վե՛րը
Թռի՛ր դու պողպատ իմ թռչուն,
Պարզիր զույգ ամուր քո թևերը
Ու երգըդ երգիր դու հնչուն:

Ամպերը պատում են եթերը,
Քամին է ոռնում իր երգով,
Թափվում են վարդի բյուր թերթերը,
Ամպրոպն է ճայթում երկընքով:

Ճեղքի՛ր դու ամպոտ այս երկինքը,
Հոլինդըդ իշխի թող այնտեղ,
Մեզ ի՞նչ փույթ ամպրոպն ու շոինդը,
Մեզ ի՞նչ փույթ տարերքն այս ահեղ:

Սիրով է կոփել մեզ երկիրը,
Մեզ հետ է որտեղ էլ թռչենք,
Թռիր դու միշտ բարձր, միշտ վերը,
Կոգնի մեզ, երբ հանկարծ կորչենք:

Երկիրը տվել է մեզ ուժը,
Իսկ թափը Ստալինը հանճար,
Մեզ ի՞նչ փույթ մշուշ այս ու մուժը,
Մեզ ի՞նչ փույթ հողմերը մոլար:

Միշտ բա՛րձըր, միշտ վե՛րը, դեպ վե՛րը
Թռի՛ր դու պողպատ իմ թռչուն,

Պարզի՛ր գույն. ամուր քո թևերը
Ու երգերդ երգիր դու հնչուն:

ԿՅԱՆՔԸ

Երկու սոնետ Վահան Տերյանին

Կյանք, տխուր հովիտ հավիտյան լալու...
Վ. ՏԵՐՅԱՆ

Կյանքը քեզ համար տխուր հովիտ էր,
Արձակ տապարեզ հավիտյան լալու,
Աշխարհն ընդարձակ սև ու անմիտ էր
Եվ գարունն անգամ տխուր էր գալու:

Կյանքը քեզ համար վշտերով լի էր,
Աշխարհը լցված աղի արցունքով,
Քո շուրջը թեկուզ խնդություն լիներ,
Դու ապրում էիր սրտիդ տանջանքով:

Օ՛, քնքուշ սիրո աննման պոետ,
Սրտի տանջանքի վսեմ դու երգիչ,
Վշտալի օրերն անցել են քեզ հետ,

Բայց երգերը քո հուզում են նորից,
Հնչում են նրանք շեշտով թախծալի,
Իբրև զոհարներ սրտում անցյալի:

II

Մեզ համար կյանքը գարուն է պայծառ,
Խնդությամբ լցված աննման պարտեզ,
Ուր մենք ապրում ենք խմբերով կայտառ
Երկնքում ճախրող թռչունների պես:

Մեզ համար կյանքը պայքար է համառ,
Անդուլ աշխատանք, նոր կյանքի կերտում,
Գարուն լինի դա, թե այրող ամառ—
Մենք գտնվում ենք միևնույն մարտում:

Մեր կյանքի պայծառ խնդության բովից
Ծնվում են ահա երգերը մեր նոր,
Ինչպես շառաչող անսահման ծովից

Ծնվում են բազում ալիքներ հզոր,
Ինչպես պայքարից նոր մարդն է ծնվում
Եվ հաղթ քայլերով առաջ արշավում:

ԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆԸ

Օ՛, կախարդիչ հնչյունների անզուգական իմ աշխարհ,
Ըմբռնում եմ ես անհուն սիրով խոսուն ու պարզ քո լեզուն,
Որպես պաշտող մի մոլեռանդ անհունորեն, խենթաբար
Ըմպում եմ ես տարերքը քո բյուր հույզերով առլցուն:

Ով սիրտ ունի և իր սրտում սիրո հույզեր բյուրավոր,
Ով սիրտ ունի՝ սիրո նետից անգթորեն վիրավոր,
Ով ունի՛ վիշտ կամ խնդություն, կամ այլ այրող զգացում,—
Նա փութալով քեզ է դիմում ու քեզանով սիրտ բացում:

Ով իր սրտում հաղթանակի հույզեր ունի կուտակած,
Նա ոգեշունչ հնչյուններով երգ է երգում խենթացած,
Ով հաղթական արշավանքով ահեղ մարտի է գնում,
Նա մահացու իր զենքի հետ հաղթության երգ է տանում:

Ով պողպատի թևեր առած դեպի երկինք է թռչում,
Նրա սրտում պրոպելլերի ձայնի հետ երգն է հնչում.

Ով որ նավով օվկիանոսի անհուն ջրերն է ճեղքում,
Նա փոթորկի մռնչյունին խրոխտ իր երգն է խառնում:

Ով հրաշունչ հնոցի մոտ արդար քրտինք է թափում,
Նա չրեկվող պողպատի հետ հզոր երգեր է կոփում,
Ով հանքահատ մուրճը վերցրած երկրի խորքերն է մտնում,
Նա աշխարհի խոր ընդերքից նոր-նոր երգեր է գտնում:

Եվ առօրյա աշխատանքում ով անսահման եռանդով
Հերոսաբար ջանք է թափում կոմունիզմի գործի մեջ,
Նա անպայման երգ է երգում, երգ է կերտում նոր խանդով,
Իր երգի մեջ սիրտն է դնում, հույզերն իր վառ ու անշեջ:

ՍԻՐԵՐԳ

Երբ իրոք սիրող մարդու աչքերի մեջ հրացայտ
Հայելու պես արտացոլվեր նրա սրտի սերն անհայտ,
Արդեն վաղուց դու կզգայիր, որ իմ սրտով սիրակեզ,
Իմ ողջ հոգով, անհունորեն սիրում եմ ես միայն քեզ:

Ես կուզեի, որ մեր սրտերն իրարու հետ խոսեին,
Առանց խոսքի միջնորդության նրանք իրար կապվեին,
Ես կուզեի, որ նրանք միշտ զրուցեին հույզերով,
Հայացքների պատկերավոր, անհուն ու խոր խոսքերով:

Ես կուզեի, որ մենք իրար անդավաճան սիրելով,
Կյանքն ապրեինք զվարթության բաղում երգեր երգելով,
Ես կուզեի, որ միասին այս աշխարհից դարավոր
Մենք անցնեինք վառ պայքարի մի ուղիով փառավոր:

Եվ վճռական այդ պայքարից մենք դուրս գայինք հաղթելով,
Դեպ արվեստի վես գագաթներն տանող ուղի հարթելով,
Եվ տիրացած նուրբ արվեստի գագաթներին երկնահաս
Մենք կերտեինք մի նոր արվեստ—նոր օրերին համաղաս:

ՍՈՆԵՏ

Երբ քեզ տեսա—կանգնած էիր ծովափին,
Աչքերիդ դեմ ծովն էր ծփում աղմուկով,
Եվ ամպերի մութ ու մռայլ սավանով
Հորիզոնում ծածկվում էր բորբ արփին:

Ես նայեցի զույգ կապուտակ աչքերիդ
Ու մնացի հենց նույն տեղում քարացած,
Այդպես հանկարծ զարկող շանթից սևացած
Ծառն է մնում անտառներում լեռների:

Այդ բոպեից սիրտս կարծես ալեկոծ
Ծով է դարձել, հանդարտություն էլ չունի,
Ծփում է նա ալիքներով հողմակոծ

Ու շառաչում շառաչյունով տայֆունի:
Աչքերիս դեմ դու ես կանգնած հեռարձակ—
Դիցուհու պես գեղեցիկ ու համարձակ:

ԿՐԱԿԵ ՈՒՂԻ

Ամռան աստղալից երկնքի ներքո
Մենք նստել էինք իրարով լեցուն:
Հնչում էր մեղմիկ քնքուշ ձայնը քո
Ու հայացքներդ կախարդիչ լեցուն:

Անթարթ աչքերով, խոհուն հայացքով
Մենք նայում էինք անթիվ աստղերին,
Բացում հույզերի հանդարտ ընթացքով
Մեր սիրտը հանձնում քնքուշ խոհերին:

Եվ հանկարծ ցոլաց մի աստղ պայծառ,
Կրակի ուղի թողնելով ետքից,
Ուղին այդ կարծես մի վերք արնավառ
Անհետ չքացավ կապույտ երկնքից:

Թող դու երբ անցար իմ սրտի միջով,
Դու էլ թողեցիր կրակի ուղի,
Բայց ուղին այդ բոլոր կրկնակի ուժով
Բորբոքվում է միշտ, վառվում կատաղի:

ԹԱԳՆՎԱԾ ԳԱՐՈՒՆ

Ինձ ասում ես, թե դու սառն ես,
Թե չես սիրում ինձ երբեք,
Ո՛չ. ես միայն սիրում եմ քեզ,
Ամբողջ սրտով, անհամբեր:

Դու չգիտե՞ս, որ ձմռան տակ
Կա թաքնված վառ գարուն,
Որ ձյան ճերմակ ծածկոցի տակ
Բյուր ծաղիկ կա զարդարուն:

Երբ ժամը գա կանհետանան
Ե՛վ ձյուն ու ցուրտ, և՛ ձմեռ,
Օր կբացվի կախարդական
Ծաղիկներով ծանրաբեռ:

Այդպես էլ ես սիրում եմ քեզ,
Թեև սառն եմ ինձ պահում,
Ձմռան ճերմակ ծածկոցի պես
Վառ գարուն եմ թաքցնում:

ՎԵՐՀՈՒՇ

Նստած եմ նորից այս կանաչ այգում,
Հովից օրորվող ծառերի ներքո,
Բայց ինչո՞ւ հանկարծ ջահել իմ հոգում
Կրկին արթնացավ լուռ պատկերը քո:

Այն հո՞վն էր արդյոք, թե՞ ծառն օրորվող,
Կանա՞չն էր թավիշ, թե՞ ծաղիկն անուշ,
Որ այնպես կամաց, շշունջով դյութող
Պատմում էր նորից հուշերն այս քնքուշ...

«... Հիշո՞ւմ ես արդյոք գարունն այն պայծառ,
Մայիսն այն չքնաղ և օրն արևոտ,
Երբ թարմությամբ էր շնչում ամեն ծառ
Ու կարծես ժպտում ամեն ծիլ ու խոտ:

Հիշո՞ւմ ես արդյոք դու այն աղջկան,
Որին սիրեցիր քո սրտի խորքում,
Բայց չհայտնեցիր քո սերը նրան
Ու նա չիմացավ ինչ կար քո հոգում:

Հիշո՞ւմ ես արդյոք, երբ սիրուց այրված
Դու խոսում էիր ծաղիկների հետ,
Որ տանեն նրանք քո սիրով տարված
Պատմեն սիրահույզ հույզերդ անգետ:

Բայց օրեր անցան, դու լուռ մնացիր,
Իսկ նա չիմացավ քո սիրո մասին,
Հույզերիդ մասին ոչ դու պատմեցիր,
Ոչ էլ մայիսյան ծաղիկներն ասին:

Իսկ հիմա նստած այս կանաչ այգում,
Հովից օրորվող այս ծառերի տակ,
Անցած օրերն ես կրկին վերհիշում
Ու հոգով ապրում սիրովդ անհատակ:

Օ, սիրե՛ր նրան, սիրե՛ր շարունակ,
Մի օր կիմանա նա սիրուդ մասին,
Եվ սիրով այրված այս ծաղիկների տակ
Երջանիկ ժպտով կանցնենք միասին:

ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՋՍ

Շուրջըդ մարդիկ զվարթադեմ,
Հնչուն ծիծաղ ու խոսքեր,
Իսկ դու նստած մռայլադեմ
Գի՞րք ես կարդում, իմ ընկեր:

Զուր ես այդպես խորասուզված
Դեմքդ թաղել գրքի մեջ,
Սիրո հույզից դեմքդ հուզված
Մատնում է քեզ, իմ ընկեր:

Ամբողջ գիշերն աչքերիդ դեմ
Նա է կանգնել հերարձակ,
Իսկ դու հիմա մռայլադեմ
Գի՞րք ես թերթում շարունակ:

Որքան էլ դու գրքին նայես,
Խորքը թաղվես անդադրում,
Ինձ չես խաբի, միշտ կտեսնես
Դեմքը նրա երազում:

Զուր ես այդպես ճիգեր թափում,
Գրքին նայում շարունակ,
Դու դրանով քեզ ես խաբում,
Վատնում անգին ժամանակ:

Շուրջըդ մարդիկ զվարթադեմ,
Հնչուն ծիծաղ ու խոսքեր,
Իսկ դու այդպես մռայլադեմ
Գի՞րք ես թերթում, իմ ընկեր:

ԻԶՈՒՐ ԱՓՍՈՍԱՆՔ

Դու գուցե երբեք չես էլ հասկանա,
Թե ո՞վ է իրոք սրտանց քեզ սիրում,
Հենց դրա համար չես երջանկանա
Այս երջանկավետ, ծաղկող աշխարհում:

Քեզ սիրողներին դու չսիրեցիր,
Իսկ ում սիրեցիր—նա քեզ չսիրեց,
Սեփական ձեռքով ճամբադ փակեցիր,
Սրտումըդ սիրո դառնություն տիրեց:

Իսկ օրերն իրենց ընթացքով անցան,
Գնացին հավետ, էլ չեն դառնալու,
Միրաժի նման հույսերդ չքացան,
Իզուր է, անցած ժամն ափսոսալու:

Լոկ ափսոսանքով ոչինչ չես շահի,
Իզուր ես հիմա սիրտըդ դառնացնում,
Թեկուզ և, փոխես ընթացքն աշխարհի—
Դարձյալ չես գտնի սիրո սփոփում:

Ինչ անցավ գնաց—էլ չի դառնալու,
Որքան էլ ուզես նրան ետ բերել,
Նո՛ր աղբյուր գտիր կրկին խնդալու,
Նո՛ր երջանկության աշխատիր տիրել:

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵԻՑ

Կանգնած էր օրիորդը ծովափին,
Ծանրորեն հոգոց էր քաշում,
Վշտով էր նա ցավում ու հիշում,
Որ ծովում մայր մտավ արփին:

Սփոփվի՛ր, օրիորդ իմ, հուր արփին
Վաղուց է այդ խաղը խաղում,

Այսօր նա առջևից էր լողում,
Իսկ վաղը ետևից կծագի:

***

Աստղերը վառվում են նորից
Մայիսյան վարդերի նման,
Իսկ սրտումը այնքան փոքրիկ
Սառնամանիքն է ցուրտ ձմռան:

Կփոխվեն անշուշտ բոլորը,
Կտեսնես աչքով սեփական,
Քո սրտին կիջնի ամառը,
Աստղերից՝ ձմեռն իսկական:

***

Երկու հոգի անջատվելիս
Ձեռք են տալիս իրարու,
Դառն արցունքով սգում, լալիս
Ախ են քաշում անդադրում:

Իսկ ես ու դու առանց ախի
Հրաժեշտ տվինք անարցունք,
Ախ ու արցունքն հետո եկան,
Բայց շատ էր ուշ, անարդյունք:

ՉԱՅԿՈՎՍԿՈՒՆ

(VI սիմֆոնիան լսելուց հետո)

Օ՜, սիրտըդ քնքույշ որքա՜ն է խոցված,
Որքա՜ն է խորունկ վիշտը քո սրտի,
Կարծես թե այտեղ դաշույն է ցցված,
Կարծես թե նետն է խոցել ամարդի:

Այդքան տխրություն, այդքան վիշտ ու ցավ
Ինչպե՞ս ես կրել քնքույշ քո սրտում,
Ինչպե՞ս սիրտը քո վշտին դիմացավ,
Երբ շրջում էիր տխուր ու տրտում:

Եվ հնչյուններում այդ վիշտը ծծված
Հնչում է իբրև մահվան մեղեդի,
Բացվում է մեր դեմ քո սիրտը խոցված
Ու մեզ համակում երգով քո վշտի:

ԱՌՎԱԿԻ ՄՈՏ

(Բեթհովենի VI սիմֆոնիայի նվագի ներքո)

Երբ լսում եմ ես հնչյուններն այս մեղմ,
Նվագն այս դյութող, մեղեդին այս նուրբ,
Կարծես թե մտքով թռչում եմ այնտեղ,
Տեսնում եմ կարծես ոսկե մի անուրջ...

Ձգվում է առվակն անտառի միջով,
Հատակին քարեր հակինթից գունեղ,
Ջրերն են հոսում անուշ խոխոջով,
Այրում է անտառն իր շնչով ահեղ:

Առվակի ափից մի մարդ է քայլում
Մազերն իր դանդաղ տված զեփյուռին,
Բազում հույզերից աչքերն են փայլում,
Ճակատն է շողում խոհերով լրին:

Հայացքն իր գցած առվակի ջրին,
Խոխոջն է լսում, ինքն իր հետ խոսում,
Հույզերն են հուզում նորից ու նորից,
Խոհերն են կարծես ջրի պես հոսում:

Եվ հույզերն այդ բյուր, խոհերն անհամար
Դառնում են դյութող հնչյուններ քնքուշ,

Գերում են նրանք հավիտյան անմար
Իրենց արտաբուղխ երգերով անուշ...

Երբ լսում եմ ես հնչյուններն այդ նուրբ,
Քայլում խոհերի, հույզերի միջով,
Միշտ թվում է ինձ, որ ես ամենուր
Նրան եմ տեսնում իր խոհուն դեմքով:

Ինչպես առվակի վճիտ ջրերում
Քարերն են շողում գույներով ներկված,
Այնպես էլ դերող այդ հնչյուններում
Երևում է նա խոհերով տարված:

ՎԵՃԸ

Պարտեզի մեջ, առվի ափին
Երկու ծառեր տնկեցին,
Իրար մոտիկ ու միասին
Նրանք արագ աճեցին:

Մեկը դարձավ մի բարդենի
Ու դեպի վեր խոյացավ,
Մեկն էլ փարթամ խնձորենի
Ու խնձորով ծանրացավ:

Շուրջը—ծառեր ու ծաղիկներ,
Բյուր պտուղներ մեղրածոր,
Թռչունների ծլվլոցներ,
Երգ ու տաղեր մեղմօրոր:

Շուրջը—արև ու խնդություն,
Պայծառ մի կյանք բերկրալից,
Շուրջը—թավիշ ու թարմություն՝
Պատանու պես կենսալից:

Բարդին հպարտ օրորելով
Իր տերևներն անթափանց,
Կարծես վերից քմծիծաղով
Նայում էր միշտ դեպի ցած:

Ու մի օր էլ նրանք հանկարծ
Իրարու հետ վիճեցին,
Փառք ու պատիվ, անպատվություն,
Բոլորն իրար խառնեցին:

«Ով դու խղճուկ խնձորենի,
Ի՞նչ ես կպել չոր հողից,
Ծառ չի դուրս գա այդ վայրենի,
Կուշտ աշխարհին կառչողից:

Ամիսներ են գալիս անցնում
Ու տարիներ լրանում,
Իսկ դու կարծես հետզհետե
Ցածրանում ես, կռանում:

Միևնույնն է, ծառ չի դուրս գա
Քեզնից երբեք ու երբեք,
Թող հեռացի՛ր այս պարտեզից
Ընտրիր մի նոր ապաքեն»:

Եվ ինքնագոհ մի ժպիտով
Նա իր ճյուղերն օրորեց,
Հաղթողի պես հոխորտալով
Կրկին դեպի ցած նայեց:

Խնձորենին լսեց հանդիստ
Ու վեր նայեց, բարկացավ,
Իր ճյուղերով նա ծանրանիստ
Ավելի ցած կռացավ:

Նա օրորեց ծանրած ճյուղերն
Ու խնձորներն ալ-կարմիր,
Որոնք կարծես ժիր մանուկներ
Կամ թռչուններ լինեին:

Ու չափազանց համեստորեն,
Համոզմունքով մի անհուն,
Նա եռանդով ու հեգնորեն
Դարձավ ասաց բարդենուն.

«Ի՞նչ ես այդպես դու հոխորտում,
Ով անպտուղ բարդենի,
Դու, որ այստեղ տեղ ես գտնում,
Իբրև մի ծառ վայրենի:

Ես էլ քեզպես թե անպտուղ,
Թեթևամիտ լինեի,
Ամբողջապես ուժերս անշուք
Երկարելուն կտայի:

Բայց ի՞նչ օգուտ երկարելուց,
Աննպատակ ապրելուց,
Սևահողից կտրվելուց
Եվ անպտուղ մնալուց:

Թե կտրվես դու մայր հողից
Եվ դեպի վեր բարձրանաս,
Միշտ էլ քամու ահեղ դողից
Սարսափահար կմնաս:

Քամին կտա ուժգին թափով,
Կտապալի անպայման,
Եվ երկարած քո հասակով
Դու կփռվես անդարման:

Քեզ չի փրկի ոչ հոխորտանք,
Ոչ էլ դիրքըդ բարձրամիտ,

Հերիք մնաս անբարտավան,
Ով բարդենի մեծամիտ:

Որքան հողին մոտիկ լինես,
Որքան լինես դու խոնարհ,
Այնքան ուժեղ դու կլինես,
Քեզ կհարգի ողջ աշխարհ»:

Եվ դրանով վեճը նրանց
Խաղաղությամբ վերջացավ,
Խնձորենու խոսքերի դեմ
Բարդին ոչինչ չգտավ:

***

Ով մեծամիտ, հոխորտաբան,
Դատարկամիտ մարդուկներ,
Դուք էլ արդյոք բարդու նման
Պիտի մնա՞ք անընկեր:

Պիտի զգա՞ք արդյոք մի օր,
Որ աշխարհում նորաստեղծ
Նա է միայն արժանավոր,
Ով որ համեստ է, անկեղծ:

Ով տքնաջան աշխատանքով
Մեր նոր աշխարհն է կերտում,
Եվ ոչ թե նա, ով որ խոսքով
Աղմկում է, հոխորտում:

Ձեր զզվելի հոխորտանքով
Ոչ մի օգուտ չեք բերի
Ոչ ձեզ համար, ոչ էլ փառքով
Ճամբա ընկած աշխարհին:

ԿՏՐՈՒԿ ԹՈՒՐԸ

(Կիրգիզական ֆոլկլորից)

Իսսիկ-Կուլի հովտում մի խան էր ապրում,
Օրմոն էր նրա անունն ասելի,
Հարուստ էր նա անչափ և իրա օրում
Բազում դեխկաններ տվել էր մահի:

Նա մի որդի ուներ ջահել ու սիրուն,
Ուժեղ էր նրա բազուկն ամրակուռ,
Նա իր կտրիճ որդուն անչափ էր սիրում,
Հաճախ էր ապրում ջերմ սիրո սարսուռ:

Մի օր կանչեց իր մոտ նա որդուն սիրած
Համբուրեց նրան և ասաց սիրով.
— Իմ քաջ որդի Զարդին, քեզ մի թուր սրած
Պիտի նվիրեմ հատուկ պատվերով:—

Եվ նա կանչեց իսկույն վարպետին հայտնի,
Շտապ պատվիրեց պատրաստել մի թուր.
«Նա ածելուց անգամ սուր պիտի լինի,
Գնա՛ և իսկույն շնորհքդ ցույց տուր»:

Վարպետն արագ գնաց և անցավ գործի,
Պատրաստեց շտապ պատվերը խանի
Եվ իր հմուտ ձեռքով լավ զինագործի
Կերտեց ոսկեզօծ մի թուր անվանի:

Արդուզարդով չքնաղ թուրը զարդարեց,
Հետո էլ սրեց ածելու նման,
Զույգ ձեռքերով բռնած նա պալատ բերեց
Ու խանին հանձնեց, ասելով նրան.

«— Ո՛վ խան Օրմոն հզոր, թուրն ահա բերի
Շնորհքս ամբողջ նրա մեջ դրած,

Նվաստ ծառիդ ձեռքից այս թուրն անթերի
Ընդունիր նվեր քեզ ղուրբան արած»:

Խանը թուրն այդ վերցրեց, զննեց ուշադիր
Ու խոսք չգտավ նրան ասելու,
Չէ՞ որ նա չէր կարող խոսքով սիրալիր
Դիմել իր ծառին այդքան վայելուչ:

«— Թուրը լավն է կարծես,—ասաց իր որդուն,—
Բայց պետք է փորձել սո՞ւր է արդյոք նա,
Իմ սիրելի Զարդին, դե. թուրը վերցրու
Եվ փորձիր իսկույն որքա՞ն սուր է նա»:

Եվ հարազատ որդին հոր ձեռքից վերցրեց,
Թուրը փայլփլեց նրա աջ ձեռքում
Եվ մի զարկով ուժգին իսկույն թռցրեց
Այդ նույն վարպետի գլուխն անխնդում...

Գր. ՓԱՆՈՍ

ՄԱՐՏԻՐՈՍԸ

Համգաստյան օրը գյուղխորհրդի նախագահ Մարտիրոս Հարությանը քաղաք եկավ։ Նրա առաջին գործն եղավ մտնել առաջնակարգ նկարչատներից մեկը՝ նկարվելու։ Ի հարկե, ոչ սովորական դիրքով, այլ այնպես, ինչպես անվանի մարդիկ են նկարվում — գլուխը բարձր, մազերը կողքի սանրած, կուրծքը դուրս և խոհական հայացքը հառած հեռուները։ Եվ կամ՝ նկարվել ամբիոնի մոտ կանգնած՝ ճառ արտասանելիս։

Զե՞ որ նա ևս մեծ է։ Ճիշտ է, իրենց գյուղի մասշտաբով, բայց և այնպես մեծ մարդ է և դեռ բարձրանալու որքա՜ն աստիճաններ կան, որքա՜ն... Ո՞վ է իրենից ավելի լավ պայքարում ժողովրդի զազրելի թշնամիների դեմ. ո՛չ ոք։ Նա էր առաջինը, որ սկսեց մերկացնել մի քանի կարերիստ-երկերեսանի սրիկաների, որոնք թաքնված ժողովրդի թշնամիներ էին։ Այդ մասին գիտե ողջ կուսակցական և կոմերիտական կազմակերպությունը։

Ինչո՞ւ համար է այդ բոլորն անում. ի հարկե՝ բարձրանալու, անվերջ առաջ գնալու համար։ Եվ այդ ակտիվության համար նրան դեռ շատ առաջ կքաշեն։ Ո՞վ է իմանում. կարող է՝ մինչև նկարի պատրաստելը իրեն շրջկենտրոն տանեն, էնտեղից էլ՝ կենտրոն։ Զէ՞ որ հիմա մարդկանց շատ են առաջ քաշում։ Օրինակի համար, վերցնենք դալլաք Պետոնի տղա Սերոբին։ Մի քանի տարի առաջ Երևանում կուսակցական դպրոց էր հաճախում, հետո ուղարկեցին Մոսկվա՝ սովորելու։ Հիմա կուսշրջկոմի քարտուղարն է։ Ասենք նրան երկար չեն պահի այդ պոստում. Մարտիրոսը երկու հատ խիստ փաստալից մատերիալ է գրել նրա մասին, բայց նա... դեռևս արժանի պատիժը չի ստացել։ Կարող է պատահի՝ դեռ կարդացած էլ չլինեն։

Մարտիրոսը... Մարտիրոսը ցույց կտա նրան... Թե նա կուսշրջկոմի քարտուղարն ըլի... ինքը ո՞չ։

Հարությանին շատ դուր եկավ ճառ արտասանելով նկարվելու դիրքը և այս համոզումով էլ մտավ նկարչատուն։

Նախասրահում դրասեղանի մոտ նստած էր մի երիտասարդ կին։ Մարտիրոսը մոտեցավ նրան։ Դեռ հեռվից զգալի եղավ անուշահոտ օծանելիքների «զզվելի» հոտը։ Այդ դեռ ոչինչ. դեմքն այնպես էր «դաջել կրով» ու շրթունքներին կարմիր քսել, որ դարձել էր կատարյալ «չուչե տիկնիկ»։

«Էս լպստածին ուտեղի՞ց են գտել», — մտքում ասաց նա, ապա կանխորոշեց. «Սա մաքուր տիպ չի երևում...» և կանգնելով նրա դիմաց՝ բարձր ու հպարտ տոնով ասաց։

— Դո՞ւ ես նկարիչը...

Կինը, որ այդ ժամանակ ձանձրույթից ինչ որ թղթի վրա «ուզոր» էր գծում, տեսնելով դիմացինի «բուի» լինելը, գլուխը վեր բարձրացրեց, արհամարհական հայացքով չափեց Մարտիրոսին ոտքից-գլուխ, ապա պատասխանեց.

— Ո՛չ ընկեր, նկարիչը ներսում զբաղված է, նստեցեք, հիմա դուրս կգա։

— Առանց քեզ ասելու էլ նստիլ տեխ, — ասաց Մարտիրոսն ու նստեց աթոռներից մեկին։

Կնոջ վրա տհաճ տպավորություն թողին այդ անծանոթ երիտասարդի «դու»-երը, անկիրթ վերաբերմունքը դեպի իր անձը և նա Մարտիրոսի նկատմամբ ատելությամբ լցվեց։ Մեկ ուզեց առանց նկարվելու ճանապարհ դցել, բայց մեկ էլ անհարմար գտավ։

Մարտիրոսը նստած տեղից սկսեց դիտել պատերին փակցրած նկարները։ Նա բավականին երկար ժամանակ խորազնին դիտեց բոլոր նկարները, բայց ոչ մի նկար չտեսավ իր ցանկացած դիրքի։ Ըստ երևույթին նա սխալմամբ մի սովորական նկարչատուն է մտել և ոչ «քաղաքի առաջնակարգ նկարչատուներ» ինչպես ասել էին իրեն։ Եվ այդ ստուգելու համար դիմեց կնոջը։

— Ընկերուհի՛, ձեզ մոտ ո՞րպիսի տեսակ մարդիկ են նկարվում, — սակայն, զգալով իր հարցի անորոշ բնույթը, չարունակեց.

— Այսինքս, ուզում եմ իմանալ, թե ո՞րպիսի մակարդակի մարդիկ են շատ նկարվում...

— Ամեն տեսակի մարդիկ,— պատասխանեց կինն ու ծիծաղը հազիվ զսպած, շարունակեց.— գիտնականներ էլ, քեզ նմաններն էլ... Կրթված մարդիկ էլ:

Մարտիրոսն այդ պատասխանից խայթվեց. կարծես թունավոր կարիճ կծեց նրան: Բարկությունից աչքերը կարմրեցին: Ուզեց նրան խայտառակել, բայց իրեն զսպեց՝ այդ վրեժն ուրիշ ձևով լուծելու մտադրությամբ:

«Անզգամի գլուխը քոր ա գալի... ընենց քորեմ, որ հուրհավիտյան չմոռանաս... Ո՞նց ա համարձակվում իրան պես պատվավոր ու գիտակից մարդուն անկիրթ համարել... Ուրեմն սաղ գեղի ղեկավարներն անկիրթ են» — մտածեց նա և իր ով լինելը նրան զգացնել տալու համար աջ ձեռքը բաճկոնի գրպանը տարավ և դրսից շոշափելուց հետո ասաց.

— Լավ ա կուստոմս չեն թռցրել...

Այնպես բարձր ու չեշտված ասաց, որ կնոջը լսելի եղավ.

— Օհո՜...

Մարտիրոսն ատամներն իրար սեղմելով նայեց նրան: Կինն էլ իր հերթին, հեգնական ժպիտը դեմքին, նայեց Մարտիրոսին: Նրանց ատելությամբ լի հայացքները միմյանց բախվեցին: «Չէ՛, ինչպես որ երևում ա, սա խիստ ցանկություն ունի ժողովրդի թշնամիների ցուցակում գրանցվելու»,— անցավ Մարտիրոսի մտքովն ու նա հանգստացավ նրանով, որ վերջում վրեժը կառնի ավելի «կուլտուրական» ձևով:

Պետք է ասել, որ Մարտիրոսն իր ծոցագրպանում մի հաստ բլոկ-նոտ էր պահում, ուր գրի էր առնում բոլոր կասկածելիների և «հակաների» անուն-ազգանունը:

Ահա այդ ցուցակի մեջ որոշեց գրել նաև այդ կնոջ անունը և որպեսզի փաստերն ավելի «զորավոր» լինեն նա որոշեց նրա մասին, երկու դիմում գրել՝ տարբեր ստորագրություններով:

Քիչ անց երկու առույգ աղջիկների հետ դուրս եկավ նկարիչը: Աղջիկները միմյանց հրում էին ու զրնգուն ձայնով ծիծաղում: Մարտիրոսին այդ դուր չեկավ. «Ափսոս իմ կարբինետում չէին, որ մի լավ հախներիցը գայի»,— մտքում ասաց նա

ու մոտեցավ նկարչին: Կինը մատնացույց անելով Մարտիրոսին՝ ասաց՝

— Ընկեր Սարգիս, էս ընկերն էլ է ուզում նկարվել:

— Խնդրեմ, խնդրեմ,— ասաց նկարիչն ու ներս հրավիրեց նրան:

«Էս քու պոչը թե խուզել չտվեցի, կենաս ու պարծենաս, ժողովրդի թշնամի, լպստած մռնչաս»,— մտքում ասաց նա ու, վերջին անգամ սպառնալից հայացքով նետահարելով կնոջը՝ ներս մտավ:

Մարտիրոսը երկար չէր հանգստանում, նրա ինքնասիրությունը, նրա բարձր արժանապատվությունը դիպել էր նա, էն «լպստածը»:

Եվ, վիրավորված մարդու վրեժխնդրության անհուն փափագով լի, դիմեց նկարչին.

— Վարպետ, էս ձեր օրիորդի անունը ի՞նչ է:

Նկարիչը քթի տակ ժպտաց ու խորամանկորեն նայելով նրան՝ ասաց.

— Ամուսնացած է...

— Տո՛, ինձ դա չի հետաքրքրում, է՛... բոլորովին ուրիշ բան ա...

Նկարիչը վատ բան չգուշակելով ասաց.

— Մանիկ:

— Ազգանու՞նը:

— Պողոսյան:

«Սա էլ ա ուզում ինձ ձեռ առնի... տո՛, քյաֆթառ հակահեղափոխական, քա Պողոսյան ազգանուն կլի՞,— մտքում ասաց նա և երբ նկարիչն զբաղված էր ապարատի սարքավորման աշխատանքով, հանեց բլոկ-նոտն ու գրեց. «Տրոցկիստական հակահեղափոխական, նույնպես և ֆաշիստական լրտես Մանիկ Պողոսյան»: Բայց Պողոսյանն առավ փակագծերի մեջ, որպեսզի հետո ստուգի դրա ճշտությունը:

Գրածի տակ ավելացրեց. «Նույնպես կասկածելի է ֆոտոգրաֆչին, որն աշխատում է նրա հետ»:

Բայց նախքան մատերիալ տալն անհրաժեշտ է գոնե իմանալ նրա աշխատանքի նախկին վայրը, կատարած գործը, պաշտոնը, այլապես մատերիալները թրի պես կտրող չեն լինի:

Դրա համար, երբ նկարիչը սարքավորման աշխատանքը վերջացնելով դարձավ նրան բան ասելու, Մարտիրոսն առիթից օգտվելով ասաց.

— Վարպետ, խոմ ձեր կնիկը... հա, անունն ի՞նչ էր.

— Մանիկ,— հիշեցրեց նկարիչը:

— Հա՛, Մանիկը խոմ գյուղերում աշխատե՞լ չի:

— Չլինի՞ Զանգեզուրից եք ճանաչում: Այնտեղ երկու տարի դասատու է եղել:

Մարտիրոսը մի քանի անգամ մտքում կրկնեց «Զանգեզուր», որպեսզի հետո հիշի և մատերիալում գրի: «Դա շատ լավ փաստ է. Զանգեզուրում հակահեղափոխականների հետ սերտ է եղել ու իրը կորցնելու համար եկել է Ե... քաղաքը» մտածեց նա ու հոգու խորքում հրճվեց. «Խիստ տպավորվելիչ կլի ու թրի պես սուր»:

— Նու, երիտասարդ, ի՞նչ դիրքի և չափի եք ուզում նըկարվել,— դիմեց նրան նկարիչը:

— Վարպետ ջան, թող մի հատ ըլի ու ինչքան կարող եք, մեծ հանեք, որովհետև ուղարկել եմ տալու. ... պատիվը պտի կախեմ:

— Վեց հատից պակաս չենք նկարում:

— Է, վեց հատն ի՞նչ անեմ,— բայց վախենալով այն բանից, որ կարող է նկարիչն իր մի նկարի համար «թուղթ» չփչացնի, չշարունակեց.

— Ոչինչ, թող վեց հատ ըլի, մեկը՝ մեծ... կլի, չէ՞:

— Ինչո՞ւ չէ, հնարավոր է, կանգնեցեք ձեր ցանկացած դիրքով:

Մարտիրոսն անմիջապես արձանացավ ապարատի առաջ: Աջ ձեռքը պարզեց օդում, կարծես ինչ որ բան էր ցույց տալիս, բերանը կիսով չափ բացեց և հայացքը հառած պարզած ձեռքի ուղղությամբ՝ սկսեց դիտել անորոշ տարածությունը:

Նկարիչը զարմացած նրան նայեց:

— Այդ դիրքո՞վ եք ցանկանում նկարվել:

— Հա՛, բա՞,— ու նկարչին ավելորդ հարցմունքի տեղիք չտալու համար չշարունակեց.

— Էկող ամիս կոնֆերանսում ճառելու եմ, պետք կգա... Համ էլ տուն ա, է՛լի, մի պատից կախ կանեմ թող մնա:

— Պատրաստվա՞ծ եք:

— Բա վո՞նց,— ու հպարտացած նորից աշխատեց նույն դիրքն ընդունել:

Նկարիչն սկսեց ակնածանքով նայել նրան և կատարեց նրա բոլոր ցանկությունները. նա խնամքով ստուգեց Մարտիրոսի դիրքը, մոտեցավ նրան, գլուխն ավելի վեր բարձրացնել տվեց, մի անգամ էլ ապարատին նայեց, շտկեց, ապա նկարեց:

— Ազատ եք,— ասաց նկարիչն ու ծածկոցը ապարատի վրա գցեց:

Մարտիրոսն էլ սրտատրոփ հենց այդ բառին էր սպասում, որովհետև նրա աջ ձեռքն արդեն երկար ժամանակ պարզած մնալուց հոգնել էր:

Նկարվելուց հետո նրանք եկան նախասրահը:

— Մանիկ, ընկերոջից դրամն ստացիր:

Մարտիրոսը գրպանից հանեց պահանջած գումարն ու հանձնեց Մանիկին: Նա գումարն ստանալով մի անդորրագիր գրեց ու հանձնեց Մարտիրոսին:

«Էս լավ էլավ, ազգանունը կստուգեմ» ուրախացավ Մարտիրոսն ու թերթի կտրոնը մոտեցրեց աչքերին: Ստորագրության փոխարեն «հակահեղափոխականն» ինչ որ խզմզել էր:

— Էս ինչ ես գրել, մի կարդա տեսնենք,— մատը դնելով ստորագրածի վրա՝ ասաց Մարտիրոսը:

— Մանիկ Պողոսյան, բավարարվեցի՞ք:

«Ուրեմն նկարիչը ճիշտ ասաց նրա ազգանունը... Ինչ ինքը... ինչ ազգանունը... խիստ են իրար բռնում», մտածեց Մարտիրոսը և գոհ սրտով դուրս եկավ: Նա գոհ էր, որովհետև մի նոր թաքնված տրոցկիստ-հակահեղափոխական գտավ և երեսունյոթերորդ մատերիալը վաղը դրի կանի:

Թող իմանան թե, ո՛ւմ հետ գործ ունեն, ո՛ւմ...

2

Հաջորդ օրը, վերադառնալով գյուղ՝ նա երկու «խիստ փաստալից», մատերիալներ գրեց (իհարկե, տարբեր ձեռագրով), մեկի տակ ինքն ստորագրեց, իսկ մյուսը տարավ գրասենյակ՝ Գալոյին, իր հավատարիմ քարտուղարին ստորագրել տվեց. «Ախպեր տղա յա, չի մերժի»:

Կեսօրին ներս մտավ դրասենյակ։

Դրասենյակում Գալոն ինչ-որ մի կնոջ հետ վեճի մեջ էր։

Կինը Մարտիրոսին նկատելով ասաց.

— Ինչ լավ էր, էկար, Մարտիրոս ջան, էս քանի օր ա ուզում եմ քեզ տեսնել, չի հաջողվում. քանի էկել եմ, ըստի չես էլել... էս Գալոն էլ...

— Էդ ո՞նց ես խոսում... քեզ հավաքիր, խորհրդային գյուղխորհրդի դրասենյակումն ես խոսում, քուչում խոմ չե՞ս։

— Խի՞ ... ի՞նչ եմ ասում... բա ... ո՞նց խոսեմ։

— Ընենց,— ընկեր նախագահ,— այ թե ոնց պտի խոսես նախագահի հետ...

— Բա մինչև հմի խի՞ չէիր ըտենց...

— Է՜, ղահլա չկա ... պտի առաջ գնա՞նք, թե ոչ...։ Հը՛, դու կարծում ես պարապ ե՞մ, որ սաղ օրը գամ նստեմ ըստեղ։ Գործ եմ անում, գո՛րծ։ Ա՛յ, հենց հմի էլ շատ խիստ կարևոր խորհրդակցություն ունեմ... գնա՛, էգուց կգաս։

— Չե՛մ գնա, մինչև ինձ լսեք ոչ, դուս չեմ ըլի,— համառեց կինը։

— Այ կնիկ, խոմ դժվել չես։ Որ ասում են գնա, ուրեմն՝ գնա...

— Գնալու չեմ, մի հրոպե էլ ուշ արեք ձեր... ժողովը։

— Տո՛, մենք քու խաթեր տուժ տանա՞նք։

— Լա՛վ, չե՛ք մարսի,— ասաց կինը և դուրս գնաց։

— Անզգամին տես է, գնա քու հավերին վախեցրու,— ասաց Մարտիրոսն ու դուռը կողպեց։

— Հը՞, ախպեր տղա, ո՞նց ես,— թղթապանակը դնելով սեղանին, ասաց Մարտիրոսն իր հավատարիմ զինակցին։

— Ո՛նց եմ ըլելու... մենակ ինձ ըստեղ չամչի պահ ես տալիս ու դու քո քեֆին ման ես գալիս։

— Է, բա մնամ ի՞նչ անեմ... էնա դու կաս է՛լի. դու էս գործն արա, ես էլ՝ էն։

— Ո՞րը։

— Ա՛յ, էս,— ու թղթապանակից հանելով մի քառածալ թուղթ՝ տվեց նրան։

— Օֆ-ֆե՛, բա վերջ չես տա՞լու էդ գործին։

— Տո՛, դժվե՞լ ես, ի՞նչ ա, հմի սրա սեզոնն ա, սեզոնը,

հասկացի՞ր... սրա մեջ կերևա քու ինչ տեսակ կուսակցական լինելդ։ Լավ, չերկարացնեմ... դու ինձանից լավ գիտես... տո, կարդա ու ձեռք քաշի։

Գալոն սկսեց կարդալ։

«Ես Ղ... գյուղի հիմնական բնակիչ և նույն գյուղական խորհրդի քարտուղար Գալուստ Մանասարյանս վկայում եմ, որ Ն... քաղաքի գլխավոր փողոցի վրա եղած հայտնի նկարչատան մեջ մի աղջիկ է աշխատում։ Դրա անունն ա Մանիկ ու ազգանունն էլ՝ Պողոսյան։ Շատ խիստ տեսակի տրոցկիստ հակահեղափոխական է և, պարզ ա, որ լրտես էլ պտի ըլի։

Սրանից մի քանի ամիս առաջ դա աշխատելիս ա էլել Զանգեզուրում, որտեղ կապ է ունեցել ժողովրդի զզվելիներ բանդիտների հետ, որոնք ուզում էին մեզ ջարդել ու երկիրը չուստալ։ Հարկ է, որ պանծալի ջարդեցինք ու նրանց ոտը կտրեցինք, բայց նրանց թափթփուկներից դեռ հլա կան։ Դրանցից է էդ Մանիկ Պողոսյանը։ Էդ նույնը, այսինքս՝ Մանիկը նույնպես նրանց գործակից էր։ Նա վարժուհի էր, բայց իրա գործը թողած՝ լրտեսություն էր անում։ Նրան պտի խիստ պատիժ տալ, որովհետև նրա տեղը ոնց թե նկարչատունն ա, բայց եթե ոչ բանտը, նույնպես և աքսորը։ Նա Ն... քաղաքն է եկել, որովհետև իրա կեղտը թաղցնի, նույնպես և չարունակի իրա ավերածությենը»։

Գալոն զարմացած նրան նայեց.

— Այ մարդ, բոլ չե՞ղավ ինձ էս տեսակ թղթեր ստորագրել տաս։ Բալքի ու կանչեցին ինձ, թե արի հաստատի... Ախր չեմ ճանաչում, սիֆաթն էլա չեմ տեսել, ո՞նց ձեռք քաշեմ։

— Տո՛, ճանաչելս ո՞րն ա, էդ հալով ես քեզ կուսակցական ասո՞ւմ... Ստորագրի՛, ստորագրի՛...

— Ախր ընչի՞ ստորագրեմ... սա ի՞նչ ա արել մեզ...

— Ինչ ա արե՞լ։ Վարկաբեկ ա արել ինձ, հասկանո՞ւմ ես, թե չէ...

— Ինչ անենք. դու էլ նրա հախից գայիր. օխտը պորտը հայհոյեիր, բա էլ ինչ տղամարդ ես, որ մի կնոջ հախից չեկար...

— Տո՛, ո՞նց թե... խոմ ես խուժան չէի։ Աղա՛, դու ժողովրդի առաջնակարգ մի անդամն ես, չէ՛, քեզ մասսայի մեջ

վարկաբեկ են անում: Հլա հաշվի առ էն, որ հասարակ անդամը չես, այլ առաջնակարգ անդամը: Ուրեմն, դուրս ա գալիս, որ էդ հայհոյողը, քեզ վարկաբեկ անողը ոնց թե քեզ, այլ սաղ ժողովրդին ա խայտառակ անում...

— Էդ ո՞նց կլի... Ուրեմն մենք որ մեր կնանոցը հայհոյում ենք, սաղ աշխարհի կնանոնցն ենք հայհոյո՞ւմ... — Ու Գալոն ժպտաց Մարտիրոսի նոր «խորիմաստ» տեսության վրա:

Մարտիրոսը բարկացավ.

— Տո՛, դու խոմ խոսակեր չե՛ս...Դու ու նա մին չի, է՜.. Դու ժողովրդի ղեկավար ես, եթե որ մինը քեզ վարկաբեկ արավ, դուրս ա գալիս, որ նա սաղ ժողովրդին ա վարկաբեկ անում: Ստորագրի՛, ստորագրի՛, քեզ բան հասկացնելը խիստ դժար գործ ա:

Գալոն դարձյալ համառեց:

— Աղա՛, էդ խելքդ մինչև հիմի բա ո՞ւր էր կորել: Եշը կերել ես, պոչըմը խռովե՞լ... Ստորագրի, քեզ քաղաքավարի ասում եմ, թե չէ, հո գիտես...

— Մարտիրոս ջան, ախր ափաթն էլ ա չեմ տեսել...

— Տո՛, գլուխդ քոր ա գալի՞ս, թե՞ ավել արին ունես հանել տալու... Ուզում ես քո վրա էլ մատերյալ տա՞մ: Հո գիտես, որ շատ բան գիտեմ:

Գալոն ընկնատվեց և հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Ես էլ քու...

— Որ ի՞նչ...

— Որ ղեկավարից փող հավաքեցինք աղբյուր հանելու համար ու դու...

— Խի՞, դու անմասը մնացի՞ր... Աղա, դոռալով էլ խոսում եմ, էլ չեմ մտածում, որ կլսեն մեզ ու...

— Մի թուլախայ էլ ինձ տվեցիր... ուզում ես՝ ետ տամ:

— Դրա համա՞ր ես նեղացել,— մեղմ տոն ընդունելով, պատասխանեց Մարտիրոսը:— Դու էս թղթերից էլ մի վախի... սրանցով մենք մի ձեռքով երկու ձմերուկ ենք բռնում՝ համ դզատ ենք երևում, համ էլ ինչ անենք՝ չեն խոսա ու առաջ կքաշեն, առաջ... Զաթի ինձ առաջ են քաշելու: Հենց քաղաք տարան թե չէ՝ քեզ էլ եմ ինձ հետ տանելու: Էն ժամանակը կտեսնես: Դե գրի, գրի, շուտ:

Գալոն իրեն փակուղու մեջ զգաց: Այնքան էր տիղմի մեջ թաղվել, որ ետ գալը նույնքան դժվար էր, որքան և առաջ շարժվելը: Այժմ արդեն նա պարզ տեսնում էր, որ ինքը Մարտիրոսի կույր գործիքն է դարձել և կորցրել է իր ինքնուրույն դեմքը: Այդ գիտակցումը նրան վիշտ էր պատճառում, բայց այժմ արդեն ուշ էր. ինչպես սկսել էր, այնպես էլ պետք է շարունակեր: Դողացող մատերի մեջ առնելով գրիչը՝ ստորագրեց:

— Պրծա՛ քեզնից:

— Այ, ապրե՛ս... Ես ըտենց էլ գիտեի... Իզուր էլ ինձ էնքան խոսացրիր անտեղի:

— Բայց լավ չես անում, Մարտիրոս, սրա հոտը մի օր դուրս կգա...

— Բան չկա, ջուրն ընկնողը անձրևից չի վախենա...:Դե՛հ, Գալո ջան, ես մի քանի հատ էլ ուրիշ թղթեր ունեմ քաղաք տանելու: Ուզում եմ անձամբ տանել. ո՞վ է իմանում նամակ տանողները բաց անեն ու տեղ չհասցնեն: Դու գրասենյակից տեղ չգնաս, իմացա՞ր,— ասաց ու թղթապանակը թևի տակն առնելով դուրս գնաց:

— Կասես նախագահին հույժ շտապ գործով կանչել են շրջկենտրոն. իմացա՞ր,— գրեթե դրսից գոռալով ասաց նա:

3

Անցավ մեկ ամիս: Մարտիրոսը իր պաշտոնական գործերը մի կողմ թողած ամբողջ էությամբ նվիրվել էր «հականեր» որոնելուն: Նա ուր գնում էր, մի քանի «հականեր»-ի անուններ էր գրանցում իր բլոկ-նոտում:

Քաղաքից առացել էր իր նկարները: Մեծ նկարի համար շրջանակ էր պատվիրել: Ազատ ժամերին (այդպիսի ժամեր նա շատ ուներ), երկար նայում էր իր նկարին և հիանում: Մերթ նկարը մոտ էր բերում, մերթ բավականին հեռացնում և այնպես դիտում: «Կատարյալ ճարտասան եմ, էլի՛»— շշնջում էր նա ու հաճախ դիմում էր կնոջը.

— Հը՞, այ կնիկ, ո՞նց ա,— ու ինքնագոհ նայում էր նրան:

Մի անգամ Կլինն ասաց.

— Մարտիրոս ջան, էդ վենձ նկարը մեր տան պատին ենք կպցնելու, չէ՞...

— Հայվան օղլի, հայվան, բա էդքանը չես հասկանո՞ւմ, որ ըստեղ ոնչ գրասենյակ ա, ոնչ էլ՝ ակումբ... Պոի տանեմ գրասենյակումս, ճակատի պատին կպցնեմ... Էդ Վակոն էլ խի՞ էսքան ուշացրեց նկարիս ռամկեն:

Ասաց ու նկարը մի կողմ դրեց:

Կլինը տխրեց.

— Բա ասում ես, թե քեզ սիրում եմ, էդ ա՞ սիրելդ: Քաղաք ես գնում՝ մի կտրած կանֆետ չես առնում... Հմի էլ...

— Տո՛, հաստագլուխ, հասկացիր է, ըստեղ մենակ դու, կամ չոռ-չոռ մի ջուխտ ու կենտ ծանոթ-բարեկամ են թամաշա անելու, համա ընդեղ՝ սաղ գեղականը. հասկացա՞ր թե չէ:

Կլինը, որ մինչ այդ լուռ լսում էր, հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Բա ես թամաշա չանե՞մ...

— Լավ, լավ, հորդ օղորմի, սուս արա, էդքան պահրա չկա քեզ լսելու,— ասաց ու պատրաստվում էր տնից դուրս գալու, երբ դուռը բացվեց ու ներս մտավ իր քրոջ տղան՝ Արսենը:

— Քեռի ջան, մի բան եմ խնդրում,— ասաց ու մոտեցավ սեղանին, նստեց աթոռի վրա, ապա գրպանից հանելով մի ծրար, դրեց սեղանին:

— Ադա, նամակ ա՞:

— Չէ՛, քեռի, ինձ որպես կոմերիտականի, կազմակերպությունն ուզում է երաշխավորի կուսշարքերն անցնելու:

— Բաս մաղարիչ ունես էլի՛... սաղ օլ է, սաղ օլ,— ուրախացավ Մարտիրոսն ու գրկեց նրան:

— Հմի անկետաս բերել եմ, որ երաշխավորես:

Մարտիրոսը հանկարծ լրջացավ, պաշտոնական տեսք ընդունեց, ապա մտախոհ հայացքով նայեց նրան ու ասաց.

— Որ ակտիվ ես, քանի՞ մարդու վրա ես մատերիալ գըրել...

— Ոչ մի հատ:

— Մի հատ էլա գրել չե՞ս:

— Չէ:

— Այ, չոռը քե՛,— բարկացավ Մարտիրոսը:— Ադա՛, էլ ի՞նչ ակտիվ կոմսոմոլ ես, որ մարդ չես մերկացրել:

— Ժողովներում մերկացրել եմ... բայց մատերիալ հեչ գրել չեմ: Համ էլ... մարդու ո՞նց գրպարտեմ...

— Տո՛, երեխա՛, հո թշնամին չպտի՞ բաց ափաշկարա կանգնի կտրան ծերին ու աքլորի պես ձեն տա, թե՛ «գեղական, իմացեք, որ ես հակա եմ», կամ էլ թե՝ հակա իսաա: Թշնամին հիմի խիսա ու տակից ա գործում... Հմի ուրիշ սեզոնում ենք, ուրիշ...

— Էնա ժողովում հարցը դնում ենք ու կոնկրետ լուծում... փողոցում խո՞ չեմ կարող խոսալ, կամ մարդու վրա չառ դցել:

— Այ, ասեմ. հենց որ տեհար քուչումը, մի պուճախ մտած, երկու հոգի քչփչում են, ուրեմն իմաց կաց, որ հակա են, հմի հասկացա՞ր... ա՛յ նրանց մասին գրի:

— Դա չեղավ, քեռի, բալքի ուրիշ բան են խոսում. հակա չեն, հոմ չեմ կարող գրպարտել...

— Տո՛, իռտակեր խոմ չես, ուրեմն քու խելքով ես գրպարտում ե՞մ: Հո գիտես, թե ինչքան... Աղջի,— բարկացավ կնոջ վրա,— ի՞նչ ես ականջներդ կախ գցել, մի ղրաղ քաշվի:

Կլինը հեկեկալով կուչ եկավ մահճակալի ծայրին:

— Քեռի, հմի չես երաշխավորո՞ւմ:

— Է, ի՞նչ ասեմ... Դեռ չուտ՞ա...

— Դու՛ ինձ նոր չես ճանաչելու... ստորագրի է՛լի...

— Չէ, ով քեզ ակտիվ է համարում, թող նա քեզ երաշխավորի... Հո գիտես, թե քեզ ինչքան եմ սիրում, համա, Արսեն ջան, էդ բանը չեմ անի: Բարեկամությունն իրան տեղն ունի, կուսակցական գործն իրան տեղը: Համ էլ, գիտե՞ս ինչ կա. կասեն քեռին ա, դրա համար ա երաշխավորել. քեզ էլ ա վնաս, ինձ էլ,— ասաց նա ու տեղից վեր կացավ:

— Դեհ, ես գնացի գրասենյակ: Ըտենց, Արսեն ջան, նեղանաս ոչ ինձանից, ես կարալ չեմ վատ բան անի:

Արսենը հիասթափված դուրս եկավ նրա հետ:

Գրասենյակում մենակ նստած էր Գալոն:

Նա ոտքերն իրար վրա դարսած՝ թերթ էր կարդում:

— Տո՛, քեզ չեմ ասե՞լ, որ առանց ինձ թերթ չկարդա՞ս,—

ներս մտնելով կշտամբեց Մարտիրոսը ու, մոտ քաշելով մի աթոռ՝ նստեց Գալոյի կողքին:

— Դե, բարձր կարդա, լսում եմ... Հա, վերջի էջերը կարդա, տեսնենք մեր ասլաններն ինչ հալի են (խոսքն Իսպանիայի հանրապետականների մասին էր):

Գալոն սկսեց բարձրաձայն կարդալ: Մարտիրոսն անծանոթ քաղաքների, բլուրների ու մարդկանց անուններից ձանձրացած ասաց.

— Լա՛վ, կարդացած կլես, քյասա. հաղթում ե՞ն, թե՞ հաղթվում:

— Մի քիչ նամուս արա պրծնեմ է, կարդացել չեմ, վոր իմանամ,— ասաց Գալոն ու շարունակեց ընթերցել:

Մարտիրոսը չնայած լուռ էր, բայց չէր լսում. Նրա մտքերը սավառնում էին ինչ որ վայրեր: Նա մտածում էր իր մոտ ապագայի մասին: Այդ ապագան լուսապայծառ էր ու գրավիչ, բոլորի համար նախանձելի:

Ահա նստած է շրջկենտրոնում՝ որպես շրջկոմի երկրորդ քարտուղար: Ուշի-ուշով հետաքրքրվում է առաջին քարտուղարի գործերով՝ չլինի՞ թե հակա բան է կատարում: Եվ, ահա փաստեր. նախ՝ ուշ գիշերին է տուն գնում և ապա՝ ինչ որ մարդիկ են իր հետ ուրս գալիս փողոց: Եվ այդ պատճառով մատերիալ է դրում: Նրան «մերկացնում» է և ազատել է տալիս իր պաշտոնից: Իրեն առաջ են քաշում, նստեցնում են նրա տեղը:

Գեղեցիկ, մաքուր ու կահավորված առանձնասենյակում, ծաղկեփնջերով զարդարված սեղանի առաջ, նստած է նա: Սեղանի վրա թափված են օրվա թերթերն ու ժուռնալները, իսկ սեղանի ծայրին դրված է հեռախոսը: Նա հեռախոսի խոսափողը ականջին դրած կարգադրություններ է անում: Բոլորը լսում են նրան, բոլորը վախենում են նրանից և միաժամանակ սիրում ու հարգում են նրան:

Հանգստյան օրերին փափուկ ավտոյի մեջ նստած դուրս է գալիս զբոսանքի: Գեղեցիկ կանայք նայում են իրեն, սրտատրոփ սպասում են նրա ժպտին արժանանալուն: Աղջիկները նախանձում են նրա կնոջը, որ կարողացել է այդքան խորիմաստ ու բարձրարժեք ամուսին ճարել... Եվ մտածում են այն մասին, թե արդյոք իրենց կհաջողվի՞ նրա նման զարգացած, խոհուն, լուրջ և գործունյա մարդու հետ ամուսնանալ:

Բոլորը, բոլորը նայում են իրեն՝ մի տեսակ նախանձով ու ակնածանքով: Բոլորի խոսակցության նյութը նա է: Նրա անունը տալիս են մի տեսակ ակնածանքով ու սիրով:

Նրան սիրում ու հարգում են նաև կենտրոնում, նրա համբավն այնտեղ էլ է տարածվում և ... հրավիրում են կենտրոն:

Այստեղ արդեն սկսվում է մի նոր և առավել հետաքրքրական կյանք: Բայց... նրա մտքերի թելը կտրեց ցրիչը, որ դրսից դուռը բախեց ու իր անուն-ազգանունն արտասանեց:

— Ադա՛, մի դուռը բաց արա, տեսնենք,—կարգադրեց Մարտիրոսն ու վեր ցատկելով Գալոյից առաջ իրեն դուրս գցեց:

Ներս մտավ ցրիչն ու մի ծրար հանձնեց: Մարտիրոսի ուրախությանն էլ չափ ու սահման չկար: Նա գրպանից հանեց հինգ ռուբլի և տալով ցրիչին՝ ասաց.

— Առ, տար քեֆ արա՛,— ապա դառնալով Գալոյին, ասաց.

— Ադա մի կարդա է՛, գրած ա «հույժ շտապ»... մի տակն էլ կարդա է՛,— ու մատով ցույց տվեց.— «անձամբ»:

Գալոն, զարմացած, լրագիրը մի կողմ նետեց ու վիզն արագիլի պես երկարացնելով սկսեց ուշադրությամբ ծրարին նայել: Նախանձից ձեռքերն սկսեց իրար շփել ու ճեմել դրասենյակի երկայնքով:

— Շրջգործկոմից ա՞,— ասաց նա մի տեսակ փոխված ձայնով:

— Հա՛, բա՛...,— պատասխանեց Մարտիրոսն՝ ինքնագոհ ժպիտը դեմքին խաղացնելով, մի անգամ էլ շուռ ու մուռ տվեց ծրարն ու բացեց:

«Ա՛խ, յանի ինձ էլ «անձամբ» նամակ կուղարկեն թե չէ... Սրա բախտին մտիկ է... մի բան չի ու «անձամբ» նամակ»,— մտքում կրկնում էր Գալոն ու հուզված ճեմում:

— Մարտիրոս ջան, որ քեզ առաջ քաշեն, յանի կհիշե՞ս մեզ,— աղաչական տոնով ասաց նա:

— Տո՛, բա քեզ կմոռանա՞մ, ըրեխա չըլես...— ու սկսեց կարդալ.

«Ընկ. Մարտիրոս,

Շտապ անցեք շրջկործկոմ: Ձեզ հետ վերցրեք նաև գյուղխորհրդի կնիքն ու շտամպը: Վաղն առավոտյան սպասում եմ Ձեզ:

Շրջկործկոմի նախագահ՝ (ստորագրություն)»:

— Աղա, էս ի՞նչ քյասա նամակ էր, ախր ինչի են կանչել՝ գրել չեն:

Գալոն տարակուսած նայեց նրան, ապա ձեռքը տարավ գլուխն ու քորեց.

— Որ կնիքն ուզել են... լավ հոտ չի գալիս էս գործից,— ծոր տալով ասաց նա:

Մարտիրոսի դեմքից չքացավ ժպիտը, կասես հանկարծ նրա մարմնին սառույց քսեցին: Սկսեց մտածել այն մասին, թե իրեն արդյոք առաջ քաշելու համար են կանչե՞լ, թե՞ պատասխանատվության համար: Չէ, իրեն երևի առաջ քաշելու համար են կանչել:

— Աղա Գալո, բա էսքան քյասա նամա՞կ...

— Ո՞վ ա իմանում. բալքի ժամանակ չեն ունեցել երկար գրելու... Նրանք գործի տեր մարդիկ են... մենակ խոմ քեզ չեն գրություն գրում:

— Ասենք... դու էլ ես դուզ ասում:

Գալոն հույս էր տալիս իր հավատարիմ ընկերոջին, սակայն կասկածներն ու վատ նախազգացումները կրծում էին նրա սիրտը: «Ով ա իմանում մեր մասխարաների փարդան պատռել են ... համա կխայտառակվենք հ՛ա...», մտածում էր նա ու մտքում նախատում Մարտիրոսին, որ ոչ միայն իր խորտակման համար ակտիվ աշխատեց, այլ և ուրիշի...

Գալոն այնքան էլ չէր մտածի այդ մասին, եթե նախորդ օրը կարդացած չլիներ «Հունվարյան պլենումի որոշումները»:

— Դէ, Գալո ջան, էգուց գրասենյակը բաց չանես, դուռը փակի ու մի թուղթ կպցրու դռնից, թե՝ «ստուգման պատճառով էսօր փակ է»: Ճիշտը գրես ոչ, հա՛...

Ասենք գյուղղունի մի բան էլ ա չգիտենք... Եվ էլ տեղ չգնաս, տանն ինձ կսպասես:

Ու մնաս բարև ասելով դուրս եկավ գրասենյակից:

— Հմի ես գնո՞ւմ,— զարմացած ասաց Գալոն:

— Չէ, էն բաշտեն: Հմի գնամ մի քիչ գործերս կարգավորեմ:

— Նարադա... որ... վատ բան ըլի... ինձ անբաստանես ոչ...

— Վի՛, ի՞նչ ես սարսաղ-մարսաղ խոսում... Արխեին մնա, ես գործը գիտեմ,— ասաց Մարտիրոսն ու իր անբաժանելի թղթապանակը վերցնելով դուրս եկավ գրասենյակից:

Մտամոլոր ու հոգնած Մարտիրոսը տուն գնաց:

— Այ կնիկ, մի քիչ էն անմահական ջրից տու, բերանս օղողելու եմ,— ու գրպանից հանելով մի քանի թղթադրամ՝ շպրտեց սեղանին: Կինը վերցրեց դրամները և դուրս գնաց: Քիչ անց ներս մտավ երկու շիշ գինի ձեռքին: Մարտիրոսն սկըսեց խմել ու հետն էլ տխուր երգ ասել:

«Տեսնես էս մարդին ով ա քացի խփել,—մտածեց կինը,— Ամեն անգամ երբ գինի էր խմում, տրամադրությունը բացվում էր, իսկ այժմ՝ թթվում է ու հոնքերը կիտում»:

— Էգուց առավոտ շատ թեզ վեր կկացնես, էն բաշտեն... Կենտրոն եմ գնալու:

— Ինչի՞ էն կան...

— Զահրումարի: Որ ամեն ինչ իմանաս ոչ կստակե՞ս... վեր կաց գնա Արամի մոտ, ասա թող էգուց կոլխոզի սանկեն ըծի ու շատ քշերով բատեղ ըլի, իմացա՞ր...

Կինը դուրս գնաց:

Մարտիրոսը շշերը դատարկեց ու առանց հանվելու մեկնվեց թախտի վրա և անմիջապես խռմփացնել սկսեց:

Առավոտյան կինն արթնացնում էր.

— Մարտիրոս, ա՛յ Մարտիրոս, վե՛ր կաց, սանկեն էկել ա...

Մարտիրոսը տեղից վեր թռավ ու քնակոլոլ աչքերը տրորելով, ասաց.

— Սանկե՞ն ... հա՛,— և շտապով վեր ելավ տեղից:

Կինն անմիջապես դուրս գնաց ու ոչխարի մորթուց կարած հաստ մուշտակը բերեց:

— Տո, անզգամ, քեզ ո՞վ ասավ էս բեր, հետ տար քցի իրա տեղը:

— Լավ, ձմեռվա պալտոն բերե՞մ...

— Քո գործը չի, ինչ կասեմ, էն էլ արա... Դե, յալլա, ի՛նչ ես ցցվել մեխի պես... պալտոն բեր...

Կինը մուշտակը ձեռքին հեռացավ:

Մարտիրոսը մի բլոկ-նոտի մեջ գրեց իր խոսելիք մտքերը, տակից թվական տվյալներ գրեց: Քիչ հետո կինը ձմեռային պալտոն բերեց: Մարտիրոսը մի երկու բաժակ կոնյակ խմեց, որպեսզի ճանապարհին չմրսի, ապա մի «ժուլիկ» արագ վերարկուի գրպանը դրեց ու դուրս եկավ:

Զգալով դրսի ցուրտը՝ նորից ներս մտավ:

— Աղջի, մի էն տուլուպը տուր:

Կինն ուրախացած գնաց ու պատուհանի հետևից հանեց մուշտակը: Մարտիրոսը հագավ և դուրս գնաց:

Դրսում նրան սպասում էր սահնակը: Մարտիրոսը մի, ինչպես ասում են, կիսաբերան բարևեց կառապան Արամին և մուշտակի փեշերը հավաքելով տեղավորվեց սահնակում:

Սահնակը շարժվեց: Մարտիրոսն աշխատեց ցրտից պատըսպարվել. մուշտակի ծալերն իրար վրա գցեց, ոտքերն էլ կիպ մոտեցրեց միմյանց ու կուչ եկավ սահնակի մի անկյունում:

Ձյան փաթիլները հեզիկ իջնում էին, բամբակի փոշու պես նստում նրա ուսերին ու կրծքին: Առավոտյան սառը քամին մտրակում էր նրան: Ցրտից ականջները կապույտ գույն էին ստացել և ասես մեկը ասեղով ծակծկում էր, այնպես էր ծակծկում, կասես պատժել էր ցանկանում նրան ձմռան այդ սառը քամին: Նա մուշտակի օձիքը վեր բարձրացրեց ու գլուխը թաղեց նրա մեջ:

— Ընկեր Մարտիրոս, ինչո՞ւ են քեզ կանչել,— ասաց կառապանը, երկար լռությունը խզելու համար:

Մարտիրոսը չպատասխանեց. «Զէ մի նստեմ ու զեկուցեմ քեզ... քու ի՛նչ գործն ա», մտքում ասաց նա ու դառնալով նրան ասաց.

— Ձիերին մտրակի, ձիերին:

Մարտիրոսին թվում էր, թե գնալով ճանապարհն ավելի է երկարում: Մի կողմից շրջկենտրոն կանչելու խորհրդավորությունն էր նրան անհամբեր դարձրել և մյուս կողմից էլ թրի պես կտրող առավոտյան քամին էր նրան անտանելի վիճակի մեջ գցել:

«Այ թե մի ավտո կունենար... Հիմա շատ շուտ տեղ էր հասել և քամուց էլ ապահով կլիներ՝ ցրտից էլ»: Ու որոշեց մի ավտո խնդրել Շրջգործկոմի նախագահից: «Թե որ կանչելը գիտեն, թող տալն էլ իմանան»:

Անհամբերությունից դարձավ կառապանին ու ասաց.

— Աղա՞, էսօր ձիերիդ խոտ չես տվե՞լ:

— Գարի էլ եմ տվել: Ինչի՞ ես հարցնում:

— Նրա համար եմ հարցնում, որ լավ չեն գնում:

Մարտիրոսին թվում էր, թե ձիերը լավ չեն գնում, մինչդեռ մտրակամաղ ձիերը գլուխները վեր բռնած հողմի պես սլանում էին: Մարտիրոսը ձանձրույթից սկսեց երգել.

«Աղխամ, բալամ բիր դա ման,
Դուլդուր վեր իգիմ, բիր դա ման...

Կառապանն էլ ոգևորված ու ձիերի սլացքից գոհ՝ ձայնակցեց նրան.

«Գյուն քեշտի, ումրամ քեշտի,
Ջիվան օլմարամ, քեշտի...

Մարտիրոսը դադարեց երգելուց. «Թու, շան տղա, ինչ անեմ՝ պտի կտրած դդմի պես մեջ ընկնի»,— մտածեց նա:

Կառապանը դեռ շարունակում էր երգել:

— Աղա, ի՞նչ ես գլուխս տաքացրած, հենց աշխարհը գցել, ձիերը քշի է,— չկարողանալով այլևս իրեն զսպել, ասաց նա:

Կառապանը, կարծես դիտավորյալ, շարունակում էր երգել.

«Աղխամ քեշտի, բալամ,
Ցայլանը օղը քեշտի, բալամ...

Մարտիրոսը մտավ շրջգործկոմի նախագահի առանձնասենյակը:

Շրջգործկոմի նախագահ Մինասը, ժպտադեմ մի երիտասարդ, նստած էր գրասեղանի մոտ և մեկի հետ հեռախոսով կապված խոսում էր:

— Բարև ձեզ,— բարևեց Մարտիրոսն ու գլխարկը վերցնելով անմիջապես նստեց նախագահի կողքին՝ բազկաթոռին:

Նախագահը գլխի թեթև շարժումով պատասխանեց նրա

բարևին, ապա խոսափողը վայր դրեց ու խորադինին նայեց նը-րան:

Նրա անտարբեր բարևելուց, ինչպես և լուրջ ու գննող հա-յացքից Մարտիրոսն ինչ որ վատ բան գուշակեց. «Վոնցոր եր-եւում ա, մեկն ու մեկը սրա փեշը քաշել ա»,— գուշակեց նա: «Թե մի կխմանամ էդ որ չան որդին ա էլել... Հախիցը կգամ. էնքան մատերիալ տամ, որ աչք չկարենա բաց անի... Սիբիր քշել կտամ, Սիբի՛ր... Ո՞ւմ հետ գործ ունեն... Ինձ Մարտիրոս Հարության կասեն, հա՛...»:

— Վերջերս մեզ մոտ չես գալիս, մեզ մոռացել ես, ինչ է պատահել,— խոսեց նախագահը:

— Համ ցուրտ ա, համ էլ... դե, քեզ հայտնի յա, թե ինչ-քան եմ զբաղված... գործերը շատ, ես էլ մենակ,— գրեթե ան-լսելի ձայնով շշնջաց նա:

— Հա՛, ասում են լավ ես աշխատում,— հեգնական տոնով ասաց Մինասն ու շեշտակի նայեց Մարտիրոսին:

— Այսինքն, ե՞րբ չեմ աշխատել որ... բայց հմի գործերն էլ էն չեն, բարդացել են... քաղաքականն էլ... գիտես, էլի... Ազնիվ կուսակցականը կարող չի հեռու մնա քաղաքական պայ-քարիցը...

— Դժվարանո՞ւմ ես աշխատել:

— Չէ՛, այսինքս, ինձ համար խաղ ու պար ա, բայց... դե, գյուղում մնալուց բեզարել եմ... Ախր մի տեղ որ ջուրը գյոլ ա տալիս ու երկար մնում, հոտում ա, անպետքանում:

— Ճիշտ ես ասում, Մարտիրոս... Ինչպես դո՛ւ...

— Ո՞նց թե,— զարմացած նայեց նրան,— ե՞ս եմ անպետ-քացել...

Մինասը ժպտաց.

— Լավ, որ հոգնել ես գյուղում աշխատելուց քեզ կազա-տենք:

Այնքան հանգիստ տոնով ասաց, որ Մարտիրոսն այլ բան չկասկածեց ու խրախուսված ասաց.

— Եթե բռնեղ մի հարմար գործի դնեք... կարելի է...

Մինասը ժպտաց.

— Առաջ քաշվել ես ուզում, հա՞... Մենք էլ ասում ենք՝ ինչո՞ւ է ակտիվացած օդի մեջ սուր ճոճում:

— Դե, ընկեր Մինաս, ի՞նչ ես զարմանում. սաղ Մխութինն ա առաջ գնում, որ ես առաջ գնալ եմ ուզում՝ վատ ա՞, բա ետ մնամ, որ գլխիս խփե՞ն...

Նախագահը խոր հայացքով նայեց նրան ու հանգիստ տո-նով ասաց.

— Ամեն մարդ պետք է իր վրա աշխատի, գիտելիքներ ձեռք բերի ու այս ձևով առաջ գնա և ոչ... քեզ նման...

— Ի՞նչ, ես ձեռքերս ծալած նստել ե՞մ:

— Չէ, բայց դու արջի ծառայություն ես մատուցել:

— Ո՞նց:

— Շատ պարզ. անմեղ մարդկանց զրպարտելով ես ցանկա-նում աթոռ գրավել, դա կարերիստի մոտեցում է, դա դեմ է մեր կուսակցության քաղաքականությանը:

Մարտիրոսը մնաց զարմացած:

— Մի զարմանա, ազնիվ թռիչքը մինչև իր բնի կտուրն է... Լսի՛ր: Մենք քեզ ազատում ենք աշխատանքից: Կուսակցա-կան կազմակերպության կողմից նախագահության մի նոր թեկ-նածություն կա. մենք համաձայնություն ենք տվել և վաղվա-նից դու ազատ ես, պատրաստվիր գործերդ հանձնելու նրան:

— Բա... ինձ ի՞նչ պաշտոն եք տալ:

— Առայժմ՝ ոչ մի:

— Ո՞նց,— զարմացավ Մարտիրոսը,— բա իմ էնքան աշ-խատանքը ջո՞ւրն եք թափում...

— Դու մեր կուսակցության ու կառավարության, մեր գյու-ղի հասարակության բարեկեցության համար չես աշխատել, ինչ՞ ջուրը թափենք: Քո ամբողջ աշխատանքն ուղղված է եղել միայն ու միայն ժողովրդի դեմ. քո կարերիզմով քեզ հետ վար-կաբեկեցիր նաև մեզ: Փոխանակ հետևելու գարնանացանի աշ-խատանքներին, փոխանակ մթերման գործը գլխավորելու, մարդ-կանց զրպարտելով ես զբաղված: Ասում են, և այդ հաստատ է, որ շաբաթներով գրասենյակ չես մտնում և այնտեղ եղած ժա-մանակն էլ գյուղի հասարակությանը չես լսում ու դուռը ներ-սից կողպած՝ Գալոյի հետ «նիստեր» ես ունենում: Ամո՛թ քեզ:

Մարտիրոսն ապշած նայեց նրան:

«Տունս քանդել են, խիստ տեսակի մատերիալներ են տվել

վրաս... Բայց կիմանա՛մ, կիմանամ թե ով ա իմ տունը քանդողը...»:

— Էդ ո՞վ ա ասել քեզ,— դարձավ նա նախագահին:

— Ոչ ոք չի ասել, այդ ասում է քո մատերիալների կույտը:

— Խե՞, վատ եմ արե՞լ:— Բա թողնեի որ հակաները քշքեին մեկ...

Մինասը բարկացավ.

— Ո՞նց թե... քեզ ո՞վ է թույլ տվել անմեղ մարդկանց զրպարտել: Նրանց «հակա» ես համարում, քեզ՝ հարազա՞տ, հա՞...

— Ո՞նց թե...

— Շատ պարզ: Միայն հակակուսակցական տրամադրություն ունեցող մարդիկ են ազնիվ կուսակցականների հեղինակությունը գցում, նրանց զրպարտում:

— Ո՞ւմ եմ զրպարտել,— շշնջաց Հայրապետյանը:

— Ահա՛ թե ում,— ու գրասեղանի դարակից հանելով մի մեծածավալ թերթ, տվեց նրան:

— Տես, սա ո՞վ է գրել:

Մարտիրոսը նայեց թերթին ու զարմացավ: «Ո՞նց ա սրա ձեռքն ընկել», մտածեց նա, ու խեղճացած շշնջաց.

— Իմ գրածն ա:

— Դու այս մատերիալով վարկաբեկել ես ժողովրդի հարազատ զավակներից մեկին: Դրանով դու օգնել ես դասակարգային թշնամուն, նրա ջրաղացին ջուր ես լցրել: Ուզում էիր նրան՝ Սերոբին հեռացնեին և քեզ տեղը նշանակեի՞ն, հա՞:

«Էս ո՞րտեղից ա իմացել սա... Չէ, ինչոր երևում ա, Գալոյի մատը խառն ա...թե չէ սա ինչ գիտի իմ մտքինն ինչ ա»— մտածեց Մարտիրոսն ու երկյուղից փշաքաղվեց:

— Դու քո գրածին հավատո՞ւմ ես, ճի՞շտ ես համարում թվածդ փաստերը:

— Դե, ի՛նչ իմանամ... Միսն առանց ոսկորի տեհել չեմ...

— Ի՞նչ ես ուզում գրանով ասել...

— Որ... մի մատերիալ սխալ կլի, մի քանիսն էլ՝ ճիշտ:

— Դա արդարացման միջոց չի: Մարդկանց նկատմամբ պետք է լինել չափազանց հոգատար, չի կարելի նրանց պատվի հետ խաղալ...

— Օրինակ... ո՞ւմ...

— Լսի՛ր, չես էլ ամաչում, դեռ խոսում ես: Քո կարծիքով ընկեր Սերոբը տասը տարեկան հասակում համոզված դաշնակցական է եղել և միացած նրանց՝ բոլշևիկներին «խեխտ ջարդ է տվե՞լ»... Նա Սասունցի Դավիթն է՞ր, թե՞ Մհերը:

— Դե... ի՞նչ իմանամ... ասում են...

— Դրա համար դու դատական պատասխանատվության ես կանչվելու և հաշիվ կտաս նաև գյուղացիներից հավաքած դումարների անհայտացման մասին:

Հայրապետյանի գույնը թռավ, ոտքերը ծալվեցին: «Չէ՛, խառակ կորած եմ», մտածեց նա ու զապելով իր հուզմունքը, իբր ոչ մի բան չգիտե, ասաց.

— Ի՞նչ դումար:

— Աղբյուրի փողը, չգիտե՞ս:

— Դե... Քիչ էր հերիք չարավ... կմկմաց Մարտիրոսը:

— Իսկ դումա՞րն ուր է, ի՞նչ ես արել:

— Մեր Գալոյին տվի... տարավ... բանկը...

— Սրանով դեռ չվերջացավ, դեռ զրպարտելու համար նաև կուսակցական խիստ տույժի ես ենթարկվելու:

— Էնա... միանգամից Սիբիրական արեք էլի՛,— հուսահատված ասաց նա:

— Իսկ դու լա՞վ էիր անում, որ անմեղ մարդկանց ուզում էիր նստացնել տալ, հ՞ը:

Հուզված ու այլայլված Մարտիրոսն իրեն դուրս գցեց:

— Գլխարկդ ա՛ռ, ճանապարհին կմրսես,— հեգնանքով ձայնեց նրա հետևից Մինասը:

Մարտիրոսն այնքան էր իրեն կորցրել, որ մոռացել էր նույնիսկ գլխարկը վերցնել: Հետ դարձավ ու Մինասի ձեռքից գլխարկն առավ:

— Էնպես գործ արա, որ ամոթից չկարմրես ու գլխարկդ էլ չմոռանաս, ասաց ու ներս մտավ:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՑՈՒՐԱԲԵՐԴՑԻՔ

(Հ ա տ վ ա ծ)

(Մի դեպք X դարի Սյունյաց աշխարհում ծագած գյուղացիական ապստամբություններից)

Գիշերվա սև թագուհին՝ լուսինն ելավ քնից խոր,
Ու նրա հետ արթնացավ, ասես, աշխարհը անդորր,
Սյունյաց հազար անդունդներն երախները բացեցին,
Եվ գետերը՝ արծաթե հալոցքի պես փայլեցին:
Որպես առյուծ դարանած բերդը իշխան Սմբատի
Ժայռերից վեր երևաց դարպասներով երկաթի:

Նետի նման բերդ մտավ մի սևաձի սուրհանդակ,
Սիրտը՝ լեցուն տագնապով զրահավոր կրծքի տակ.
Եկավ, չոքեց նա հաղթեղ ոտքերի տակ Սմբատի,
Որի մռայլ աչքերի ցոլքը հարված է շանթի:
Եվ սուրհանդակը դողով, աչքը նրա կես թրին,
Գոչեց այսպես.— Ո՜վ իշխան, իմաստությամբ դու խորին,
Խնայիր ինձ՝ շանը քո, որ վատ մի լուր, մի համբավ
Պիտի դուժեմ ես հիմա, սրտիդ տալով վիշտ ու ցավ:

Ցուրաբերդցի ապստամբ ճորտերն ելած թև-թևի,
Ավերեցին, քանդեցին սրբավայրը Տաթևի:
Ու միաբանք ցած ընկան բրերի տակ սոսկի,
Դողաց աշխարհը Սյունյաց՝ զարկերից սև ամբոխի:
Մեր սուրբ մեռոնը առան և նետեցին ձորը խոր,
Սուրբ նկարներն այրեցին, տարան գանձերը բոլոր:

Առանց սարսափ ըզգալու, նրանք ձուլված միատեղ,

Ցած են հոսում լեռներից, որպես գարնան հորդ հեղեղ.
Երբ Տաթևը քանդեցին, արդ՝ դեմ ելած քո գահի,
Կալվածներդ են ավերում ու գալիս են կատաղի:
Այդ ելուզակ ճորտերը ձեռքին ունեն ամեն ինչ,
Ձողեր, թրեր, քլունգներ և աղեղներ լայնալիճ:
Մերկ ոտներով, ջլապինդ, սլանում են նրանք վեր,
Կայծն է պոկվում ու թռչում նրանց զարկից անվեհեր:

Նրանք իջան լեռներից, որպես գարնան վարար գետ,
Որ գալիս է անդադար ու մոլեգնում չարաղետ,
Որ անտառներ է պոկում, նետում ժայռեր ահագին,
Իր շուրջը մահ է սփռում հորձանքով իր մոլեգին:
Ու մի զարկին հաղթալանջ, ելած նրանց առաջնորդ,
Թռչում է սև ձի հեծած մի հեղեղի նման հորդ:

Ե՛լ ու հասիր, ո՜վ իշխան, տեր ընդարձակ Սյունիքի,
Թե չէ շարժումն այդ վայրի հզոր գահդ կթեքի:
Արդ բոլորել են վաթսուն տարիները իմ գլխին
Եվ ես ծառա եմ եղել ձեր մեծափառ տանը հին.
Ջահել օրից մինչ հիմա՝ գլխիս նստած ձյուն-ձմեռ,
Այնպես վտանգ, որ է սա, իմ տեր, կյանքում չեմ տեսել:
Հիշիր դու քո պապերի սրբագործված խոսքը հին՝
«Անձդ պահիր աստծո պես և շան նման՝ քո ճորտին»:

Գիշերվա մեջ խոժոռեց Սմբատ իշխանն էդ լուրից,
Ասես գոռ սիրտը խանձվեց անմարելի մի հուրից,
Սիրտը սողաց մահվան դող, Փչչացրեց որպես օձ.
«Ահեղ աստված Հայկազյան, տեղա շանթեր, հուր ու բոց,
Եվ սուր կորով քո որդուն՝ ինձ, իշխանիս դու այնքան,
Որ ճորտերի շարժումն այդ, տե՛ր, ես անեմ արանաքամ:
Չէ՞ որ քո դեմ է գալիս հեղեղն այդ մութ, վայրենի
Եվ քանդում է դարևոր սրբությունները հիմի»:
Ապա գոռաց վագրի պես.— «Ռազմի չեփոր թող հնչեն,
Եվ զորքերն իմ բազմամբոխ թող դեպի վանքը թռչեն
Խորտակելու ռամկության ազատատենչ փորձը մեծ,
Որ դեպի գահս է սողում, ամենակալ, որպես դև»:

Ու պղնձե շեփորներ լեռների մեջ հնչեցին,
Դեպի Տաթև սլացավ իշխանական այրուձին:
Եվ Որոտան գետի մոտ, ավեր վանքից մի քիչ ցած,
Երկու ահեղ ախոյան եկան, եկան դեմ-դիմաց:
Մի կողմ լքված, հալածված ճորտերի մի մերկ բանակ,
Մյուս կողմը սպառազեն զորքեր ընտիր, անքանակ:
Մեկը՝ հանուն փրկության բյուր-բյուրավոր ճորտերի,
Մյուսը փառաց ու կյանքի մի բուռ դաժան տերերի:

Եվ մոլեգին ցած թռավ դարբինն ահեղ, ապստամբ,
Շողաց թուրը՝ շեկ կայծակ, ձենը թնդաց որպես ամպ:
Կռիվն ահեղ թափ առավ, հազար ապար փշրվեց,
Ընկան զորքեր անքանակ, զենք ու զրահ ջախջախվեց:
Ցուրաբերդցիք աննահանջ, մուրճներով առյուծի.
Սլանում են հողմի պես դեպի զինված այրուձին.
Վրիժառու սրերով կովում են թունդ, մոլեգնում
Ու սրերում կուտակված դարերի թույնը թափում:
Կոտորում են անխնա, հետո ընկնում քաջի պես,
Երազներով դյութական, երազներով լուսապես:

Ու նրանց տեղ իրար հետ եկան նորերը ահա,
Ճորտեր եկան քաջալանջ սրտով անդող ու անահ,
Եկան կանայք սևաչյա, սրտերում սեր ու կրակ,
Եկան կայտառ մանուկներ, ծերունիներ՝ սպիտակ,
Եկան՝ ընդդեմ բռնության, ազատության երազով,
Եկան, ինչպես փոթորկված, ափից ելած ահեղ ծով:

Ու Սմբատը արքայից զորքեր բերեց բյուրավոր,
Որոնք տեգեր ունեն սուր և նժույգներ ահավոր:
Ու անդադար, աննահանջ կռվեցին օր ու գիշեր.
Այնքան արյուն հոսեց ցած, որ կարմրեց գետը ծեր:
Եվ նժույգներն հատընտիր, և զորքերը ապազեն
Ջարդեցին ու փշրեցին ճորտերին քաջ ու անգեն:
Հաղթեց ուժը բռնության: Սմբատն ահեղ քրքջաց,
Նրա արնոտ շուրթերից ասես օձեր թռան ցած:
Կոտորեցին փոքրերին լուսափթիթ ու անմեղ,

Կոտորեցին ծերերին, մարդկանց, կանանց միատեղ,
Ցուրաբերդի ոչ մի այր կռվի դաշտից հետ չեկավ.
Գերադասեց ազատ մահ, կռվեց, քաջի պես ընկավ,
Որ չտեսնի ավերումն հայրենական օջախի,
Որ մահովն իր փառավոր ստոր կյանքը ջախջախի:
Ցուրաբերդցիք ապստամբ կռիվներում փորձառու,
Արյունն իրենց թափեցին, ներկեցին գետ ու առու:

Սակայն, ըմբոստ ոգին մեծ իր թևերով սրբարար
Ելավ մռայլ էն ձորից բռնեց Սյունիքը արար,
Ապրեց այնտեղ անընկճում, սերունդների սրտի մեջ,
Ինչպես կայծի մոխրի տակ անմարելի հուրն անշեջ:
Մինչև հասավ արշալույս և փրկարար մի Արև
Աշխարհի մեջ այդ մռայլ փռեց կյանքի մի լույս թև:

Եվ էն օրից փրփրած Որոտան գետն է հոսում,
Եվ դարավոր կռիվն այն ասես մեզ է փսփսում.
Կա և Ցուրան ավերակ՝ խոր անդունդի եզերքին,
Որ ելել է ու ընկել, պայքարի սուրը ձեռքին:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

(Գազել)

Ես շատ եկա աշխարհն արար՝ հեծած իմ ձին հուր հրեղեն,
Իմ հարազատ լույս հայրենիք, քեզ պես այլ աշխարհ չտեսա:

Ես քաղեցի արմավ ու նուռ արևելքի թաղերի մեջ,
Քո քաղցրահա՛մ, արևաբույր բարերի պես բար չտեսա:

Եղա անգամ խոր երկնքում, նստած զմրուխտ ղուշի թևին,
Յոթը երկնի աստղերը բյուր լույսիդ բարեբար չտեսա:

Անցա հազար հայրենիքներ թափառական ցուպը ձեռիս,
Քո հողի պես քաղցր ու ջերմ ուրիշ հող ու ջուր չտեսա:

Դու ինձ, երկի՛ր, յար ես ավել Սևանի պես ծով աչքերով,
Հազար յարի շունչ ըղձացի, իմ յարի պես յար չտեսա։

Ես լսեցի հազար պապել, հազար նվագ հոգի հուզող,
Մեր իմաստուն գուսանների լարերի պես լար չտեսա։

Մտքով անցա դարերը հին, տեսա Դավթին, Իսքենդարին,
Աշխարհարշավ քո Բանակին ուրիշ հավասար չտեսա։

Հազար հողմեր դեմդ ելան, դու հողմերի սանձահարող,
Հողմերի դեմ մի անառ բերդ, քո գլուխը վար չտեսա։

Յոթը արև կուզեն մեկեն լույս տան լույսով արեգական
Մեր Կրեմլի Արևի պես հզոր, Լուսարար չտեսա։

Կուզես երթամ, ու թափառեմ, աշխարհն արար շուռ գամ
նորեն,
Ժողովրդիդ նման սիրով՝ ուրիշ շինարար չտեսա։

Փառք քեզ աշխարհ հերոսների, մայր ամենայն ազատության
Լուսեղ դարիդ նման վսեմ, ես մի ուրիշ դար չտեսա։

ԼՃԱԿԻ ՍԵՐԸ

(Սևանի մոտ)

Ո՞վ քեզ հուզեց արդյոք, ո՞վ կախարդեց քեզ,
Որ ծփում ես, լճա՛կ, դու իմ սրտի պես,
Որ սարերի գրկում գնում ես, գալիս,
Ալիքներդ մանրիկ ափերին տալիս։

Ո՞վ էր սիրուհին քո, վոր փախավ հեռու,
Գուցե լուսինն էր այն, քո սերը գերում
Ու քո գիրկը մտնում գիշերները խոր
Եվ վերդովում, լճակ, քո հոգին՝ անդորր։

Կամ թե արևն էր այն քո մեծ սիրուհին,
Որ ո՞վ գիտե, թե վո՛ւ դարերից դեռ հին,
Հմայել է գերել քեզ, իմ լույս լճակ,
Հրեղեն սեր թափել քո ջրերի տակ։

Ո՞վ քեզ հուզեց արդյոք, լճակ մտերիմ,
Ո՞վ գերեց քո սիրտը, ո՞ր կախարդ փերին,
Որ ծփում ես դարեր, գնում ու գալիս,
Ալիքներդ ժխոր ափերին տալիս։

ԱՂԲՅՈՒՐ

Սկզբ պարզ ու սառ, աղբյուր,
Ճամփադ սար ու քար, աղբյուր,
Սիրտս էլ քո էդ ջրի հետ
Հեռ ու առաջ տար, աղբյուր։

Յարս կուժը ուսին էր,
Աչեն նորած լուսին էր,
Լուսով եկավ, անց կացավ,
Քեզ հետ գնաց վար, աղբյուր։

Սրտիս միջին հուր մնաց,
Ասա՛, յարս ո՞ւր գնաց,
Ա՜խ մեկ էլ գամ քեզ այցի,
Հետս սիրած յար, աղբյուր։

ԱԴԱՐԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ՊՈԵՄՆԵՐ

ԽՄԲԱՊԵՏ ԱՆՎԱԽԸ

Էն ահավոր կռվի տարին
Դաշնակները ինչե՜ր չարին...
Հենց մեր գյուղում իր խմբի հետ
Երկար ապրեց մի խմբապետ՝
Անունն Անվախ...
Նա աջ ու ձախ
Տարածում էր ահ ու սարսափ:
Ոչ սահման կար, ոչ վախ, ոչ չափ...
Գյուղի գլխին պատուհաս էր.
Ո՞վ կարող էր մի բան ասել:
Էդ Անվախը, (ա՜խ, աման, ա՜խ,
Ցարաբ ով էր ասել Անվախ),
Մի մութ գիշեր առած զենքը,
Դուրս է գալիս իր տան շեմքը.
Իրա շեմքից մթնում աղոտ
Բան է տեսնում հենց դեղի մոտ.
Շարժվող մի բան
Հաստատ, կենդան:
Մտածում է, որ կա չկա,
Թշնամին հենց էդ է, որ կա,
Պահակներին սպանել են
Եվ ուզում են բռնել իրեն:
Էս մտքի հետ

Իսկույն և եթ
Կրակում է (բայց չի դիպչում)
Ու վազելով մտնում է տուն...
Պահակները վեր են թռչում,
Խավարի մեջ «հեյ-հեյ» կանչում,
Իսկ Անվախը իրա տնից,
Վիզը հանած պատուհանից,
(Խնայում էր կյանքը իրա՝
«Հայրենիքի գործի համար»),
Պատուհանից վիզը հանած՝
Հայհոյանքով խիստ կատաղած
Ոտքի հանեց իր խումբը ողջ,
Նրա հետ էլ՝ գյուղը ամբողջ:
Մանուկ ու ծեր,
Որբեր անհեր
Հավաքվեցին նրա տան մոտ
Ու Անվախը տվեց ամոթ,
Թուք, նախատինք վախկոտներին
Ու դավաճան լակոտներին:
Բոյը կարճ էր, վիզը ցավեց,
Ձիու թամբը առաջ բերեց,
Ու կանգնելով փափուկ թամբին՝
Հրամայեց զինված խմբին.
— Տղե՛րք, դեղը շրջապատե՛ք,
Սաղ թե մեռած պետք է բռնե՛ք:
Եվ Անվախի խումբը անվախ
Շրջապատեց դեղն անհապաղ:
Կրակեցին, հայհոյեցին,
Բայց թշնամուն չհանեցին:
Նա մնում էր լուռ ու հանդարտ,
Ու դրա հետ նաև անպարտ:
Ոչ խոսում էր, ոչ կրակում,
Խմբի վրա ահ էր ազդում....
— Տղե՛րք, լավ եք տեղը գտել.
Ինձ համար է դարան մտել.
Նա լռում է, չի կրակում,

Որովհետև ինձ չի գտնում:
Որ էդպես է, դեզը վառե՛ք,
Ամբողջ գյուղին դուք ցույց տվեք,
Որ դավաճան, նենգ թշնամին
Կա միշտ, նույնիսկ քնի ժամին:
Խոտի տերը մեր խեղճ Պետին
Էս խոսքերից չոքեց գետնին.
—Ամա՜ն, Անվախ, մեռնեմ գլխիդ,
Էդպես բան մի ասա խմբիդ:
Տղերքըս սաղ կալի դաշտում,
Ճաշ էլ չունենք հացի տաշտում...
Էդ մի դեզն է, էդ էլ վառեն,
Հայվանները կկոտորվեն...
Բայց Անվախը էնպես գոռաց,
Որ խեղճ Պետին մնաց սառած...
—Ո՞վ է,— ասավ,— էդ դավաճան,
Շուն-շան-որդին, զարկեք դրան.
Դա թշնամու ընկերն է հենց,
Որ լալիս է, կոծում էնենց.
Իրա խոտի դեզը փոքրիկ
Մի՞թե թանկ է, քան հայրենիք:
—Ամա՜ն, Անվախ, անվախ մնաս,
Դուն էլ ինձ պես հեր կունենաս,
Մեղք եմ, խղճա՛, թո՛ղ ես գնամ,
Խոտի տակից հանեմ նրան:
—Տղե՛րք,— գոռաց Անվախը քաջ,—
Դրան զարկեք հենց իմ առաջ.
Դա ուզում է սուտից լացի
Ու թշնամու դիրքերն անցնի:
Պետին կանգնեց դողդողալով
Պատուհանի դիմաց լալով.
— Պարոն Անվախ, մորուքից էս
Մի՞թե վնաս կհասնի ձեզ,
Մեղք եմ, խղճա՛, թո՛ղ ես գնամ,
Խոտի տակից հանեմ նրան:
— Ձե՛նդ, քավթա՛ռ, դահլա տարար.

Ինձ գովում է աշխարհն արար,
Որ գիտեմ ես մարդ ճանաչել...
Չէ՛, չես կարող ինձնից փախչել:
Ու կրակեց... Թշվառ Պետին
Օրորվեց ու գրկեց գետին:
— Ինչ եք սառել էշի նման,
Մի՞թե պարզ չէ ձեզ ամեն բան,
Թշնամին է էդտեղ պահված,
Էս քավթառի ձեռով սարքված:
Եթե ձեռքից փախցրել եք,
Կկոտորեմ, լա՛վ իմացեք:
Դե շո՛ւտ, կրա՛կ, խոտը վառեք
Ու թշնամուն ինձ մո՛տ բերեք:
Աշնան խոտի դեզը վառվեց,
Չորս բոլորը լուսավորվեց
Էն լույսի տակ
Պարզ ու հստակ
Մեծ ու պստիկ տեսան հանկարծ
Դեզի կողքին մի էշ ընկած,
Իսկ Անվախի խումբը զինված
Սառկած էշին շրջապատած:

ՄԱՅՐՆ ՈՒ ՍՈՎԸ

(Պատանիների համար)

1

Գյուղը որբի պես քաղցած ու տկլոր՝
Ականջ է դրել ջրի վաշ-վուշին.
Իսկ սարը նման գթառատ մի մոր՝
Նրան սեղմել է իր դեղնած դոշին:
Լուսինն էլ ահա մի ամպից բռնած՝
Աշխատում է շուտ վերև բարձրանալ
Եվ կարծես դեղնած, խեղճ վիզը ծռած՝
Անճար մարդկանցից հաց է խնդրում նա:

***

Մի ջահել տղա կանգ առավ գյուղում
Հին ու գետնամոր խրճիթի առաջ,
Ներսից վոչ մի ձայն նրան չէր հասնում․
Կարոտած սիրտը ահից թրթռաց։
Նա դուռը բաղխեց։ Մի կին գլխաբաց
Մազերը խառնած, բոբիկ ոտներով,
Հագուստների տեղ լաթերով պատած,
Դուռը ետ տարավ ոսկրոտ ձեռքերով։
Գասպարը մորը ճանաչեց իսկույն։
Ուզեց փաթաթվել նրա չոր վզին։
Սակայն կաշկանդված կարոտով անհուն՝
Մտավ խրճիթը լուռ, կիսամթին։
Նա չհավատաց իրա աչքերին
Եվ շուրջը նայեց խրճիթում կանգնած․
Ի՛նչ կար թողածից—մի կոտրած թախթ հին
Ու ցնցոտիներ՝ են թախթին փռած։
Իսկ ջահել կինը․․․ Օ՛, ի՛նչ է դարձել․
Դժվար է անգամ նրան ճանաչել։
Ուր է առաջվա էն Վարդիշաղը,
Որին գովում էր իրենց ողջ թաղը։
Խոտի պես դեղնած, մի թաղիք տակին՝
Անզոր պառկած է կրակի կողքին․․․
․․․ Ո՞նց ներկայանալ հարազատներին։
Չէ՞ որ լուրը վատ կազդի հիվանդին։
Եվ նա որոշեց առայժմ լռել՝
Սրտում պահելով կարոտը անքուն։
Նավթ չկար, մայրը ճրագ չէր վառել
Ու չճանաչեց խավարում որդուն։
Գասպարը տխրեց։ Նա զգաց ամոթ
Տկլոր ոսկրացած մոր ու կնոջ մոտ,
Առանց խոսելու նստեց հին թախթին,
Որը ճռռոցով բողոքեց տակին։
Էսպես չհայտնեց հարազատներին
Իր ով լինելը․ և նրանց հարցին՝

Թե որտեղից է և ուր է գնում,
Ասաց՝ «Ղարիբ եմ, մեր տուն եմ դառնում»։
—Դե, կներե՛ս մեզ, որդի, հաց չունենք,
Ոչ էլ տեղաշոր ունենք քնելու,
Տղես կորած է, մենք էս երկուսս ենք,
Էլ հնար չունենք ավել ապրելու։
Կռիվը եկավ սև սելավի պես,
Չթողեց գեղը վար ու ցանք անի
Ու էսօր ամբողջ ժողովուրդն էսպես
Չի կարում իրա սև օրը տանի։
Մի կով ունեի, զոռով խլեցին,
Տարան, զորքերի համար մորթեցին․
Ասում են՝ «Տղադ կռվում է մեր դեմ»,
Ու թե որտեղ է՝ ես էլ չգիտեմ։
Էս սհաթիս որ գեղը թոփ գցես,
Կտոր ճաթն ինչ է, չես կարա ճարես,
Սովը եկել է խալխին կոտորում․
Օրը հինգ–վեցը հողին ենք հանձնում։
Էս հարևանիս երեխան մեռավ։
Ես կողքին էի, ձեռը դեմ արավ․
— Մի քիչ հաց,— ասաց,— մի քիչ հա՛ց տվեք,
Ես էլ մեռնիլ չեմ, ինձ ազատեցե՛ք։
Դե հացը ո՛վ տա․ ողջ գեղն է սոված,
Էլ երեխա չի մնացել գյուղում․
Էսպես ենք ապրում, թաց ու սևացած,
Դարդերով լիքը մեր էս նկուղում։
Էսպես պառավը պատմում է երկար,
Իսկ որդին անձայն լսում էր նրան։
Հարսն էլ կրակը բորբոքում էր հար,
Որ լույս արձակի, մթնում չմնան։
Մի ծանր թախիծ խոր սրտի վրա՝
Գասպարը անշարժ թիկնել է պատին,
Ապա սկսեց հանվել, և նրա
Գրպանից մի փող գլնդաց թախթին։
Գասպարը տարված ծանր մտքերով՝
Չլսեց անգամ զնգոցը նրա

Ու ջարդված, թմրած, ցեխոտ ոտքերով,
Պառկեց ճռռացող հին թաղթի վրա:
Նա շատ հոգնած էր. երկար օրերով
Ճամբա էր կտրել ոտքով ու անքուն,
Այժմ ծածկվելով իրա շորերով՝
Նիրհում էր թաղթին կես քուն, կես արթուն:

2

Դուրսը ողբում էր ցուրտ քամին անվերջ,
Արդեն մարել է կրակի բոցը,
Խրճիթի անդորր մութ լռության մեջ
Լսվում է հյուրի ծանր փնչոցը:
Հարս ու սկեսուր մնացին նստած.
Մեկ էլ պառավը շշուկով ասաց.
— Տեսա՞ր, Վարդիշաղ, ինչքան փող ունի,
Թափվեցին թաղթին, նա չուզեց վերցնի.
Ախ՜ր... գիտե՞ս ինչ... գիտե՞ս, հաց չունենք...
Համ էլ մեզ համար մի լավ կով կառնենք...
Գասպարս չկա տեսնի առանց կով.
Դե մենք էլ մի քիչ կապրենք ապահով...
Սուս... դու մի խոսիր... ես ինքս կանեմ...
Դու մի կերպ կօգնես... տնից դուրս տանենք:
Հիմա... լուռ կենանք մինչև լուսադեմ
Ու էն ժամանակ... կվերջացնենք...
Դուրսը ողբում էր ցուրտ քամին անվերջ:
Վաղուց մարել է կրակի բոցը,
Խրճիթի անդորր մութ լռության մեջ
Լսվում է հյուրի խուլ խռմփոցը...

3

Գյուղի վերևում մի աքլոր կանչեց,
Ու մի ուրիշի ինչ որ հարց տվեց,
Ներքևի թաղից մեկը բարձրաձայն
Նույնությամբ տվեց նրան պատասխան:

Մրոտ երթիկից մի կտոր լուսին
Անհոգ նստել էր քնածի ուսին,
Եվ ահա, անձայն, կիսախավարում
Պառավը դեպի կացինն է սողում:
Խառը մազերը թափված ուսերին՝
Տվել են դեմքին մի տեսք ահռելի:
Ու մեծ կացինը ոսկրոտ ձեռքերին՝
Նմանվում էր նա մի խելագարի:
Նա շունչը պահած, համր քայլերով,
Պատին քսվելով մոտեցավ թաղթին,
Ապա ոսկրացած ձեռքերի ուժով
Կացինը իջավ քնածի գլխին:
Քնածը ճչաց... աշխատեց նստել,
Սակայն պառավը ահից սարսափած
Ծանր կացինը վեր քաշեց մեկ՛ էլ
Ու ամբողջ թափով նորից բերեց ցած:
Լսվեց մի տնքոց ու նորից լռեց...
Դարձյալ մի անդորր լռություն տիրեց...
Դուրսը լսվում էր քամու ոռնոցը,
Ներսը՝ պառավի ծանր հևոցը:
Հարս ու սկեսուր դուրս տարան նրան
Քաշ տվին դեպի փլված մարագը,
Քարեր, փայտ ու հող թափելով վրան՝
Ծածկեցին իրենց մարագի տակը:

4

Երկնքի փեշից լուսինը բռնած՝
Դանդաղ իջնում էր դեպի մուտքն իրա
Եվ կարծես դեղնած, խեղճ վիզը ծռած՝
Անճար մարդկանցից հաց էր խնդրում նա:
Գետակը ձորում քարերն էր լիզում,
Լիզում էր անվերջ ու չէր հագենում,
Աստղերն էլ գրկված մի անուշ քնից՝
Լուռ դիտում էին անհաս երկնքից:

***

Ոճրագործները խրճիթը մտան
Ու սկսեցին արագ որոնել։
Բայց նրանք երկու կոպեկ փող գտան.
Հատակի վրա ընկած էր նա էլ։
— Վո՛ւյ, քոռանամ ես,— ճչաց պառավը,
Կարծես մի ինչ որ բանից սարսափած,
Մազերը քաշեց, հեկեկաց դառը
Ու ձեռքին բռնած թղթերն ընկան ցած...
— Օ՛յ, տեր իմ աստված, սա իմ նկարն է,
Էս էլ իմ գրած նամակը. ահա՛...
Ա՛խ, նանի՛, նանի՛, դա մեր Գասպարն է.
Ու հարձակվեցին մարագի վրա։
Բարդի ու հողի տակից հանեցին
Հինգ տարի կորած մինուճար տղին,
Նրանց բարձրաձայն ճիչ ու գոռոցից
Գյուղը հավաքվեց էս ու էն կողմից։
Երկինքն իր պայծառ աչքերը փակեց
Էլ չուզեց նայել էն տեսարանին։
Արևը գունատ գլուխը հանեց
Վշտահար նայեց սովատանջ գյուղին։
Ամպի թաշկինակն աչքերին սեղմած՝
Լուսինը ծածկվեց սարի թիկունքում,
Իսկ մարագի մոտ դիակը գրկած՝
Մայրը խելագար կանչում էր որդուն։

ՆՈՒՇԻԿ-ԹՈՒՇԻԿ

(Լ ե գ ե ն դ)

Ծղան նշան եր—Նուշիկ կասեին,
Աղջիկը Թագուշ - Թուշիկ կասեին

1

Մեզանից առաջ շատ ու շատ դարեր
Էն վես լեռների լանջում ցողապատ
Կար մի հատ հովիվ չքնաղ, գանգրահեր,
Ու մի հովվուհի՝ սարերում մի հատ։

Հովիվներ էին մի ամբողջ գյուղի,
Հանդ էին գնում առանց երկյուղի,
Հոտը թողնելով դալար խոտի մեջ
Վազվզում էին ու խաղում անվերջ։
Ամեն մի բանի անհոդ, անտարբեր,
Մեծանում էին ուրախ, սրտաբաց,
Նրանք չունեին սրտակից, հեր, մեր,
Նրջանիկ էին մեկ—մեկով լցված։

Մեկը ծաղիկն էր, մյուսը՝ բույրը,
Մեկը աղբյուրն էր, մյուսը՝ ջուրը,
Մեկը արեն էր, մյուսը շողը,
Մեկը կանաչն էր, մյուսը ցողը։

Նուշոն խնձոր էր՝ կարմիր, հոտավետ,
Թուշոն՝ դալար ճյուղ՝ աճած նրա հետ։
Թուշոն մի ծառ էր կանաչատերև,
Նուշոն՝ կյանք տվող փայփայող արև։
Նուշոն աղբյուր էր զուլալ, պարզորակ,
Թուշոն՝ մի ճամպորդ ծարավ ու պապակ։
Թուշոն բուրմունք էր ծաղկունքից քամած,
Նուշիկը՝ գեփյուռ՝ նրան գիրկն առած։

Նուշոն ծաղիկ էր սիրուց արբեցող,
Թուշիկը՝ նրա թերթերի մեջ ցող։
Ու ապրում էին ուրախ խաղի մեջ,
Մարդկանցից հեռու, անհոգ, սրտաբաց,
Թռչկոտում էին ցող ու շաղի մեջ,
Ամեն բանից կուշտ, մեկ-մեկով լցված։

2

Եկել էր մի օր մի հարուստ աղա
Պտույտ անելու սարերի լանջում,
Փնչում էր սև ձին կատաղած, յորղա
Ու սանձը կրծում, դոփում, խրխնջում։
Թուշոն պահվել էր թփերում շաղոտ,
Ինչպես եղնիկը գայլից սարսափած,
Աղան ձին սանձեց կանգնեց նրա մո՛տ
Ու մի ոստյունով թռավ, իջավ ցած։
Տեսավ նա այնտեղ կանգնած Նուշոյին
Սանձը երկարեց, որ նա պահի ձին։
— Դու ինչացո՞ւ ես, է՛յ, լաթոտ տղա...
— Դա իմ սիրածն է, գթացե՛ք, աղա...
Աղան հայացքով չափեց Նուշոյին...
— Սա՞ է սիրածդ... չէ՛-չէ՛ մի ոյին,
Դու պետք է լինես տիրուհին իմ տան,
Եվ ոչ թե էսպես ոտաբաց չոբան։
Էս փալնքատին մտքիցդ հանի...
Հիմա դնում եմ, որ քեզ արժանի
Շուքով, հանդիսով գամ քեզ տուն տանեմ
Ու մեզ արժանի հարսանիք անեմ...

Ասաց աղան ու ձին նստեց նորից,
Որ խրխնջալով փախչում էր ձորից,
Սանձը կրծում էր, սմբակը դոփում,
Ոնց որ Թուշոյի սրտին էր խփում։

3

Աղան եկավ իր մարդկանցով,
Սև ձին տակին խաղալով,
Հառաչեցին ծաղիկ ու հով
Ափսոսանքով ու լալով։
Ջուրը լացեց, շուրջը թացեց,
Ցողը խոտին չորացավ,
Ալ կակաչը կուրծքը բացեց
Սիրտը սև էր՝ ուներ ցավ։

... Ու վազում են քարոտ ճամփով
Նուշոն-Թուշոն ոտաբաց,
Հետևում է աղան խմբով
Բարկությունից փրփրած...
Հավեհաս են... Հասնում են, հա՜...
Թուշոն հոգնել է արդեն,
Մի քիչ էլ... ահա՜... ահա՜...
Երկուսին էլ կբռնեն։
— Ա՜խ, իմ Նուշո, ի՜մ սիրելի,
Ես չեմ կարող, դու գնա...
Բաժանվում եմ, քոնն եմ էլի,
Աղան ինձ չի տիրանա։

***

Ասում են էս խոսքի հետ,
Թուշոն դարձավ զուլալ գետ,
Դարձավ մի գետ պա՛րզ, հստակ
Սիրած տղի ոտքի տակ։
Ու սիրածից բաժանված,
Փռած, փրփուր վարսերը,
Ոլոր-մոլոր վազեց ցած,
Երգելով իր վառ սերը։

Ասում են, թե կատաղած,
Աղան ձիուց իջավ ցած,

Գնաց չոքեց գետի մոտ
(Դողդողում էր ձեռ ու ոտ)։
Խմեց, խմեց էն գետից
Բայց վեր չէլավ էլ գետնից.
Նա խմել էր անհամբեր
Թունոտ ջուրը մահաբեր։
Ու դարձած ժայռ ահագին
Մնաց գետի քարափին,
Խոժոռադեմ ու մամռոտ
Չոքած թունոտ ջրի մոտ։

4

Նուշոն կանգնեց մյուս լանջում,
Ականջ դրեց իր յարին,
Տեսավ Թուշոն իրեն կանչում
Ու թքում է լեռ քարին։
Ինքն էլ դարձավ մի զուլալ գետ,
Քչքչոցով վազեց ցած,
Գնաց փարվի սիրածի հետ
Աշխարհից դուրս, դրկաբաց։
Հեռո՜ւ, հեռո՜ւ մարդկանցից չար,
Դեպի անտառ վազեցին,
Իրենց ճամփան հազար–հազար
Ծաղիկներով զուգեցին։
Ու երկուսն էլ մտան անտառ՝
Լցված ծաղկի թարմ հոտով,
Մութ անտառում իրար գտան,
Փաթաթվեցին կարոտով։
Ուր գնացին, ծաղիկ բուսավ,
Անտառ ու դաշտ կանաչեց,
Գյուղացին էս զրույցն ասավ՝
Երբ որ նրանց ճանաչեց...

«ԿՈՐԱԾ ՈՒՐԲԱԹԸ»

(Ժողովրդական)

Մեզանից առաջ մի հեռու գյուղում
Մի հռչակավոր քյոխվա է լինում։
Հայտնի էր նաև գյուղի քահանան,
Սուրբ Էջմիածնում գիտեին նրան։
Գյուղում կար նաև մի հին վարժապետ
Վաղուց հռչակված մեծ ամենագետ։
Էդ գյուղի քյոխվան մի պարզ առավոտ
Արթնացավ կանչեց կնոջն իրեն մոտ,
(Կինն էլ ամուսնու նման հանճար էր,
Քյոխվան հաշիվ էր իր նման ճարել)։
— Ասա ինձ, կնիկ, էսօր ինչ օր է,
Որ ունի էսպես սիրուն առավոտ.
Տեսնո՞ւմ ես, կնիկ, արևը նոր է,
Օդն էլ զուլալ է ու անուշահոտ։
— Ինչպես չեմ տեսնում, իմ քաջ ամուսին,
Միտք էի անում ես հենց էդ մասին,
Էսօր անպայման շաբաթ կլինի.
Էլ որ օրն էսպես սիրուն տեսք ունի։
—Ինչե՛ր ես ասում, այ կնիկ, չէ՞ որ
Ուրբաթի գալու հերթն է հենց այսօր,
Էրեկ հնգշաբթի, իսկ էսօր շաբա՞թ...
Ուրբաթը չկա.՝ էհե՛, խեղճ ուրբաթ։
Ու մտահոգված քյոխվան հագնվեց,
Անլվա, սոված տնից դուրս վազեց։
—Դու էլ եկ հետս.—ասաց գզիրին,
Ինչպես թագավորն իրեն վեզիրին։
Նրանք գնացին քահանայի տուն,
Հրավիրեցին խորհրդակցության.
—Տեր հայր, մի շատ վատ բան է պատահել,
Բայց հարկավոր է դեռ գաղտնի պահել։
—Ի՞նչ է պատահել, վատ բան ասացի՞ք,
Դե սիրտս ճաքեց, ասե՛ք, ա՛յ մարդիկ։

—Այո՛, տեր հայր սուրբ, չտեսնված բան.
Ուրբաթը չկա,—շշնջաց քյոխվան:
—Ուրբաթը չկա՞, էդ ո՞նց իմացար,—
Գոչեց տերտերը խիստ սարսափահար:
—Հինգշաբթուց հետո եկավ շաբաթ օր
Էլ դրա համար կասկա՞ծ կլինի որ:
—Օհո՛, շատ վատ է քո բերած լուրը,
Ո՞ւր կորած կլինի էդ անաբուռը:
Նա մատամոյոր մորուքը բռնեց
Ու չիլ աչքերը գետնին սևեռեց:
—Զզվեմ, տեր հայր, հիմա ի՞նչ անենք,
Առանց ուրբաթի մենք ինչպե՞ս կապրենք:
—Դու ճիշտ ես ասում. պետք է որոնել
Գուցե հաջողվի անտերը գտնել:
—Ապա, շուտ գնա կանչիր Նշանին.
Հարկավոր է շուտ կպչել էս բանին,—
Ասաց քահանան, ու գզիր Պետին
Վազեց կանչելու ամենագետին:
—Վարժապետ, շտապ կանչում է քյոխվան.
Երեխաներին թող որ տուն գնան,
Խայտառակություն, ուրբաթն է կորել,
Քանի դեռ շուտ է, պետք է որոնել:

Ու հավաքվեցին գզիրն ու քյոխվան,
Ծերոք տերտերն ու վարժապետը էն
Հետներն առան խաչ-ավետարան,
Ու գնացին, որ ուրբաթը գտնեն:
Նրանք գնացին անտառը մտան,
Ման եկան թավուտ, ծմակները ողջ
Եվ մեկ էլ նրանք մի մեծ արջ տեսան,
Որը փախավ ու մտավ մի խոր որջ:
—Ահա ուրբաթը,—գոռաց քահանան
Ու փեշով ծածկեց որջի բերանը.—
Դուք ինձ պահեցեք. ես հանեմ նրան:
Ի՛նձ տվեք խաչն ու ավետարանը:
Քյոխվան, գզիրը և վարժապետը

Ամուր բռնեցին նրա ոտներից,
Եվ սուրբ քահանան, սուրբ գիրքը հետը,
Ներս սողաց մթին որջի բերանից:
Քիչ հետո խոսեց ուրբաթի բնում.
—Ա՛յ, դու անիծյա՛լ, ո՞նց էս հանդգնում...
Եվ ապա գոռաց.— Քաշեցե՛ք, կերա՛վ.
Իմ սրբությունը ոտնատակ արավ:
Քյոխվան, գզիրը ու վարժապետը
Ուժով քաշեցին, քաշեցին երկար...
Նրան դուրս բերին սուրբ գիրքը հետը,
Համա տերտերի գլուխը չկար:
Նրանք զարմացած նայեցին իրար.
—Այ տղա, Պետի, պատասխան տուր, ինձ.
Էսօր տերտերի ուսին գլուխ կա՞ր,
Թե առավոտյան չբերեց տնից:
—Քյոխվա՛, տերտերը մեզ հետ էր էսօր,
Համա գլո՛ւխը չեմ տեսել ճիշտ որ.
—Իսկ դու, վարժապետ, տեսել ե՞ս, թե չէ...
—Ինչ ասեմ, քյոխվա, դա շատ բարդ հարց է:
Ու. որոշեցին վերադառնալ տուն
Եվ հարցում անել տերտերի կնկան:
Մի արտում տեսան հնձվոր գյուղացուն
Եվ քյոխվան հպարտ հարցրեց նրան.
—Լսի՛ր, ա՛յ մշակ, դու որպես հնձվոր,
Չե՞ս կարող ասել ինչ օր է այսօր.
—Ուրբաթ է,—ասաց հնձվոր գյուղացին
Եվ անցորդները բարձր գոռացին.
—Գտա՛նք ուրբաթը, ուրբաթը գտա՛նք...
Լսի՛ր, իմաստուն, քեզ մի հարց էլ տանք,
Երկար մտածիր ու ճիշտ ասա մեզ
Դու մեր տերտերին գլխով տեսե՞լ ես:
Գյուղացին տեսավ, թե իրար դիմաց
Ովքեր են խոսում, ծաղրով ասաց.
—Եթե ուզում եք պատասխանը ճիշտ,
Տերտեր, թե քյոխվա՝ անգլուխ են միշտ:

———

ՄԵՍՐՈՊ ՄԵՐՈՒԺԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1

Կյանքի մշուշից հանեցիր ինձ վեր,
Եվ լույս տվեցիր աչքերիս մթին,
Արևդ շողաց իմ ջահել սրտին,
Կյանքի մշուշից հանեցիր ինձ վեր,
Ու տվիր հոգուս թռիչք ու թևեր,
Փա՛ռք քեզ, առաջնորդ, քո վսեմ երթին,
Կյանքի մշուշից հանեցիր ինձ վեր
Եվ լույս տվեցիր աչքերիս մթին:

2

Հոգիս շնչում է վարդերի բույրը
Ծիծաղկոտ գարնան ցողաշաղ գրկում,
Խնդության վարդն է բացվել իմ հոգում,
Հոգիս շնչում է վարդերի բույրը.
Եվ արեգակի պայծառ համբույրը
Ես գվարթագին ու ջերմ եմ զգում,
Հոգիս շնչում է վարդերի բույրը
Ծիծաղկոտ գարնան ցողաշաղ գրկում:

3

Վարդերի փնջով կգամ քեզ այցի,
Քո տված կյանքից վարդեր են բուրում,
Սիրտս է կարոտով վարդերն համբուրում,
Վարդերի փնջով կգամ քեզ այցի՝
Բացված վարդերից պսակ հյուսեցի,
Սիրավառ սրտով այն քեզ եմ բերում,
Վարդերի փնջով կգամ քեզ այցի,
Քո տված կյանքից վարդեր են բուրում:

ԴԱՎԻԹ ՍԱՍՈՒՆՑԻՆ

Ահա Դավիթն է գալիս հեծած նժույգ սպիտակ,
Արևների բռնկում պահած ջահել կրծքի տակ:
Խոյացել է հաղթական նա դարերից հնասույզ՝
Աչքերը զույգ արշալույս:

Օ՛, մեզ այցի է եկել ազատության լույս հոգին,
Արեգակի պես շքեղ ու նրա պես ջերմագին:
Ես քնարիս լարերը պրկած, շնչով գարունքի,
Երգում եմ քե՛զ, վեհ հոգի:

Կայծակնավառ Ջալալուդ բաշը ծփաց հերարձակ,
Արշավեցիր խոլական հողմերի դեմ սանձարձակ,
Աղջիկները բոցաշուրթ խուղերում քեզ օրհնեցին,
Քեզնով հպարտ էր քո ձին:

Բարձր պահած հրեղեն ձեռից սուրը հոլանի
Ամպրոպի պես ճայթեցիր, մոար բանակը կռվի,
Ազատության սուրը քո շողած որպես հուր կայծակ
Դաշտերի մեջ ընդարձակ:

Եվ Մելիքը արնախում ընկավ ահեղ քո զարկից՝
Ինչպես կաղնին դարավոր ամպրոպագոչ կայծակից·

Սասնա վրա վերստին բացվեց Հայոց պայծառ օր,
Փա՛ռք քեզ, Դավիթ զորավոր:

Գութան լծեց Սասունցին, ճեղքեց սուրբ կուրծքը հողի,
Արտը ծլեց, հրճվանքից ծաղկեց այգին խաղողի,
Խաղաղության ծուխ ելավ, խնոցիներ հարեցին,
Թոնիրները վառեցին:

Գարուն բացվեց լեռներում, աղբյուրները լուսավետ
Կարկաչեցին, կանչեցին՝ վեճի մտած իրար հետ,
Ծարեր ելան խնդությամբ հազար ռանչպար ու հոտաղ
Հնչեց նորից երգ ու տաղ:

***

Ահա՛ Դավիթն է գալիս՝ հեծած նժույգ սպիտակ՝
Անմահությամբ պսակված արև ջահել կրծքի տակ,
Խոյացել է հաղթական նա դարերից հնասույզ՝
Աչքերը զույգ արշալույս:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

(Հատված համանուն պոեմից)

(ՎՐԱՑ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Վերջալույսը ողողել էր իր շողերով բերդ ու տուն,
Ցոլում էին ձյունապայծառ կատարները լեռների,
Վրացական ժողովրդի բանաստեղծը իմաստուն
Աչքերն հառած լուռ դիտում էր մայրամուտը արևի:

Հրդեհավառ երկնքի տակ մի արծիվ էր սավառնում,
Ոչխարների հոտը կայտառ լուռ իջնում էր բլրից ցած.
Բանաստեղծի հոգին ասես արծվից թևեր էր առնում՝
Վերջալույսի ծիրանավառ կախարդանքով հիացած:

Դեմ-հանդիման բարձրանում են երկու լեռներ ձյունափառ,
Անդնդախոր ձորերի մեջ գիժ Արագվան է վշշում,
Սարի վրա երևում է դալարագեղ մի անտառ,
Եվ Թամարի բերդը շքեղ վերջալույսի մշուշում:

Խոյանում է երկինքն ի վեր ապարանքը վիթխարի
Գոտկած նրա բարձրադիտակ լեռնաշղթան ձյունազարդ,
Ուր թառում են գիշեր ու զոր երամները ամպերի,
Ուր շողում է առավոտյան արևի թագը հսկա:

Բարակիրան վրացուհին ջուր է տանում սափորով,
Բարձրանում է կածանն ի վեր եղնիկի պես զվարթուն,
Նա կարող է իր սիրավառ զույգ աչքերի զույգ սրով
Սիրտը կիսել ջահելների, թողնել ծարավ ու արթուն:

Ու ձգվում են հեռո՜ւ հեռվում գյուղերը գորշ, մենավոր,
Թառած վրան բռնակալը՝ բզկտում է որպես ցին,
Աշխատում է մշակն հողի՝ առած գութան ու արոր,
Տնքում է միշտ բռնակալի ճանկերի մեջ գյուղացին:

Եվ հնչում են վին ու տավիղ նվագներով քաղցրագին,
Խրախճանք է զվարճալի ամրոցի մեջ հոյակապ,
Ու ցոլում է ծով լույսերում ակնակուռ թագն անգին
Եվ Թամարի չքնաղագեղ պարանոցը լույս—կարապ:

Հոգում վառած վերջալույսի երազները անհամար
Բերդ է մտնում բանաստեղծը հագին մի վառ ծիրանի,
Դադարում է ամրոցի մեջ զվարճալի երգ ու պար
Ու ցոլում են պերճ թագուհու զույգ աչերը գեղանի:

Վինը լռեց զվարթաձայն՝ ձեռքում ծերուկ գուսանի,
Սրահներում շատրվանն է բղխում գոհար ու սուտակ,
Եվ պալատում հնաքանդակ յոթ գոթաձև սյուների՝
Շուրջն են ճախրում ճռվողելով աղավնիներն սպիտակ:

Թամարյան ահա բազմած դահին, իսկ ասպետները անձայն
Բոլորել են շուրջը նրա շքեղ դեղով սրարբած՝
Եվ տաս խափշիկ հաղթ թիկնավետ, քարացել են ոնց արձան,
Պատրաստ նրա մեն մի ձայնին, հրամանին արձակած:

Ու ցոլում են վահանները լույսերի տակ ջահերի,
Երախճանքի պալատը պերճ վարդ ու կնդրուկ է բուրում.
Եվ խմում են ասպետները կախեթական հին գինի,
Գեղաթարթիչ աղջիկներին կարոտանքով համբուրում:

— Կարդա՛ գիրքդ գյուղացիական,— բանաստեղծին դիմեց նա,
Որ տարածվի համբավը քո Վրաստանում ծայրից ծայր,
Ժողովուրդը քո հանճարի պայծառությամբ հիանա,
Ու միշտ ցոլա նրա հոգում ինչպես արևը պայծառ:

Ու ամբոխը պալատական սպասում է անհամբեր,
Սպասում է սիրակարոտ Թամար չքնաղ թագուհին,
Գորգի վրա կանգնած է լուռ բանաստեղծը անվեհեր
Բարձր ու վսեմ ու անառիկ ինչպես նրա բերդը հին:

Նա հայացքը հառեց մի պահ կամարներին պալատի
Եվ թագուհու պայծառ դեմքին, որ նայում էր սիրաթով,
Հետո ծոցից գիրքը հանեց, որ կարոտով այն թերթի,
Ու ամբոխը սքանչանա գյուղացիական հեքիաթով:

Ձեռքը տարավ, շոյեց լիկ ճակատը իր հանճարեղ,
Ու ցոլացին նրա հոգում արևները իր երգի.
Սպասում էր ամբոխը մունջ և թագուհին աչաղեղ,
Պալատն ամբողջ ու անհամբեր դառած մի շունչ մի հոգի:

Կարդաց մատյանն իր ոսկեբառ մինչև մթին ուշ գիշեր.
Ու լռում էր պալատը ողջ հանդիստ ու քուն մոռացած,
Որտա մոան Տարիելը քաջ, Դարեջանը սիրաջեր
Ավթանդիլը, Թինաթինան, Փրիդոնը սիրտը բաց:

Հին դարերի հեքիաթային դյուցազները իրար հետ
Այցի եկան պալատը պերճ առած տեգեր ու վահան,
Կարծես շքեղ հորիզոնից արեգակը կենսավետ
Սեգ Թամարի թուխ աչքերում սփռեց շողեր ոսկեման:

Երբ վերջացավ, պալատն ասես դարձավ մի ծով բերկրանքի.
Հմայվել էր հանճարով սեգ Թամար չքնաղ թագուհին,
Նրա առաջ կանգնած էր լուռ բանաստեղծը իր կյանքի՝
Բարձր ու վսեմ ու անառիկ ինչպես նրա բերդը հին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՋԱՎԱԿՆԵՐԸ

Նա սիրում էր իր հայրենի բանաստեղծի ջինջ հոգին,
Որն իր երգով համակել էր դարերը բյուր առհավետ.
Ու կարդում էր գիրքը նրա աղբյուրների եզերքին՝
Հասակակից ու սրտաբաց ընկերների խմբի հետ:

Իր լուսավառ աչքերի դեմ երևում էր մի հին բերդ,
Քնարի ջերմ ձայնն էր հնչում ասես նրա ականջին,
Չքնաղ Թամար սեգ թագուհու սիրտը քնքույշ վարդի թերթ
Եվ հանճարեղ բանաստեղծը կանգնած նրա առաջին:

Դարեջանը հրդեհի պես սերը վառած կրծքի տակ՝
Սպասում էր հուսակտուր վագրենավոր իր յարին.
Լույս աչքերը տխուր հառած հեռուներին կապուտակ
Միշտ տրտմավուն սրտակեղեք հսկաների բերդում հին:

Սիրում էր նա Ավթանդիլին, քաջ Փրիդոնին թիկնավետ,
Եվ Տարիելի կամքը վսեմ, մորթը նրա վագրենի,
Դալարագեղ անտառի մեջ մարտը նրա վագրի հետ
Դյուցազնական հերոսներին, սերը նրանց վաղեմի:

Սիրում էր նա մարգարտաշիթ աղբյուրները քաղցրագին
Եվ լուսացող ծաղիկները աչիկներով երազուն,

Հասակակից իր ընկերոջ և հարազատ մորն անգին,
Ե՛վ Կազբեկը ձյունագագաթ, և՛ Արագածն միշտ հսուն:

Բայց բոլորից նա ավելի ժողովրդին էր սիրում
Եվ ըղձում էր նրա անհուն վիշտը ջահել կրծքի տակ.
Թագավորը ազգերի մեջ պատերազմ էր սերմանում
Երկիրն ավեր, ողջ կոխան ժողովուրդը բովանդակ:

***

Եվ նա սիրեց սրտի խորքում ԼԵՆԻՆԻՆ մե՛ծ, լուսակի՛ր,
Պայքարներում եղավ խիզախ նրա նման անգիջում
Ու երազեց նրա հոգին արգասավոր մի երկիր,
Ուր լուսահորդ երջանկության աղբյուրներն են կարկաչում:

Աշխատավոր ժողովրդի հոգու թխպոտ երկնքում
Եղավ արև երջանկաբեր ու նրա պես մեծագին
Իր ուսուցչի նման արև հիմա կյանք է առաքում,
Դարձած բանվոր ժողովրդի առաջնորդը թանկագին:

Մեկը երգի անմահ վարպետ, որ ապրում է դարեդար,
Իսկ մյուսը ժողովրդի առաջնորդն է իմաստուն.
Մեկը փետուր գրիչն առած գիրք է գրել ոսկետառ,
Իսկ մյուսը երջանկությամբ ողողում է սիրտ ու տուն:

Նա սիրում է իր հայրենի բանաստեղծի ջինջ հոգին,
Որն իր երգով համակել է դարերը բյուր առհավետ,
Ու կարդում է գիրքը հիմա ընկերների հետ անգին
Կամարակապ Կրեմլի պերճ դահլիճներում լուսավետ:

ԼՈՌՈՒ ՁՈՐԵՐՈՒՄ

Մեղմ զեփյուռների համբույրների հետ
Իջնում եմ չքնաղ ձորերը Լոռու,
Բարձր Լալվարի սարից՝ թիկնավետ
Ամպերը բարդ-բարդ չվում են հեռու:

Ելնում է ձորից մշուշը դանդաղ
Հասնում Լալվարի ձյունոտ կատարին,
Եվ արծաթաքող մի նուրբ շամանդաղ
Իջնում է ահա Լոռու ձորերին:

Բացվում է իմ դեմ ձորն անդնդախոր,
Դեբեդի կանչն է ականջիս հնչում,
Անտառի միջին կարոտով իր մոր
Եղնիկի ձայն է տխուր բառաչում:

Ծանոթ են հոգուս օրերն այս մթին,
Եվ լեռները գորշ վիթխարահասակ,
Ծանոթ լոռեցի անմահ պոետին
Վաստակած երգի ու փառքի պսակ:

Նրա երգերի արփին իմաստուն
Ծորում է հոգուս ու աչքերիս մեջ,
Եվ ահա սրտիս ծաղկին են նստում
Սիրո կարոտի թիթեռներն անվերջ:

Շրջել է այստեղ մի պայծառ պոետ
Հայրենի տխուր երգը շուրթերին,
Եվ լուռ զրուցել իր խոհերի հետ
Ու պարզահայաց նայել Դեբեդին:

Փռվում է իմ դեմ գյուղը նորաշեն,
Ծուխ է բարձրանում բյուր թոնիրներից,
Բարիքով լեցուն ամբարներ ու շեն
Կյանքն է ծիծաղում, սերն է բերկրալից:

Հավատով լեցուն մեծ առաջնորդի,
Ապրում են այստեղ գյուղացիք բազում,
Մանուկները ժի՛ր՝ կոկոններ վարդի
Ուրախ կարկաչով երգում ու վազում:

Երազել է նա, նստած գետափին,
Լույս ակունքները երջանիկ կյանքի,
Եվ պայծառաշող այս զվարթ արփին
Եվ մեր լուսաբուխ սերը համայնքի:

***

Ես գյուղ եմ մտնում անզուսպ կարոտով,
Խոհերիս հետ ջինջ ու արևածին,
Ինձ ուղեկցում է, ասես անվրդով,
Աչքերում ծիծաղ այն մեծ Լոռեցին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՎՔ ՆՈՅԵՄԲԵՐԻ

Քեզ եմ երգում այսօր ես,
Երկիր պայքարի,—
Քո հաղթական գովքը վես
Հողի ու քարի...
Քո՛ արտերը ժպտադեմ,
Քո բերքերը ծով,—
Թող վոր գովքն այս ունկնդրեն
Աշնան գնգոցով...

Ես էլ քեզ հետ եմ տեսել,
Արեն այս հրե,—
Քեզ հետ անձկել եմ ես է՛լ
Ու երգեր դրել,
Քեզնից առած թափ ու թև
Քեզ պես միշտ անպարտ,—
Բյուր արգելքներ եմ հաղթե՛լ,
Բարձրացել հպարտ:

Ինձ հետ անթիվ մանուկներ,
Թշվառներ ու որբ,
Որոնք չէին զգացել
Գուրգուրանքը մոր՝
Քեզնով տեսան լույս արև,
Թևերի տակ քո՛,—

Նրանց կյանքը երկարեց
Ու ցցվեց բերքով:

Քեզ եմ երգում այսօր ես
Երկիր պայքարի,—
Առաջնորդին մեր այն վեհ,
Հաստատ ու արի,
Որ ղեկի մոտ մեր նավի
Սառած բանակներ,
Մեզ խնդություն է բերում
Ու հաղթանակներ...

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Եկած կյանքի հատակից՝, մոխիրներից ու մրից,
Երկիր, քեզ եմ պարտական, քո արևին ու ջրին,
Հղկել, կերտել նյարդերս, կոփել մկան առ մկան,—
Որոնց գրկում լուսացավ՝ մանկությունը իմ գիշեր:

Երկիր, դու ես տվել ինձ՝ նոր ամրություն ու նոր կյանք՝
Հղկել, կերտել նյարդերս, կոփել մկան առ մկան,—
Քո արևն եմ տենչացել իմ մանկական երազում,
Դրանից էլ ես այսօր սրտահույզ երգ եմ ասում:

Քեզ եմ երգում, երկիր, ես, մա՛յր իմ, հա՛յր իմ ու ծնող,
Անեզրական մեր արտե՛ր, մեր այգիներ, ջուր ու հող,—
Ձեզնից ամեն մեկը ինձ տալով կյանքից իր մի թել,
Սովետական արևի նիզակներով է կրթել:

Գրկել է նա ինձ մանկուց ու չեմ հիշել ես մեկին,
Մեկի տեղակ սիրել եմ կյանքը, երկիրն, ամենքին,
Ու ամենքի օրրանում շրջապատում այդ լուսե,—
Ես դարձել եմ պատանի, հասակիս թելը հյուսել:

Այսօր քե՛զ եմ պարտական, քո արևին ու ջրին,
Սովետական իմ երկի՛ր, դու ապրեցում ինձ տվի՛ր,
Թող որ ես էլ երգեմ քեզ, քո մայրությունը բարի՛,
Ու փարվեմ քո կրծքին վես՝ ինչպես գետակը ծովին:

ՈՍԿԵ ԳԻՐՔ

Ոսկե էս գիրքն ո՞վ է գրել,
Ոսկե տառեր շարել թերթին,
Ո՞վ է պայծառ միտքն իր դրել,
Երջանկացրել ժողովրդին:

Ո՞վ կոչեց մեզ ոսկե կյանքի,
Ոսկե էս գիրքն էս ո՞վ գրեց,
Մեզ խնդության ու բերկրանքի,—
Անծայրածիր ծովեր տվեց:

Է՞ն ինչ ձայներ ոսկեհնչուն,
Երկիրը մեր տեղից շարժեց,
Բնությունն է, մարդուն գիջում,—
Գանձերը իր ոսկե—արժեք:

Քո ձեռքով է, Մեծ Ստալին,
Գրվել օրենքը մեր անդին,
Դրանից էլ քեզ եմ տալիս,—
Մինչև վերջին թելն իմ կյանքի:

ԱՐԾԻՎԻ ԿՈՐՈՒՍՏԸ

(Մեծ Օդաչու՝ ՎԱԼԵՐԻՅ ՉԿԱԼՈՎԻ հիշատակին)

Ծանր է ու մեծ կորուստը մեր—մեր տխրությունն է անծիր,
Մեր երկրի բյուր հերոսներից, ընկավ խիզախ մի արծիվ:
Մեծ անտառից ընկավ կաղնին—Չկալովը մեր պայծառ,
Ընկա՛վ, երբ դեռ կանաչ էր նա ու եռանդով էր անծայր:
Ստալինյան սերն է սակայն մեր սերնդին տվել թև,
Մենք ունենք բյուր օդաչուներ — Չկալովի պես պարթև:
Ընկավ արծիվն... բայց մենք ունենք՝ հերոս անթիվ արծիվներ,
Որ հայրենի փառքն են պահում արևից էլ վառ ու վեր:

ԱՎԵՏԻՔ ԲԱՐՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՋԻԿՆ ՈՒ ԱՌՈՒՆ

—Առու, առու իմ հստակ,
Այդ ո՞ւր, այդ ո՞ւր ես վազում,
Այդքան ուրախ ու վստահ,
Որպես պայծառ երազում:

—Բույրի՛կ, գնում եմ՝ անծիր
Դեպի դաշտը դիմացի:

—Առո՛ւ, արդյոք կտեսնե՞ս,
Ջրվորին, բահը ուսին,
Այնքան հպարտ այնքան վես.—
Ոսկե ժպիտ երեսին:

—Բույրի՛կ, արտի մոտ հասուն
Յարդ ինձ է սպասում:

—Առու, ի՞նչ անեմ հիմա,
Ինչպե՞ս տամ նրան իմաց...

—Ձեռքիդ վարդը հուրհրան
Տո՛ւր ինձ, տանեմ տամ նրան:

ԻԼՅԻՉԸ

Ձյուները վառվում են, լույսերը փայլում են,
Քաղաքում սուրում են ավտոները ճիչով,
Փողոցներով բանվոր շարքերը քայլում են,
Ու նրանց միջից ժպտում է Իլյիչը:

Արտերը ծփում են, արտերը նայում են,
Ու ծծում արևի հուրը վառման ու ջերմ,
Հասկերը շողում են, ջրերը վազում են,
Եվ արտերից հասուն ժպտում է Իլյիչը:

Ծովերով կապուտան նավերը լողում են,
Փրփրում են ծովի լույս ալիքները ջինջ,
Բիլ եթերում հպարտ արևը շողում է,
Ու շողերի միջից ժպտում է Իլյիչը:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Թողի մանկության գյուղակը մթին,
Իջել է դեմքիս միջօրեն խաղաղ,
Եվ սիրտս պարզած երկնի կապույտին՝
Քայլում եմ դեպի մի ոսկե քաղաք:

Եվ հեքիաթային ու բազմաղաղակ
Շեփորն է հնչում այդ լույս քաղաքից,
Իսկ հեռաստանից մի խեղճ աքաղաղ
Դեռ ձայնում է ինձ:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ Բ Ի Լ Ի Ս Ի

Ծննդավայր իմ երկրորդ,
Դու, օրորոց Արևի,
Ես քո որդին՝ մի ճամփորդ,
Նորից եկա բարևի:

Ոտս դրի քո հողի՛ն,
Երգեց սիրտս ցնծագին,
Ողջո՛ւյն քեզ՝ վեհ կոթողին,
Ողջո՛ւյն, մա՛յր իմ Թանկագին:

Դո՛ւ ես, դո՛ւ ես ավել լույս
Մտքիս աչքին պատանի,
Դո՛ւ ես ավել հոգուս հույզ,
Որ վերելքով ինձ տանի:

Դու ես կերտել իմ հոգին,
Կոփել պողպատ կամքը իմ.
Ես երգել եմ քո գոգին
Ու երգում եմ քեզ կրկին:

Թբիլիսի՛ գրնդուն,
Քաղաք սիրո ու երգի,
Լույս աչքերն են միշտ արթուն
Լիության քո ու փառքի:

Գիրկդ եկա ես նորից,
Ծով կարոտով անմոռաց,
Ինչ թողել եմ, այն օրից
Քեզ եմ ձգտել երգ դառած:

Լեռներդ ահա ես տեսա,
Նվիրական գետը Կուր...
Ո՞ւր են տղերքն իմ, ասա՛,
Ընկերներն իմ, ո՞ւր են, ո՞ւր...

Թող գան չորերս նստենք,
Թափվենք գետը աղմուկով,
Դեպի լեռներ մագլցենք,
Լախտի խաղանք կաղնու քով:

Մտնենք բերդը հինավուրց,
Ու Կոջորի հանդն ելնենք,
Քաղենք հասկեր խուրձ առ խուրձ,
Ջրվեժի տակ գիլ երգենք:

Դպրոց գնանք մենք աշխույժ,
Նորից սերտենք դասը մեր...
Իջեք, հուշեր իմ անուշ,
Կարոտ հոգուս վառ լույսեր:

Գիրկդ եկա ես նորից,
Ծննդավա՛յր իմ երկրորդ,
Ողջո՛ւյն, ողջույն բոլորից
Ու որդուցդ մի ճամփորդ:

Արագածից միշտ ջահել,
Աղբյուրներից կարկաչուն,
Հրազդանից, որ ջահեր
Վառեց հովտում ու լանջում:

Սասնա Դավթի սերնդից,
Կերտողներից բյուրավոր,
Այգուց, արտից ու հանդից,
Ողջո՛ւյն, ողջո՛ւյն սիրավոր:

Ե՛Կ, ՎԱՐՊԵՏ

(Նամակ Ավ. Իսահակյանին)

Ե՛կ, վարպե՛տ,
Մեղմ երգերիդ հեզ շորորով, նազանքով,
Երգի՛ր դու
Մանիներիդ զեփյուռ շնչով, մեր հանդով.
Լեր մեզ հետ,
Վերքերդ խոր մեր մահլամով ենք բուժել,
Դարձի՛ր տուն,
Անտուններիդ լուսե պալատ ենք տարել:
Զի՛նջ աղբյուր,
Ալագյազի մարմանդ հովի յերկրում,
Ծով եռանդ,
Համայնական կերտում, բերկրանք է տիրում.
Դու բլբուլ՝
Մեր պարտեզում՝ բյուր—անհամար վարդենի,
Լի սեղանն
Արփաչայի ամեն գյուղի ու շենի:
Նոր երգեր
Հոսեցուր մեր երգերի հորդ գետի հետ,
Մե՛ր պոետ,
Ձայնիդ կարոտ ինչքա՛ն սրտեր կան ջահել.
Բյուր՛ ազգեր
Մի հարկի տակ հաշտ ու հալալ ախպոր պես,
Դարձիր ետ
Աբու Լալա եղբորդ հետ հոռետես:

Խնդա դու,
Հավերժական բանտ հայրենիքն ո՛ւր մնաց...
Աստղալից
Երկինքն անգույն է երկրի դեմ լուսամած.
Ցնծա՛ դու,
Հեքիաթային չեմսեր հուրհրաչ վառեցինք.
Հյուղերից
Ելան կյանքի նոր ուստաներ արևին:
Ե՛կ, վարպետ,
Նոր շող երգիդ վառ, լուսափայլ ժպիտով,
Երգիր նոր
Սիրո երգեր երկրի շնչով, մեր՝ հանդով:

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Ամպերն ինչպես յափնջավոր հովիվներ
Կուչ են եկել խարույկի մոտ արևի,
Երկարել են մրսած ձեռներ ու ոտներ.
Տաքանում ես, հեքիաթ պատմում երևի:

Շուրջը հոտն է ճերմակաբուրդ ոչխարի,
Ու նրանց մոտ դամփուռը նստած՝ սև մի ամպ,
Լեռան ուսից գայլն է գալիս ավարի,
Իսկ ինչո՞ւ կա նրա մեջքին ամպե թամբ...

Հովիվները կարտոֆիլ են խորովում,
Մեկը ուտում, մեկը նոր է հանում դեռ,
Ձեռքը երկար թողնում բոցում ու բովում,
Մեկի ուսից ցցվեց մահակն անտաշ, կեռ...

Մարեց խարույկն: Ամպեր, հովիվ մթնեցին,
Մեկը ձգվեց մինչև գայլի դունչը սև.
Գայլը փախավ... ու բոլորը քնեցին,
Նրանց ծածկեց գիշերն անդորր ու թեթև:

ԵՐԿՈՒ ՀԵՐՈՍ

(Պ ո ե մ)

1. Ս Ե Պ Ը

Ուշ աշնան մի առավոտ էր.
Աշնան ամպոտ առավոտ.
Ամպի հովում—դաշտ արտեր,
Հովտում հեռու՝ նախիր, հոտ:

Դասընկերներ էին: Տղան
Փոքր էր, անունը՝ Հուսիկ.
Ընկերն աղջիկ էր Թրվան,
Լույս անունով էր՝ Լուսիկ:
Սև աչքերով,
Շեկ ունքերով,
Վոսկեծամիկ այծյամիկ,
Վառող ցրտից ու արևից
Թրծված դեմքով, Թմփլիկ:
Հագին կոշիկ,
Սիրուն մաշիկ,
Բրդե գուլպա կծոտող,
Ալ մետաքսից,
Փայլուն խասից
Դեյրա ուներ մի փողփող:
Տղան՝ ծովաչ,
Կայտառ մի մանչ,
Գլխին՝ տափակ մի փափախ,
Շորից կարած,
Ու հարմարած
Մի պայուսակ՝ կողքից կախ:
Գնում էին նրանք դպրոց
Ջեփյուռի հետ խաղալով.

Մեկ խլվլան՝ խարույկի բոց,
Մեկ կատակով կաղալով:
Հուսիկն ահա, լարախաղաց,
Վազեց ռելսի վրայով,
Իսկ Լուսիկը, ոնց ալրաղաց,
Երգով փռաց իր բոլոր:
Խաղես ուրախ, խոսք ու տաղով,
Մեկ վազելով, մեկ քայլով,
Գնում էին պանդ ծիծաղով
Երկու ընկեր խայտալով:
Բայց ինչքան էլ Թուչկոտեին,
Սովորությամբ պարտաճիր
Գիծը պիտի լավ դիտեյին
Ամբողջ ճամբին, ուշադիր:
Փորձում եր Լուսն այս անգամ էլ
Ամեն մեխ ու պտուտակ.
Ու երբ հայացքն ուղեց դամել
Ընկերոջն իր «խեղկատակ»,
Տեսավ մի սեպ, հանկարծ լռեց,
Կանգնեց, ռելսին կռացավ...
—Վա՜յ, էս ի՞նչ է,— աչքը չռեց,
Ի՞նչ երկաթ է,—նա ասավ:
Հուսիկն իսկույն դարձավ չատ լուրջ:
Եկավ մոտիկ, լավ դիտեց...
— Պիտի հանել... Լիներ մի մուրճ,
Մեզ լավ կօգներ, դու գիտես,—
Ասավ, չոքեց, որ չուտ հանի,
Քաշեց, խփեց՝ դուրս չեկավ,
Ու քրտնեց այն պատանին,
Ասավ.— Ա՛յ Լուս, էս չեղավ:
Երկաթե ցից ի՞նչ գործ ունի
Էս ռելսերի արանքում.
Դրել է մի սև Թշնամի,
Ուզեցել է խորտակում...
—Հա ճիշտ որ է՞, ճիշտ ասացիր...

—Լո՛ւս, երկուսով էլ փորձենք,
Թե չէ փորձանք է, իմացիր...
Հանենք՝ գնացքը փրկենք:
Լուսը նետեց գիրք ու տետրակ,
Չոքեց ցցված սեպի մոտ.
Չոր էր նրա ծնկների տակ,
Բայց հարձակվեց նա կրքոտ:
Հուսիկն էլ շուտ բերեց մի քար,
Հանեց դանակն հասարակ...
Ափսոս ուղած մուրճը չկար,
Ձեռքին փայտն էր իր բարակ:
Ու խփեցին, չարչարվեցին,
Քարերն արին մաս առ մաս...
Գործով այնքան շատ տարվեցին,
Որ մոռացան դպրոց—դաս:

Ամուր էր նստել սեպը կործանիչ:
Հուսիկն ու Լուսիկն արին ամեն ինչ,
Բայց.
— Դուրս չի գալիս,—
Հառաչեց Հուսոն.
— Է՛հ, դուրս չի գալիս,—
Հառաչեց Լուսոն:
Նորից գործեցին,
Նորից փորձեցին,
Դավադիր երկաթն այն չհանեցին.
Շուտ մտածեցին.
— Իմաց տանք, Լուսիկ,
Կայարան մոտիկ,
Թե չէ գնացքներ կխորտակվեն, չէ՛...
Ու վճիռն ասաց
Հուսիկը արագ.
— Դե՛հ, ականջդ բաց.
Վզկապդ՝ դրո՛շ,
Դու՝ գծի պահակ.

Պարզ է չէ՞, որոշ...
Մինչև ես ետ գամ,
Գիծը լինի փակ...

Էլ երկրորդ անգամ չկրկնեց նա.
Թռավ կայարան պիոներն անահ:
—Ես մի՛շտ պատրաստ եմ,—
Կանչեց մեր Լուսոն,
— Ես միշտ պատրաստ եմ,—
Ասավ նա զգոն,
Նայեց սլացող ընկերոջն հեռու,
Հազիվ երևցող կետին ակնառու.
Ու պահակի պես նա գնաց եկավ.
Նորից երկաթին հայացքը ընկավ.
— Մեր մեջը մնա,
Լավ բռնեցինք հա՛...
Թե չէ թշնամին էնպես է կարծում՝
Խոտ ենք արածում...
Վայ թե մեզ բերեց
Քոռի տեղ դրեց.
Էլ ի՞նչ պիոներ,
Որ աչքը փակեր...
Բայց ափսոս էսօր
Դասերը բոլոր
Բաց թողինք էսպես...

Ու պատկերացավ
Դասը Լուսիկին.
Նա դպրոց թռավ
Թառած իր մտքին...
— Ա՛խ, ոնց գիտեի ես դասը անգիր...
Ինքն իրեն ասավ անգիր դասը էր,
Ասավ ու լռեց.
Վզկապը հանեց
Ու կանգնեց գծաստ,

Հսկելու պատրաստ։
Լուսիկին թվաց, թե անցան ժամեր։
Հարդարեց ծամերն
Ու խոսեց կրկին...
Անհանգստացավ
Լուսոն սրտացավ,
Ոնց պահակ արթուն
Զորս կողմը դիտեց,
Բայց ոչ մի մարդու
Նա չնկատեց։
Ինչ որ մի թռչուն սուլեց ու անցավ,
Լուսիկին թվաց, թե գնացքն եկավ։
Նայեց նա հեռուն,
Լսեց ուշադիր...
Լուռ էր լեռներում
Եվ հովտում անծիր։

2.

ԱՆԾԱՆՈԹԸ

Լուսոն միտքը կտրեց հանկարծ,
Ծամը աչքից դեն քաշեց,
Նայեց, տեսավ, որ, անկասկած,
Մի մարդ իր կողմը վազեց։
Մարդը վազքը քայլի փոխեց,
Գիծն ստուգեց ուշադիր.
Ինչպես հաստատ էլ ոտք կոխեց,
Ոնց որ լիներ բակումն իր։
— Եկա՛ն, եկա՛ն, — ճչաց Լուսոն,
Ծափով վազեց մարդուն դեմ.
Նա է, նա է, քեռի Ասոն,
Գիտի ամեն ինչ պատմեմ։
Քիչ մոտեցավ ու կանգ առավ.
Նայեց մարդու քայլվածքին...

Նա ջահել էր, Ասոն՝ պառավ,
Նման էլ չէր կեցվածքին։
— Բա ինչո՞ւ է առանց մուրճի,
Գիծն էլ լավ չի ըստուգում...
Ահա՛, հասավ նա կամուրջին,
Ո՞վ է, գլխի չեմ ընկնում...
Մարդը եկավ մոտ,
Լուսոյին տեսավ
Ու շատ ծիծաղկոտ
«Բարև քեզ» ասավ,
Քաղցր խոսք ճարեց,
Հարց ու փորձ արեց
Գյուղից, դասերից,
Գծամասերից...
Բայց հայացքի մեջ
Բարկություն կար մի.
Վրդովմունք անշեջ՝
Աչքերում կարմիր
Արյունակալած՝
Ոնց որ քիչ քնած։
Եվ Լուսոն լռիկ ու թշնամաբար
Չափում էր մարդուն՝ վերևից մինչ վար.
«Հագուստն երկաթուղային,
    Իսկ գլխարկը՝ ոչ...
Շուտ անեին մի դային...
    Ի՞նչ հյուր է անկոչ։
Լա՞վ մարդ է սա, թե՞ վատ է,
    Ի՞նչ գիտեմ հիմի.
Գուցե անհարազատ է,
    Խափկան է՝ քամի...»
Մտածեց Լուսոն,
Լուսոն մեր զգոն,
Նայեց դես ու դեն,
Քիչ մնաց արդեն
Օգնության կանչեր.

Ու որ չամաչեր
Նրան կկոպտեր,
Երբ որ մարդը այն,
Ծխեց քիչ անձայն,
Նստեց ռելսին,
Հարց տվեց Լուսին.
— Էստեղ դու ի՞նչ ես անում,
    Աղջիկ ջան,
Կարծե՛մ դպրոց ես գնում,
    Ջղջիկ ջան.
Որ էդպես է՝ ուշացար,
    Շուտ արա,
Իզուր կանգնել ես ախար
    Ավարա:
Տես թե օրը հասավ ո՞ւր,
    Դե թո՛ւր,
Խաղ ես անում դու իզուր
    Թուլուխ:
    Լուսոն տեսավ, որ քեռին
Լավ հասավ,
    Վառած նրա պինդ ձեռին,
Նա ասավ.
— Օրը ուր հասավ...
Ի՞նչ անեմ թե...
Դու արի մի տես
Ինչ երկաթ է...
Գիտե՞ս, խրել է
Մի թշնամի,
Էնքան էլ մեծը,
Ոնց որ սամի:
    Նա մարդուն նայեց
Կորաքամակ,
Տեսավ՝ աչքերն են շատ խորամանկ,
Ու քիթն էլ կարմիր՝ հարբեցողի,
Երևի շատ էր խմել օղի:

    Մի անկյունով շրթունքների
Քեռին ժպտաց հեգնական...
— Երկաթն էս մեծ ցավ կբերի,
Շո՛ւտ արա, շո՛ւտ, քեռի ջան:
Քեռին թեքվեց ռելսի վրա.
Շատ մռայլվեց դեմքը նրա.
Լուսիկին նա քնքուշ շոյեց,
Ու թշնամուն պինդ հայհոյեց...
Ուրախացավ Լուսիկն անչափ,
Որ կհանի քեռին սեպն այդ:
Քեռին փորձեց սեպը հանել,
Ջրաչարեց ոչինչ անել:
— Դուրս չի գալիս սեպը,— ասաց,
Թողնենք մեջը՝ պրծավ գնաց:
Բան չի անի, մի վախենա,
Դու քո դասին հանգիստ գնա:
— Վա՛յ, ինչե՞ր ես ասում, ինչե՛ր,
Կխորտակի սա գնացքներ,
Կվնասվեն մարդ ու ապրանք...
Ջոկատին ի՞նչ պատասխան տանք:
— Մանր բան է, աղջի՛,
Մեծ գործը դասն է ձեր.
Սեպը հո չի փախչի,
Ես կհանեմ, դե վե՛ր...
— Ոչի՛նչ քեռի, ոչի՛նչ,
Դասերը թող մնան.
Ինձ վատ բան չեն ասի,
Եթե որ իմանան՝
Պարտավոր եմ կանխել,
Ոչ թե թողել՝ փախչել:
Չա՛, հետո, մոռացա,
Չուսին եմ սպասում.
Ուր որ է՝ նա կգա...
— Դու էդ ի՞նչ ես ասում,—
Մարդն հանկարծ ետ դարձավ

Չռեց աչքերը չար,
Եվ ձեկավ, բարկացավ,
Նետեց գլանակն ու քար...
— Ո՞վ է Հուսը այդ քո...
— Դասընկերս է,— ասաց
Լուսիկը հարգանքով:
Մարդը շնչեց հաճախ,
Շնչեց հուզված անչափ...
— Ընկերդ ու՞ր մնաց,—
Վրա պրծավ Լուսին
Ու խորհեց դառնությամբ.
«Համոզել երկուսի՞ն...
Ես կարծում էի, թե շատ հեշտ է
Փչել աղջկան
Էստեղից.
Բայց ախր դա շատ
Անհրաժեշտ է,
Թե չէ կորած է
Ամեն ինչ...»
Լուսիկն զգույշ՝ լռեց
Ու էլի կասկածեց,
Տեղում մի պահ սառեց,
Շուրջը շուտ աչք ածեց...
Չասեց տեղն ընկերոջ.
«Չեմ ասի ես նրան
Հուսիկի տեղը, ոչ...
Շուտով մերոնք կգան...»:
Քեռին ժպտաց Լուսին,
Ջեբից հանեց մուրճը,
Ծիծաղեց նա կրկին,
Դիտեց իր շուրջը.
— Ի՛նչ վախկոտն ես եղել,—
Ասաց նա ծիծաղով.
Լուսին ուզեց եղել,
Թե կհանի խաղով,

Ու կատաղի թափով
Այնպես զարկեց սեղին՝
Գլխից թռավ կեպին:
Լուսոն տեսավ, որ նա
Չհանեց սեպը այն,
Զարկեց որ ամբանա,
Գուցե խաբե՞ց միայն...
— Հո միամիտ չե՞մ ես,
Չե՞մ հասկանում՝ գիտես...
— Հիմար աղջիկ, չգիտես,
Էպես ամուր որ խփես,
Երկու ռելսը կսեղմեն՝
Սեպը դուրս կթռցնեն:
Լուսիկն զգույշ մոտեցավ,
Նայեց ժպտուն մարդուն,
Եվ, շատ ու շատ զարմացավ,
Թե ի՞նչու էդ քեռին
Ատամներն է ջարդում
Ուժեղ կրճտոցից:
Մարդը վրա հասավ,
Բռնեց Լուսիկի ձեռքից,
Իսկ հետո ծոծրակից,
Կռացրեց նրան
Էն ցից սեպի վրա:
Լուսիկը դողահար՝
Նրա աչքերից չար,
Ճչաց աղեկտուր,
Ուզեց պոկվել՝ իզուր:
Հիշեց մեծ պարտքը իր
Պիոներ Լուսիկը ժիր,
Ուժերը հավաքեց,
Մարդու դեմքին թքեց
Ու դուրս պրծավ ճարպիկ,
Ինչպես ճարպիկ կապիկ,
Եվ ինչքան ուժ ուներ,

Անխծելով նրան,
Վազեց նա կայարան:
Հայհոյեց քեռին
Էն ճարպիկ ծուռին,
Ընկավ ետևից
Ու բռնեց թևից,
Ոլորեց թևը…
Մշուշն ու սևը
Աչքերին իջան
Կայտառ աղջկա:
Մարդը այն քինոտ
Քաշեց նրան մոտ…
Հեկեկաց Լուսը
Ու բռնեց ուսը…
Օ՛, շատ էր ցավում,
Ողջ թևն էր նվում…
— Տես քո աչքերովդ,
Լակոտ դու անպատկառ…
Իսկ հիմա փայդ ա՛ռ…
Ասավ, դարկեց մուրճով
Ոսկեծամիկ գլխին,
Գցեց գծի թմբին
Ու փախավ կամուրջով…
Մտավ եղեգնուտը,
Ծուռ անցավ ճահճուտը,
Անցավ դաշտն ու թմբեր
Ու վազեց սարն ի վեր:
—Վա՛խ…—արեց Լուսոն ու վերջին ուժով
Պահեց գլխից վեր վզկապն արյունոտ…
Թուլացավ թևը ու մահը մուժով
Փակեց աչքերը, կախեց ձեռ ու վոտ:
Լուսիկը կայտառ,
Լուսիկը պայծառ,
Անկամ մի մարմին,
Տապալվեց թմբին…

. . . .

Սարից իջավ քամին,
Խաղաց Լուսի ծամին,
Շոյեց դեմքը քնքուշ,
Օրոր ասավ անուշ,
Սփոփալով թախծոտ,
Անցավ եղեգն ու խոտ,
Ասես դրդեց հովվին,
Ինքը փարվեց մովին…

3. ՋՈՒՐԸ ՊԱՐԶՎՈՒՄ Է

Անցավ մի պահ, անցավ երկու.
Հովիվն հոտը իր թողեց,
Գամփռներից իր ահարկու
Մեկին առավ ու վազեց…
Հեռվից լսեց մոտոռի ձայն,
Ազդանշան տագնապի.
Ու դժժացին ռելսերն այն՝
Ոնց ծղրիդը՝ երգ կապի:
Սլանում էր դեպի Լուսոն
Դրեզինան թև առած.
Նրա մեջ էր ծովաչ Հուսոն,
Նայում էր նա միշտ առաջ:
Երբ մոտեցան այն կամուրջին,
Հուսիկը դուրս նայեց շուտ,
Թե ու՞ր թողեց նա Լուսիկին,
Ու՞ր է ճահիճ, եղեգնուտ:
Դանդաղ, զգույշ առաջ սողաց
Մեքենան լի մարդկանցով,
Արգելակեց ու դողդողաց,

Կանչնեց Լուսի գլխի քով։
Չհամբերեց էլ Հուսիկը
Թռավ վազեց Լուսին մոտ...
Անշունչ ընկած էր Լուսիկը,
Դեմքը ամբողջ արյունոտ։
Իրար ետևից դուրս ընկան՝
Մեքենավար, բանվորներ,
Շտապ Լուսիկի մոտ եկան,
Թողած գործ ու գործիքներ։
— Լուսի՛կ, Լուսի՛կ,— ցնցեց Հուսոն...
Լուսը աչքը չբացեց․
—Վա՜հ, մեռած է մեր քաջ Լուսոն,—
Ասավ, նստեց ու լացեց։
Քեռի Ասոն՝ գծի պահակ,
Հանեց գլխարկն ու չոքեց...
Տխուր էին ու գլխահակ
Բոլորն այն ժամ, ցավից մեծ։
— Ո՞վ սպանեց, էս ո՞նց եղավ...
— Մարդասպանին բռնեցե՛ք...
Փոքրիկ խումբը իրար անցավ․
— Ո՞վ է փախչում, մի կացեք...

Նայեցին սարին,
Տեսան՝ կատարին
Մի մարդ է հասնում
Վազեվազ․
Ետ-ետ է նայում,
Ու չի խնայում
Վերջին ուժերը
Իր նվազ։
Հասավ կատարին,
Մոտից մի քարի
Իրենց է կանչում,
Նա շտապով...
— Նա էլ չի փախչի...

— Է՜, գուցե նա՞ չի...
— Մի հովիվ է նա
Մահակով...
Մեկը այս ասեց,
Մյուսը չսպասեց,
Անցավ եղեգնուտն
Ու վազեց․
Իսկ սարի մարդը,
Երիտասարդը,
Ցույց տվեց ճամբան
Ու շտապեց։
Իսկ Լուսիկի մոտ,
Լացով ու դարդոտ
Հուսիկն էր նստած
Թախիծով պատած։
Մեկ էլ Հուսիկը, դեմքով տխրացած,
Պայծառ լույս դարձավ,
Սրբեց աչքը թաց,
Վեր թռավ տեղից,
Ոնց որ ասեղից,
—Ասո քեռի,
Լուսի ձեռից
Ես կիմանամ՝
Մեռած է նա,
Թե կենդանի,
Բայց անզգա...
Ասավ Հուսիկն, իսկույն նստեց,
Զարկերակը լավ ստուգեց,
Ապա ականջ դրեց շուտ նա,
Որ սրտի զարկն էլ իմանա։
Լսեց երկար, լսեց ուշիմ,
Պայծառացավ դեմքը նրա․
— Քեռի Ասո, ուշ չի՛, ուշ չի՛,
Ա՛յ, աղնիվ խոսք, մի տես հլա...

Ժպտաց Ասոն, նստեց ձին,
Լուսի գլուխն առավ ծնկին,
Սրբեց դեմքը թաշկինակով,
Ու համբուրեց ճակատը զով.
Ապա լսեց ձայնը սրտի,
Բութն էլ դրեց զարկերակին...
— Հուսիկ ջան, ա՛յ խելոք որդի,
Ջուր հասցրիր հուր կրակին...
Տղե՛րք, ողջ է,
Դեռ առողջ է,
Շուտ հասցրեք
Կայարան...
Մի սպասեք...
Էնտեղ ասեք՝
Տանեն քաղաք՝
Բուժարան:
Ու չորս հոգով,
Մեծ խնամքով,
Առան Լուսին
Գիրկն իրենց,
Տարան դրին
Մեքենային
Ու քշեցին
Թափով մեծ:
Հուսիկն ուրախ
Ժպտով խաղաղ,
Ընկերուհու
Հետ գնաց,
Տարավ նրան
Եվ կայարան,
Եվ բուժարան
Ու մնաց:
Մյուսներն էլ սեպն հանեցին,
Ստուգեցին գիծն արագ...
Հինգ դավադիր սեպ ճարեցին՝

Թշնամու գործ սև, վայրագ:
— Հո՛ւյ, ես դրանց, հո՛ւյ, ես դրանց...
Գոչեց Ասոն զայրույթով,
Ու հայհոյեց «նրանց» սրտանց,
Ուղղեց գիծը նա փութով:
Եկան հովիվն ու բանվորը,
Բերին էն անծանոթին.
Շատ մռայլ էր վնասարարը՝
Մարդկանց մահվան անոթին:
Վրա տվին երկու ջահել.
— Թող մի խեղդե՛նք մենք դրան...
Բայց ետ պահեց Ասոն ահել.
— Տարեք դրան կայարան:
Խեղդող կա, դուք մի՛ք վախենա,
Ժողովուրդը կխեղդի,
Լուսի լույսով բռնվեց նա,
Մեր գնդակից կստկի...
. . . .

Հեռվում սուլեց գնացքն արագ,
Ձեպով եկավ ու անցավ,
Եվ իր հետ էլ խաբար տարավ,
Թե ո՛վ կանխեց լաց ու ցավ:
Շչակն այդ օր զիլ էր շաչում,
Զրնգացնում սար ու ձոր.
— Ով երկուսին չի ճանաչում,
Թող լավ լսի ինձ այսօր...
Ու պատմում էր նրանց մասին՝
Երկու հերոս պատանու,
Կյանք էր մաղթում բյուր երկուսին
Ու թշնամուն սասանում:
Ծաղիկներն էլ նրա ճամբին
Ժպտում էին, օրորվում.
Ծիտը պարում սյունին, ճմբին,
Երգով հեզիկ չորորվում...

4․ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Հիվանդանոցի մաքուր սենյակում
Պառկած էր Լուսոն գլուխը կապած․
Ճչում էր ցավից ու ծանր տնքում,
Ուղեղը՝ տենդով ու ցավով պատած։
Դուռը կամացուկ բացվում էր մեկ-մեկ,
Ներս էին մտնում մի խումբ բանվորներ,
Լուսիկի ընկերն անխինդ, տրտմաբեկ
Ու քեռի Ասոն՝ ձեռքին ծաղիկներ։
Իսկ բժշկուհին, մատը շրթունքին,
Միշտ լռություն էր շատ խիստ պահանջում․
—Վնաս է հանկարծ աղջկա քունքին․
Ցավերը համառ դեռ չեն նահանջում…
Տխրում էին շատ ու հոգոց հանում,
Հուսիկն էր սրբում արցունքը թաքուն,
Կարծում, թե Լուսին սև մահն է տանում,
Ու կյանքի դռներն ընդմիշտ է փակում։
—Բայց մենք չենք զիջի Լուսիկին հերոս,—
Բժշկուհին էր այդ ասում վստահ․
Նրանք վիզը ծուռ, նայելով անխոս,
Թաթերի վրա դուրս գնում սրահ
Ու թողնում էին նվերները թանկ՝
Շոկոլադ, թխվածք, գիրք նկարազարդ,
Հեռվից ցանկանում առողջություն, կյանք,
Լուսիկին ծաղիկ՝ պարտեզի մի վարդ։
Այսպես ամեն օր ու ամեն շաբաթ
Այցելում էին նրան շատ մարդիկ՝
Ծնող ու եղբայր, բերում…մածուն, կաթ,
Ու սերը իրենց Լուսիկին փոքրիկ։
Դպրոց էր գնում Հուսիկը տխուր,
Ճամբին միշտ կանգնում այն դեպքի
վայրում…
—Է՜հ, չարչարում են երևի իզուր․
Լուսիկին վայ թե հենց մահն է այրում։

Ինչ՞ու ես ինքս չկանգնեցի է,
Ինչո՞ւ Լուսիկը լուրը չտարավ…
Ա՜խ, ա՜խ, կմեռնի՞ Լուսիկը միթե,
Էս ուրախ կյանքից կմնա ծարա՞վ…
Նայում էր չորս կողմ, փնտրում էր ինչ որ,
Քայլում էր դեպի լեռնանցքը դանդաղ…
Այցելում էր նա Լուսին ամեն օր,
Ընկերոջ կյանքից կրում էր մի վախ…

5․ ՊԱՐԳԵՎԸ

Անցան օրեր ու շաբաթներ․
Մեր Լուսիկը առողջացավ,
Գլխին մնաց վառ սպիներ,
Անցան և՛ տենդ, և՛ դարդ, և՛ ցավ։
Նորից գարուն եկավ զվարթ,
Բացվեցին վառ շուշան ու վարդ,
Ճռվողեցին ծիտ ու ծիծառ
Գարնան երկնում ջինջ ու պայծառ։
Ահա նորից խաղով, տաղով,
Իրենց ճամբով նվիրական,
Երկու ընկեր ծափ-ծիծաղով,
Երկաթգծով դպրոց եկան։
Ու տոն եղավ դպրոցում այն․
Ողջունեցին հերոսներին,
Ծաղկով, երգով ու խնդությամբ
Հուսին, Լուսին այգի բերին։
Պարգևեցին փոքրիկ անդրին
Մեծ Ստալինի՝ հորն, ուսուցչի․
Ու երկուսն էլ ջերմ խոսք տվին,
Որ թշնամին չի՛ հաղթի, չի՛։
—Մի՛շտ պատրաստ ենք,— ասին նրանք,
Պատվի առած գդասա, Հպարտ,—

Ձենք խնայի ո՛չ ջանք, ո՛չ կյանք,
Երկրի համար մեծ ու անպարտ...
Ելան ուրախ՝ Ասո քեռին,
Բանվորները գիծ նորոգող.
Ծաղկեփնջեր նվեր բերին
Ու պատեֆոն՝ ասող-խոսող:
Ասո քեռին բարձրացավ բեմ,
Հուսին, Լուսին գիրկը առավ.
Դիմեց հեռուն խոժոռադեմ,
Ոսոխներին այսպես ասավ.
— Սեպեր դրեց մարդասպանը,
Որ կարենա սև գործ անել.
Բայց բուրդ դառավ նրա բանը,
Նա էլ ուզեց Լուսին սպանել:
Է՛յ, ականջի բամբակն հանեք
Ու լավ լսեք, թշնամիներ...
Պատռեք, ճաքեք... ինչ էլ անեք,
Ձեր ստանա լավ բերքից մեր...
Ծափահարեց, թնդաց, ցնծաց
Ժողովն ամբողջ՝ մանուկ ու ծեր,
Ասոն զույգին պաչեց ու ցած
Իջավ ուրախ, դեմքին՝ վարդեր:
Հետո պատմեց հովիվն էլ այն,
Թե ոնց տեսավ վոճիրը սև...
Ծափահարեց այդին համայն
Կոլեկտիվի հովվին պարթև:
Խնդությունը թնդաց նորից,
Երգեց ուրախ դպրոցը ողջ...
Ծաղկի բույրը եկավ ձորից
Ու համբուրեց դեմքերն անխոնջ...

. . . .
. . . .
. . . .
. . . .

Գրկած անդրին առաջնորդի
Երկու հերոս եա դարձան տուն՝
Ոնց որ հորը գրկի որդին,
Ոնց որ հայրը գգվի որդուն...

ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ութնյակներ)

I

Ես անցյալում քեզ չեմ տեսել,
Բայց գիտեի, որ կաս դու,
Որ քո կրծքում՝ մի սար վսեմ—
Մասիսը վեհ ու ազդու—
Միշտ փառավոր՝ կանգնած երկնում՝
Քեզ նյութել է ուժ ու սեր,
Եվ դարերում դու ահարկու
Ապրել ես ու մեզ հասել:

II

Քո լեռները նվիրական,
Քո դաշտերը գեղանիստ,
Որ փռվել են որպես օվկիան,—
Փոթորկեցին խենթ հոգիս:
Համբուրում եմ ես քո հողը,
Ժողովրդիդ արդ ազատ,
Թո՛ղ խաղաղվի սրտիս դողը
Քո օրրանում ծաղկազարդ:

III

Անց եմ կենում ահա դանդաղ
Այս բազմազարդ քաղաքով,—
Ծաղկանոցներ, այգի ու բաղ
Ինձ դյութում են հմայքով:
Ամեն մի ծառ և ամեն քար՝
Ուրույն ձայնով ու շուրթով՝
Շշնջում են.— ո՛վ ճարտար մա՛րդ,
Մենք շունչ առանք քո ջանքո՛վ:

IV

Ծայրիդ թովիչ բույրով արբած
Ես ըմպեցի քո գինին,
Եվ գրում եմ երգերն այս պարզ,
Քե՛զ եմ ձոնում երգերն իմ:
Ա՛ռ, ընդունի՛ր, իմ մա՛յր երկիր,
Հուզուս թոթխան անդադրում,
Թե անշուք է—դու ինձ ների՛ր
Քո բանաստեղծ պատանուն:

V

Չեմ հաղենա հովեն, ժովեն,
Թե սառող լինեմ հրկնքին,
Հանդիպեցի այսօր նորեն
Հոգու, երգի վարպետին.
Ո՛վ Ավետիք Իսահակյան,
Իսահակյան Ավետիք,
Դու երկի՞նք ես, թե՞ խոր օվկիան,
Դու օվկիա՞ն ես, թե՞ երկինք:

VI

Որպես Մասիսն այս ալևոր,
Ժողովո՛ւրդը որպես մեր,
Ոգով էր հին, ոգով էր նոր
Նա չայլ է, նա անմեռ:
Նա բեղուն է, բուրումնալի,
Բերքեր ունի նա առատ,
Նա նման է մեր մեծ երկրի
Սուրբ հողերին արգավանդ:

ԳԵՐԵՆԻԿ ԶԱՐԽՋՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ԳԻՇԵՐԸ

Կապույտ գիշերն անուշ-մեղուշ իջավ ահա մեր դաշտերին,
Աստղերն իջան լճի զմրուխտ ջրերի մեջ լողանալու,
Մի լուսերես աղջկա պես սարից ելավ երկնի ծերին,
Լուսնյակն ելավ երկնի լուսե շուշանները հավաքելու:

Ի՜նչ խաղաղ է հայրենիքիս գիշերը զով, անուշ երազ,
Լուսնյակի հետ համբուրվում են հայրենիքիս սարերը սեգ,
Գիշերն անուշ քուն է բերել ամեն սրտի սեր ու մուրազ,
Անուշ քուն է լուսնից ծորում՝ փռվում ազատ աշխարհով մեկ:

Հայրենիքիս աղջիկները, իմ քույրերը սիրուն, քնքուշ,
Մուշ-մուշ անուշ քուն են մտել, արբած սիրո երազներով,
Եվ լուսինն է մոր պես բարի հսկում նրանց քունը անուշ,
Մանուկների համար մեղուշ օրոր կասե զեփյուռը զով:

Մեր տղերքն էլ բանակային, եղբայրներս քաջ ու արի,
Արթուն աչքով, լուռ պահակ են կանգնել մեր սուրբ սահմանի
մոտ,

Մութ է սակայն, նրանց համար մի արեգակ լույս կվառի
Ու գիշերն է թվում որպես գարնան պայծառ ջինջ առավոտ:

ԵՐԳ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Երկնում էլ բացվել է գարունը, ծաղկել է երկնքի վարդը,
Արևը ոսկի շափաղ և առատ բույր է տալիս,
Տարին ողջ գարուն է ու գարնան պես ուրախ է մարդը՝
Իր սրտով սիրած յարին անուշ համբույր է տալիս:

Երգում են, պարում երկրիս լեռներն ու ամեն սարը,
Շուշան ու վարդ կուզեն լինել անգամ ավազն ու քարը,
Չկա ծառ, որ չծաղկի, չտա իր անուշ բարը,
Ստալին արևն ամենուր կյանքի հուր է տալիս:

Չկա թախիծ ցավ ու դարդ մեր լույս աշխարհում,
Առանց բլբուլ չկա վարդ մեր լույս աշխարհում,
Ծով սեր ունի ամեն մարդ մեր լույս աշխարհում,
Կռունկը մեզ ամեն օր միշտ ուրախ լուր է տալիս:

Երեկվա խրճիթս քանդեցի․ պալատ եմ շինել իմ տունը,
Իմ սրտով սիրած յարիս հետ միշտ անուշ է իմ քունը,
Էլ չի քանդում ոսկին սիրո թռչունի բունը,
Հայրենիքիս սերը ինձ ուժ, ինձ թև ու թուր է տալիս:

ՀՈՒՍԻԿ ԽԱՆԴԱՄՈՒՐ

ՎԵՐՑՐԵ՛Ք ԶԵՆՔԵՐԸ

Յուրաքանչյուր օր թվում էր, որ պատերազմը հաջորդ օրը պիտի սկսվի: Այդպես էր թվում նաև պրոֆեսոր դել Սարտոյին: Կանգնած իր տան երրորդ հարկի պատշգամբում՝ նա հայացքը հառել էր մայր մտնող արեգակին, որի մեջ ինչ-որ չարագուշակ շեշտ էր նկատում: Ծիրանափայլ հորիզոնը նրան թվում էր արնոտ մի մահիճ...

«Սկսվում է նոր սպանդ»,— մտածում էր նա:

Շատ էր վրդովվել պրոֆեսոր դել Սարտոն. ամբողջ երկրագունդը նրան թվում էր մի գազանանոց, ուր բոլորն զբաղված են միմյանց արյունը ծծելով: Ինչպե՞ս հասկացնել մարդկանց, որ այդ վատ է, որ ամոթաբեր է մարդու անվան, Մարդու, որ կոչված է տիեզերքի թագավորը, բոլոր արարածների թագավորը լինելու:

Պրոֆեսոր դել Սարտոն ոտքի կանգնեց, անհանգիստ երթևեկեց մի պահ ու մոտեցավ հեռախոսին:

— Ալլո, միացրեք կորտեսների պալատը: Ո՞վ է խոսում... Խնդրում եմ հեռախոսը տաք պարոն նախագահին: Ալլո, ո՞վ է: Պարոն նախագահ, Ձեզ հետ խոսում է պրոֆեսոր դել Սարտոն: Խնդրում եմ ինձ հայտնեք՝ մի՞թե անխուսափելի է պատերազմը...

Տիրեց լռություն: Պրոֆեսորի ձայնը դողում էր ձեռքի նման, ձեռքը՝ սրտի:

— Անխուսափելի՞— բացականչեց նա քիչ հետո և այս անգամ գոռաց ամբո՛ղջ մարմնով:— Մի՞թե ոչ մի կերպ, պարոն նախագահ, մի՞թե ոչ մի կերպ:— Նա բառերը թափում էր արագ-արագ ու լուռ սպասում մի հարցական հայացքով, որ հիշեցնում էր մահամերձի, դեմքը:

Նախագահը դարձյալ ժխտական պատասխան տվեց։ Այս անգամ պրոֆեսորը նմանվում էր ոչ թե մահամերձի, այլ՝ դիակի։

Անցավ որոշ ժամանակ։ Ո՞րչափ — այդ հայտնի չէ պրոֆ. դել Սարտոյին։ Ծանոթ մի ձեռք է բաղխում տան դուռը — ե՞րբ է նա լսել մատների այսպիսի թմբկահարումը դռան վրա — այդ նույնպես հայտնի չէ պրոֆեսոր դել Սարտոյին։ Ժամանակի և տարածության գաղափարը կորցրել է նա։ Նա բացում է դուռը։ Նրա դիմացը կանգնած է նրա երիտասարդ որդին։ Հայրը ջերմորեն սեղմում է որդու ձեռքը և ասում.

— Դու չգիտե՛ս, Էսկամի՛լյո, ինչպիսի՛ անհամբերությամբ էի սպասում ես քեզ։ Վերջապես դու եկար, ես այլևս քեզ չեմ թողնի տնից հեռանալ։

— Ի՞նչ ես ասում, հայր, հենց այս պահին է, որ երկիրն ինձ ամենից ավելի կարիք ունի։ Շատ գործեր են կուտակվել, հայր, և ես եկա վերջին անգամ քո ձեռքը սեղմելու։ Գուցե այլևս չվերադառնամ։ Շատ նեղ է հիմա իսպանական հորիզոնը և այդ հորիզոնն ամպերով է շրջապատված։ Մնաս բարո՛վ, հա՛յր։

— Էսկամի՛լյո, — գոռաց հայրը զայրույթով։

— Տո՛ւր ձեռքդ, հա՛յր, մի՞թե հնարավոր է վերջին տեսակցությունն այս կերպ ավարտել։

— Ես քեզ կբանտարկեմ, Էսկամիլյո, ես չեմ թողնի դու տնից հեռանաս։

— Մնաս բարով, հայր, — ասաց որդին և վճռական մի շարժումով դիմեց դեպի դուռը։ — Այն պահին, երբ իմ հայրենիքը գազանային հարձակման է ենթարկվել, ես չեմ կարող տանը հանգիստ նստել և զբաղվել մահացուցակների ընթերցումով։

— Պատերազմ չպիտի՛ լինի, Էսկամի՛լյո։ Ես դրա համար կգործադրեմ իմ ամբողջ կարողությունը, ես հեռագիր-հեռագրի ետևից կուղարկեմ Ազգերի լիգային, Ռոմեն Ռոլանին, ամբո՛ղջ ինտելիգենցիային. պատերազմ չպիտի՛ լինի», թող բռնե՛ն մարդասպաններին։

— Այդ ինչե՞ր ես ասում, հայր, — ժպտաց որդին, — ինչ-

պես՝ միամտություն։ Որքան ժամանակ աշխարհի վրա գոյություն ունենա կապիտալիզմը, գոյություն կունենան նաև պատերազմները։ Մենք, կոմունիստներս, պատերազմ չենք ցանկանում, բայց և չենք վախենում պատերազմից։

Հայրը լուռ նայում էր իր դեմ կանգնած կրակոտ երիտասարդին։ Մի՞թե իր որդին էր դա — որքա՛ն հեզ ու խոնարհ, որքա՛ն փափուկ էր նա մի քանի տարի առաջ։ Ինչպե՛ս սարսափով էր խոսում նա պատերազմի մասին։ Իսկ այսօ՞ր…

— Էսկամի՛լյո, հիշո՞ւմ ես Գվադալքիվիրը 28 թվին, — ասաց վերջապես հայրը քաղցր տոնով։

— Այո, դա մի երջանիկ օր էր, որ անցավ, երջանիկ օր մի ընտանիքի համար, իսկ այժմ հազարավոր, տասնյակ հազարավոր հեղափոխականներ մութ ու խոնավ խցիկների մեջ հավիտենական երջանկություն են երազում ամբո՛ղջ մարդկության համար։

«Սա իմ որդին է», — մտածեց պրոֆեսորը։

***

Գվադալքիվիրի ափով սլանում է մի ձիավոր։ Նա հուզված է։ Կարևոր գործեր են հանձնարարված նրան։ Երկար ժամանակ նրան ուղեկցում է կապուտաչյա Գվադալքիվիրը։ Ձիավորը մերթ ընդ մերթ ետ է դառնում ու նկատում, որ ծառերն ափսոսանքով խոնարհում են իրենց գլուխները և ինչ-որ բան շշնջում։

Ձիավորը սլանում է առաջ։ Գետը դեռ ուղեկցում է նրան։

***

Անդալուզական հովտում, զվարթահոս Գվադալքիվիրի ափին՝ կանգնած էր աղջիկը մտածկոտ ու նայում էր հեռուն։ Էսկամիլյոն այսօր պիտի գա։ Էսկամիլյոն, հրաշալի մարտիկը, նա՛, որ իրեն սովորեցրեց սիրել և ատել։ Ի՛նչ դյուրեկան է զեփյուռը, Գվադալքիվիրի և իր մազերի հետ խաղացող այս չարաճճին։ Որքա՛ն սեր, որքա՛ն գեղեցկություն կա Անդալուզիայում։ Ի՛նչ քաղցր է թռչունների երգը։ Եվ մի՞թե մի Թրո-

չուն չէ նաև ինքը: Մի թռչուն, կանգնած գետափին, նայում է հեռուն: Սիերա Նեվադայի գագաթը նման է արևի տակ փայլող ոսկե մի բաժակի: Արևի, վերջալուսային արևի չքնաղ ծիածանի տակ ծփացող լիճը թվում է երազուն մի աչք, դաշտը՝ երփներանգ մի գորգ և կանաչազարդ բլուրները՝ կանաչ մանուշակներ:

Աղջիկը, Լինա Օղենան, հենվեց ծառին ու նրա կապույտ աչքերն ավելի խոհուն դարձան, զեփյուռն ավելի մեծ քնքշանքով սկսեց շոյել նրա փափուկ, գեղեցիկ մազերը, և քամին, անդալուզական բուրումնավետ քամին, սկսեց թախծոտ շշունջներ բերել նրան: Թախծոտ շշունջներ այն պատերազմի մասին, որ պիտի սկսվի շուտով, այն արյան մասին, որ պիտի հոսի այստեղ, այս գեղեցիկ բնության մեջ:

Հեռավոր տարածության վրայից լսվում է մի ձայն: Այդ մի հնձվոր է, որ աշխատում է և երգում: Շուտով նրա արտը կգրավեն, կհրկիզեն գյուղը և նա այլևս չի՛ երգի:

Իսկ երբ վերացվի կապիտալիզմը և ծագի ազատության արևն Իսպանիայի վրա, այն ժամանակ շարունակ կերգի աշխատավորն այս գեղեցիկ դաշտերի մեջ, այս գեղեցիկ հովտում, այս գեղեցիկ լեռնալանջերին, ուր ձիթենիները՝ խաղաղության սիմվոլներն են աճում: Այն ժամանակ գեղեցկությունը հավիտենական կլինի, ավելի գեղեցիկ կերգեն ոչ միայն մարդիկ, այլև թռչուններն ու զեփյուռը, ավելի պճնազեղ կլինի Գվադալքիվիրը, որի ափին օրորվում են արմավենին, նարնջենին ու կեռասենին: Լինան շատ է սիրում կեռասենին: Դա մի գեղեցիկ հարս է կարմիր, գեղեցիկ օղերով... Խոսեմի՛լիոն, խորամա՛նկը... Մի օր, երբ Լինան կեռաս առաջարկեց նրան, նա ասաց.

— Ես այդ կեռասից չեմ ուզում, ես մյուս տեսակն եմ ուզում... և մոտեցավ Լինայի շրթունքներին: Իսկ ո՞ւր է հիմա նա, ինչո՞ւ է ուշանում, արդյոք նորի՞ց ձերբակալվեց: Այնպե՛ս անհանդարտ տղա է նա: Հենց երեկ նրան բանտից արձակեցին և հենց երեկ նա ցույց կազմակերպեց կորտեսների պալատի առաջ, պահանջելով, որ կառավարությունը պաշտոնազուրկ անի խռովարար գեներալներին:

Խոսեմի՛լիո... երբեք անձնական կյանք գոյություն չունի նրա համար: Լինան գիտե, որ նա սիրում է իրեն: Բայց իր սի–

րածի տեսակցությունը երկրո՛րդ օրվան թողեց, երկրորդ օրվա մայրամուտին և ահա արևը մայր է մտնում ու նա դեռ չկա: Լինան վեր է կենում, մի պահ երթևեկում է անհանգիստ, ու նորից նստում նարնջենու տակ:

***

— Ելի՛ր, ում կյանքը անիծել է...

Խոսեմիլիոյի, ձիավորի ձայնն է այդ, որ հնչում է այդպես խրոխտ, այդ նրա ձայնն է, որ թնդացնում է հովիտը: Աղջիկը հիպնոսված վեր է թռչում, վազում դեպի նա:

— Խոսեմի՛լիո:

— Լի՛նա...

Եվ նրանք գրկախառնվում են:

— Ինչո՞ւ ես այդպես տխուր, Խոսեմիլիո, ի՞նչ է պատահել քեզ,— քիչ հետո հարցնում է աղջիկը հուզմունքից դողացող ձայնով, երբ նկատում է իր սիրածի մշտաժպիտ դեմքին դամ–ված թանձր վիշտը:

— Այնպե՛ս հոգնած եմ, Լի՛նա,— և նա աղջկա ձեռքն առնում է իր ձեռքերի մեջ:

Տղան լուռ է: Այո՛, մեծ վիշտ կա նրա դեմքին, կա նաև հոգնություն, քնատություն: Նա պառկում, գրեթե ընկնում է խոտերի վրա, մի պահ լռում և ապա շշնջում.

— Հոգնած եմ, Լի՛նա:

Աղջիկը, հոգատար մոր նման, նստում է նրա կողքին և իր ծնկները որպես բարձ ծառայեցնում նրան:

— Լինա,— տղայի ձայնը դողում է,— Լինա, շուտով... պատերազմ պիտի սկսվի:

Եվ դարձյալ լռություն:

— Դրությունը խիստ բարդացել է, Լինա, շուտով արյուն պիտի հոսի... Դոլորեսը մի ամիս առաջ նախազգուշացում կատարեց. նա պահանջեց, որ կառավարությունը պաշտոնանկ անի սրիկա գեներալներին, բայց կառավարությունը չլսեց նրան և ահա մենք կանգնած ենք պատերազմի առաջ:

Նրա ձայնում հնչում էր վիշտ, զայրույթ և բողոք:

— Ես այդ գիտեմ, Խոսեմիլիո, բայց դու այնպես ես խոսում, որ կարծես պատերազմը հենց վաղը պիտի սկսվի:

— Վաղը, կամ մյուս օրը, գուցե և հենց այսօր, կես գիշերին և, ո՛վ գիտե, գուցե կես ժամ հետո, կամ հենց այս րոպեին...

***

Նրանք նորից լռեցին:

Հորիզոնում ամպերը ծխում էին դրոշների նման: Լռությունն իր թևերը փռել էր ամբողջ Անդալուզիայի, կարծես ամբողջ աշխարհի վրա, չէր լսվում նույնիսկ ոչ մի սոսափյուն և հանկարծ սկսեցին հնչել ինչ-որ փողեր, քիչ հետո դրանց միացավ գործարանային ու կայարանային շչակների աղեկտուր ճիչը, «Ամբողջ Իսպանիան անամպ է» ազդարարեց Մարոկկոյի ռադիո-կայանը և ապա լսվեց խուլ մի պայթյուն:

— Հայրենի՛ք, գալի՛ս ենք — բացականչեց աղջիկը և շարժվեց առաջ: Նա հանկարծ նկատեց, որ տղան, անբացատրելի մի ժպիտ դեմքին, անշարժ կանգնել էր իր տեղում:

— Չե՞ս գալիս, Խակամի՛լլո,— հարցրեց նա հանդիմական տոնով:

— Ո՛չ,— պատասխանեց տղան:

— Ինչո՞ւ, Խակամիլլո:

— Ինձ գործեր են հանձնարարված, Լի՛նա, ես միայն քեզ համար չէ, որ եկել եմ այստեղ:

— Մոռացի՛ր այդ բոլորը, Խակամիլլո,— ասաց աղջիկը,— թո՛ղ այդ խաղաղ ժամանակի գործերը:

— Ինձ հենց պատերազմական գործ է հանձնարարված, Լինա,— պատասխանեց Խակամիլլոն,— ես Պետրոյին եմ սպասում այստեղ:

Աղջիկը լռեց:

«Իսկ ի՞նչ անեմ ես»,— այս հարցն էր գծագրված նրա դեմքին:

— Դու էլ ինձ հետ սպասիր, Լինա,— ասաց Խակամիլլոն:

— Դու հանուն գործի ես կանգնել այստեղ, իսկ հանուն ինչի՞ ես կանգնեմ քո կողքին:

— Բայց էլ ի՞նչ միջոց է մնում քեզ:

Աղջիկը նայեց որոտի կողմը և ասաց.

— Հանձնարարիր ինձ որևէ գործ, Խակամիլլո:

Տղան նույնպես նայեց որոտի կողմը և պատասխանեց.

— Ես կարող եմ քեզ հանձնարարել միայն մի գործ՝ փրկել մեր լավագույն կոմերիտուհիներից մեկի կյանքը:

— Ասա՛, շո՛ւտ ասա, ո՞վ է դա, ինչպե՞ս կարելի է ազատել դրան:

— Դա դժվար է քեզ համար, Լինա:

— Ասա՛, շո՛ւտ ասա:

— Դո՛ւ ես վտանգի տակ գտնվող թանկագին կոմերիտուհին, հեռո՛ւ կաց, Լի՛նա, հեռո՛ւ կաց որոտներից:

Հենց այդ պահին մի գնդակ թռավ աղջկա ականջի մոտով, զարնվեց մի չորացած ծառի:

— Մնաս բարո՛վ, Խակամի՛լլո,— ասաց աղջիկը և արհամարհելով գնդակները՝ պատերազմի ոգու պես առաջ սլացավ:

***

Մի քանի րոպե ևս խռովարարները կրակեցին այն ուղղությամբ, ուր գտնվում էր Խակամիլլոն, բայց պատասխան չստանալով՝ դադարեցրին կրակոցը:

Խակամիլլոն անհամբեր սպասում էր: Օրըստօրե մոտեցող պատերազմի շունչը կոմունիստական կուսակցությանը դրդել էր մի շարք դիմադրական պլանների և ահա այդ պլաններից մեկն էր, որ կուսակցությունը վստահել էր նրան՝ անդալուզական ղեկավար ընկերներից մեկին հանձնելու:

Խակամիլլոն նայեց իր թևի ժամացույցին: Պետրոն կես ժամ ուշացել էր: Բայց կենդանի՞ է նա արդյոք...

Քիչ հետո երևաց բարձրահասակ ու նիհար մի տղա, որի դեմքին գծագրված էր պայքարի ու հաղթանակի կամքը:

Նա ջերմորեն սեղմեց Խակամիլլոյի ձեռքը և պատմեց այն արյան մասին, որ թափում է «հայրենի» Ֆաշիզմը:

Խակամիլլոն բնազդաբար ձեռքը տանելով ատրճանակին՝ կատաղորեն սեղմեց այն և ասաց.

— Այնուամենայնիվ մենք կհաղթենք...

Պետրոն բացեց թղթերը. ինքը նշանակված է կոմիսար, Խակամիլլոն՝ Սևիլյան գնդերից մեկի հրամանատար:

— Մեկնենք — ասաց Պետրոն և նրանք ճանապարհ ընկան:

***

Արևը նոր էր մայր մտել, երբ զինվորների մի խումբ Պուէնտե Խենիլ քաղաքը մտավ՝ «Կեցցե հանրապետությունը» բացականչությամբ:

— Կեցցե՛ հանրապետությունը,— արձագանքեց ամբողջ քաղաքը զվարթացած:

Բայց հանկարծ զինվորական շարքերից գնդակներ տեղացին անզեն բազմության վրա։

Դա ֆաշիստական մի ջոկատ էր, որ բնակչությանը խաբելու համար գյուղացիական տարազ էր հագել:

— Գե՛ներալ, գե՛ներալ,— լսվեց քիչ հետո մի ձայն:

Գեներալը ետ դարձավ և նկատեց երկու զինվորների, որոնք մի կին էին բերում իր մոտ:

— Ապրե՛ք, տղերք, ես պիտի պարգևատրեմ ձեզ,— ասաց գեներալը և դառնալով իր օգնականին՝ հարցրեց.— ո՞վ է մեր գնդի լավագույն հրաձիգը:

— Մոնատոն,— պատասխանեց օգնականը:

— Մոնատո, կարո՞ղ ես հիսուն քայլ հեռավորության վրայից այս կնոջ ձախ ծիծը ծակել,— հարցրեց հրամանատարը մատնանշած զինվորին:

— Ինչպե՞ս ֆաշիստ պիտի լինեի ես, հարգելի գեներալ, եթե չկարողանայի այդքան հեշտ մի պատվեր կատարել... Բայց ո՞վ կարող է անշարժ պահել այդ կնոջը:

— Ես կոմունիստի կին եմ և անշարժ կմնամ դիտելու համար ձեր սրիկայությունները,— պատասխանեց կինը և հպարտորեն դուրս ցցելով իր կուրծքը՝ ավելացրեց.

— Պատրա՛ստ եմ, կրակեցե՛ք, կեցցե՛ կոմունիզմը:

Ֆաշիստական զինվորը դեպի մատնանշված կետը գնաց և ընդհանուր հիացմունքի մեջ հրացանն ուղղեց նշանակետին:

— Կեցցե՛ կոմունիզմը,— ընդհանուր լռության մեջ կրկնեց կինը: Զինվորը շփոթվեց և հարվածն իր նպատակին չհասավ:

Հանդիսականների անեծքի տարափի տակ կինը մնաց անխռով և զինվորը երկրորդ անգամ հրացանը նշանակետին ուղղեց և այս անգամ ևս հարվածը վրիպեց կնոջ արիասիրտ կանչով:

— Բոլշևիկյան քա՛ծ, երրորդ հարվածով քո վերջը պիտի

դա,— ասաց նա և մեծ ուշադրությամբ կենտրոնանալով նշանակետի վրա՝ լսեց գեներալի հրամանը.

— Մե՛կ, երկո՛ւ, եր...

Հենց այդ պահին երկու ուժեղ ձեռներ սեղմեցին գեներալի կոկորդը, լսվեց «Կորչի՛ ֆաշիզմը» բացականչությունը, պայթեցին հարյուրավոր հրացաններ, և ֆաշիստական ոհմակը քաղաքից դուրս խուժեց սարսափահար: Նշանառու զինվորն ու գեներալը իրենց շունչը փչեցին զայրացած ամբոխի կրունկների տակ, իսկ նա՛, ով սեղմել էր գեներալի կոկորդը, մոտեցավ ուրախության արցունքների մեջ լողացող նշանակետին և, համբուրելով նրան, ասաց.

— Չե՞ս ճանաչում ինձ — Էսկամիլյոն եմ ես:

Էսկամիլյոյի գունդն էր այդ, որ խուճապի մատնեց թշնամուն։

***

Սև ձիու բաշը ծածանելով գիշերային խավարի թանձրությանը՝ մի ձիավոր է արշավում լայն դաշտերով: Աստղերի տակ կայծկլտում են պայտերը, սմբակները դոփում են ուժեղ ու քամին խաղում է ձիու բաշի հետ:

Քիչ հետո կատաղում, մոլեգնում է քամին, բայց ոչինչ չի կարող հասնել կախարդական ձիուն: Նա սլանում է ավելի արագ՝ քան քամին, ավելի արագ՝ քան նետը, ավելի արագ՝ քան երևակայությունը:

Կարծես նաև ինքը — ձի՛ն տոգորված է այն գաղափարով, որ առաջ է մղում իր տիրոջը: Առաջ — դեպի ո՞ւր... ոչ-ոք չգիտե: Գուցե դեպի գահավիժում որևէ անդունդ, գուցե դեպի հաղթանակ, գուցե դեպի մահ:

Ձիավորը փնտրում է Լինա Օդենային: Այդպես է պատվիրել Պասիոնարիան:

Ո՞ւր է Լինա Օդենան:

***

Երկինքն ավելի սև է թվում, քան կապույտ: Լուսինը թըվում է ընդարձակ ու ալեկոծ օվկիանում փոքրիկ մի նավ, որին

ամպերի ալիքները մերթ տանում են, մերթ բերում: Համատարած սև, խորհրդավոր լռությունը ճեղքում են թնդանոթի հեռավոր որոտները:

Մի ավտո է սլանում քարուքանդ արված ճանապարհներով: Դրա մեջ է Լինա Օդենան: Նա ամբողջ երկու օր չի քնել. մարտիկները նրան պատվիրում էին հանգստանալ, բայց նա չլսեց նրանց: Հանգի՞ստ, քո՞ւն: Նա մոռացել է այդ բառերի իմաստը, նա չի՛ քնի, մինչև թշնամին չպարտվի:

Նա գնում է դիրքերն ստուգելու և պատկերացնում է այն պահը, երբ իր ծրագրած օպերացիայի շնորհիվ թշնամին կկրի մի մեծ պարտություն Անդալուզական ճակատում:

Մեքենայի սլացքը դանդաղ է թվում նրան: Արա՛գ, ավելի՛ արագ: Նա գլուխը դուրս է հանում պատուհանից և աչքերն ուղղում է խավարին: Անցնում են անտառի մոտով: Փոթորկի թևերը կարծես պատերազմ են առաջացրել նաև անտառում— հսկա ծառերը խոնարհվում են, ընկնում և նորից բարձրանում: Հոյակապ մի քայլերգ է այն, որ լսվում է սաղարթների միջից: Արա՛գ, ավելի՛ արագ: Ահա վշշում է գետը: Փոթորիկը տակն ու վրա է արել Լինայի մազերը, որքա՜ն հաճելի է այդ տակնուվրայությունը նրա համար, որքա՜ն հաճելի է փոթորկի դեմ սուրալը...

Այս ի՞նչ է, ինչո՞ւ կանգնեց ավտոն, ի՞նչ պատահեց: Լինան ձեռքը տանում է ատրճանակին: Ավտոյի դիմացը կանգնած են խռովարարներ: Մեքենավարը փորձում է ետ դառնալ, բայց ետևում կանգնած է մի այլ ջոկատ: Նրանք պաշարված են: Ուրեմն կռի՛վ... Մեքենավարը կրծքով պաշտպանելով երիտասարդ հրամանատարին՝ կրակում է թշնամիների վրա: Խավարի մեջ գծվում են կարմիր ցոլքեր, պայթում են հրացանները: Խռովարարներից մի քանիսն ընկած են արդեն, բայց ահա ընկնում է նաև մեքենավարը:

Լի՛նա, քաջասիրտ մարտիկ:

— Ես ձեր ձեռքը չե՛մ ընկնի, բանդիտնե՛ր,— բացականչում է նա և անվրեպ կրակում թշնամիների վրա:

Լսվեց տասնմեկ պայթյուն, ընկան տասնմեկ բանդիտներ, բայց արիասիրտ աղջիկն ինչ-որ խոնավություն, ծակծկոց է զգում իր մարմնին: Խռովարարների գնդակները կարկուտի

պես տեղում են ավտոյի վրա: Լինայի մոտ միայն մի փամփուշտ է մնացել...

— Կեցցե՛ համաշխարհային Հոկտեմբերը — բացականչում է նա և գնդակն արձակում իր քունքին:

Հենց այդ պահին լսվեց խրոխտ մի հրաման.

— Զինվորնե՛ր, կրա՛կ: Կեցցե՛ հանրապետությունը:

Այս բառերը և դրանց հաջորդող մի քանի պայթյուններն անակնկալի բերին թշնամուն: Նրանք խուճապի մատնված կրակեցին միմյանց վրա և այնպիսի տպավորություն ստացվեց, թե հանրապետական մի մեծ բանակ է գնդակոծում իրենց: Շուտով պատերազմի դաշտը դատարկվեց և լուսնի դաժան լույսի տակ երևացին բազմաթիվ մեռյալներ, վիրավորներ, ջարդ ու փշուր արված մի ավտո և գունաթափ մի երիտասարդ, որ Լինային էր որոնում դիակների մեջ: Երիտասարդը ճանաչել էր Լինայի ձայնը... Նա հավանորեն այլևս կենդանի չէ: Բայց ո՞ւր է նրա դիակը: Երիտասարդը երկար շարունակում է իր որոնումները: Գուցե Լինան ծպտվել էր տղամարդու շորերով: Ո՛չ, նա ինչպես ուզում է թող ծպտվի, երիտասարդը կարող է ճանաչել նրան: Արդյոք տարա՞ն նրա դիակը: Բայց գուցե նա կենդանի է և առևանգեցին նրան: Լուսինը նորից ծածկվեց ամպերով:

— Լի՛նա,— բացականչում է երիտասարդը հուզիչ ձայնով,— բայց ոչ-ոք չի պատասխանում նրան:— Լի՛նա, Լինա Օդե՛նա,— կրկնում է նա և դարձյալ սև, խորհրդավոր լռություն:

Երիտասարդը նորից ու նորից մոտենում է դիակներին, լուսավորում դեղին դեմքերը և դարձյալ չի երևում նա:

Երիտասարդը, հուսահատ, դիմում է դեպի իր ձին և զարմանքով նկատում, որ մի մարդ, կաղալով, փորձում է ինչ-որ բան դնել ձիու վրա:

— Ո՞վ ես դու,— հարցնում է երիտասարդը նրան: Կաղը, որպես պատասխան, կրակում է երիտասարդի վրա: Գնդակը վրիպում է և այս անգամ երիտասարդն է կրակում նրա վրա: Թշնամին ցած է գլորվում. նա վիրավորված է գլխից: Երիտասարդը, սրտի ուժգին բաբախումով, մոտենում է ձիուց վայր ընկնող դիակին:

— Լի՛նա— բացականչում է նա և չի կարողանում իր ար-

ցունքները զսպել նրա դիակի առաջ, որն ազատված է թշնամուն որպես պատանդ ծառայելուց:

Հանկարծ վիրավոր մի ֆաշիստ, որ գտնվում էր այս հանրապետական զույգի կողքին, լարում է իր ամբողջ ուժը և կողքից հանելով մի դաշույն՝ խփում է ձիավորին:

* * *

Երբ ձիավորն ուշքի եկավ՝ արևը գտնվում էր զենիթում: Նա խորը զարմանքով իր շուրջը նայեց և ամեն ինչ նրան երազ թվաց: Ամեն ինչ երազ թվաց մինչև այն պահը, երբ նրա ուսն սկսեց ցավել գիշերն ստացած դաշույնի ծանր հարվածից, մինչև այն պահը, երբ նա իր կողքին Լինայի դիակը նկատեց:

Ուշ չդարձնելով վերքի պատճառած խոր ցավերին՝ նա դանդաղորեն դեպի աղջկա դիակը գնաց, գննեց նրա քունքը և տեսնելով անվրեպ հարվածի անբուժելի հետևանքը՝ հեկեկանքից ցնցվեց ամբողջ մարմնով:

Որքա՜ն, որքա՜ն կենսուրախ, ապագայի հույսերով լի Լինաներ նահատակվեցին այս գեղեցիկ դաշտերում, որքա՜ն Լինաներ...

Ձիավորը հավաքեց իր ամբողջ ուժը և աղջկան դեպի գետը տարավ՝ թաթխեց նրա փոշոտված դեմքը, լվաց գլուխը: Աղջիկը լիովին ճանաչելի էր այդ դրության մեջ, զեփյուռը դարձյալ մեղմ շոյում էր նրա գեղեցիկ վարսերը և թվում էր, թե նա ինչ-որ բան է ուզում ասել... տղան դարձյալ հեկեկաց: Քիչ հետո արցունքները սրբելով գոչեց.

— Լի՛նա Օղենա, ես կլուծեմ քո վրեժը, Էսկամիլիոն կլուծե քո վրեժը...

Ու շարժվեց առաջ:

Նա, Էսկամիլիոն, լավ ծանոթ էր կամքի բուժիչ զորությանը և երկար իր մեջ խեղդեց ցավի զգացումը, բայց այլևս անհնար էր այդ... Նա ընկավ ընկուզենու տակ ու պառկեց այնտեղ: Ի՜նչ լավ է այսպես— դաշտերի հովի մեջ, ընկուզենու տակ: Երբեմն թիթեռներ են անցնում նրա մոտով ու թռչում ծաղկից-ծաղիկ: Նա նախանձում է նրանց:

Կգա ժամանակ, երբ մարդը ևս կլինի թիթեռի պես եր-

ջանիկ և իր հրաշագործ մտքի շնորհիվ, որի ծնունդն են սավառնակները, նա կթռչի մոլորակից-մոլորակ, ինչպես հիմա թիթեռները ծաղկից-ծաղիկ են թռչում: Միայն թե շուտով, շուտով վերացվեն մարդու անվան, մարդկային արժանապատվության համար ամոթաբեր այս ստոր կենդանիները՝ կապիտալիստները: Եվ որքա՜ն հեշտ էր այդ, եթե բոլոր պրոլետարները հասկանային իրենց շահերը, մարդկային ընդհանուր շահերը: Չէ՞ որ «կապիտալիստի համար պրոլետարիատն է արտադրում զենքը, պրոլետարիատն է բանեցնում տանկերը, զրահապատներն ու օդանավերը»:

Քիչ հետո նրա քունը տարավ: Նա արթնացավ այն ժամանակ, երբ մայր մտնող արևը վարդագույն էր դարձրել ամբողջ դաշտն ու լեռները:

Էսկամիլիոն արդեն բավական կազդուրված էր և իրեն կարող էր զգում պայքարի համար ոտքի ելնելու, բայց չգիտեր ուր պետք է գնար, մանավանդ, որ ֆաշիզմը բավական ուժեղ էր Անդալուզական ֆրոնտում: Մի քանի քայլ անելուց հետո նա կարող էր թշնամու ձեռքն ընկնել և զարմանալի էր այն, որ մինչև հիմա ինքն ազատ էր մնացել: Արդյոք ի՞նչ դրության մեջ է հիմա հանրապետական բանակը, ի՞նչ դրության մեջ են իր գնդի զինվորները և ինչպիսի՜ անհամբերությամբ իրեն ու Լինա Օղենային է սպասում Պասիոնարիան:

Խե՜ղճ Լինա...

Եվ իր հա՛յրը: Արդյոք ի՞նչ է անում հիմա իր հայրը, ծերունի հումանիստը:

Սա այն դաշտն է, ուր մարդու և տիեզերքի մասին մտածելով զբոսնելու սովորություն ուներ իր հայրը: Արդյոք նորի՞ց է նա զբոսնում: Եվ արդյոք որքա՜ն տրտում են նրա խոհերը, եթե նա շարունակում է զբոսնել:

— Ղա՛ռ, ղա՛ռ, ղա՛ռ...

Ագռավներ են անցնում նրա գլխի վրայով և խմբվում մոտակա մի ժայռի շուրջ: Էսկամիլիոն այժմ սկսում է դիակի հոտ զգալ: Նա ագռավների հավաքավայրն է դիմում:

Ի՜նչ զարհուրելի տեսարան...

Ժայռի շուրջը դիզված են մարդկային մերկ գանգեր, մերջալուսային արյան և իրենց սեփական արյան մեջ լողացող

գանգեր: Նրանց խառնշացած, անկենդան հայացքներն ուղղվել են երկնքին լուռ, բայց զարհուրելի մեղադրանքով: Անպատմելի, սրտակեղեք տեսարան էր ներկայացնում նրանց լռությունը:

Էսկամիլիոն ետ-ետ է գնում, բայց հանկարծ ժայռի վրա փորագրված տառեր են ընկնում նրա հայացքին:

«Մենք մարդ էինք, ահա, թե ի՛նչ դարձրեց պատերազմը մեզ»:

Այս նախադասությունը խիստ զայրացրեց նրան և առանձնապես այն պատճառով, որ իր հոր, պրոֆեսոր դել Սարտոյի ձեռքով էին փորագրված այդ տառերը:

Էսկամիլիոն շատ ուրախացավ այդ փորագրության կողքին երկաթի մի կտոր նկատելով: Նա վերցրեց այն և ուզում էր «պատերազմ» բառն անհետացնել ու դրա փոխարեն գրել մի այլ բառ՝ բայց հանկարծ մի նոր միտք կանգնեցրեց նրան: Վերցրեց երկաթի կտորը և որչափ ուժ կար իր վրա՝ հատկացրեց նոր տառերի փորագրության:

Քիչ հետո արևի տակ փայլում էր մի նոր նախադասություն:

«Որքան ժամանակ երկրագնդի վրա գոյություն ունենա կապիտալիզմը, գոյություն կունենան նաև պատերազմները»:

***

Էսկամիլիոն եղավ բազմաթիվ ֆրոնտներում: Նա միշտ գտնվում էր հարձակվողների առաջին շարքի և նահանջողների վերջին շարքի մեջ: Նա արհամարհում էր իր վերքերը, բայց եղավ մի օր, երբ նա, հակառակ իր բուռն ցանկության, այլևս անկարող էր մասնակցել պատերազմին: Նա հաշմանդամ էր. կորցրել էր նրա ձախ ոտքը: Նրան տուն վերադարձրին պատգարակով: Նա որոշ ժամանակ ուշագնաց փռվել էր անկողնի վրա և երբ ուշքի եկավ, իր գլխի վրա նկատեց հոր, պրոֆեսոր դել Սարտոյին:

— Դու լալի՞ս ես, հա՛յր,— ասաց նա,— սրբի՛ր արցունքներդ, այդ ի՞նչ է··· Անձնական վշտի ժամ չէ հիմա, սրբի՛ր ինձ համար հոսող քո արցունքները և լաց այն մարդկանց

միամտության համար, որոնք մարդկային էակներ են համարում ֆաշիստներին: Նրանք թռչում էին Մադրիդի վրայով, մեր դիպուկ հակաօդային զենքերից թաքնվելով ամպերի մեջ և մեր անպաշտպան քաղաքների վրա դցում էին իրենց մահաբեր բեռը: Կանայք և երեխաները թշնամու ռումբերից կտոր-կտոր եղան: Զոհերի մեջ կար երկու ամսական մի երեխա: Նա սպանվեց իր մոր հետ, որը նրան կյանք էր տվել: Մայրական ձեռքերը հողակույտի մեջ սեղմել էին նրան օգնության վերջին դրկում: Սալահատակի քարերը նրա մահվան մահիճը դարձան: Կանայք և երեխաները խողխողված են իրենց կյանքի արշալույսին գիշատիչ թռչունների՝ ֆաշիստական մարդասպանների կողմից: Դու լռո՞ւմ ես, հայր, դու չե՞ս անիծում ֆաշիզմը··· Բադախոսում նրանք կոտորեցին ամբո՛ղջ ազգաբնակչությունը: Բայոնում 500 բնակիչներից կոտորեցին 270 հոգի: Գյուղերում նրանք խրճիթների վրա նավթ էին լցնում և ողջ ողջ այրում կանանց ու երեխաներին··· Դանթեի նկարագրած դժողքը նսեմ արտացոլումն է միայն այն իրական վայրերի, որտեղով անցել են այս ժամանակակից վանդալները··· Սպանված երեխաներ ու ծերունիներ, բռնաբարված ու սրախողխող արված կանանց դիակներ, արյունոտ ավերված հուշարձաններ··· Դու դարձյա՞լ լուռ ես, հա՛յր: Ամենուրեք, որտեղով նրանք անցնում են, ցանում են մահ ու ավեր: Պուենտե Խենիլում նրանք գնդակահարում էին հղի կանանց, ասելով, որ դրանով կանխում են նոր հեղափոխականների աշխարհ գալը: Հուլիսի 19-ին գեներալ Լյանոն հայտարարեց, որ ինքը մտադիր է գնդակահարել 300 հազար իսպանացի: Սևիլիայում ֆաշիստների պարագլուխները հայտարարեցին, որ իրենք Վալենսիայի բանվորների արյունից ու ոսկրերից ցեմենտ են պատրաստելու վառված եկեղեցիների վերականգնման համար: Ավելի քան հազար մարդ գնդակահարվեց Գրենադայում՝ քաղաքը խռովարարների ձեռքն ընկնելու առաջին իսկ օրերին, ի թիվս որոց՝ մեր մեծ բանաստեղծ—դրամատուրգ Ֆրեդերիկո Գարսիա Լորկան: Ալժեսիրասում գնդակահարվեց գրականագետ Միգուել Բոյոլը: Ֆաշիստներն իրենց գնդակները չեն խնայում ոչ մի բարբարոսության համար, նրանք ռմբակոծում են հազարամյա պալատներն ու թանգարանները, փշրում և այրում են մեր ազգային պարծանքների նկար-

ներն ու քանդակները, փորձում են այրել Վելասկեզի հանճարեղ նկարները, ոչնչացնել Սիդի քանդակը, ոչնչացնել ամբո՛ղջ Մադրիդը, ստրո՛ւկ դարձնել ազնիվ ու խիզախ մեր ժողովուրդը, բորբոքել երկրորդ համաշխարհային պատերազմը... Դու դարձյա՞լ լուռ ես, Հա՛յր:

Ծերունին լռեց ևս մի պահ ու քիչ հետո ոտքի կանգնելով՝ զայրույթից դողաց ամբողջ մարմնով և ասաց.

—Վերցրե՛ք զենքերը, ոչնչացնելու համար նոր սպանդի կազմակերպիչներին, 20-րդ դարի վանդալներին, երկոտանի հրեշներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
Ն. Զարյան	Խոսք ուրախության (առաջաբան)	5
Սողոմոն Մկրտչյան	Հանճարը (պոեմ)	12
Ահարոն	Արգինեի ճակատամարտը	22
Հմ. Նալբանդյան	Բանաստեղծություններ	
	Երգում	51
	Յոթը նվեր	52
	Շիրակի հացնաղբյուր դաշտին	52
	Շիրակի գիշերը	53
	Նետվեմ լողամ	54
	Արտերդ	55
	Հունձք	55
	Նորքում մրգահաս	56
	«Խորհրդավոր» մասրենին	57
	Արարատյան տեսիլ	60
	Ներբող Սևանա լճին	61
	Ծաղկաձորյան համերգ	61
	Անակրեոնից	62
	Հայրենի երգը	64
	Ա՜խ ջահելություն, դարձիր դեպի ետ	66
Աշոտ Լուսենց	Բանաստեղծություններ	
	Հայրենիքիս	71
	Ապրելու տենչ	72
	Հեքիաթային առավոտ	73
	Գազելներ	74
	Դեպք՝ պատահած բլբուլի և պոետի հետ	76
	Տրիոլետ	76
	Անվերնագիր երգեր	77
Հայկ Մելքումյան	Բանաստեղծություններ	
	Քո ծոցիկը	84
	Օրորոցի երգ	85
	Մանուկն ու կաքավը	85
	Իջեք սարերից	86
	Դուրս եկա մենակ	87
	Ամպի քուլա	88

		էջ
	Մայր ու աղջիկ	89
	Հաճելի զրույց	90
	Ծնծղուկի խրատը	90
	Հարց ու պատասխան	91
	Խելառ Ջաքին	93
	Ուրիշի երեխան (պոեմա)	95
Անահիտ Սահինյան	Դավիթը եկավ	112
	Ընտանիքում	121
Նորիկ Նազարյան	Բանաստեղծություններ	
	Կտուրները կանաչել են	147
	Պսակներ	148
Զվարթ Ղուկասյան	Տիկին Վառվառա (Մի պատկեր)	158
Ավրորա	Բանաստեղծություններ	
	Քայլերգ ստախանովականների	178
	Երգ օդաչուի	179
	Կյանքը	180
	Երգ՝ նվիրված երաժշտությանը	181
	Սիրերգ	182
	Սոնետ	183
	Կրակե ուղի	183
	Թաքնված գարուն	184
	Վերհուշ	184
	Սիրահարված ընկերոջս	186
	Իզուր ափսոսանք	187
	Հայնրիխ Հայնեից	187
	Չայկովսկուն	188
	Առվակի մոտ	189
	Վեճը	190
	Կորուկ թուրը	194
Գր. Փանոս	Մարտիրոսը	196
Սերո Խանզադյան	Բանաստեղծություններ	
	Ցուրաբերդցիք	218
	Հայրենիքիս	221
	Լճակի սերը	222
	Աղբյուր	223
Աղաբեկ Դավթյան	պ ո ե մ ն ե ր	
	Խմբապետ Անվախը	224
	Մայրն ու սովը	227
	Նուշիկ-Թուշիկ (լեգենդ)	233
	«Կորած ուրբաթը»	237

		էջ
Մեսրոպ Մեռուժան	Բանաստեղծություններ	
	Տրիոլետներ	240
	Դավիթ Սասունցին	241
	Շոթա Ռուսթավելի	242
	Վրաստանի զավակները	245
	Լուսե ձորերում	247
Գրիգոր Գառունց	Բանաստեղծություններ	
	Գովք նոյեմբերին	249
	Հայրենիքիս հետ	250
	Ոսկե գիրք	251
	Արծվի կորուստը	251
Ավետիք Բարյան	Բանաստեղծություններ	
	Աղջիկն ու առուն	252
	Ինչը	252
	Մանկություն	253
Վազգեն Տալյան	Բանաստեղծություններ	
	Թբիլիսի	254
	Ես, վարպետ	256
	Վերջալույս	257
	Երկու հերոս (պոեմ)	258
Մարտին Բարամյան	Սովետական Հայաստանում (ութնյակներ)	278
Դերենիկ Զարխչյան	Հայրենիքիս գիշերը	281
	Երգ նոր կյանքի մասին	282
Հուսիկ Խանդամուր	Վերցրեք զենքերը	283

[stamp]

Կազմը, տիտուլը և գլխագարդը նկարիչ՝
Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

Տեխ-խմբագիր՝
Ա. Խուդավերդյան
Սրբագրիչ՝
Մ. Երզնկյան

Վ. Ֆ 2426 Հրատ. 5345. Պատվեր 683. Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 8|X 1940—թ.
Ստորագրված է տպագրութ. 20|X 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

2

ՀՀ Ազգային գրադարան
NL0381574

71.868